Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գ. Չարքեան

Հայ հեղինակներ

1905թ

891.99.09
Վ-22

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Ալիշան, Պէշիկթաշլեան, Դուրեան, Պարոնեան, Ծերենց, Նալբանդեան, Գամառ - Քաթիպա, Պռօշեան, Րաֆֆի, Շահազիզ, Աղայեան, Շիրվանզադէ, Մուրացան, Լեօ, Ահարոնեան, Յ. Յովհաննիսեան, Թումանեան, Ծատուրեան, Իսահակեան, Շանթ եւ այլն:—

ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԹԻՖԼԻԶ
Տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. 1905 Թ.
Մադաթեան փողոց № 15
(66)

891-99.09
Կ-22

891.99.09
Վ-22

13 APR 2011

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Ալիշան, Պէշիկթաշլեան, Դուրեան, Պարոնեան, Ծերենց, Նալբանդեան, Գամառ - Քաթիպա, Պռօշեան, Րաֆֆի, Շահազիզ, Աղայեան, Շիրվանզադէ, Մուրացան, Լէօ, Ահարոնեան, Յ. Յովհաննիսեան, Թումանեան, Ծատուրեան, Իսահակեան, Շանթ եւ այլն։—

ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԹԻՖԼԻԶ
Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. 1905 Թ.
Մադաթեան փողոց № 15
(66)

08.08.2013

Дозволено цензурою. 4 ноября 1904 г. Тифлисъ.

Гос. Библиотека
им. А. Мясникяна

3133-84

ՑԱՆԿ

I. ԲԱՆԱՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

9. Գողթան երգեր.—Այտընեան.
15. Սայեաթ-Նովայի կենսագրութիւնը. — Ախվերդեան:
18. Խրատ. } Սայեաթ-Նովա.
19. Դուն էն Գլխէն իմաստուն իս. } Սայեաթ-Նովա.
19. Երգչի պարտաճանաչութիւնը. } Սայեաթ-Նովա.
19. Պանդուխտ առ Կռունկ.
20. Երգ շինականաց.

II. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

21. Հայոց գրերի գիւտը.—Ս. Մալխասեան.
25. Քրիստոնէական գրականութեան սկիզբն ու բարգաւաճումը.—Ս. Պալասանեան.
37. Հայոց գրականութ. արաբ. շրջանում. } Ս. Պալասանեան.
43. Հայոց գրականութ. Ռուբինեանց օրով. } Ս. Պալասանեան.
52. Քուչակ Նահապետի գիւտը.—Զօպանեան.
53. Սիրոյ երգեր. } Քուչակ Նահապետ.
53. Խրատական. } Քուչակ Նահապետ.
54. Պանդխտի երգեր. } Քուչակ Նահապետ.

III. ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

55. Վիեննէտկի և Վեննայի Մխիթարեանները.—Թարգմ. Յ. Բաղչեան.
62. Ղ. Վ. Ալիշանի կենսագրութիւնը.
63. Նաւասարդի տօները. } Ղ. Ալիշան.
66. Պլպուլն Աւարայրի } Ղ. Ալիշան.
67. Մ. Պէշիկթաշլեան.—Լէօ.
69. Եղբայր եմք մեք. } Մ. Պէշիկթաշլեան.
70. Գարուն. } Մ. Պէշիկթաշլեան.

71. Պետրոս Դուրեան.
71. Տրտունջք. } Պ. Դուրեան.
73. Իմ մահը.
74. Յակոբ Պարոնեան.
75. Մեծապատիւ Մուրացկանները.—Պարոնեան.
82. Գարեգին եպ. Սրուանձտեան.
82. Առաւօտ. } Գ. Վ. Սրուանձտեան.
84. Իմաստուն ջուլհակը.
86. Ծերենց.-Յովսէփ Շիշմանեան.
87. Կիլիկիոյ վիճակը ԺԱ. դարում.—Ծերենց.

IV. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱԺԻՆ

89. Խաչատուր Աբովեան.—Գ. Վանցեան.
92. Առաջաբան.
95. հայրենի հողը. } Խ. Աբովեան.
96. Ձմեռ.
97. Զանգի.
100. Ստեփաննոս Նազարեան.
101. Ս. Սահակ. } Ս. Նազարեան.
102. Մայրենի լեզու.
103. Միքայէլ Նալբանդեան.—***.
106. Հայաստանցի պանդուխտը. } Մ. Նալբանդեան.
107. Աղքատ կին.
109. Ռ. Պատկանեան.—Գ. Վ.
112. Խելք և խորամանկութիւն.
114. Քահանայ. } Ռ. Պատկանեան.
115. Արաքսի արտասունքը.
117. Սմբատ Շահազիզ.—Լ է օ.
117. Երազ. } Ս. Շահազիզ.
118. Աշտարակ.
119. Պերճ Պռօշեան.—Գ. Վ.
120. Ձմեռ.
122. Գարուն. } Պ. Պռօշեան.
125. Ամառ.
126. Աշուն.
129. Ղազ. Աղայեան.—Գ. Վ.

131. Արութիւնի աղօթքը.
131. Ձմեռն է. } Ղ. Աղայեան.
133. Աշուղ.
134. Աշուղների մրցումը.
139. Գաբրիէլ Սունդուկեան.
139. Պէպօ.—Սունդուկեան.
144. Գէորգ Բարխուդարեան.—Ի. Յարութիւնեան.
145. Ձօն. } Գ. Բարխուդարեան.
146. Արձագանք.
147. Րաֆֆի,—Լ է օ.
152. Մի պատկեր ռուս-թուրք. պատերազ.
155. Ոշտունցի. } Րաֆֆի.
156. Լուսաւորչի տոհմը.
158. Արաքս.
160. Շիրվանզադէ.
160. Հրդեհը նաւթահանքում } Շիրվանզադէ.
163. Հոգեհաց.
116. Երկու ճամբորդ.—Մուրացան.
171. Իմ Պաննարամը.—Կ. Մ.-Շահնազարեան.
177. Թաթախման երեկոյ.—Լ է օ.
183. Մայրերը.—Ա. Ահարոնեան.

V. ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ

194. Գնչուներ և հայ-բօշաներ.—Գ. Վանցեան.
198. Եւրոպացոց կարծիքը Հայոց մասին.—«Փորձ».
200. Ելիսէևի կարծիքը Հայոց մասին.

VI. ՊԱՏՄԱԿԱՆ

202. Վասակի վերջին օրերը.—Եղիշէ.
204. Ս. Պալասանեան.—Ի. Յարութիւնեան.
205. Երկրագործութիւնը և վաճ. Հայոց մէջ. } Պալասա-
207. Կառավարութիւնը Հայոց մէջ. } նեան
210. Մեհրուժան Արծրունի և Սմբատ Բագրատունի.—Կ. Կ.
213. Վերջին արևելեան պատերազմը.—Ս. Պալասանեան.
215. Ռուսներն Էրզրումում.—Ա. Երիցեան.
218. Իմ թատրոնական յիշողութիւնից.—Գ. Զմշկեան.

VII. ԺԱՄԲՈՐԴԱԿԱՆ

222. Այց Լեմբերգի հայերին.—Գ. Վանցեան.
231. Կարին կամ Էրզրում.—Լ. Սարգսեան.
232. Դէպի Անի.—Գեղամեան.

VIII. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

235. Երգչի անէծքը.—Թարգ.
236. Անգրագէտ.
238. Գարուն.
238. Հատիկ.
} Յ. Յովհաննիսեան.
239. Ողորմած եղէք.
241. Արծիւն ու ճիճուն.—Թարգմ.
} Աղ. Ծատուրեան.
242. Լօռի.
243. Իգիթի սպանութիւնը.
244. Հասերդ.
245. Այվազովսկու նկարի առջև.
} Յովհ. Թումանեան.
245. Մայրիկիս.
246. Գիշեր ձմեռ.
247. Մաճկալ.
} Աւ. Իսահակեան.
248. Գեղարդայ լեռները.—Շանթ.
249. Թարթար.
250. Առաւօտ.
} Յր. Թումանեան.
250. Լալւար սարը.
252. Սար գնալը.
} Վ. Միրաքեան.
255. Համբարձման գիշեր.—Դ. Դէմիրճեան.
256. Փոթորկի պահին.—Զարըզ.
256. Սպիտակ զգեստ.
258. Մուրացկան.—Տուրգենև.
259. Աղաւնիներ.—Տուրգենև.
261. Հունգարական դաշտավայրը.—Թարգմ. Հ. Աճառեան։

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Մեր նպատակն է երկու կամ երեք ամփոփ հատորներում տալ մեր գրականութեան և լեզուի զարգացման պատմութիւնը, հեղինակների կենսագրներով և նրանց լաւագոյն երկերից հանած նմուշներով՝ սկսած հնագոյն անցեալից մինչև նորագոյն ժամանակները։

Սա առաջին փորձն է և առաջին հատորը և իբրև այդպիսին, չէր կարող լինել ոչ լիակատար, ոչ էլ զերծ որևէ թերութիւնից։—Օրինակ, այստեղ դուք չէք հանդիպի Խրիմեանին, Գ. Այվազովսկուն, Սադաթեանին, Զօպանեանին, Մասեհեանին, Նար-Դոսին և այլոց, որոնք իրանց արժանաւոր տեղը կ'ունենան սրա հետևեալ հատորներում։

Այս հատորում դեռ հնարաւոր չենք համարել դնելու աւելի երիտասարդ հեղինակների կենսագրները, որոնց տաղանդը դեռ զարգացման մէջ է, ուրեմն դեռ վաղաժամ է ճիշտ բնորոշման ենթարկելը։

Աբովեանի յօդուածներում խիստ անհասկանալի թուրքերէն բառերը փոխարինուած են հայերէն բառերով, և օժ. բ. երր. դէմքը՝ ա, դարձրել ենք է, մի բան, որ արդէն շատ անգամ գործադրուած է ուրիշ դասագրքերում, և կարող ենք վկայել, օգտաշատ կերպով, ինչպէս որ՝ աւելի հասկանալի լինելու համար, Եղիշէի, Ալիշանի և Սրւանձտեանի մի քանի հատուածները թարգմանուած են արևելեան գրաբարբառի՝ աշակերտների դիւրութեան և նիւթի հեշտ իւրացման համար։

Այստեղ բերուած է ոչ այն ամենը, ինչ կարելի էր, այլ այն միայն, ինչ հնարաւոր էր։ Սիրով և հաճութեամբ սպասում ենք մեր պաշտօնակիցների դիտողութիւններին և ցուցումներին։

Գ. Վանցեան

ԲԱՆԱՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ

Հայկական անգիր մատենագրութիւնը մեզի ուրիշ նշանակութեան արժանի աւանդ մը հասուցած չէ, բայց եթէ քանի մը Գողթան երգեր։ Ինչպէս Յունաց մէջ Հագներգուք, ասանկ ալ Հայաստան ունեցեր է իր երգիչները, մանաւանդ Գողթան բարեբեր ու գինեւէտ գաւառին մէջ, որք իրենց բանաստեղծական աշխուժովը հին ատենէն 'ի վեր համբաւ ստացան։ Անոնց հանճարոյն արգասիքն են այն երգերը, կամ երգոց քանի մը կտորուանքը, որ մեր ձեռքը հասած են։ Զանազան ժամանակ յօրինուած երգեր, տարակոյս չկայ, որ զանազան երգիչներ ու հեղինակներ ունեցած են։ Բայց որովհետեւ ասոնց բուն անուանքը պատմութիւնը ինչուան մեզի հասուցած չէ, ուստի և ընդունայն աշխատանք է անոնց բուն հեղինակը փնտռելու համար յոգնիլ։

Որչափ ալ ազգերնուս հեթանոսութեանը ժամանակ յօրինուած են այս երգերը, բայց անոնց գործածութիւնը դեռ ինչուան քրիստոնէութեան հինգերորդ դարը կը տեւէր։ Այս կարծեաց ստուգութեան երաշխաւորութիւնը՝ Խորենացոյն խօսքերուն մէջ ունինք, որ նոյն երգերը մէջ բերելուն ժամանակ, միանգամայն կը գրուցէ, թէ անոնց գործածութիւնը դեռ ևս կը լուի Հայոց Գողթան գաւառին բնակչացը քովը։

Բիւզանդ ալ, չորրորդ դարոյն քրիստոնեայ, բայց իրեն աստուածաւանդ կրօնիցը անհաւատարիմ Հայաստանին համար կը գրուցէ, մեղադրելով, թէ «Զիւրեանց երգս առասպելաց գվիպասանութեան սիրեցեալք և նմին հաւատա-

ցեալք և 'ի նոյն համապարգրդեալք»։ Ինչպէս Մագիստրոսի ժամանակ դեռ այս երգոց գործածութիւնը կար. և ինքը մէկ հատուած մը մէջ կը բերէ, զոր իր ժամանակին գիւղականացը բերնէն լսած էր։

Անոնց մէջ առաջին կսեպուին այն երգերը, որոնց մէջ մեր քաջ թագաւորաց ու զօրավարաց արիութեան ու նշանաւոր գործոց յիշատակութիւնը կ'ըլլայ. երկրորդ այն երգերը, յորս Մարաց և Պարսից վրայ խօսք կ'ըլլայ, և երրորդ անոնք, որոց մէջ Ասորեստանեայց աւանդութիւնները կը տեսնուին։

Առաջիններուն կարգէն է՝ Երուանդեան Տիգրանայ վրայ երգուածները, որ Հայկազն թագաւորաց մէջ ամենէն աւելի սիրելագոյնն էր, ու ոչ միայն արտաքին ու ներքին բարեմասնութեամբ, այլ և իր քաջութիւններովը իր ժամանակին ազգային քերթողացը երգերուն և աշխուժին առիթ տուած։ Խորենացին՝ որ նոյն թագաւորին վրայ սքանչացողներէն մէկն է, կը պատմէ անոր ձեռքով Հայաստանին մէջ եղած տեսակ տեսակ բարեկարգութիւնները, Յունաց ազգը հարկատու ընելը, Աժդահակայ հետ խնամենալը, ու ետքը անոր դէմ պատերազմիլը, զինքն սպաննելը. ու բոլոր թագաւորական ընտանիքը գերելով Երասխ գետին քով բնակեցնելը զանոնք՝ մասնաւոր քաղաքներ ու տեղեր տալով անոնց։ Այս տեսակ տեսակ դիպուածոց վրայ իրենց քնարը նուիրած են Գողթան երգիչները, որոց բանաստեղծութեան համառօտութիւնն է, զոր Խորենացին մէջ կը բերէ. «Զայս՝ և որ այլ այսպիսիք բազումք՝ երբեմն մերոյ աշխարհիս խարտեաշս այս և աղեբեկ ծայրիւ հերաց Երուանդեանս Տիգրան. երեսօք գունեան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէտն, առոյգաբարձն և գեղեցկոտն, պարկեշտն 'ի կերակուրս և յըմպելիս և 'ի խրախճանութիւնս օրինաւոր. զորմէ ասէին 'ի հինս մեր որք բամբռամբ երգէին, լինել սմա և 'ի ցանկութիւնս մարմնոյ չափաւոր. մեծիմաստն և պերճաբան, և յամենայն որ ինչ մարդկութեան պիտանի... Արդարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի, զամենայն ուրուք կենցաղ մատցն լծակաւ

կշռէր։ Ոչ ընդ լաւագոյնսն նախանձայր, և ոչ զնուաստսն արհամարհէր. այլ ամենեցուն հասարակաց հնարէր՝ զխնամոցն իւրոց ի վերայ տարածել զգեստ»։

Պատմութիւնը կ'աւանդէ, թէ Երուանդեան Տիգրանը երեք որդի ունեցաւ. Բաբ, Տիրան և Վահագն, և թէ անոնց մէջ ամենէն հռչակաւորը իր քաջութեամբը եղաւ Վահագն. և իր արութեանցը վրայ զարմացող Հայաստան աշխարհը և անոր դրացին Վրաստան աստուածոց կարգը դասեցին զինքը։ Գողթան երգողաց ալ իր յիշատակին ընծայած գովաբանութիւններէն հետևեալ տողերը պահած է Խորենացին.

«Երկնէր երկին և երկիր.
Երկնէր և ծիրանի ծով.
Երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն։
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր.
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր.
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր.
Նա հուր հեր ունէր.
Ապա թէ՝ բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք»։

Այս երգը՝ իր ականջովը լսած է նոյն ինքն Խորենացին, ինչպէս պատմութեանը մէջ կ'աւանդէ։

Վահագնէն ետքը՝ Գողթան երգողաց քնարին ու քերթողական ոգւոյն առիթ տուած է Արտաշէս Բ։ Այս քաջ ու սիրելի թագաւորին կենաց այլ և այլ պարագաները առատ նիւթ կրնային մատակարարել՝ ինչպէս արդեամբք ալ մատակարարած են, նոյն ազգային քերթողաց։ Հետևեալ տողերը պատառիկ կրնան սեպուիլ այն քերթուածոց և որոնք մասունք են անշուշտ ընդարձակ ոճով գրուած գեղեցիկ երկասիրութեան մը.

«Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւըն գեղեցիկ.
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ՝ որպէս զարծուի սրաթեւ՝ ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկեց ի մէջք օրիորդին Ալանաց.
Եւ շատ ցաւեցոյց ըզմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցեալ ի բանակըն իւր»։

Այս գեղեցիկ ու ընտիր երգը՝ բանաստեղծական այլաբանութիւն մըն է այն դէպքին, զոր Խորենացին իր պատմութեան գրոցը մէջ կ՚աւանդէ։ Արտաշէս հասաւ իր փափաքին. Ալանաց աչագեղ դուստրը՝ Սաթինիկ, որ իր երեսաց վայելչութեամբը՝ արիւնլուայ պատերազմաց մէջ գրաւեր էր քաջին Արտաշիսի սիրտը, Հայաստանի թագուհի եղաւ, ու արքայն՝ իր սիրոյն ու մեծութեանը և հարստութեան արժանի հարսնիք մը ընել տուաւ անոր պատւոյն։ Այս մեր խօսքին հաւատարիմ վկայութիւն են Գողթան երգողաց հետևեալ տողերն.

«Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն»։

Արտաշէս՝ Մարաց ազգին զօրութիւնը խորտակելէն ետքը, Հռովմայեցոց հարկ տալը դադրեցուց. Դոմէտիանոս կայսրն ալ զօրք ժողվելով՝ եկաւ Հայաստան. Բասեն գաւառին հովտացը մէջ երկու բանակներն իրարու զարնուեցան. և յաղթութեան պարծանքը Հայերը ժառանգեցին։ Այն պատերազմին մէջ քաջութեամբը անուանի հանդիսացաւ Սմբատ, որուն համար կը գրուցէ Խորենացին, թէ ծերութեան հասակին մէջ՝ պատերազմական արեւտին մատուցած փորձառութեամբը «երիտասարդապէս յորդարեաց և մղեաց գճակատն»։

Ասանկ քաջ պատերազմող մը իր արութեանցն ու սրտին արժանի դրւատանքը գտած էր ազգային երգոց մէջ, որոնք զարմանքով կը յիշատակէին իր տուած պատերազմունքը, ու հնացեալ հասակին մէջ՝ նոր զէնքերով Հայաստանի փրկութեան առիթ ըլլալը։

Մահը, որ աշխարհի տեսարանաց մէջ ամենուն վարագոյրը կը գոցէ, Արտաշիսի բազմափորձ կենաց տեսարանն ալ պիտի գոցէր։

Վերջին անգամ աչւըները փակելուն ժամանակ դեռ ևս կարօտ կը քաշէր իր հայրենեացը. կը փափագէր կրկին տեսնել իր հայրենեաց վայելչութիւնը, ու այս սրտառուչ տողերը կ՚արտասանէր, զոր Մագիստրոս իր ժամանակցացը

բերնէն լսած է, և որ հնութեան ամեն հետքը կը կրէ իր վրան.

«Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն նաւասարդի.
Զվազելն եղանց և զվազելն եղջերուաց.
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք»։

Ասանկ մեռաւ Արտաշէս։ Սակայն իր քաջութեանցն ու հայրենասիրական ջանից երախտապարտ երևցաւ Հայաստան։ Աննման թագաւորին մահը ազի արտասուօք լալէն ետքը, շատերը՝ ժամանակին հեթանոսական սովորութեանը համեմատ, չուզեցին իրմէն բաժանւիլ նաև ՚ի մահուանն ու ողջ-ողջ ինքզինքնին կը թաղէին։ Արտաշիսի Արտաւազդ որդին, որ հօրը յուղարկաւորութեան ներկայ էր, ու ետքը անոր թագաւորական աթոռը պիտի ժառանգէր, հօրը եղած այսչափ փառաց ու պատւոյն վրայ նախանձեցաւ. անոր դիակնացեալ մարմնոյն եղած պատիւն իրեն իշխանութեանը պզտիկութիւն մը ենթադրեց, ու դժկամակելով մը ըսաւ հօրը.

«Մինչ դու գնացեր, և զերկիր ամենայն ընդ քեզ տարար.
Ես աւերակացս ո՞րպէս թագաւորեմ»։

Այս նախանձու արգասիք խօսքերուն վրայ նեղանալով, Արտաշէս անիծեց զինքն ու ըսաւ.

«Եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատ ի վեր ի Մասիս,
Անդ կացցես և զլոյս մի՛ տեսցես»։

Այս անէծքին հետևանքը կը սեպւին Արտաւազդայ մահուան պարագաները, զոր աւանդած է մեզի պատմութիւնը։

Արտաւազդայ ոչ միայն մահը, այլ նաև ծնունդն ալ առասպելեօք լի կը ներկայացնեն մեզի Գողթան երգիչք։ Անոր անհանդարտ ու խռովայոյզ բարքը տեսնելով, որ անարժան էր արքունեաց, և մանաւանդ Արտաշիսի արքունեացը, այլաբանելով կը գրուցէին, թէ «Վիշապազունք

գողացան զմանուկն Արտաւազդ, և գև փոխանակ եդին»։

Այսպիսի բարուց տէր Արտաւազդը՝ չկըցաւ երկար ատեն վայելել իր թագաւորական իշխանութիւնը։ Երկու տարիէն ետքը Մասիս լերան վրայ որսալու ժամանակ մեծ ու խոր վհի մը մէջ ինկաւ։ Առասպելն ու երևակայութիւնը, իրենց ատելի թագաւորին անակնկալ կորուստը ուրիշ կերպով մեկնաբանելով, զրուցեցին թէ Արտաշիսի անէծքը որդոյն վրայ իրանց արդիւնքն ունեցան. վասն զի ազատ Մասեաց քաջերը հասան, բռնեցին ու երկըթի շղթաներով կապկըպելով, այրի մը մէջ փակեցին զինքը. միայն իր երկու հաւատարիմ շները չկըցան բաժանուիլ իրմէն, այլ միշտ շղթաները կը կրծեն՝ զանիկայ բանտէն ազատելու համար։

Գողթան երգողաց հաւաքածներէն է նաև հետևեալ երգը՝ Վարդգէսի վրայ երգուած, որ Առաջին Տիգրանայ քեռայրն էր, Արտիմէդ քաղաքին շինուածքին համար.

«Հաւած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն
զՔասաղ գետով,
Եկեալ նստեալ զՇրեշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով,
Կռել, կոփել զդուռն Երւանդայ արքայի»։

Ա. Վ. Այտընեան

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱ

Վառ է արեգակը, ամենի համար լուս է ու պայծառ,
Միայն աշուղին ցերեկւայ մէջն էլ մութ է ու խաւար.
Մութն է աչքերը, բայց լուս է հոգին, սիրտն է բացավառ.
Բանց զրագիտէն լեզու ունի նա անուշ ու ճարտար։

Ռ. Պատկանեան

Մօտ երկու հարիւր տարի առաջ մէկ խեղճ ժամկոչ Հայաստանից գալիս է Թիֆլիզ։ Սրան ըլում է տղայ, անունը տալիս է Արութին։ Պստիկ Արութինին տալիս են աշակերտ մէկ ջուլհակի մօտ. խիստ աչքաբաց ըլելով, կարճ ժամանակ Արութինը լաւ վարպետ է դառնում։ Մեր վարպետ ջուլհակը ուրիշ շնորհք էլ ունէր, կտաւ գործելու հետ սազ էլ էր ածում. պստիկուց պաս պահելուց գըլուխ է գնում ամենայն խաղին, ու սուրբ Կարապետի կարողութիւնով սովորում է քամանչէն ու չօնգուրը։ Առաջ հորումը նստած բանելիս առաւօտեան հանած խաղն գիշերն քաղցր ձայնով իշխաններու բարձր ու լէն գարբասում ասում է էլել։ Վերջը համարձակ դուրս է եկել մէյդան աշուղութիւն անելու՝ Սայեաթ-Նովա անունով. Նրան ժողովուրդը մինչև էս օր էլ միայն աշուղական անունով է ճանաչում ու էլ չգիտէ թէ ջուլհակ Արութինն ով էր։ Վաղ ժամանակը հայ աշուղները ինչ որ երգել են՝ թուրքերէն են ասել, Սայեաթ-Նովէն թուրքերէն ու վրացերէն է ասել։ Մէկ օր էլ սրտումն ասել է, հիմի գ՚ուզիմ թէ հայեվար ասիմ, ու էն է հայերէն է երգել էս անուանի աշուղը՝ ամէնքին զմայլեցնելով։ Սայեաթ-Նովէն Էրեկլէ թագաւորի ու ազգի խրախճաններու պատւական ու անհրաժեշտ զարդն էր. ով որ ուրախութիւն էր ուզում տեսնել, գնում էր Սայեաթ-Նովին լսելու։ Ոնց որ իրան սիրում էին, էն-

պէս էլ տխրում էր, երբ որ ինքը իր սազով նրանց մէջը չէր և ասում էր. «Թէ մէկ շաբաթ քիզ չեմ տեսնի, կու կտրիմ քամանչի սիմը»: Մէջլիսի մէջ նստած ժամանակ ինքը խալխի նօքար էր, ժողովուրդին ուզում էր համով դուլուղ անել, անուշ խօսքով, սազի ձայնով դրուստն էր ասում ամեն բանին, ինքը ինչ որ դուրգար, իր խաղի հունարով դրստում էր, ինչ որ խալխի սրտումը ծուռն էր. և եթէ նրան լեղի էին պարգևում, նա շաքարով էր ուզում պատասխանել, գիտէր որ շատ մարդուն դրուստ բան հասկացնելը դժար բան է, համբերութիւն է հարկաւոր. «մարիփաթով քաղցր լեզուն դիփունի վրայ անցին է»: Օր ու ցերեկ նրա քարոզած բանն էր բարի գործն, որն որ դասում էր բարձր ամեն իմաստութեան ու գիտութեան վրայ, ասելով. «Թէկուզ իմանաս, գիդենաս աստղերի համբարքն սիրուն, անբարի գործըն կորած է՝ կարթա «Հարացն վարքըն սիրուն»: Էսպէս նա մէկ մէկ խրատեց ու քարոզեց Աստուած, հոգի, սէր, պարկեշտութիւն, գիր, համբերութիւն, աղքատ, զօնաղ, օտար: Բայց Սայեաթ-Նովան առաջւայ ցնծութիւնը չէ քաշում շատ ժամանակ և սկսում է գանգատել, թէ ղուրթն ճամփայ չէ գտնում, էնդուր որ շատացել է խալխի սուտն: Նրա հոգին սկսում է ձանձրանալ կեանքից, աշխարքից, երգերից եւս. «Էրեգ լաւ էր, քանց վուր էսօր,—բաղերումէն բեզարիլ իմ. մարդ համաշա մէկ չի ըլի,—խաղերումէն բեզարիլ իմ»: Վերջապէս ձանձրացած էս երազական կեանքի վայելչութիւններից, Սայեաթ-Նովէն ասում է. «Կու հագնիմ մազեղէն, կու հագնիմ շալն, կ՚երթամ ու ման կու գամ վանքերն մէկ մէկ» և գնում է Հաղբատու վանքը և ձեռնադրւում է աբեղայ: Հիմի ժողովուրդն իմացաւ, թէ Սայեաթ-Նովի կորուստը ինչ կորուստ էր նրա համար ու դիփ էն կ՚օսէր, թէ վա՜յ քի Սայեաթ-Նովա, ինչ ուրախութիւնիր իս շանց տւի ու երբ նա վարդապետ ժամանակ հազրէն մէկ անգամ գալիս է Թիֆլիզ, երեխէրքն նրա էգնէն վազելիս՝ մատով մէկ մէկու շանց են էլել տալիս, ասելով. «Տօ, գիտի՞ս՝ Սայեաթ-Նովէն է»: Թիֆլիզեցի-

ների աչքում էլ ոչ մէկ աշուղ Սայեաթ-Նովի հաւը չէ էլի: Պատմում են, թէ մէկ անգամ Թիֆլիզ է եկել մէկ երևելի աշուղ, որ Թիֆլիզի բոլոր աշուղների հիդ բաս է բռնել, այսինքն ով որ խաղով հարցմունք է տւել, ինքը հանգով ջուղաբ է տւել, բայց իրան ջուղաբ տւող ոչ ոք չէ էլել, ուստի և նրանց ձեռքից սազն առել է ու հրամայել է նրանց, որ էլ չհամարձակւեն յաղթողի առջևն, ինչ տեղ կ՚ուզի ըլի, խաղ ասիլն: Բաղքցիք խիստ տխրել են, որ իրանց աշուղների պատիւը էգպէս գետինը գլորւեցաւ: Հիդն էլ Թիֆլիզու խաղ սիրող տղերքն դարսել են գրուցք, իբր թէ Սայեաթ-Նովի ականջն է ընկնում էդ երևելի օտարական աշուղի Թիֆլիզ գալն ու քաղքի յաղթւիլը: Սաստիկ ձմեռին մուխ չուած՝ շտապով գալիս է Հաղբատից Թիֆլիզ: Ոչովին բան չասած՝ աշխարհականի շորեր է հագնում. մենակ իր հին ընկերներու ու բարեկամներու մէջ՝ կամրջի տակն սառած Քռի վրայ նստած, քամանչէն ձեռքն բաց է անում նոր եկած աշուղի հիդ բաս (վէճ) և յաղթում է նրան՝ քաղաքի պատիւը էլի հաստատելով: Էս գրուցքը էն բանի նշան է, թէ որքան Սայեաթ-Նովէն անւանի և սիրելի էր Թիֆլիզեցիներու համար: Սայեաթ-Նովի հաստատ հաւատն էլ շատ գոված է: Ջեր առաջ երգել էր, թէ Սայեաթ-Նովէն հաւատն չի ուրանալ, Հայ է: Էս հաստատեց, երբ որ Աղա Մահմէդ-խանը եկաւ Թիֆլիզը կոտորելու ու քանդելու: Էդ ժամանակ Սայեաթ-Նովէն Թիֆլիզումն էր, Բերդի եկեղեցում: Թշնամիքը տուն են ընկնում եկեղեցու դաւիթն ու կցում են կոտորելն ու կողոպտելն: Սայեաթ-Նովին վրայ են հասնում աղօթք անելիս: Սրանից պահանջում են դուրս գալը ու հաւատն ուրանալն. բայց կրօնաւորն պարսից թրերու տակն աւանդում է հոգին, ասելով՝

Ջրխմանամ քիլխադան, դօնմանամ Իսադան:
Եկեղեցուց չեմ դուրս գալ, չեմ ուրանալ Յիսուսին:

Գ. Ախվերդեան

3133-84

ԽՐԱՏ

Արի՛ ինձ անգաճ կա՛լ, ա՛յ դիվանա սիրտ,
Հայա սիրէ, ադա՛ր սիրէ, ա՛ռ սիրէ.
Աշխարքս քունն ըլի, ի՛նչ պիտիս տանի՝
Աստուած սիրէ, հոգի՛ սիրէ, եա՛ր սիրէ։

Էն բանն արա՛՝ վուր Աստծու շարքումն է,
Խրատներըն՝ գրած Հարանց մարքումն է.
Երեք բան կայ՝ հոգու, մարմնու կարգումն է՝
Գի՛ր սիրէ, ղալա՛մ սիրէ, դաւթա՛ր սիրէ։

Ե՛կ, արի՛, սի՛րտ, մի՛ կենա դուն մէ դամաղի,
Հալալ մոիկ արա՛ հացի ու աղի.
Հէնց բա՛ն արա, մարդ վըրէդ չծիծաղի՝
Խըրա՛տ սիրէ, սա՛բըր սիրէ, շա՛ր սիրէ։

Հրմպարտութիւն չանիս՝ դուր կու գաս տէրից,
Խոնարութին արա՛ քանց քիզ դէվէրից.
Աստուած դիփուննանցը մի՛ն հոգի էրիտ՝
Աղքատ սիրէ, ղօնաղ սիրէ, օտար սիրէ։

Սայեաթ-Նովա, էրնէ՛կ քիզ թէ էս անիս,
Հոգուդ խաթրի, մարմնուդ ումբրը կէս անիս.
Թէ գ՝ուզիս վուր դատաստան չտեսանիս՝
Վա՛նք սիրէ, անապա՛տ սիրէ, քա՛ր սիրէ։

1735 թ. 1 մայիսի։

Դուն էն գլխէն իմաստուն իս, խելքդ յիմարին բաժ մի՛ անի,
Էրազումն տեսածի հիդ միզ մէ հէսար մի՛ անի.
Ես խօմ էն գլխէն էրած իմ, նուրմէկանց քարար մի՛ անի.
Թէ վուր, գիդիմ, բէզարիլ իս, ուրիշին սարար մի՛ անի։
Զկայ քիզ պէս հուքմի հէքիմ, դուն Ռոստոմի Զալ թագաւոր,
Ազգըդ ազգերումն գոված, համ դուն իս զօղալ թագաւոր.
Թէ էսէնց էլ սուչ ունենամ՝ գլուխս արա՛ տալ, թա՛գաւոր,
Մըտիկ արա՛ քու Ստեղծողին, նահախ տիղ ղաղար մի՛ անի։
Քանի կ՚ուզէ քամին տանէ՝ ծովէմէն աւազ չի՛ պակսի,
Թէկուզ ըլիմ, թէկուզ չըլիմ, մէջլիսներուն սազ չի՛ պակսի.
Թէ կու պակսիմ, քի՛զ կու պակսիմ, աշխարիս մէ մազ չի՛ պակսի,
Սայեաթ-Նովու գերեզմանն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի։

ԵՐԳՁԻ ՊԱՐՏԱՃԱՆԱՉՈՒԹԻՒՆԸ

Արի՛, համով զուլուզ արա՛, խալխի նօքար Սայեա՛թ-Նովա,
Ամէն մարդ չի՛ կանա ճանգի շահով ըլքար, Սայեա՛թ-Նովա.
Ո՛վ բիդի լիդի պարգեւ, դուն տա՛ւ շաքար, Սա՛յեաթ-Նովա,
Ղաստ արա՛, շուշէդ չկոտրին, չխըփին քար, Սա՛յեաթ-Նովա։
Թէկուզ դպրատանըն պահ տաս, ծեծով չի՛ խրատուի խիւըն,
Ինչրու անձնէն չդուրս էհայ անախտելի էն չար դիւըն.
Բէզարըն աւըլ չի՛ դառնայ, թօլով չի՛ սիպտակի սիւն,
Ծուռ փէտն չի դրստի ռանտան, դուրգեար Սա՛յեաթ-Նովա։
Թէկուզ իմանաս, գիտենաս, աստղերու համրանքն սիրուն,
Անբարի գործն կորած է, կարդա՛ Հարանց վարքն սիրուն.
Աւետարանի խօսքերն, մարգարիտ է կարդն սիրուն,
Մի՛ ածի խոզի առջիւն լալ ու գովար, Սա՛յեաթ-Նովա։
Վուրտիղ հարմնիք, վուրտիղն սուգ, վուրտիղ սօյբա թ
խաղ է ըլում.
Վուրտիղ ժամ, վուրտիղ պատարագ, վուրտիղ սիրով տաղ է ըլում,
Թէ վուր հոգուդ կամքն իս անում, մարմինդ բէղամաղ է ըլում,
Վա՛ւր մէ դարդին կու գիմանաս դուն, ջրատար Սա՛յեաթ-Նովա։
1758 թ.

Սայեաթ-Նովա

ՊԱՆԴՈՒԽՏ ԱՌ ԿՌՈՒՆԿ

Կռո՛ւնկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս.
Մի վազեր՝ երամիդ շուտով կը հասնիս.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս։

Թողեր եմ ու եկեր մլքերս ու այգիս,
Քանի որ մի՜տ կ՚անեմ, կուքաղվի հոգիս,
Կռո՜ւնկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս.
Կռո՜ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:
Սրտերնիս կամեցաւ, ելանք գընացինք,
Այս սուտ աստըւորիս դարդերն իմացանք,
Աղուհացկեր մարդկանց կարօտ մնացինք.
Կռո՜ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:
Աստըւորիս բաներն կամաց կամաց է.
Ղարիպին սիրտն է խոց, ջիգարն է վարամ,
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ.
Կռո՜ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:
Ոչ ըգլուր օրն գիտեմ, ոչ ըգկիրակին,
Զարկած է գիս շամփուրն, բռնած կըրակին.
Այրիլս չեմ հոգար՝ ձեզնէ կարօտ եմ.
Կռո՜ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:
Աշունն է մօտեցեր, գնալու ես Թէպդիր,
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չուիր, ելար գնացիր.
Կռո՜ւնկ, մեր աշխարհէն գընա՜, հեռացի՛ր:

Ժողովրդական բանաստեղծութիւն

ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականի քունն անուշ.
Ծագեց լուսնակն երկընուց,
Հովիւի փողն էր անուշ:
Հօտաղն եզներ կարածայ,
Մաճկալ պառկեր, քունն անուշ:
Զըրգըրուն քամին կը փչէ,
Ծովային հովն էր անուշ:
Դաշտեր, ձորեր մընջեր են,
Ջրեր գըլգըլան, ձէնն անուշ.
Հաւքեր թառան իրենց բուն,
Բլբուլի տաղն էր անուշ.
Անմահական հոտ բուրէր,
Քաֆուր վարդի հոտն անուշ:

Ժողովրդական երգ

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳԻՒՏԸ

Հայ անունը պատմութեան մէջ յայտնի է դառնում դեռ Քրիստոսից եօթ-ութ դար առաջ, և այս հին ժամանակներում աչքի ընկնող թագաւորներ են տիրել Հայաստանում և հռչակւել օտար ազգերի մէջ անգամ. բայց այս երկար ժամանակամիջոցում, մինչև հինգերորդ դարի սկիզբը Քրիստոսից յետոյ, մօտ 1200 տարւայ պատմական կեանքի ընթացքում, հայերը չեն ունեցել սեփական գիր ու գրականութիւն: Հայաստանի զանազան կողմերում քարերի վրայ փորագրւած բազմաթիւ սեպագրութիւններ կան. բայց նրանք հայերէն չեն և չեն գրւած հայերի ձեռքով, այլ այն ժողովրդների, որոնք ապրում էին Հայաստանում դեռ հայերից առաջ: Նախ-քրիստոնէական շրջանից մնացել են հայ թագաւորների շատ դրամներ, բայց նրանց վրայի մակագիրը յունարէն է: Քրիստոնէութեան դարերում էլ հայ թագաւորների գրագրութիւնը, կալւածական, ժառանգական և այլ տեսակ ակտերը գրւում էին պարսկերէն: Քրիստոնէութիւն հայերն ընդունել էին դեռ չորրորդ դարի սկզբին. բայց եկեղեցական արարողութիւնները կատարւում էին մասամբ յոյն և մասամբ ասորի լեզուներով: Վերջապէս ոչ մի հաւանական նշան, ոչ մի դրական փաստ մինչև այսօր չէ երևացել, որ ցոյց տար, թէ մինչև հինգերորդ դարի սկիզբը հայերն ունեցած լինեին սեփական այբուբեն:

Իսկ անմխիթարական վկայական է այս իրողութիւնը մեր նախկին անկուլտուրականութեան: Մօտ 1200 տարի ապրել ինքնուրոյն ազգային կեանքով, սեփական թագաւորութիւն ունենալ, բազմաթիւ ազգ լինել, շրջապատւած լինել և անդադար շփւել հռովմայեցիների, յոների, ասորիների և պարթևների նման ազգերի հետ, որոնք բոլորն

էլ ունէին սեփական գիր և ոմանք նաև հարուստ գրականութիւն, և չստեղծել ու չունենալ սեփական այբուբեն—սա ցոյց է տալիս «նախնեաց անիմաստասէր բարքը», ինչպէս գանգատւում է խորագնին Խորենացին. ցոյց է տալիս նրանց դատապարտելի անտարբերութիւնը դէպի ազգայինը, բացակայութիւնը ազգային ինքնաճանաչութեան և պատւի: Ժողովրդի ստորին խաւերը անշարժ, մտաւորական կեանքից բաւական հեռու. բարձր խաւերը զւարճութիւնների անձնատուր եղած և օտարամոլ.—այս է եղել հին հայոց պատկերը դարերի ընթացքում և դժբաղդաբար մինչև այժմ էլ չէ փոփոխուել:

Բարոյական և մտաւորական այս թուլութեան շնորհիւ խիստ ցաւալի, ընկած դրութեան էր հասել Հայաստանը չորրորդ դարում: Կարելի է ասել, որ նա, ունենալով հանդերձ սեփական թագաւորութիւն, ազգութիւն ու լեզու՝ համարեա կուլ էր գնացել մերձակայ աւելի զօրեղ ազգերին. կուլ էր գնացել քաղաքականապէս՝ օտար ազգերի վասալը դառնալով, կուլ էր գնացել և կուլտուրապէս՝ օտարներից, մանաւանդ պարսիկներից առնելով ամեն ինչ, որ կրում է քաղաքակրթութեան որևէ նշան: Տեսած կը լինիք ճանապարհների վրայ հողի խորունկ կտրուածքներ. այնտեղ ձեր աչքին կ՚երևին զանազան շերտեր հողի մէջ—կաւի, աւազի, խճի, քարացած բոյսերի և այլն. երկրաբանը՝ այս շերտերին նայելով, ձեզ կը պատմէ հողի այդ կտորի դարաւոր անցեալը և կրած փոփոխութիւնները: Ազգերի քաղաքակրթութեան պատմութեան մէջ նոյն դերն է կատարում լեզուն: Լեզուաբանը՝ քննելով որևէ լեզուի բառարանն ու քերականութիւնը, գտնում է այն մտաւոր ու քաղաքական յարաբերութիւնները, որ այդ ազգը դարերի ընթացքում ունեցել է օտարների հետ: Այսպէս էլ մեր հինգերորդ դարի սկզբների լեզուի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ մեր այն ժամանակւայ ամբողջ քաղաքակրթութիւնը—կրօնը, օրէնքները, պետական կազմը, տնտեսական կեանքը, արհեստները և այլն—օտարամուտ է եղել, և եթէ այս եկամուտ քաղաքակրթական տարրը հե-

ռացնենք՝ տակը մնացածը, բուն հայկականը (եթէ բուն հայկական է) կը ներկայանայ մեզ իբրև մի դրութիւն այնպիսի ժողովրդի, որ ապրելիս է եղել վայրենական կամ բարբարոսական վիճակում:

Թէ որքան թոյլ էին այն ժամանակ ազգայնական տարրերը՝ կարելի է եզրակացնել հետևեալ իրողութիւնից: Հայոց նախարարները, կամ տոհմական խոշոր կալւածատէրերը՝ ձանձրանալով իրանց բնիկ թագաւորներից, դիմում են պարսից թագաւորին և խնդրում, որ հայոց թագաւորութիւնը վերցնէ և պարսիկ խան նշանակէ իրանց աշխարհը կառավարելու: Մի ուրիշ իրողութիւն. ընդարձակ, միլիոնաւոր բնակիչներ, սեփական ազգային իշխանութիւն, եկեղեցական յատուկ նւիրապետութիւն ունեցող Հայաստանը, նոր կրօն (քրիստոնէութիւն) ընդունելիս՝ օտար աշխարհներից հրաւիրում է քահանաներ, որ իր եկեղեցիներում՝ օտար, անհասկանալի լեզւով պատարագ մատուցանեն, և այս կարգը տևում է աւելի քան հարիւր տարի: Դժւար է սրանցից աւելի ազդու օրինակներ երևակայել ազգային պատւի բացակայութեան, ինքնաճանաչութեան չգոյութեան, և սակայն սրանք հնարովի բաներ չեն. սրանք իրողութիւններ են, սև իրողութիւններ՝ մեր մռայլ անցեալի պատմութիւնից:

Եթէ մի քանի դար էլ շարունակւէր այս դրութիւնը, տարակոյս չկայ, որ հայութիւնը ամբողջապէս կ՚անհետանար՝ լուծւելով և ձուլւելով աւելի հզօր և քաղաքակիրթ ազգերի մէջ. իր ինքնուրոյնութիւնը, իբրև հայ տարր, նա կարող կը լինէր պահպանել միայն մի պայմանով—կտրելով հաղորդակցութիւնը քաղաքակիրթ ազգերի հետ, վայրենանալով, նման այժմեան քրդերին: Ուրեմն մեզ սպասում էր կամ քաղաքական մահ կամ վայրենական վիճակ—երկու հաւասարապէս կորստաբեր հեռանկարներ:

Բայց ահա հինգերորդ դարի սկզբներին Հայաստանի Տարօն (այժմեան Մուշ) գաւառից դուրս եկաւ մի հայ մարդ, համեստ գիւղական ծագումից, որ մի ամբողջ ազգի վերածնողն ու փրկիչը դարձաւ, նրան սպառնացող եր-

կու կորստաբեր անդունդներից ազատող թալիսմանը գտաւ։ Ազգի այս մեծ բարերարն էր ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետ, և նրա փրկարար թալիսմանն էր՝ ազգային այբուբենի գիւտը, այն այբուբենի, որ ահա հազար հինգհարիւր տարի է կենդանի է մնում և որով այսքան ժամանակ հայերը գրել են և գրում են իրանց մշտական ցաւերն ու սակաւաթիւ ուրախութիւնները, իրանց ազգի ու եկեղեցու պատմութիւնը, իրանց բանաստեղծութիւնը։ Այս այբուբենը միջոց տւեց հայերէն թարգմանելու ս. Գիրքն ու եկեղեցական արարողութիւնները և մեր եկեղեցիներում հայերէն լեզուով աղօթելու։ Նա միջոց տւեց հին և նոր Եւրոպայի լուսաւոր երկերը հայերին մատչելի դարձնելու, որոնց հետևողութեամբ առաջ եկան և հայ հեղինակներ ու ստեղծեցին ազգային գրականութիւն։

Որևէ ազգի այբուբենը և նրանից առաջ եկող բնիկ մատենագրութիւնը՝ այդ ազգի քաղաքակրթական կեանքի սկիզբն են կազմում. առանց սեփական այբուբենի, առանց ազգային մատենագրութեան ոչ մի ժողովուրդ արժանի չէ ազգ կոչւելու։ Բայց մեր այբուբենը բացի այս ընդհանուր, քաղաքակրթական նշանակութիւնից, ինչպէս տեսանք՝ ունեցաւ և քաղաքական նշանակութիւն. նա մեզ ոչ միայն հանեց վայրենութիւնից ու քաղաքակիրթ ազգերի շարքը դասեց, այլ փրկեց մեր գոյութիւնը իբրև հայ տարրի։ Եթէ այսօր երկրագնդի վրա ապրում է հայ անունը կրող ժողովուրդ՝ դա գլխաւորապէս ս. Մեսրոպ Մաշտոցի հնարած այբուբենի շնորհիւ է, եթէ այսօր ունենք ազգային եկեղեցի, մայրենի լեզու, բնիկ գրականութիւն, մամուլ, տոհմական պատմութիւն և փոքր ի շատէ հասել ենք ինքնաճանաչութեան—այս բոլորի սկզբնապատճառը հայկական այբուբենն է։

Եւ ներկայ 1904 թւականին լրանում է այդ նշանաւոր գիւտի 1500 տարին։

Ս. Մալխասեան

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ ԵՒ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄԸ

Քրիստոնէութիւնը իբրև սկիզբն լուսաւորութեան։—Մեսրոպ Մաշտոց և հայ տառերի գիւտը (406)։—Դպրոցների բացումը (408)։—Ս. Գրքի թարգմանութիւնը (411—436). սոյն թարգմանութեան նշանակութիւնը։—Սահակի և Մեսրոպի աշակերտների ուսումնական ուղևորութիւնը։

Քրիստոնէութեան սկիզբը լուսաւորութեան սկզբնաւորութիւնն եղաւ հայոց համար. առաջին դպրոցները Լուսաւորչի աշխատութեամբ հաստատւեցան մեր մէջ։ Սակայն Ս. Գրիգորի հիմնած դպրոցները ազգային կրթութեան համար չէին և չէին էլ կարող լինել. նախ այն պատճառով՝ որ ուսումը օտար լեզուներով էր լինում, և երկրորդ՝ նոցա գլխաւոր նպատակն էր աւետարանի քարոզիչներ և եկեղեցական պաշտօնեաներ պատրաստել։ Այս առաջին փորձից յետոյ յաջորդ վճռական քայլն անելու մի մեծ արգելք կար. այն է՝ հայ լեզւի սեպհական տառերի պակասութիւնը, և ահա այս պակասը վիճակւեցաւ լրացնել Մեսրոպ Մաշտոցին։

Տարօն գաւառի Հացիկ գիւղից էր Մեսրոպ։ Փոքր հասակում Ներսէս Մեծին աշակերտելով, ուսումնասիրեց յոյն, ասորի և պարսիկ լեզուները, և ապա դիւանագրի պաշտօնով արքունիքը մտաւ։ Բայց շուտով նա հեռացաւ արքունիքից և աշխարհից հրաժարւելով ճգնաւորական կեանք վարեց իր մի քանի աշակերտների հետ, որոնց ձեռնտւութեամբը սկսաւ աւետարանը քարոզել Հայաստանի այն կողմերը, ուր դեռ քրիստոնէութիւնը արմատացած չէր։ Այդ ժամանակ Ս. Գիրքը և ընդհանրապէս բոլոր ժամա-

սացութեան գրքերը յունարէն և մանաւանդ ասորերէն լեզուով էին կարդացւում հայ եկեղեցիներում, և ժողովուրդը այդ օտար լեզուները չհասկանալով՝ անմխիթար դուրս էր գալիս Աստուծոյ տաճարից։ Այս անտեղութեան առաջն առնելու համար՝ Ս. Մեսրոպ իր առաքելութեան մէջ ստիպուած էր Աստուածաշունչը նախ ասորերէն կարդալ և ապա հայերէն թարգմանել իր ունկնդիրներին, որով և գործը դժւարանում էր, մանաւանդ իր աշակերտների համար։ Այս հանգամանքն էր որ Ս. Գիրքը հայերէն թարգմանելու և հետևապէս հայ լեզւի տառերը գտնելու գեղեցիկ միտքը ներշնչեց Մեսրոպին։ Իր խորհուրդը Սահակ Պարթևին յայտնելով, կաթուղիկոսը մի ժողով գումարեց Վաղարշապատում, որի նպատակն էր հայերէն լեզւի գրերը ստեղծելու միջոցների վրայ խորհրդակցել։ Վռամշապուհ թագաւորը, որ այս ժողովին ներկայ էր, յայտնեց թէ Ասորիք եղած ժամանակը լսել էր թէ Դանիէլ անունով ասորի եպիսկոպոսի մօտ հայ լեզւի հին տառեր կային։ Անմիջապէս մարդ ուղարկւեցաւ ասորի եպիսկոպոսի մօտ և յիշեալ տառերը բերւեցան։ Սահակ և Մեսրոպ աշակերտներ ժողովեցին և փորձեցին այն տառերը սովորեցնել նոցա, երկու տարի անընդհատ աշխատելուց յետոյ, նոքա տեսան որ այդ նշանագրերը բաւական չեն լեզւի բոլոր հնչիւնները բացատրելու. պակաս էին եօթը ձայնաւորները և եօթը բաղաձայն գրեր, որոնք հայերէնի յատուկ հնչիւններին էին վերաբերում։ Ս. Մեսրոպ դիմեց Հայաստանից դուրս այլևայլ ձեռնհաս անձանց օժանդակութեանը, բայց ոչ մի տեղից օգնութիւն չգտաւ։ Իր բոլոր ակնկալութիւնների մէջ խաբւելով, Մեսրոպ ամենևին չվհատեցաւ, այլ ինքն իր մէջ կենդրոնանալով գիշեր ցերեկ խորհում էր գիւտի վրայ, մինչև որ վերջապէս հասաւ բաղձանքին, պատմագրի գեղեցիկ խօսքերի համեմատ՝ «Երևութացեալ հոգւոյ աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով 'ի վերայ վիմի» (406)։

Մեսրոպեան տառերի գիւտը մի նոր դարագլուխ է կազմում հայ ազգի տարեգրութիւնների մէջ. նորանից սկիզբն են առնում ազգային կրթութիւնը և ազգային ճոխ

գրականութիւնը, որոնց շնորհով Հայերը քաղաքական կեանքի ակումից յետոյ՝ իրանց գոյութիւնը պահպանեցին իբրև առանձին ազգութիւն։ «Եթէ, ասում է Նէյման գերմանացին, Հայերը բոլոր այն փոթորիկների մէջ՝ որ Ե դարուց սկսած դղրդեցին Ասիան և մանաւանդ Հայաստանը, կարողացան իբրև մի անկախ քրիստոնեայ ազգ մնալ, պատճառը գլխաւորապէս ազգային լեզւի տառերի գիւտին տալու է, որով կարելի եղաւ սեպհական գրականութիւն ունենալ և մի առանձին հոգևոր կազմութիւն պահպանել»։

Տառերի գիւտի անմիջական արդիւնքն եղան այն դպրոցները, որ Սահակ ու Մեսրոպ Վռամշապուհի ձեռնտուութեամբ բաց արին Հայաստանի այլևայլ գաւառներում (408)։ Սոցա մէջ ժամանակով և նշանակութեամբ առաջին տեղը բռնում է Վաղարշապատի դպրոցը, որ մի տեսակ մայր ուսումնարան կամ ուսուցչանոց էր միւս դպրոցների համար։ Այստեղ կրթւեցան Սահակի և Մեսրոպի այն աշակերտները՝ որոնք տառերի գիւտի ժամանակ բաւական հասակ ունէին և կարող էին իրանց վարդապետներին գործակից լինել թէ ուսումնատւութեան և թէ թարգմանութիւնների մէջ։ Այսպէս են՝ Յովսէփ Վայոց ձորեց և Ղևոնդ երէց Վանանդեցին, կրօնական պատերազմի երկու մեծ ախոյեանները, Եզնիկ Կողբացի, Կորիւն Սքանչելի, Յովսէփ Պաղանացի, Յովհան Եկեղեցացի և ուրիշները, որոնք ընդհանուր անւամբ կոչւում են առաջին աշակերտք կամ թարգմանիչք։ Սոքա իրանց վարդապետների առաջնորդութեամբ ցրւեցան Հայաստանի այլևայլ կողմերը, ժողովեցին բազմաթիւ «ուշեղ և քաջասուն, փափկաձայն և երկարոգի մանուկներ և նորաբաց դպրոցներում մատակարարեցին նոցա նոյն ժամանակի կրթութիւնը։ Այս կարգի աշակերտներից են Մ. Խորենացին, Դաւիթ Անյաղթ, Գիւտ, Եղիշէ, Յովհան Մանդակունի, Ղազար Փարպեցի և ուրիշ շատերը, որոնք ծանօթ են մեզ կրտսեր թարգմանիչք անունով։ Այս ուսումնավայրերի կրթութեան ծրագիրը ընդհանրապէս կրօնական աստուածաբանական բնաւորութիւն ունէր՝ Ս. Գիրքը, եկեղեցական պաշտաման գրքերը,

նշանաւոր Ս. Հայրերի գրւածները,—սոքա էին հայ պատանիների ուսումնասիրութեան առարկաները, որոնք անհրաժեշտ էին եկեղեցական կոչումն ընդունող անձանց համար։ Այսպիսով հոգևորական դասը իր կրթութեամբ և բարոյական արժանաւորութիւններով ազգի յառաջադէմ մասը կազմելով, ժողովրդական լուսաւորութեան ղեկավարութիւնը իր վրայ առաւ։ Ամեն բանից աւելի քրիստոնէական սկզբունքները տարածելու և մեր Հայրենիքի հոգևոր պէտքերը լցուցանելու հոգ տանելով, բնական է որ նոքա ժողովրդի մտաւոր շարժմանը կրօնական ուղղութիւն տային, և այս ուղղութիւնը ինչպէս կրթութեան՝ այնպէս և գրականութեան վրայ տարածեց իր հզօր ազդեցութիւնը։

Դպրոցների հաստատութեան հետ Ս. Սահակ և Մեսրոպ սկսան եկեղեցական գրքերի թարգմանութեան զբաղիլ յոյն և ասորի լեզուներից, սկիզբ դնելով այն գրական շարժմանը՝ որ այնպիսի եռանդով շարունակեցին նոցա աշակերտները, և որի նմանը այնուհետև երբէք տեսնելու չէր Հայաստանը։ Այս գործունէութեան ամենամեծ արդիւնքն եղաւ Ս. Գրքի թարգմանութիւնը, որ նոյն իսկ օտարների վկայութեամբ համարւում էր «Թագուհի ամենայն թարգմանութիւնների»։ Երկու անգամ թարգմանեցաւ Ս. Գիրքը հայերէն. նախ ասորական օրինակից թարգմանեցան այն հատուածները՝ որ անհրաժեշտ էին եկեղեցական պաշտամունքի համար (411), և ապա Եօթանասունից կոչուած ընտիր յոյն օրինակի վրայ սրբագրւեցան և մնացած մասերն էլ հայերէնի վերածւեցան (436)։ Ընդհանրապէս Հին Կտակարանի թարգմանութիւնը ամբողջապէս Ս. Սահակին է ընծայւում, բացի Առակաց գրքից, որ Նոր Կտակարանի հետ թարգմանեց Ս. Մեսրոպը. երկուսին էլ գործակցեցին երիցագոյն աշակերտներից ոմանք։

Ս. Գրքի հայկական թարգմանութիւնը բացի իր կրօնական նշանակութիւնից՝ ունի դարձեալ մեծ նշանակութիւն հայ լեզուի զարգացման պատմութեան մէջ։ Յայտնի է որ հայերէն լեզուն շատ վաղ ժամանակներից այլևայլ

գաւառական բարբառների էր բաժանւած, առաւել կամ նւազ տարբերութեամբ միմեանցից, ինչպէս որ տարբերւում են արդի հայ գաւառական բարբառները, որոնք ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ հին գաւառալեզուների նորագոյն սերունդները։ Հեթանոսութեան վերջին դարերում այս գաւառալեզուներից մէկը, հաւանօրէն Վանայ կամ Տարօնի բարբառը, որ ինչպէս յայտնի է՝ քաղաքական և մտաւոր կեանքի կենդրոնն եղած է միշտ, իշխեց միւս բարբառների վրայ։ Այս արքունի կամ ոստանիկ բարբառը, գործ ածւելով իբրև խօսուն լեզու թագաւորական պալատում և նախարարների տներում, և իբրև գրաւոր լեզու քաղաքական ու կրօնական դիւաններում, հետզհետէ կոկւեցաւ ու մշակւեցաւ։ Դ դարու սկզբին այդ լեզուն արդէն բաւական կանոնաւորւած էր և զանազան գաղափարներ բացատրելու ընդունակ, ինչպէս որ երևում է նոյն դարու հեղինակների գրւածներից. թէև նա դեռ զերծ չէր բոլորովին արևելեան շատախօսութիւնից, մթութիւնից ու անորոշութիւնից, որ մեծ մասամբ ասորական լեզուի ազդեցութեան հետևանքն էին։ Տառերի գիւտից յետոյ հայերէն լեզուն իր պատմութեան նոր շրջանի մէջ է մտնում։ Այստեղ Ս. Գրքի և ուրիշ ինքնագիր ու թարգմանական գրւածների մէջ, հեղինակների ու թարգմանիչների կիրթ ճաշակի և մեծ հմտութեան շնորհիւ, լեզուն իր կատարելութեան ամենաբարձր կէտին է հասնում, նա կոկւում ու հարստանում է, պարզ ու ճշգրիտ, ճոխ միանգամայն և ամփոփ կերպարանք է ստանում, և այս յատկութիւնները յոյն լեզուի ու կրթութեան արդիւնք էին, որոնք նոյն ժամանակները մուտ գտան Հայոց մէջ։

Արդէն Դ դարում շատ հայ երիտասարդներ անձնական ուսումնասիրութիւնից յորդորւած՝ սկսել էին յաճախել Յունաց երկիրը՝ գիտութեան աղբիւրից իրանց ծարաւը յագեցնելու համար։ Աթէնքի ճեմարանի մէջ նոյն դարում բազմաթիւ հայ ուսանողներ կային, որոնք իրանց գիտութեամբ ու բնատուր ձիրքով Յունաց նախանձը շարժում էին։ Նոցա մէջ նշանաւոր եղաւ մանաւանդ

Պրոյերեսիոս կամ Պարոյր Հայկազն, Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու ուսուցիչը, որի հանճարի վրայ զարմացած՝ Հռովմայեցիք պղնձէ արձան կանգնեցիր նորան այսպիսի արձանագրութեամբ. «Թագաւորների Թագուհին Հռոմ՝ պերճախօսութեան թագաւորին» (Regina rerûm Roma, redi eloguentiae)։ Հայ գիտականութեան այս առաջին կարապետներին Ե դարում յաջորդեցին ուրիշները։ Ս. Սահակ և Մեսրոպ տեսնելով որ չէ կարելի բաւականանալ այն կրթութեամբ, որ իրանց աշակերտները ստացել էին հայ դպրոցներում, ընտրեցին նոցանից քառասունի չափ յառաջադէմ և ընդունակ երիտասարդներ, մի մասը Ալէքսանդրիա և միւսը Աթէնք ու Բիւզանդիա ուղարկեցին, որպէս զի յոյն կրթութեան այդ կենդրոններում հռետորական, իմաստասիրական և պատմական գիտութիւններ ուսանին և ապա վերադառնան արևմտեան լոյսը իրանց Հայրենիքի մէջ ծաւալելու։ Մօտ եօթը տարի մնացին հայ ուսանողները Յունաց երկրում և այդ միջոցում նոքա մէկ կողմից իրանց ուսուցիչների դասախօսութիւններն էին լսում և միւս կողմից պիտանի գրքերի թարգմանութեանն էին զբաղւում, յոյն լեզւի և գիտութեան կատարեալ հմտութեամբը նոյն ժամանակի ուսումնականների մէջ համբաւոր, շատերից էլ գերազանց հանդիսանելով թէ մասնաւոր յարաբերութիւնների և թէ մանաւանդ հրապարակական վիճաբանութիւնների մէջ, որ այն ժամանակները շատ սովորական էին։ Իրանց ուսումնական պարապմունքները աւարտելուց յետոյ, Ալէքսանդրիայի ուսանողները, որոնց պարագլուխն էր Մ. Խորենացին, ուղևորեցան Աթէնք իրանց ընկերների մօտ գնալու, բայց ճանապարհին ալէկոծութեան պատահելով, նաւը ձգեց նոցա Իտալիայի ափերի վրայ։ Այս առիթով Հռոմ ևս հանդիպեցան, ուր փոքր ինչ մնալուց յետոյ՝ անցան Աթէնք, առին իրանց ընկերակիցներին և Բիւզանդիայի վրայով դարձան Հայաստան՝ հետները բազմաթիւ յոյն գրքեր և հայ թարգմանութիւններ բերելով։

Սակայն իրանց սակաւամեայ պանդխտութեան միջոցին

բոլորովին տակնուվրայ եղած էր Հայոց աշխարհը. Արշակունեաց թագաւորութիւնը կործանւած էր, ընտանի երկպառակութիւններ կեղեքում էին երկիրը և պարսկական քաղաքականութիւնը պատրաստում էր նորանոր աղէտներ բերել Հայոց գլխին։ Այսպիսի աղմկալի ժամանակում ազգը չէր կարող ուսման վրայ մտածել, կամ նորեկ ուսումնականների արժանիքը գնահատել։ Նա պատրաստւում էր պաշտպանւիլ մի կատաղի պատերազմում, որի մէջ թոյլ ու անօգնական քրիստոնէութիւնը բարոյական մեծ յաղթանակ պիտի տանէր խրոխտապանծ մոգութեան դէմ։ Այսպիսի դժնդակ պարագաների մէջ հայ ուսումնականներին ուրիշ ոչինչ չէր մնում անել, բայց եթէ անծանօթ տեղեր քաշւել հայրենիքի թշւառութիւնը ողբալու և իրանց ամբարած մտաւոր գանձերը ապագայ սերնդին աւանդելու համար։

Այս ընդհանուր տեսութիւնից յետոյ թւենք համառօտապէս քրիստոնէութեան սկզբից մինչև Արաբացոց ժամանակները ծաղկած մատենագիրների անունները և նոցա գրաւոր վաստակները։

Բանաստեղծութիւն.—Պատմագրութիւն.—Վարդապետական գրւածներ.—Իմաստասիրութիւն։

Բանաստեղծութիւնը, որ ամենայն գրականութեան նշանաւոր ճիւղն է կազմում, հեթանոսութեան անկմամբ մեծ փոփոխութեան ենթարկւեցաւ ինչպէս նիւթի, այնպէս և ձևի կողմից։ Ազգային երգերը հին կրօնի վրայ հիմնւած և նորա գաղափարներով տոգորւած լինելով, չէին կարող քրիստոնէական կրօնի խիստ պահանջումների հետ հաշտւել. քաջութիւնն և սէրը երգող բամբիռն ու քնարը լռեցին, նոցա տեղ սկսան հնչել նոր տեսակ երգեր, որոնց նպատակն էր քրիստոնէական բարձր սկզբունքները հանդէս բերել և այդ սկզբունքների համար նահատակւող մարտիրոսներին փառաբանել։ Այսպիսով հայ հանճարի ստեղծական զօրութիւնը ամփոփւեցաւ բացառապէս կրօնական շրջանի մէջ, և արդարև արտադրեց վսեմ տաղեր և հոգևոր երգեր, որոնք յայտնի են մեզանում շարական, մեղեդի և գանձ անուններով։

Ս. Սահակ և Մեսրոպ եղան այս կրօնական բանաստեղծութեան առաջին հեղինակները: Սահակ Պարթև երգեց Աւագ շաբաթի շարականները, որոնք նշանաւոր են իրանց պարզ ու յստակ լեզւով, գեղեցիկ իմաստներով և բանաստեղծական հանճարով. իսկ Մեսրոպին ընծայւում են Ապաշխարութեան օրերի շարականները: Նոցա աշակերտներից Մ. Խորենացին յօրինեց տէրունական գլխաւոր տօների, այն է՝ Ծննդեան, Տեառնընդառաջի և Յարութեան շարականները. և Յովհան Մանդակունի՝ Ս. Անտօնի, Դաւիթ մարգարէի և Նախավկայի շարականները: Կոմիտաս կաթուղիկոսը փակում է այս շրջանի սակաւաթիւ բանաստեղծների ցանկը Հռիփսիմեանց հրաշալի շարականներով, որ իր ընտիր լեզւով, չքնաղ իմաստներով և գեղեցիկ նմանութիւններով եկեղեցական բանաստեղծութեան գլխաւոր արտադրութիւններից մէկը կարող է համարւել:

Պատմագրութիւնը մեր հին գրականութեան գլխաւոր տարրն է, և այս շրջանի պատմիչները իրանց վայելուչ կարգաբանութեամբը, ընտիր լեզւովն ու ոճովը և ճշմարտախօսութեամբը մեծ յարգանք են վայելում: Առաջին քրիստոնեայ պատմագիրն եղաւ Ագաթանգեղոս, Տրդատի «աջող քարտուղարը» որ թագաւորի հրամանով գրեց Հայոց դարձի պատմութիւնը մանրամասն պարագներով: Գրքի մի նշանաւոր մասը բռնում են Լուսաւորչի բերանացի քարոզութիւնները:

Կենդանի ու աշխոյժ ոճ ունի Ագաթանգեղոս և ընտիր բայց փոքր ինչ մութ լեզու: Փաւստոս Բիւզանդացին ընդարձակ ոճով պատմում է Տրդատի յաջորդների պատմութիւնը մինչև Հայաստանի բաժանումը Պարսից և Յունաց մէջ, ինչպէս նաև Լուսաւորչի տոհմի պատմութիւնը՝ առանձին գլուխներ նւիրելով Ներսէս Մեծի գործունէութեանը: Փաւստոսի գրքի մէջ կան շատ պարագաներ, որոնք Խորենացու պատմածների հետ ամենևին նմանութիւն չունենալով՝ ընդհանրապէս անվաւեր են համարւում, և այս բանիս ոչ սակաւ նպաստում են հեղինակի սէրը արտաքոյ կարգի

բաներ պատմելու և նորա չափազանցութիւնները (թւերի մէջ): Լեզուն ճոխ է և լի ընտիր բառերով ու կենդանի դարձւածներով, սակայն տեղ տեղ պատահում են կրկնութիւններ, որոնք ձանձրալի են պատճառում: Կորիւնը գրեց Մեսրոպ Մաշտոցի կենսագրութիւնը, որի մէջ իր վարդապետի կեանքի առաջին մասը դանցառութեան է տալիս և միայն երկրորդ մասի վրայ է խօսում՝ երկարօրէն պատմելով նորա արդիւնաւոր գործերը. Ագաթանգեղոսի ոճի հետ մեծ նմանութիւն ունի Կորիւնի ոճը: Նոյն հայկաբան լեզուն, բայց և նոյն մութ ու խրթին դարձւածները գործ է ածում նա, որով և ստէպ իր խօսքերը անհասկանալի են մնում:

Հայ պատմագրութեան հայրը և Ե դարու ամենամեծ պարծանքն է Մովսէս Խորենացին, որ իր Պատմութեան բազմապատիկ թարգմանութիւններովը գիտնական աշխարհին ծանօթացած և ընդհանուր յարգանքի արժանի եղած է: Սահակ Բագրատունի ասպետի խնդիրքով գրեց Խորենացին այս ականաւոր աշխատութիւնը, երեք գրքի մէջ ամփոփելով մեր ազգի պատմութիւնը՝ սկզբից մինչև Արշակունեաց թագաւորութեան անկումը, և իր խօսքը կընքում է մի սրտաշարժ ողբով, որ այն ժամանակի Հայաստանի ցաւալի վիճակի տխուր պատկերն է ներկայացնում: Իր ծանր աշխատութեան ընթացքում բազմաթիւ օտարական և ազգային աղբիւրների դիմած է Խորենացին, որոնց տւած տեղեկութիւնները միմեանց հետ բաղդատելով ու քննելով՝ ստոյգ ու վաւերական համարած կտորները իր գրքի մէջ զետեղած է: Այլևայլ յոյն, քաղդէացի և ասորի պատմիչներ, ս. Գիրքը, ազգային դիւանական գրւածները, ժողովրդական երգերն ու աւանդութիւնները,—ահա այն աղբիւրները, որ նպաստեցին Խորենացուն իր աշխատութիւնը յօրինելու: Բայց նորա պատմութեան գլխաւոր հիմքը կազմում է Մար-Աբաս Կատինան, որի գրւածը դըժբաղդաբար կորած և ուրիշ ոչ մի պատմագրի հետազօտութիւնների նիւթ եղած չլինելով, զանազան տարակոյսների առիթ տւած է արդի բանագէտներին, որոնցից ո-

մանք մինչև իսկ Մար-Աբասի գոյութիւնը, հետևապէս և Խորենացու ճշմարտութիւնները կասկածելի համարեցին։ Սակայն հայ պատմագրի մէջ փայլող անկեղծութիւնն ու անկողմնասիրութիւնը յայտնի բողոքում են այս և ուրիշ կարծիքների դէմ։ Նորա հակիրճ ու կտրուկ ոճը և ընտիր հայկաբանութիւնը այնպիսի հեղինակութիւն է աւանդել նորան մեզանում, որ յետագայ հայ պատմիչները ջանացած են նրան հետևելու։ Խորենացին ունի և մի աշխարհագրութիւն՝ Պապ և Պտղոմէոս աշխարհագիրների գրուածներից քաղուած, որի մէջ մտած յաւելուածների պատճառով՝ ոմանք անհարազատ և հեղինակից շատ յետոյ գրուած են համարում։—Պատմական գրականութեան մէջ Խորենացուն յաջորդում է մի բանաստեղծ-պատմիչ, անմահ Եղիշէն, որ առաջին կրօնական պատերազմի դէպքերը գրի առաւ ութ ընդարձակ գլուխներով կամ յեղանակներով, որոնք այն մեծ ողբերգութեան արարուածները կարող են համարուիլ։ Երբէք գեղեցիկ նիւթի աւելի գեղեցիկ գրիչ չէ հանդիպած, և քանի որ հայ ազգը կեանք ունենայ և հայ լեզուն հնչէ, Եղիշէի ոսկեղինիկ մատեանը միշտ նոյն սիրով և ոգևորութեամբ պիտի կարդացուի։—Երկրորդ կրօնական պատերազմը իւր արժանաւոր պատմիչը գտաւ Ղազար Փարպեցու մէջ, որ իւր պատմութիւնը սկըսելով Արշակունեաց թագաւորութեան բաժանուելուց, կրկնում է Վարդանանց պատերազմի ժամանակի դէպքերը, ապա անցնում է Վահան Մամիկոնեանի գործերի նկարագրութեանը՝ մինչև նրա մարզպանութիւնը, և այս է իսկապէս հեղինակի աշխատութեան ինքնուրոյն և աւելի հետաքրքրաշարժ մասը։ Նշանաւոր է նոյնպէս Փարպեցու թուղթը առ Վահան Մամիկոնեան, որի մէջ պաշտպանում է ժամանակակից աբեղաների ամբաստանութիւնների դէմ և ցոյց է տալիս որ համանման հալածանքների ենթարկուած են եղել իրանցից առաջ ուրիշ գրագէտներ նոյն տգէտ աբեղաների կողմից։

Զ ցամաք դարուց յետոյ յաջորդ Է դարը երկու պատմիչ է ներկայացնում, որ մեր նկարագրած շրջանին

են վերաբերում։ Առաջինն է Յովհան եպիսկոպոս Մամիկոնեան, որի պատմութեան գլխաւոր նիւթն են Գայլ Վահանի յաղթութիւնները Պարսից դէմ։ Ախորժելի պատմիչ է Յովհան, և իր աշխոյժ ու պարզ լեզուն կարող է նոյն ժամանակի խօսուն լեզուի տիպարը համարուել. բայց նրա գրչի տակ պատմական ստոյգ դէպքերը երբեմն առասպելի կերպարանք են ընդունում։ Աւելի մեծ կարևորութիւն ունի իբրև պատմիչ Սեբէոս Բագրատունի եպիսկոպոսը, որ Մ. Խորենացուց յետոյ առաջին անգամ փորձեց մի ամբողջական պատմութիւն գրել։ Սակայն ոմանք այս պատմութեան առաջին երկու մասերը Սեբէոսի գործը չեն համարում, այլ ուրիշ հին անծանօթ մնացած գրքերից հանած հատուածներ, ինչպէս որ նոցա հին ու վսեմ ոճը ապացուցանում է։ Սեբէոսի բուն գործը սկսում է Վահանի մարզպանութիւնից և պատմում է ամբողջ Զ դարու և Է-ի սկզբի անցքերը, Հերակլ կայսեր արշաւանքը Պարսից դէմ, Սասանեան թագաւորութեան կործանումը արաբացոց ձեռքով, սոցա պատերազմները յունաց, պարսից և հայոց աշխարհներում, մինչև 660 թիւը։ Ընդհանրապէս համառօտախօս և անաչառ պատմիչ է Սեբէոս, անձնական խորհրդածութիւններից աւելի իրերի և անձանց ճշգրիտ պատկերը ներկայացնելու հետամուտ. լեզուն էլ մաքուր և կանոնաւոր է։

Վարդապետական մասը նոյնպէս մեծ տեղ է բռնում մեր հին մատենագրութեան մէջ, և այս առաջ է գալիս գրականութեան ընդհանուր բնաւորութիւնից և հեղինակների կոչումից, որ էր կրօնի և բարոյականութեան սկզբունքն արմատացնել ազգի մէջ։ Առաջին պատկառելի հեղինակը այս մասի մէջ հանդիսանում է նոյն ինքն ս. Գրիգոր Լուսաւորիչ իւր Յաճախապատում կոչուած ճառերով, որոնց մէջ Արարչի իւր արարածների վրայ ունեցած խնամքը ցոյց տալուց յետոյ, անցնում է մարդկային պակասութիւնների վրայ խօսելու և մեղմ խրատներ է տալիս ամեն աստիճանի ու հասակի մարդկանց։ Ինչպէս իւր բերանացի քարոզութիւնների և բոլոր գործունէութեան մէջ,

այսպէս և այստեղ ս. Գրիգոր յամառեալներին ոչ այնքան սպառնալիքներ է կարդում, որքան քաղցր խօսքերով յորդորում է առաքինութեան հետևող լինել: Յաջորդ դարում Եղիշէն գրեց Միանձանց խրատը իրան արժանի լեզւով ու իմաստներով. Խորենացին Հռիփսիմէ կոյսի ներբողը և Վարդավառի ճառը, նրա կրտսեր եղբայրը Մամբրէ ճառեց Ղազարոսի յարութեան և Քրիստոսի Երուսաղէմ մըտնելու վրայ. իսկ Խորենացու քեռորդին՝ Դաւիթ Անյաղթը յօրինեց Խաչի գեղեցիկ ներբողը ժամանակակից աղանդաւորների դէմ: Առանձին ուշադրութեան արժանի են Յովհան Մանդակունու Խրատական ճառերը թւով քսան և ութ, ընտիր ոճով և իմաստներով գրւած:

Վարդապետական և իմաստասիրական գրւածների մէջ տեղը բռնում է Եզնիկի Եղծ աղանդոցը, որի մէջ հմուտ հեղինակը իմաստասէրների յատուկ ոճով խօսում է հեթանոսների, պարսից, յունաց և Մարկիոնի աղանդի դէմ, կրօնական ճշմարտութիւնները իբրև գլխաւոր զէնք բանեցնելով նոցա մոլորութիւնները հերքելու համար: Լեզւի նկատմամբ Եզնիկը անզուգական մատենագիր է, և դուցէ միայն Եղիշէն կարողանայ համեմատւել նրա հետ: Բայց բուն իմաստասէր է Դաւիթ Անյաղթը, յայտնի Արիստոտէլի գրւածների թարգմանութեամբ և Սահմանք իմաստասիրութեան ինքնագիր աշխատութեամբ, Պիռհոն իմաստասէրի հետևողների դէմ գրած, որոնք ամեն բանի վրայ տարակուսում էին և մինչև իսկ մարդկութեան գոյութիւնը կասկածի տակ էին դնում: Հին յունական փիլիսոփայութեան կատարեալ հմտութիւն է ցոյց տալիս Դաւիթ այս աշխատութեան մէջ. ափսոս միայն որ իմաստասիրական գաղափարները հայացնելու աւելի հոգ տարած չէ, որով նրա գրւածների շատ տեղերը. մանաւանդ թարգմանութիւնների մէջ, այսօր անհասկանալի են մնում:

Ս. Պալասանեան

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Արաբական ազդեցութիւնը մեր գրականութեան վրայ.—Պատմագրութիւն.—Վարդապետական գրւածներ:

Յոյն լեզւի և գրականութեան ուսումնասիրութիւնը, որ քաղաքական ձախորդ հանգամանքների և կրօնական խնդիրներից (Քաղկեդոնի ժողով) ծագած ատելութեանը պատճառով առ ժամանակ ընդհատւել էր, Է դարում վերստին սկսաւ արծարծւիլ, թէ և ոչ առաջւան եռանդով: Բայց նոյն դարու վերջերից և մանաւանդ յաջորդ Ը դարու սկզբից երևան է գալիս մի նոր ազդեցութիւն, արաբականը, որ հետևանք է այդ ազգի տիրապետութեանը Հայոց աշխարհի վրայ: Այդ ժամանակներից հայ գրականութիւնն ու գեղարւեստը (յատկապէս ճարտարապետութիւնը) սկսում են ենթարկւել արաբաց ազդեցութեանը. սակայն կրօնական մեծ խտիրը արգելք է լինում մեր մատենագիրներին իշխող ազգի մտաւոր արդիւնքներից օգտւիլ և նորանով մեր գրականութիւնը ճոխացնել *): Ազդեցութիւնը այստեղ գլխաւորապէս հեղինակների լեզւի ու ոճի վրայ է երևում. բառերի կուտակում, իմաստների յորդութիւն, բացատրութեան խրթնութիւն և երկայնաբանութիւն,—ահա այն յատկութիւնները, որ երևում են այս շրջանի հայ մատենագիրների երկասիրութիւնների մէջ: Այսպիսով ոսկեդարեան ընտիր լեզուն կամաց կամաց կորցնում է իր պարզութիւնն ու յստակութիւնը և աղաւաղութեան առաջին շրջանի մէջ է մտնում:

*) Այսպիսի փոխառութիւններ մեր գրականութեան մէջ լինում են այն ժամանակ՝ երբ Հայաստանը բոլորովին ազատւում է արաբաց քաղաքական ազդեցութիւնից:

Պատմագրութեան նկատմամբ այս և նախորդ շրջանի պատմիչների էական տարբերութիւնն այն է, որ սոքա ընդհանրապէս զուրկ են Ե դարու հեղինակների հմտութիւնից և իմաստասիրական ուղղութիւնից, որով փոխանակ քաղաքական իրողութիւնների պատճառներն ու հետևանքները հետազօտելու՝ յաճախ բաւականանում են սաղմոսի, մարգարէների ու աւետարանի վկայութիւնները մէջ բերելով, և ամեն բանի մէջ առհասարակ Նախախնամութեան մատն են տեսնում։ Այս կրօնական-բարոյական ուղղութիւնը, որ մեր հին գրականութեան ընդհանուր յատկանիշն է, հետզհետէ աւելի է զօրանում, բայց և այնպէս հայ պատմագրութիւնը շարունակում է մինչև վերջը հաւատարիմ մնալ իր գլխաւոր սկզբունքներին, այն է՝ ճշմարտասիրութեանը և ժամանակագրական ճշմարտութեանը, և այս կողմից է, որ նա արևմտեան գիտութեան մտադրութեանն արժանի համարուած է։

Մովսէս Կաղանկատւացին է *այս ժամանակի առաջին պատմիչը, որ գրեց Աղուանից ազգի պատմութիւնը, միակ գրուածքը իր տեսակի մէջ, ուստի և առանձին ուշադրութեան արժանի։ Աղուանից լեռնական ազգը, որի ծագումը և նախնական պատմութիւնը մթութեան քօղով է ծածկուած, Արշակունեաց ժամանակ նախ Հայաստանի քաղաքական՝ ապա նաև կրօնական և կրթական ազդեցութեան ենթարկուեցաւ։ Քրիստոնէութիւնը Հայաստանից մտաւ նոցա երկիրը, և Լուսաւորչի թոռը Գրիգորիս եղաւ նոցա առաջին կաթողիկոսը, և թէպէտ ս. Մեսրոպ, ինչպէս վրաց, այնպէս և Աղուանից համար գրեր ստեղծեց, բայց սոցա լեզուն չմշակուեցաւ, այլ հայերէնն եղաւ նոցա եկեղեցական և գրական լեզուն։ Այս լեզուով գրեց և Մովսէս իր պատմութիւնը, որ երեք գիրք է բաժանւում, բայց առաջին երկուսը միայն այս հեղինակինն են, իսկ երրորդը մի ուրիշ համանուն պատմիչի։ Աղուանից պատմութեան առաջին դարերի վրայ ոչինչ չէ գտնում ասելու Մովսէս մինչև Առան իշխանը, որ Սիսակ Հայկազն իշխանի ցեղից էր, և Վաղարշակի օրով Աղուանից վերակացու կարգուեցաւ։*

Բայց և Աղուանից յետոյ էլ իսկապէս շատ քիչ բան է հաղորդում մինչև Վաչագան Գ թագաւորը, որ Ե դարու վերջերն էր ապրում։ Այնուհետև պատմութեան մէկ-երկու միջոցների վրայ էլ լռութեամբ անցնելով՝ գալիս հասնում է մինչև Ջւանշէր ժամանակակից թագաւորը (Է դարու վերջերը), որի գործերը և դժբաղդ վախճանը մանրամասնօրէն և կենդանի գոյներով նկարագրում է։ Իսկ Կաղանկատուացու շարունակողը, աւելի համառօտ և հասարակ լեզուով, այս գործը հասցնում է մինչև Ժ դարու վերջերը։ —Ը դարը միայն մի պատմագիր է ներկայացնում մեզ, Ղևոնդ Երէցը, որ նկարագրում է արաբացոց արշաւանքները և տիրապետութիւնը Հայոց երկրի վրայ մինչև 778 թիւը։ Իւր պատմածներին մեծ մասամբ ժամանակակից և ականատես լինելով, Ղևոնդ ամենայն հաւատարմութեան արժանի է, և նրա երկասիրութիւնը շատ յարգի է՝ միակ աղբիւր իւր ժամանակի պատմութեան։—Թ դարու երկու ականաւոր պատմիչներն են Յովհաննէս կաթողիկոսը եւ Թովմա Արծրունին։ *Յովհաննէս կաթողիկոսի պատմութեան գլխաւոր նիւթն է Բագրատունեաց առաջին երեք թագաւորների՝ այն է Աշոտ Ա-ի, Սմբատ Ա-ի և Աշոտ Բ-ի գործերը և նոյն ժամանակ Հայոց երկրում պատահած դէպքերը, որոնց անձամբ ականատես եղած, մասամբ նաև մասնակցութիւն է ունեցած, և այս է իսկապէս գրքի հետաքրքրական մասը։ Բայց հեղինակը կամենալով մի ամբողջ բան տալ ընթերցողներին, իւր պատմութիւնը սկսում է մեր ազգի սկզբնաւորութիւնից, համառօտապէս ներկայացնելով Հայկազանց, Արշակունեաց, մարզպանների ու ոստիկանների ժամանակները։ Այս համառօտութեան մէջ (17 գլուխ 187-ից) պատմիչը դժբաղդաբար ոչինչ բան չի յայտնում, այլ կրկնում է իւր նախորդների, գլխաւորապէս Մովսէս Խորենացու ասածները, որի բառերն ու դարձուածները անգամ յաճախ իւր գրչի տակ գալիս են։ Աւելի հմտութիւն է ցոյց տալիս Թովմա Արծրունին իւր Արծրունեաց տոհմի պատմութեան մէջ։ Չբաւականանալով տոհմային և արտաքին պատմիչների հետազօտութեամբ, Թովմա*

հարկաւոր համարեց անձամբ շրջել Հայաստանի այլ և այլ քաղաքներն ու գաւառները, և հնութեան յիշատակներից քաշել այն տեղեկութիւնները, որ պատմութիւնը մոռացել է գրի առնել։ Իւր գործը հասցնում է պատմիչը մինչև Արծրունեաց առաջին թագաւորը՝ Գագիկ, որի բարեմասնութիւնները. քաջութիւնը, իմաստութիւնը և աշխարհաշինութիւնը նկարագրելով կարծես ուզում է արդարացնել նրան, թագաւորութիւնը այս ձիրքերի և ոչ փառասիրութեան արդիւնք համարելով։ Ինչպէս Թովմա Արծրունու, այսպէս մանաւանդ Յով. կաթողիկոսի ոճի ու լեզուի մէջ նկատւում են այն թերութիւնները, որ վերը յիշատակեցինք։—Ժ դարում Ստեփաննոս Ասողիկ Տարօնեցին գրեց իւր պատմութիւնը երեք գրքի բաժանուած, որոնց առաջին երկուսի մէջ խօսում է հին ժամանակների վրայ, սկսելով ստեղծագործութիւնից ու հասնելով մինչև Բագրատունեաց թագաւորութիւնը։ Իւր երկասիրութեան այս մասի մէջ շատ դէպքեր է առաջբերում, բայց սորա հակառակ լռութեամբ անցնում է մեր ազգի սկզբնաւորութեան և ընդհանրապէս Հայկազանց հարստութեան վրայ և ոչինչ յոյս չի տալիս Հայաստանի առաջին երկու հարստութիւնների մթին ժամանակների վրայ, ինչպէս նաև Վահէի ու Վաղարշակի միջև եղած անիշխանութեան ժամանակի վրայ։ Այս մեղադրանքից ազատ է մնում հեղինակը, երբ գալիս է պատմելու իւր ժամանակի անցքերը (Գ գիրք), ընդարձակօրէն խօսելով և նորանոր դէպքեր հաղորդելով Բագրատունեաց թագաւորութեան ծագման և այս հարստութեան աշխարհաշէն կարգերի ու գործերի վրայ, մինչ Գագիկ Ա. (1004), որի հրամանով շարադրած է Ասողիկ իւր պատմութիւնը։ Վերջապէս ԺԱ դարու կէսին Արիստակէս Լաստիվերցին գրեց իւր ողբերգական պատմութիւնը Բագրատունեաց թագաւորութեանց անկման և այս ցաւալի դէպքերին հետևող Հայաստանի թշուառութեան վրայ։

Կրօնական բանաստեղծութիւնն էլ ունի իւր մի քանի ներկայացուցիչները, որոնց ընտիր տաղերը մինչև այսօր

երգւում են Հայոց եկեղեցում։ Այսպէս, Սահակ Ձորափորեցու ս. Խաչի շարականները, վսեմ ու սքանչելի իմաստներով, որոնց մէջ ս. Խաչը նկարագրւած է որպէս զէն յաղթութեան և միանգամայն որպէս ապաւէն փրկութեան։

Գրիգոր Նարեկացին յօրինեց այլ և այլ գանձեր, տաղեր ու մեղեդիներ, նշանաւոր իրանց բանաստեղծական աշխուժով ու ինքնուրոյն կենդանի դարձւածներով։ Պետրոս Գետադարձ կաթողիկոսին ընծայւում են Մարտիրոսաց և Հանգստեան շարականները, նոյնպէս և մի քանի ուրիշ շարականներ, ընտիր թէ լեզուի և թէ բովանդակութեան կողմից, որոնք ընդհանուր անւամբ Մանկունք են կոչւում։ Առանձին տեղ է բռնում այս ժամանակի հեղինակների մէջ Գրիգոր Մագիստրոսը՝ իւր հմտութեամբը, գրւածների նիւթովը ու լեզուովը։ Բացի Խաչի տօնաւոր ներբողից և Հազար-տողեան քերթւածից, որ Հին և Նոր Կտակարանների համառօտութիւնն է, Մագիստրոս թողած է 80-ի չափ թղթեր, մասամբ արձակ և մասամբ էլ ոտանաւոր, այլ և այլ վարդապետական, իմաստասիրական և ընտանեկան նիւթերի վրայ։ Լեզուի կողմից Մագիստրոսի գրւածները ընդհանրապէս շատ խրթին ու մութն են. միայն վարդապետականները քիչ շատ հասկանալի են։

Բուն վարդապետական ճիւղին վերաբերեալ գրւածներով այս շրջանը, ինչպէս ընդհանրապէս մեր հին գրականութիւնը, շատ հարուստ է։ Գրեթէ չկայ մատենագիր, որ մի կամ աւելի ճառեր յօրինած և սրբազան գրքերի մէկ կամ միւս մասը մեկնած չլինի։ Մենք միայն այն գրւածները կը յիշենք, որ ժամանակի կրօնական խնդիրների արգասիք են, կամ առանձին գրական արժէք ունին։

Այս երկու նկատմամբ առաջին և ամենապատւաւոր տեղն ունի Յովհան Իմաստասէր Օձնեցին իւր երեք ճառերովը, որոնց մէջ հաւասար փայլում են հեղինակի աստւածաբանական խորին հմտութիւնը, զօրաւոր պերճախօսութիւնը և ընտիր հայկաբանութիւնը, և այս յատկութիւնների համար է որ Օձնեցին նշանաւոր հայ եկեղեցական

հայրերի կարգը դասելու արժանի համարած է։ Առաջին ճառն է Դվինի ժողովի մէջ ասած «Ատենախօսութիւնը» (719), որով յորդորում է ժողովականներին հսկել եկեղեցու բարեկարգութեան վրայ և չթոյլ տալ որ եկամուտ աղանդները ճարակ գտնեն ժողովրդի մէջ։ Երկրորդն է «Ընդդէմ Երևութականաց» ճառը, որով պարսաւում է մի կարգի աղանդաւորների մոլորութիւնը, որոնք Քրիստոսի տնօրէնութիւնները առ աչօք էին համարում։ Երրորդ ճառն է «Ընդդէմ Պաւլիկեանց» խօսածը, որոնք խաչին ու սրբերի պատկերներին յարգանք մատուցանելը կռապաշտութիւն էին համարում։—Ստեփ. Սիւնեցին թողեց երկու նշանաւոր թուղթ, մէկը Դաւիթ Ա. կաթողիկոսի հրամանով գրուած Յունաց Գերմանոս պատրիարքին, և միւսը Անտիոքի պատրիարքին, որոնցով պաշտպանում է Հայոց եկեղեցու դաւանութիւնը, ծիսական աւանդութիւններն ու տօնախմբութիւնները և մերժում է Յունաց պահանջը Քաղկեդոնի որոշումներին հպատակելու։— Խոսրով Անձևացեաց եպիսկոպոսը (Ժ դար) գրեց Ժամագրքի և Պատարագի խորհրդի մեկնութիւնը, պարզ և ընտիր լեզուով և նպատակն եղած է իւր հօտին լուսաբանել այն վսեմ աղօթքներն ու մաղթանքները, որ հաւատացեալները ամեն օր ուղղում են Աստուծոյ։—Անձևացեաց եպիսկոպոսի որդու հռչակաւոր Գրիգոր Նարեկացու բազմաթիւ վարդապետական երկասիրութիւններից ամենանշանաւորներն են Երգ Երգոցի մեկնութիւնը, որ նոյն իսկ օտար բանասէրների վկայութեամբ իւր տեսակի մէջ նմանը չունի, և մանաւանդ հանրածանօթ Աղօթագիրքը կամ Նարեկը, 95 գլուխներից կազմուած, որոնց ընդհանուր վերնագիրն է «Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»։ Որչափ առաջին երկասիրութեան լեզուն պարզ ու հասկանալի է, այնչափ երկրորդինը մթին ու դժուարիմաց է. սակայն Նարեկը իւր խրթնութեամբը հանդերձ այնպիսի սքանչելի գեղեցկութիւն և ոճի քաղցրութիւն ունի, որ ընթերցողը զմայլում է և կարծես կարդացածը մի հրեշտակային օրհներգութիւն լինի և ոչ սովորական աղօթքներ։

Ս. Պալասանեան

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ՕՐՈՎ

կնարկ ԺԲ—ԺԴ դարերի մատենագրութեան վրայ.—Վարդապետական գրուածներ.—Բանաստեղծութիւն.—Պատմագրութիւն։

Քաղաքական կեանքի վերականգնումը Ռուբինեանց ձեռքով և արևմուտքի հետ յաճախող յարաբերութիւնները բարեգուշակ նշաններ էին մեր գրականութեան համար։ Կարծես հայ հանճարի համար ժամանակն եկել էր իւր բազմադարեան կապանքներից արձակուելու և աւելի լայն ասպարիզի մէջ մտնելու։ Սակայն կրօնական խնդիրները, որ հայ միտքը շարունակ զբաղեցրել էին անցեալում, շուտով նոր զօրութեամբ արծարծուեցան, և մեր մատենագիրները ստիպուեցան աւելի քան երբէք առաջուան նեղ շրջանի մէջ ամփոփուիլ։ Վտանգն այս անգամ մեծ էր, որովհետև երկու հզօր կողմերից էր գալիս. Բիւզանդիոնի կայսրները և Հռոմի պապերը քրիստոնէական միութեան պատրուակով՝ սկսան ամեն ջանք ու ճիգ թափել Հայոց եկեղեցու անկախութիւնը բառնալ և իւրաքանչիւրը իւր իշխանութեանը ենթարկել։ Մեր հայրապետները, նկատելով կրօնական թշնամութիւնից առաջ եկած չարիքները, ազգի ողջամիտ մասի հաւանութեամբ փորձեցին սէր և միութիւն հաստատել աւետարանի հոգու համաձայն. բայց երբ հակառակորդների գաղտնի դիտաւորութիւնները պարզուեցան, ամենայն նախանձաւորութեամբ պաշտպանեցին Հայոց եկեղեցու ինքնուրոյնութիւնը, որ նոցա աչքում ազգային ինքնուրոյնութեան համահաւասար նշանակութիւն ունէր։ Սակայն պապականութիւնը յաջողեցաւ վերջապէս երկպառակութեան սերմը սերմանել ազգի մէջ. կրօնական վէճերն ու կռիւները բռնին այնտեղ հասցրին, որ համարիւն եղբայրները թշնամութեամբ և ատելութեամբ զին-

ւեցան միմեանց դէմ։ Գրականութիւնն էլ, որքան սկզբումը իւր դրօշակը բարձր պահեց, այնքան յետոյ ստորացաւ և մինչև հայհոյախօսութեան հասաւ պապականութեան մոլեռանդ կուսակիցների կամ Ունիթոռների կողմից։ Նոյնպէս և լեզուն, ԺԲ դարու գեղեցիկ արդիւնքների մէջ վերջին անգամ փայլելուց յետոյ, սկսաւ արագ արագ ընկնել։ Ունիթոռները՝ իրանց ոխերիմ ատելութիւնը ազգային կրօնից և ազգից մինչև իսկ լեզուի վրայ տարածելով, հայկական մաքուր բարբառը խանգարեցին ու աղաւաղեցին և կազմեցին մի անկենդան ու անճաշակ լեզու, որ թէպէտև արտաքին կերպարանքով հայերէն էր, բայց իրօք լատիներէնի վրայ կաղապարուած էր։ Այս ծանր վէրքերին դարման տանելու ձեռնարկւեցաւ միայն այն ժամանակ՝ երբ արդէն հին հայերէնի կողքին սկսում էր ծլել նոր հայերէնը, որին շուտով պիտի վիճակւէր հայ մտքի թարգմանը լինել ինչպէս կեանքի՝ այնպէս և գրականութեան մէջ։

Վերոյիշեալ հանգամանքներից պարզ յայտնի է որ այս գրականութեան վարդապետական ճիւղը մանաւանդ պիտի ծաղկէր և այս մասում առաջին տեղը գրաւում է **Ներսէս Շնորհալին**, Հայ եկեղեցու և գրականութեան ամենամեծ պարծանքներից մէկը (1102—1172)։ Հայրապետական աթոռը նստելով (1165), Ներսէս մի Ընդհանրական թուղթ կամ շրջաբերական ուղղեց իւր ցրւեալ հօտին, որի մէջ հաւատի դաւանութիւնը դնելուց յետոյ հայրական գեղեցիկ խրատներ է աւանդում ամեն աստիճանի ու պայմանի անձանց, եկեղեցականներից ու իշխաններից սկսած մինչև երկրագործներն ու զինւորները։ Ընդհանրականը իւր ընտիր լեզուի և մանաւանդ չքնաղ բովանդակութեանը համար այնպիսի ընդունելութիւն գտած է մեր մէջ, որ Շնորհալու յաջորդներից ոմանք իրանց գահակալութեան առիթով այս թուղթը ընդօրինակած և ժողովրդի մէջ ցրւած են։ Ընդհանրականից յետոյ գալիս են այն թղթերը, որ Շնորհալին յունաց յուզած միութեան խնդրի պատճառով գրած է Կիր Մանուէլ կայսեր, նորա Ալեքս փե-

սին և Միքայէլ պատրիարքին (թւով 5), որոնց մէջ Հայոց եկեղեցու ուղիղ դաւանութիւնը բացատրում և ծէսերն ու արարողութիւնները պաշտպանում է. և երբ յունական մոլեռանդութիւնը դորանով չի բաւականանում, մի 6-րդ թուղթ էլ գրում է առ համօրէն եպիսկոպոսունս և վարդապետս Հայոց աշխարհին, որով հրաւիրում է նոցա գումարւիլ և ժողովով պատասխանել Յունաց առաջարկութիւններին։ Բայց այս շրջաբերականի պատասխանը դեռ չստացած՝ Շնորհալին վախճանեցաւ և գործը առ ժամանակ կախ մնաց։ Թէ այս միութեան և թէ ուրիշ խնդիրների առթով մի քանի ուրիշ թղթեր էլ ունի գրած Շնորհալին, որք են՝ Առ ժպիրհ ոմն երեք թուղթ, որոնցով յանդիմանում է մի անծանօթ անձի յանդգնութիւնը, որ նախատալից թղթեր է գրել Շնորհալուն Յունաց հետ ունեցած յարաբերութիւնների համար։ Գիր շրջաբերական 'ի կողմանս արևելից 'ի Կարս, որով նոյն քաղաքի վախճանեալ եպիսկոպոսի տեղ նոր առաջնորդ է կարգում և իմաստուն խրատներ է տալիս քաղաքացոց իրանց կենցաղավարութեան համար։ Բան մխիթարութեան առ վտանգեալն մարմնով, որով մխիթարում է Եդեսիայի այն բնակիչներին, որոնք ուրուկութեան ախտով բռնւած՝ անարգւում ու նախատւում էին իրանց համաքաղաքացիներից։ Յաղագս Արևորդեացն դարձի, Սամոսատի եպիսկոպոսին գրած, որով ուսուցանում է թէ ինչպէս պէտք է աշակերտել նորադարձներին, որոնք ազգով հայ էին և հին ժամանակներից հեթանոսութեան մէջ մնալով՝ արևին ու բարդի ծառին պաշտօն էին մատուցանում։ Շնորհալին իւր բեղմնաւոր գրիչը գործ է դրել նոյնպէս մի քանի մեկնողական երկասիրութիւններ յօրինելու. այսպէս են՝ Մեկնութիւն Դաւիթ Անյաղթի «Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր» սկզբնաւորութեամբ ճառի, որ իւր խրթին ոճովը շատերին անհասանալի եղած էր. Մեկնութիւն Կաթողիկեայց, համառօտ բայց ընտիր գրւած, և Մեկնութիւն Մաթէի, որ հեղինակի մահւան պատճառով անկատար մնաց և յետոյ Յովհ. Երզնկացին աւարտած է։ Առանձին յիշատակութեան

արժանի է դարձեալ Հաւատով խոստովանիմ հանրածանօթ աղօթքը, որ 24 տուն ունի՝ օրուան 24 ժամերի համար, և համարեա բոլոր ծանօթ նոր լեզուներով թարգմանուած է։

Միութեան խնդիրը դարձեալ շարժեցաւ Շնորհալու եղբօրորդի և յաջորդ Գրիգոր Դ Տղայի օրով, նոյն Մանուէլ կայսեր և Յունաց Միքայէլ պատրիարքի կողմից, որոնց երեք թուղթ հետզհետէ գրեց Գրիգոր Դ, պաշտպանելով Հայոց եկեղեցու ծէսերն ու արարողութիւնները. և թէպէտ կայսեր ստիպմամբ Հռոմկլայում ժողով գումարուեցաւ (1179), բայց այս ժողովը ոչինչ արդիւնք չունեցաւ, և զանազան կողմերից ամբաստանութեան թղթեր թափւեցան կաթողիկոսի վրայ։ Գրիգոր Տղան այս ամբաստանութիւններին պատասխանելու համար երկու թուղթ գրեց Առ Հաղբատացիս և մանաւորապէս առ Գր. Տուտէորդի և Առ Վարդապետս Հիւսիսոյ, որոնց մէջ իւր դէմ եղած զրպարտութիւնները հերքում է և ազգային Եկեղեցու անկախութեան ախոյեան է կանգնում։ Ընդհանրապէս Շնորհալու ոճին է հետևում Գր. Տղան իւր թղթերի մէջ, բայց ոչ իւր հօրեղբօր ոճի վսեմութիւնն ունի և ոչ նորա ընդհանրացած հեղինակութիւնը։

Նոյն ժամանակի կրօնական խնդիրների մէջ գործունեայ մասնակցութիւն ունեցած է հայկական գրականութեան փայլուն հանճարներից մէկը՝ Ներսէս Լամբրոնացին (ծն. 1153-ին), որ իւր սքանչելի պերճախօսութեան համար Տարսոնեան փող և երկրորդ Պօղոս առաքեալ կոչուեցաւ։ Իւր գրական արդիւնքների մէջ մտադրութեան արժանի է նախ Հռոմկլայի ժողովում խօսած ատենաբանութիւնը, որի մէջ քրիստոնէական եղբայրսիրութեան և միաբանութեան ջատագով է հանդիսանում այնպիսի գերազանց պերճախօսութեամբ, որ օտար բանասէրներից ոմանք հայ հռետորին Դեմոսթենէսին ու Կիկերոնին են հաւասարում։ Յունական միութեան խնդիրը դեռ շարունակում էր մտքերը յուզել, և ահա երևան եկան պապական հետամտութիւնները, առաջարկելով նախ մի քանի ծիսական փոփոխութիւններ, որոնց շուտով հետևելու էին դա-

ւանաբանական փոփոխութիւնների պահանջումները (Հոգւոյն Սրբոյ բղխման խնդիր)։ Արևելեան վարդապետները (Զորագետացիք ու Շիրակացիք) կասկածելով որ Կիլիկիայի եպիսկոպոսներից ոմանք լատինական առաջարկութիւններն ընդունելու համամիտ են, և Ն. Լամբրոնացուն այս կուսակցութեան պարագլուխ համարելով, ամբաստանեցին նորան Լևոն Բ-ի առաջ։ Լամբրոնացին իւր պաշտպանութեան համար գրեց իւր հռչակաւոր թուղթն առ Լևոն, որի մէջ ցոյց է տալիս թէ ինքը իբրև Աւետարանի աշակերտ հաղորդութիւն ունի բոլոր քրիստոնեայ ազգերի հետ, բայց միանգամայն իբրև հայ անդրդուելի մնում է իւր հայրերի դաւանութեան մէջ։ Բացի այս գրուածներից, որոնք սերտ կապակցութիւն ունին ժամանակակից խնդիրների հետ, Լամբրոնացին թողած է նոյնպէս շատ մեկնողական գրուածներ և ճառեր։ Մեկնողականների մէջ նշանաւոր է մանաւանդ Պատարագի իմաստալից մեկնութիւնը, որի մէջ հեղինակի մեծ հմտութեան հետ երևում է ու նորա լայն հայեացքը կրօնի վրայ. թող ուրիշ մեկնութիւնները, որպիսի են Սաղմոսի, Սողոմոնի Առակաց, Ժողովողի և իմաստութեան գրքերի և 12 փոքր մարգարէների մեկնութիւնները, որոնք Լամբրոնացու երիտասարդութեան տարիների գործեր են։ Իսկ ճառերից ընտիր են մանաւանդ Համբարձման և Հոգեգալստեան վրայ խօսածները, թէև ի Փոխումն Կուսին, յԱնառակ որդին և ՚ի Տնտեսն ճառերն էլ հեղինակի սրտին ու գրչին անարժան գործեր չեն։

Պապական ազդեցութիւնը ժամանակի ընթացքում զօրանալով, ԺԴ դարում առաջ բերեց Ունիթոռների կամ Միարարների ընկերութիւնը, որ ազգային եկեղեցու դէմ կոյր ատելութեամբ լցուած՝ սկսաւ ամեն տեսակ աններելի միջոցներ գործ դնել նորա հիմունքը խորտակելու։ Սոցա դէմ խօսքով և գրչով զինուեցան Յովհաննէս Որոտնեցի և մանաւանդ Որոտնեցու հռչակաւոր աշակերտը—Գրիգոր Տաթևացին (1340—1411)։ Տաթևացու գլխաւոր աշխատութիւնները, որոնցով նա հզօր ախոյեան էր հանդիսանում Հայոց եկեղեցու թշնամիների դէմ, և նորա երկհատոր

Քարոզգիրքը, որ բովանդակում է 200-ի չափ քարոզներ այլ և այլ բարոյական և վարդապետական նիւթերի վրայ, և Գիրք Հարցմանց, նոյնպէս երկու հատորով, որի մէջ հարց ու պատասխանի ձևով խօսում է նախ Հրէից, Մանիքեցոց և ուրիշ աղանդաւորների դէմ, ապա ճառում է արարածների, մարդու կազմութեան, Քրիստոսի մարդեղութեան, աշխարհի վախճանի և հանդերձեալ կեանքի հատուցման վրայ։ Զօրաւոր և խիստ լեզու է բանեցնում Տաթևացին ազգային կրօնի թշնամիների դէմ, և այս խստութիւնը կատարելապէս արդարանում է Ունիթոռների անվայել ընթացքովը, որոնց մոլեռանդութիւնը մինչև այնտեղ էր հասնում՝ որ իրանց կողմը որսացողներին վերստին մկրտում և ձեռնադրում էին։

Ինչպէս վարդապետական գրականութեան, այնպէս և բանաստեղծականի մէջ այս շրջանի գլուխը կանգնած է Ն. Շնորհալին, վանկական և յանգաւոր տաղաչափութեան հաստատողն ու ծաղկեցնողը, որ նախորդ դարում Գր. Մագիստրոս սեպհականել էր Արաբացիներից։ Եւ թէպէտ Ն. Շնորհալու քերթողական երկասիրութիւնները միշտ անկեղծ ոգևորութեան և կենդանի երևակայութեան արդիւնք չեն, և յանգերի միակերպ վերջաւորութիւնն էլ երբեմն ձանձրոյթ է պատճառում, բայց այս թերութիւնները փոխարինւում են լեզւի ողորկութեամբ, իմաստների գեղեցկութեամբ և տաղաչափական արուեստի կատարելութեամբ։ Երեք ընդարձակ քերթւած թողեց Շնորհալին. 1. Եդեսիոյ ողբը, որի յօրինելու շարժառիթն եղած է յիշեալ քաղաքի կործանումը Զանգի Ամիրիայի ձեռքով (1144)։ Այս սրտաշարժ քերթւածը դիմառնաբար է շարադրւած. Եդեսիան լեզու է առնում և միառմի թւում է իւր անցեալ փառքը և ներկայ թշւառութիւնը։ 2. Յիսուս Որդի, որ Հին և Նոր կտակարանի համառօտութիւնն է աղօթական ձևով գրւած։ 3. Վիպասանութիւն, որ Հայոց պատմութեան համառօտ բովանդակութիւնն է ութոտնեան չափով և նոյնայանգ եալ վերջաւորութեամբ։ Իսկ Շնորհալու մանր ոտանաւոր գրւածները այնքան շատ են, որ երկար կը լի-

նէր միառմի թւել։ Բաւական է յիշել նրա մի քանի շարականները և նւագները, որ մինչև այսօր երգւում են Հայոց եկեղեցում. այսպէս են՝ Ազուհացից կիրակի օրերի շարականները, Ծաղկազարդի հարցը, Հոգեգալստեան չորս պատկերը, Վարդավառի երկու պատկերը, Հրեշտակապետաց, Վարդանանց և Ղևոնդեանց շարականները, Այսօր անճառը, Նորոգողը, Աստւած անեղը, Նայեաց սիրովը, Առաւօտ լուսոն, Աշխարհ ամենայնը և այլն։ Այս վերջիններից ոմանք այբուբենական կարգով յօրինւած. ոմանց էլ սկզբնատառերը կազմում են հեղինակի անունը։ ԺԳ դարը միայն մի ընտիր բանաստեղծ ունի Յովհան Երզնկացին, յայտնի իւր եռանդուն տաղերով ու շարականներով, որոնց մէջ նշանաւոր են Ջրօրհնեաց տաղերը (Յամենայն ժամ օրհնեմք և Այսօր ձայնն Հայրական) և Լուսաւորչի երկու շարականները (Լերինք ամենայն և Այսօր զւարճացեալ), Ս. Ներսէսի շարականը (Որ գլոյն անճառ) և Խոտաճարակաց շարականը (Յաւուրս վերջին ժամանակի)։ Երզնկացին մեր հին գրականութեան վերջին ընտիր մատենագիրն է համարւում։ Նրա բազմաթիւ երկասիրութիւնների մէջ ամենանշանաւոր և միանգամայն խորհրդաւորն է Քերականութեան մեկնութիւնը. խորհրդաւոր, որովհետև այս գործի մէջ հեղինակը մանրամասը հետազօտութիւններ է անում հին հայերէն լեզւի վրայ, որ արդէն գործածութիւնից ընկած էր և միայն գրքերի միջնորդութեամբ կարելի էր ուսումնասիրել։

Լեզւի անկումը նշմարելի է մանաւանդ ներկայ շրջանի պատմական գրւածների մէջ, որոնք երբեմն մինչև ռամկաբանութեան են հասնում։

Սոքա ոչ այնքան պատմութիւն են՝ որքան սովորական ժամանակագրութիւններ, հրաշալի դէպքերի և անհաւատալի աւանդութիւնների յիշատակութեամբ համեմւած։ Այս թերութիւններով հանդերձ հայ պատմագրութիւնը մեծ արժէք ունի արևմտեան Ասիայի ազգերի պատմութեան նկատմամբ. և այս է պատճառը որ եւրոպական գիտնականները այս կարգի գրւածները այլ և այլ թարգ-

մանութիւնների ու հետազօտութիւնների նիւթ արած են։

Գանք այժմ յիշատակելու այդ պատմիչներին։ Մաթէոս Ուռհայեցին գրեց մի հետաքրքրական ժամանակագրութիւն, որ բովանդակում է գլխաւորապէս իւր ժամանակի անցքերը մինչև 1136 թիւը։ Թէև մայր հայրենիքից հեռու՝ օտարազգիների մէջ էր ապրում Մաթէոս, բայց և այնպէս նորա սիրտը ջերմ հայրենասիրութեամբ վառուած է. այս զգացումն է որ հաւասար ատելութեամբ զինում է նորան յունական մոլեռանդութեան դէմ, մահմեդական բռնակալների դէմ, որոնք Հայաստանը արիւնով ողողում էին և նոյն իսկ Փրանկաց դէմ, որոնք Հայոց մի քանի գաւառների վրայ իշխում էին։ Սորա հակառակ մեծ ոգևորութեամբ խօսում է հայրենի յիշատակների վրայ, նա փառաւորում է Տաւրոսի Հայոց քաջութիւնն ու անձնուիրութիւնը, որոնք ամեն տեսակ օգնութիւններ ցոյց տուին Խաչակրաց մահմեդականների դէմ. սրտաշարժ լեզուով խօսում է Բագրատունեաց վերջին թագաւորի վրայ, որ իւր ազգակիցներից մատնուած՝ թագաւորութիւնից զրկւեցաւ և իւր կեանքը օտարութեան ու թշուառութեան մէջ աւարտեց։ Իւր հետաքրքրական տեղեկութիւնների հետ՝ երկու թանկագին յիշատակներ էլ է աւանդում մինչ Մաթէոս, այն է Զմշկիկ կայսեր Աշոտ Գ թագաւորին գրած թուղթը և Գագիկ Բ-ի Բիւզանդիոնի մայր եկեղեցու մէջ Կոստանդին կայսեր և յոյն կղերի առաջ խօսած ճառը Հայոց եկեղեցու պաշտպանութեան համար։ Ուռհայեցու շարունակողն եղաւ Գրիգոր Երէց, որ գրի առաւ Յովհաննէս Կոմէնոս կայսեր ասպատակութիւնները Ասորիք և Կիլիկիա, Եդեսիայի առումը Զանգիի ձեռքով, Իկոնիայի սուլթանների յարաբերութիւնները Ռուբինեանց հետ, Խաչակրաց պատերազմները Նուրէդդինի հետ, Վրաց թագաւորների գործերը վերին Հայաստանում, և այլն։ Ինչպէս Մաթէոսի, այնպէս և Գրիգորի ոճը անարուեստ է. երկուսն էլ համարեա իրանց ժամանակի խօսած լեզուովն են գրում։—Մաթէոսի գրեթէ ժամանակակից էր Սամուէլ Երէց Անեցին, հեղինակ մի համառօտախօս ժամանակագրութեան, որ սկը-

սում է առաջին մարդուց և հասնում է մինչև Քրիստոսի 1179 թուականը, բայց իրանից յետոյ զանազան անձինք շարունակած են մինչև ԺԷ դարու վերջը (1696)։ Սամուէլի գլխաւոր աղբիւրներն են հին ժամանակների համար՝ Եւսեբիոս Կեսարացին և Մովսէս Խորենացին։

ԺԳ դարու նշանաւոր մատենագիրներից է Վարդան վարդապետ, Յովհ. Վանական վարդապետի աշակերտը, որ բացի բազմաթիւ կրօնական գրուածներից և շարականներից, թողեց մի պատմութիւն՝ աշխարհի սկզբնաւորութիւնից մինչև իւր օրերը (1265)։ Իւր ժամանակի անցքերի նկարագրութիւնը այնպիսի հետաքրքրութիւն են տալիս գրքին, որ թէ հայ և թէ օտար բանասէրների մտադրութեան արժանի է։ Հայաստանի համառօտ Աշխարհագրութիւնն էլ թողած է Վարդան, որ Սէն Մարտէն հայերէնագէտը թարգմանեց ֆրանսերէն։—Կիրակոս Գանձակեցին, Վարդանի ընկերակիցը, գրեց մի համառօտ պատմութիւն Ս. Գրիգոր Լուսաւորչից մինչև իւր ժամանակները, ազգային ու արտաքին քաղաքական անցքերը միայն երկրորդաբար յիշատակելով։ Բայց երբ մօտենում է իւր ժամանակին, բաւական ընդարձակ կերպով նկարագրում է Թաթարաց ծագումը, բարքն ու սովորութիւնները, նոցա պատերազմները, Հայոց աշխարհում գործած անգթութիւնները, աւերումները, ժողովուրդին ծանր հարկատուութեան տակ դընելը, և այլն։ Գրքի այս հետաքրքրական մասերը թարգմանուած են ֆրանսերէն Բրոսէ և Դիւլորիէ արևելագէտների ձեռքով։—Սմբատ Գունդստապլ, Հեթում առաջինի եղբայրը թողեց մի համառօտ ժամանակագրութիւն, որի մէջ արձանագրուած է Յունաց և Հայոց երկիրներում հանդիպած նշանաւոր դէպքերը։ Մօտ չորս հարիւր տարուան անցքեր է բովանդակում այս գիրքը (951—1331), բայց վերջին վաթսուն տարիների դէպքերը ուրիշի ձեռքով են գրուած։—ԺԳ դարու վերջին և ԺԴ-ի սկզբին ծաղկեցաւ Ստեփան Օրբէլեան Սիւնեաց եպիսկոպոսը, որ գրեց Սիւնեաց ցեղի պատմութիւնը իւր ծագումից մինչև նոյն տոհմի իշխանութեան բարձումը, նշանակելով միանգամայն

Սիւնեաց աշխարհում հանդիպած քաղաքական և կրօնական դէպքերը։ Օրբէլեանի երկասիրութեան Թաթարաց վերաբերեալ հատուածները թարգմանուած են լատիներէն, իսկ ամբողջ պատմութիւնը հրատարակուած է ֆրանսերէն թարգմանութեամբ։ — ԺԴ դարու պատմիչներն են նոյնպէս Մաղաքիա աբեղայ եւ Մխիթար Այրիվանեցին։ Մաղաքիան նկարագրում է Թաթարաց արշաւանքը, Հեթում Ա-ի դաշնակցութիւնը Հուլաղուի հետ, Ցընգխատրի Կիլիկիա արշաւելը, Լեւոն արքայորդու գերութիւնը և ազատութիւնը։ Իսկ Մխիթար Այրիվանեցին թողեց մի համառօտ ժամանակագրութիւն աշխարհի ստեղծագործութիւնից մինչև իւր օրերը (1328)։

Ս. Պալասանեան

ՔՈՒՉԱԿ ՆԱՀԱՊԵՏԻ ԴԻՒԱՆԸ

Տաղիկներու փոքրիկ հաւաքածուն, որ մեզի մնացած է Նահապետ Քուչակէն, ամենէն մաքուր ադամանդն է, զոր մեր հին գրականութիւնն արտադրած ըլլայ, և ապշեցուցիչ բան մըն է, որ այդ գործը, ինչպէս և անոր հեղինակին անունը, մինչև ցարդ անծանօթ մնացած ըլլայ ոչ միայն մեր հասարակութեան, այլև նոյնիսկ մեր գրագէտներուն։

Ո՛չ մէկ կենսագրական ծանօթութիւն չունինք, դժբաղդաբար, Քուչակի վրայ։ Կը կարծուի, որ ծնած և ապրած է ԺԶ դարու առաջին կիսում, Վանայ մօտ, Խարակոնիս գիւղում, ուր և թաղուած է։

Իբրև հեղինակ այս տաղաշարքին, Քուչակ կը դառնայ մեզի համար ամենէն ինքնատիպ և ամենէն անուշ երգիչը հին հայութեան, շատ բարձր՝ միջնադարեան բոլոր միւս ծանօթ քերթողներէն, Գրիգոր Աղթամարցիէն, Մկրտիչ Նաղաշէն, Յովհ. Թլկուրանցիէն, Ֆրիկէն, Սեբաստացի Ղազարէն, նոյն իսկ բարձր՝ Շնորհալիէն և բոլոր մեր միւս դասական բանաստեղծներէն, իրեն հետ բաղդատուելու արժանի ունենալով միայն Գրիգոր Նարեկացին, որի միստիքական մղձաւանջին, քրիստոնէական խաւարչին եղերգութեան ձայնն է, ինչպէս Քուչակը՝ անկաշկանդ ու սիրով արբշիռ սրտին հրճուանքներուն, ցաւերուն, երազանքներուն ու խոհանքներուն անմահ դայլայլը։

Ա. Չօպանեան

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

Ես ձագ ծիծեռնիկ պիտէի, զօրն ըզքո տուն մտնուի.
Ան բարձր մօյտան չարտախդ՝ ես ի հոն բուն մը շինէի.
Ոնց որ մուխն մթանայր, ցածնայի ծոցդ մտնուի.
Ոնց որ լոյսն լուսնայր, բարձրանայի բունս մտնուի.
Ես ապրշումէ խուշաղ [1]), զօրն գքո միջաց գիրկ ածէի,
Կամ քաղցր նռան գինի, զօրն ըզքո փարչդ պիտէի,
Ասնիր ու բերնիդ դընիր, ցածնայի դունչդ պագնէի։

— —

Երեսդ է լուսին նման ու զիլֆերդ [2]) ի զատիր գիշեր.
Ընքերդ Բեհեշտի խնձոր և ի ծովուն տուած քեզ աչեր.
Ունեիր կեռ ու մեռ ունիս, թուխ աչեր, թարթիչդ է նետեր.
Բերանդ է լալէ փղան [3]), մէջն ի լիք է մարգարիտներ։

ԽՐԱՏԱԿԱՆ

Այն օրն ի մօրէդ ծնար, դուն լայիր՝ ամեն խնդային,
Հանց մաքուր եւ ի յաշխարհէն, թէ երկիր լայ նա՝ դու ծիծաղիս։

— —

Արեկ, որ խրատ մը տամ. խելք ու միտք ունիս նա լսէ.
Հետ անգէտին մի՛ զատիր, թէ հազար որ զքեզ կու սիրէ։
Անգէտն է ի հուր նման, ուր ընկնի՝ զտեղ կու էրէ.
Գիտուն ի ջուրն նման. ուր երթայ՝ կանանչ բուսեր է։

— —

Յաշխարհս ես ի ժուռ եկայ, չգտայ ըղորդ սիրելի.
Զինելքս ի վրաս բերի, զբազուկս արի սիրելի.
Բանի բազուկս ի բան կենայ, շատ եղբայր ու շատ սիրելի.
Բազուկս ի բանէ ընկնի, ոչ եղբայր, ոչ սիրելի։

— —

Հա՛յ երամ, դուք էր կուլաք. գիտէք որ ձեր Տէրն տի գայ.
Շատոց մթան լոյս արեր, կու վախէք թէ ձերն ուշանայ...

[1]) Գօտիկ։ [2]) Գանգուրներ։ [3]) Զայն, ադմուկ։

ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳԵՐ

«Գնամ ու գնամ», կ՚ասէր իմ մանչուկն, ես ատալու չի․
Երբ «բարով մնա» ասաց, ես աւօտ չաւօտ [1]) մնացի․
Երբ ոտքն ի զանգուն [2]) ի դիր, ես հայրան իվայր մնացի․
Այլ բան չի կարցի ասիլ․ «Ուր կ՚երթաս, ճամփիկդ ի բարին․
Ան ճամբան որ դուն երթաս՝ վարդ ու մուրտ առջևդ բուսնին․
Ան քաղաքն որ դու մտնուս՝ գրողին ձայնն չի հասնի․
Ան մէճլիսն որ դու նստիս՝ գաւաթներդ գինով լցուի․
Ծովերն այլ գինի դառնայ ու նաւերը տոստողանի» [3]):—

Քուչակ Նահապետ

1) Կասկածոտ, (հաւատացող-չհաւատացող)։ 2) Ասպանդակ։
3) Բարեկամաց։

ՎԵՆԵՏԻԿԻ ԵՒ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ

Վենետիկի նշանաւոր հնութիւնները և յիշատակարանները դիտելուց յետոյ՝ զբօսաւէր ճանապարհորդներից քչերը միայն կը հեռանան այդ «ծովերի թագուհի» մայրաքաղաքից՝ առանց այցելելու Ս. Ղազարի կղզին, որտեղ, անցեալ դարու առաջին քառորդում շատ դժպատեհութիւններից և թափառումներից յետոյ՝ ապաստան գտաւ մի փոքրիկ հայկական գաղութ։ Ս. Ղազարի կղզու մեծահամբաւութեան մասին վկայում են թէ այցելուների ստւար մատեանը, որտեղ մենք կարող ենք կարդալ զանազան ազգութիւններին պատկանող անձանց անունները, և թէ դէպի կղզին անդադար դիմող գոնդոլների երամը։

Մխիթարեան մենաստանի հիմնարկութիւնը տեղի է ունեցել անցեալ դարու առաջին քառորդում, երբ 1717 թւին Վենետիկեան հանրապետութեան հրամանագրով ս. Ղազարի կղզին, որ երբեմն բորոտների ապաստարան էր, յանձնւում է ի մշտական սեփականութիւն Մխիթար վարդապետին և նրա աշակերտներին, որոնք ոտք էին դրել Վենետիկ դրանից երկու տարի առաջ յունական Մեթոնէ քաղաքից (Պելոպոնէզոսի հարաւ արևմտեան մասում), որտեղ նրանք շարունակ ենթարկւում էին վտանգների թուրք խաժամուժ զօրերից։ Բայց ո՞վ էր հեռաւոր Հայաստանի այդ զաւակը—Մխիթարը։

Մխիթարը ծնւել է Փոքր-Ասիայի Սեբաստիա քաղաքում 1676 թ. փետրւարի 7-ին. Նրա հօր անունը Պետրոս Մանուկեան էր և մօր անունը՝ Շարհիստան։ Պատանի Մանուկ (այդպէս էր Մխիթարի անունը մինչև հոգևոր կոչում ընդունելը) երկու բարեպաշտ կանանց դաստիարա-

կութեան և խնամքի տակ մեծանալով՝ որոնց բարերար ազդեցութիւնը իր վրայ նա միշտ գոհունակութեամբ խոստովանում էր, ցոյց էր տալիս մի առանձին սէր դէպի ուսումն և, զուգրնթացաբար, հակումն դէպի կրօնաւորութիւն։ Սարկաւագ ձեռնադրուելուց յետոյ՝ Մխիթարը մի փոքր ժամանակ մնաց Սեբաստիայի Ս. Նշանի վանքում, որտեղ նա ուսումնասիրում էր Ս. Գիրքը, մինչև որ նրան ներկայացաւ բարեյաջող առիթ ս. Էջմիածին ուղևորուելու։ Ս. Էջմիածնում Մխիթարը հիւանդացաւ և երկար չկարողացաւ մնալ։ Այստեղից սեբաստացի մի բարեկամի հետ նա Սևանայ վանքը մեկնեց, բայց այստեղ ևս Մխիթարին վիճակւած չէր երկար մնալու, որովհետև ամայի կղզու կեանքը չէր կարող գոհացում տալ նրան։ Անցնելով Երևան, հայրենիք վերադառնալու դիտաւորութեամբ՝ նա ընդհատեց իր ճանապարհը Հասան-Կալայում, որտեղ Ս. Աստուածածնի վանքի վանահայրը առաջարկեց նրան դասատուի պաշտօն վանական դպրոցում։ Մէկ տարի ու կէս մնալով այս պաշտօնի մէջ՝ Մխիթարը, ինչպէս հաւատացնում են նրա կենսագրողները, հնարաւորութիւն ունեցաւ մօտէն ծանօթանալու կաթոլիկ եկեղեցու դաւանաբանութեանը, որովհետև այս կողմերում մանաւանդ Կարինում, պապական պրոպագանդան մեծ ծաւալ էր ստացել։ Կարինում Մխիթարը ծանօթացաւ մի անձնաւորութեան հետ, որ եղել էր Հռոմում. սա պատմեց Մխիթարին պապի հզօրութեան, նրա պալատի շքեղութեան, յաւիտենական քաղաքի տաճարների փարթամութեան և վեհութեան մասին։ Այս պատմութիւնները, անշուշտ, դիւրազգաց երիտասարդի վրայ ունեցան իրանց ազդեցութիւնը։ Կարինից Մխիթարը ճանապարհ ընկաւ Երուսաղէմ, որտեղից նա մտադիր էր ուղևորուել Իտալիա, սակայն նրա բաղձանքը անկատար մնաց. ճանապարհին նա հիւանդացաւ և 1695 թ. վերադարձաւ հայրենիք։ Յաջորդ տարին այս ոգևորուած երիտասարդը Կարինում վարդապետ ձեռնադրուեց։ Իր շրջագայութեան ժամանակ Մխիթարը մօտէն ծանօթացել էր իր հայրենակիցների հոգևոր պէտքերի հետ և

այդ ժամանակներն է, որ նրա մէջ յղանում է մի միտք՝ հիմնել մի կրօնական-գիտական ընկերութիւն, որի նպատակը լինէր պատրաստել քարոզիչներ և ուսուցիչներ հայ ժողովրդի համար։ Բայց մի այդպիսի ընկերութիւն կազմելը Մխիթարի ույժերից վեր էր, մանաւանդ որ նա ինքը դրա համար բաւարար կրթութիւն չունէր, ուստի նա ուղևորւում է Կ. Պօլիս և յայտնում է իր մտադրութիւնը Խաչատուր վարդապետին, որը ուսել էր կաթոլիկների դպրոցում և յայտնի էր իբրև գիտնական և եռանդոտ անձն։ Փոխանակ խրախուսելու և աջակցութեան՝ Խաչատուր վարդապետը զանազան արգելիչ հանգամանքներ մէջ բերելով, մերժեց Մխիթարի ծրագիրը և վերջինը դարձեալ ձեռնունայն վերադարձաւ հայրենիք 1698 թ.։ 1700 թւին Մխիթարը կրկին գալիս է Կ. Պօլիս իր աշակերտների հետ. այդ ժամանակ Թիւրքիայի մայրաքաղաքի հայ հոգևորականութիւնը կատաղի կռիւ էր մղում հայ ժողովրդի մէջ տարածւող կաթոլիկ պրոպագանդայի դէմ։ Մխիթարը՝ հէնց այդ ժամանակ իր լատիներէնից թարգմանած մի քանի հրատարակութիւնների պատճառով հայ հոգևոր իշխանութեան կողմից կասկածի տակ ընկաւ, այնպէս որ նա ստիպւած էր առժամանակ արձակել իր աշակերտներին և պատսպարուել Կապուցինների վանքում։ 1701 թւի սեպտեմբերի 8-ին նա կազմում է իր աշակերտներից մի վանական միաբանութիւն, որի նպատակը պէտք է լինէր՝ ուսումնասիրել բոլոր հարկաւոր գիտութիւնները և նպաստամատոյց լինել հայ ժողովրդի հոգևոր պէտքերին։ Ամենայարմար երկիրը, որտեղ միաբանութիւնը կարող էր հաստատուել, համարւում է Վենետիկի իշխանութեան տակ գտնւող Մորէան։ Վերջապէս բազմաթիւ արկածներից և վտանգներից յետոյ Մխիթարը իր աշակերտների հետ փոխադրւում է այստեղ։ Մխիթարի խնդրանօք Վենետիկի կառավարութիւնը տալիս է նրան հող՝ վանքը կառուցանելու համար, և երկու կալւածք, որոնց եկամուտներով միաբանութիւնը պէտք է պահպանէր իր գոյութիւնը։ Երբ Վենետիկեան հանրապետութեան սահմաններում նոր հաստատ-

ուած միաբանութեան լուրը հասաւ Հռոմ, Մխիթարը հարկադրուած եղաւ միաբանութեան կանոնադրութիւնը ներկայացնել պապական իշխանութեանը և ձեռք բերել նրանից վաւերացում 1712 թ.: Այս հանգամանքներում յակամայից, ինչպէս կարծում են կենսագրողները, տեղի ունեցաւ Մխիթարի յարումն կաթոլիկ եկեղեցուն և պապի գերիշխանութիւնը ընդունելու անհրաժեշտութիւնը:

Սակայն Մխիթարին և նրա աշակերտներին երկար չյաջողուեց մնալ Մորէայում. Թիւրքիայի ու Վենետիկի մէջ ծագած պատերազմը ստիպեց Մխիթարին թողնել Մորէան և որոնել նոր ապաստարան: 1715 թ. նա իր աշակերտների հետ գալիս է Վենետիկ: Վենետիկի հանրապետութեան ծերակոյտը չմերժեց իր հովանաւորութիւնը փախստականներին. Թիւրքերից յափշտակած հողերի փոխարէն որոշեց տալ Մխիթարին ի մշտական սեփականութիւն ս. Ղազարի կղզին, որ հեռու չէր նոյն իսկ Վենետիկից, բայց քաղաքի սահմաններից դուրս էր համարւում: 1717 թ. սեպտեմբերի 8-ին՝ միաբանութեան հաստատման տարեդարձի օրը, Մխիթարը փոխադրուեց կղզին և ձեռնամուխ եղաւ վանական շինութիւնների կառուցմանը. Թէ վանական կառավարութեան և թէ մասնաւոր նուիրատուների նպաստների շնորհիւ Մխիթարեաններին այս անգամ յաջողուեց Իտալիայի հողի վրայ աւելի հաստատուն հիմք դնել: Երեսուն տարուց աւելի Մխիթարը անցուց ս. Ղազարի կղզու վրայ, բոլորովին նուիրուած լինելով նրան բարեկարգելու հոգսերին: Կառուցուելիք շինութիւններին վերահասու լինելով՝ նա գտնում էր ժամանակ գրական աշխատութիւնների համար ու հետամուտ էր լինում իր աշակերտների զբաղմունքներին. 1749 թւի ապրիլի 27-ին, 74 տարեկան հասակում, Մխիթարը կնքեց իր բազմարդիւն և ճակատագրի փոփոխականութեանը մատնուած կեանքը: Տարէցտարի Մխիթարեան միաբանութիւնը բարգաւաճում էր, սրա հետ միասին և աւելանում էր նրա անդամների թիւը: Ասիայի և Եւրոպայի զանազան տեղերից դիմում էին Վենետիկ աշակերտներ՝ ս. Ղազարու վանական վարժարանում Մխիթարի ղեկավարութեամբ կրթութիւն ստանալու համար: Միաժամանակ հարստանում էր և մատենադարանը, որը այժմ հսկայական ձեռագիրների քանակութեան նկատմամբ՝ ս. Էջմիածնի մատենադարանից յետոյ առաջին տեղն է բռնում. հիմնուեցաւ և տպարան, որը լոյս է ընծայել շատ ընտիր հրատարակութիւններ և անխոնջ աշխատում է մինչև այժմ: Անցնենք այժմ Մխիթարեանների գործունէութեանը:

Հայոց գրականութիւնը և լեզուն XIV դարուց սկսած հետզհետէ անկմանն էր մօտենում և հայ ժողովրդի կրթութիւնը զգալի կերպով ցած իջնում: Առանձին անհատների փորձերը՝ բարձրացնել լեզուն, գրականութիւնը և կրթութիւնը կատարեալ անկումից ոչ մի արդիւնաւէտ հետևանք չէին ունենում: Մխիթարեանները, որոնց գլխաւոր նպատակներից մինն էր հայ լեզուի մշակումը, ամենայն եռանդով սկսեցին ուսումնասիրել, մշակել և մաքրել գրաբարը և այդ բանի համար նրանք հրատարակեցին մի շարք քերականական ձեռնարկներ և բառգրքեր: Առաջին լիակատար քերականութիւնը գրաբարի, որ արժանի է այդ անուան, կազմուած է հայր Մխ. Չամչեանի ձեռքով: Քերականական աշխատութիւններին կից պէտք է յիշել նոյնպէս բառարանների վերաբերեալ աշխատութիւնները. դեռ ինքը Մխիթարը, իր միւս աշխատութիւնների թւում, թողեց երկհատոր բառգիրք հայ լեզուի, որ լոյս տեսաւ հեղինակի մահից յետոյ: Իր ժամանակի համար դա մի հսկայական գործ էր, եթէ ի նկատի առնենք, որ նա միանգամայն և անդրանիկ էր, իբրև այդ տեսակի աշխատութիւն: Միաբանութեան երեք անդամներ՝ Հ. Հ. Աւետիքեան, Սիւրմէլեան և Աւգերեան կազմեցին նոր (որ և կոչւում է մեծ) Հայկազնեան բառարանը. այդ վիթխարի գործը գլուխ բերելու համար պահանջուեց յիսնամեայ անդուլ աշխատանք: Գործի կէտ նպատակն էր՝ առաջադրել, որքան հնարաւոր էր այն ժամանակ, ամբողջ և առձեռն ճոխութիւնը գրաբարի: Հայ պատմութեան ուսումնասիրութեան շրջանում Մխիթարեանների գործունէութիւնը նշանաւոր

է, յատկապէս, նրանով, որ նրանք՝ իբրև առաջինք, ժողովեցին պատմութեան վերաբերեալ շատ նիւթեր. այդ տեսակէտից կարևոր է նոյն հայր Միք. Չամչեանի աշխատութիւնը. վերջինը հրատարակեց գրաբար ընդարձակ պատմութիւն Հայոց ամենահին ժամանակներից սկսած մինչև 1784 թ. երեք ստուար հատոր in 4։ Հայ աշխարհագրութեան և հնախօսութեան վերաբերեալ երկերից նախ պէտք է յիշել հայր Ինճիճեանի հիմնական աշխատութիւնները՝ «Աշխարհագրութիւն Հայոց» և «Հնախօսութիւն Հայոց»։ Վերջին ժամանակների պատմական-աշխարհագրական աշխատութիւնների մէջ խիստ կարևոր տեղ են բռնում գիտնական-բանաստեղծ հայր Ղ. Ալիշանի երկերը՝ Սիսուան, Այրարատ և Սիսական, որոնք ներկայացնում են Կիլիկիայի, Այրարատեան և Սիւնեաց նահանգների նկարագրութիւնները։ Հայ գրականութեան պատմութիւնը նոյնպէս սկիզբ է առել Մխիթարեանների մէջ. դեռ 1829 թ. արբահայր Սուքիաս Սոմալը հրատարակեց եւրոպական լեզուով հայոց գրականութեան վերաբերեալ առաջին համառօտ աշխատութիւնը, իսկ աւելի մշակւած գործ ներկայացնում է հայր Զարբհանալեանի երկհատոր պատմութիւնը Հայոց գրականութեան։ Վերջապէս Մխիթարեանները յայտնի են իբր անխոնջ հրատարակիչներ և թարգմանիչներ. նրանք ունին ընտիր թարգմանութիւններ հին և նոր լեզուներից. իբրև հրատարակիչներ՝ Մխիթարեանները մեծ ծառայութիւն են արել. նրանք հրատարակել են և հրատարակում են հին հայ գրականութիւնից բազմաթիւ յիշատակարաններ, որոնք հայ լուսաւորութեան և հրատարակչական գործի մէջ մի դարաշրջան են կազմում՝ թէ իբրև խնամքով տպագրւած և թէ նրբաճաշակ կազմւած։

Եւրոպական գիտութեան առաջ Մխիթարեանների ծառայութիւնները խիստ գնահատելի են այն տեսակէտից, որ նրանք մեծապէս նպաստել են հայագիտութեանը Եւրոպայում. Մխիթարեանների հրատարակած քերականութիւնները, բառարանները և հին հեղինակների բնագիրները եւրոպացի գիտնականների համար միակ և լիակատար

աղբիւրներն էին։ Մխիթարեանները իրանց ծառայութիւններով համակրութիւն և յարգանք վաստակեցին ոչ միայն հայերի կողմից, նրանք՝ իբրև օրինակելի աշխատաւորներ, յարգւում են և նրանց ապաստան տւող Վենետիկից և ապա ամբողջ գիտական Եւրոպայից։ Ուսումնականներից շատերը վայելել են նրանց խնամատար ուշադրութիւնը և սրտագին հիւրասիրութիւնը իրանց զբաղմունքների ժամանակ Մխիթարեանների հարուստ մատենադարանում. նրանց հիւրերի թւում մանաւանդ պէտք է յիշել լօրդ Բայրընին, որ Մխիթարեանների մօտ ուսանում էր հայ լեզուն. այն սենեակը, որտեղ պարապել է նա, մինչև այժմ կոչւում Բայրընի առանձնասենեակ։

Խօսելով Վենետիկի Մխիթարեանների մասին, չի կարելի անուշադիր թողնել և Վիեննայի Մխիթարեաններին։

Կրօնական հողի վրայ ծագած տարաձայնութիւնների վախճանը, որոնց մասին երկարաբանելը մենք աւելորդ ենք համարում, այն եղաւ, որ 1773 թւին Մխիթարեանների մի մասը բաժանւեց և, թողնելով Վենետիկը, ուղղւեց նախ Տրիեստ, որտեղ հիմնեց իր մենաստանը՝ աջակցութիւն և հովանաւորութիւն գտնելով աւստրիական թագուհի Մարիամ Թերեզայից, և ապա 1811 թ. տեղափոխւեց Վիեննա։ Այստեղ նրանք հիմնեցին դպրոց ու հիմնալի տպարան, որը այժմ Վիեննայում համարւում է ընտիրներից մէկը։ Վիեննայի Մխիթարեանների մատենադարանը նոյնպէս արժանի է ուշադրութեան. թէև նա հարուստ չէ Վենետիկցոց մատենադարանից, բայց վերջին ժամանակներս ուշի ուշով աշխատում են ճոխացնել հայկական բաժինը՝ մանաւանդ ձեռագրերի ճիւղը, և կազմել ժողովածու հայ պարբերական հրատարակութիւնների. Վիեննայի միաբանութիւնը ունի և մի փոքր թանգարան, որտեղ առանձնապէս աչքի է ընկնում դրամագիտական բաժինը. կայ և հայ դրամների լիակատար ժողովածու։

Վիեննայի Մխիթարեանների գիտական գործունէութիւնը՝ համեմատելով Վենետիկցոց գործունէութեան հետ աւելի փոքր ծաւալ ունի մասամբ այն պատճառով, որ իբր

ինքնուրոյն հիմնարկութիւն, նա աւելի նորագոյն է, թէև դրանով երբեք չէ նսեմանում այդ գործունէութեան նշանակութիւնը։ Վիեննայի Մխիթարեանները աւելի համբաւ ունին իբրև լեզուագէտներ. գիտական աշխատութիւնների մէջ առանձնապէս ժամանցոյց անելու է արբահայր Արսէն Այտընեանի «Քննական քերականութիւն հայ աշխարհիկ լեզուի» վրայ։

Братская помощь. Л. М.

Թարգ. Ց. Բաղչեան

ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԻՇԱՆ
(1820—1901)

Ալիշանը ծնւեց Պօլիս. նրա հայրը հնագէտ սեղանաւոր էր։ Հէնց դորա համար էլ մանկութիւնից Ալիշանը սիրեց յարգել և գնահատել հնութիւնները, վերջը դառնալով ամենամեծ հայ հնաբանը։ 1832-ին հայրը նորան ուղարկեց Վենետիկ, ուր 1836-ին նա դարձաւ կրօնաւոր։ Այդ օրից նա իրան նւիրեց գրի և գրականութեան. նախ իբրև փառաւոր և ազգասէր բանաստեղծ, ապա իբրև բանիբուն և անխոնջ պատմագէտ և ժանւանդ հնագէտ։ Ալիշանը երբեք չտեսաւ Հայաստան, սակայն ոչ ոք նրա պէս չերգեց, չուսումնասիրեց և գրի չառաւ Հայաստանի ամեն մի քարը, ամեն մի անկիւնը, ամեն մի բոյսն ու ծաղիկը։

Նրա «Յուշիկները», «Սիսուանը», «Այրարատը», «Սիսականը», «Շիրակը», «Հայոց հին հաւատքը», «Հայ-Բուսակը» և այլն և այլն, կարող են պատիւ բերել ամեն մի եւրոպական ազգի։

Ալիշանն իբրև գիտնական յայտնի էր ոչ միայն մեր մէջ, այլ և վայելում էր եւրոպական հռչակ, լինելով պատուաւոր անդամ շատ համալսարանների և գիտական ընկերութիւնների։

Իր բազմահատոր և մեծածաւալ գրքերի ընդարձակութեամբ Ալիշանը չունի մի այլ մրցակից մեր գրականութեան մէջ, եթէ դորան աւելացնենք նրա զարմանալի համեստութիւնը, որ հասնում էր գրեթէ ամօթխածութեան, ապա նա դառնում է մեր գրականութեան արտադրած ամենամեծ բարոյական և մտաւոր անհատներից մինը։

Ալիշանը մեռաւ 1901 թ. նոյեմբերի 21-ին՝ ի սուգ համակելով ամբողջ Հայութիւնը։

ՆԱՒԱՍԱՐԴԻ ՏՕՆԵՐԸ

Հայք ունեցել են երկու տարեգլուխ՝ սրբազան և քաղաքական։ Սրբազան տարեգլխին բնութիւնը ծաղկափթիթ ծիծաղով կենդանացնում էր մարդկանց. իսկ քաղաքական տարեգլխին, որ Նաւասարդն (օգոստոս) է, կիսով չափ այրւած բնութիւնը ինքը կենդանանում էր մարդկանց հաստատած տօներով և հանդէսներով։ Տարւայ ամենատաք ամիսը՝ Հայոց բարեկենդանն էր, կաղանդն էր. կրօնական, գինւորական և աշխարհախումբ հանդէսներով՝ Հայոց աշխարհը զարնանանման գեղեցկանում էր։ Նաւասարդի տօները՝ պահապան աստւածների տօներ էին, նախնեաց քաջերի յիշատակներ էին, կորիճների մրցանք էին, հասարակ ժողովրդեան խաղեր և վայելքներ էին, որ 3000 տարւայ չափ մեր երջանիկ նախնիքը կատարեցին, թնդացին, դոփեցին Բագրևանդայ տափերի և բլուրների վրայ, մինչև նոցա տակ ծածկւեցան։ Այդ հանդէսները կատարում էին նոցա փոխանակեցին խաչապաշտ քահանայապետները, նոցա փոխանակեցին խաչապաշտ քահաքրմապետները, նոցա փոխանակեցին խաչապաշտ քահանայապետները, որոնք մեհեանների տեղ եկեղեցիներ շինեցին։ Բայց դուրսը բնութիւնը իր կերպարանքը չփոխեց, նաև ազգը իր հանդէսները չփոխեց, այլ տօները սրբեց, և աստւածներին նւիրելու փոխանակ՝ ճշմարիտ Աստծուն և նորա նահատակներին նւիրեց։ Գրեթէ անկարելի էր՝ որ Ս. Գրիգոր Հայերին հեթանոսութիւնից քրիստոնէութեան դարձնելով, այն հին մեծահանդէս աշխարհաժողով զբօսանքի օրերը անհանդէս, անյիշատակ թողնէր։

Նաւասարդից մի քանի օր առաջ կատարւում էր Վարդածղի Վարդանման Աստղիկ դիցուհու տօնը, որի փոխանակ Հայոց առաջին հայրապետը կարգեց Վարդավառ, Քրիստոսի պայծառակերպութեան տօնը, որ և Հայերը մինչև այսօր

սոր պայծառապէս տօնում են։ Իսկ Նաւասարդի առաջին օրը (օգոստոսի 11), որ Հայոց տարեգլուխն է, ազգային ամենից մեծ, պանծալի, սրբազան օրն էր, և հանդէսները շատ օրեր տևում էին՝ զանազան յիշատակներով, որոնք մի անունով Ամանորայ էին ասւում, կամ աշխարհաժողով։ Այս վերջին անունը ցոյց է տալիս, թէ այդ տօնին Բագրևանդայ բարձրաւանդակների հանդիսականները միշտ մեծ բազմութեամբ էին ժողովւում. Թագաւորն իր Այրարատեան չորս բիւր գնդովը, Նախարարները ութ բիւր գումարտակներով, 600 գաւառատեարք և 400 գահակալ իշխաններ, բազմաթիւ քրմեր իրանց պաշտօնեաներով և ուրիշ հազարաւոր հանդիսականներ այս տօնը զարդարում էին։

Ինչ էր այս Հայոց համաշխարհական տօնի պատճառը. նախ՝ ինչպէս գիտենք, հին տարեմուտն էր, որովհետև Նաւասարդ նշանակում է Նոր տարի։ Երկրորդ՝ Նաւասարդը ջրհեղեղի յիշատակն էր, ուստի և այդ օրերը զանազան ջրախաղեր էին կատարւում՝ տալանով Արարատ սարի վրայ մարդկանց փրկութեան տօնը յիշատակելու համար։ Իսկ մենք հիմա, ինչպէս յայտնի է, ջրի այս հանդէսը Վարդավառի օրն ենք կատարում։ Երրորդ՝ տօն էր Ամանորայ ամենաբերից, ինչպէս առաջ յիշեցինք, որը որ երևի բերքի և առատութեան չաստւած էր համարւում։ Ուրիշ շատ պատճառների հետ մէկն էլ այն էր, իբրև թէ Մասիսի վհի մէջ Արտաւազդի շղթան շների կրծելուց տարւայ վերջին օրը մազի բարակութեան և կտրելու է հասնում, և հազիւ թէ Արտաւազդ սպառնում է տարւայ հետ բոլոր աշխարհքը վերջացնել և աշխարհախումբ տօնը համաշխարհական սուգ դարձնել՝ Նաւասարդի օրը դարբինները իրանց սալը ծեծում են, և այդ ձայնից աշխարհքը Արտաւազդի աւերմունքից ազատւում է։ Այժմ ոչ միայն Նաւասարդի օրը, այլ և ուրիշ օրերին դարբինները սովորութեամբ սալը ծեծում են, զոր օր. ամենայն կիրակի օրերը կամ չարչարանքի ուրբաթ օրը։ Այս ամենայն յիշատակներից վերագոյն և հնագոյն և տօնելի յիշատակ այս օրւանս էր՝ ՀԱՅԿԸ, մեր ազգի նախահայրը, և նորանով

մեր ազգի ձևանալը, որ մեծ յաղթութեամբ ազատեց Բէլի բռնութիւնից։ Այս տօնի սկզբնաւորութիւնը համարւում է 2492 տարի Քրիստոսի թւականից առաջ օգոստոսի 11-ին կամ Աբրահամից մօտ 500 տարի առաջ. Այս տօնը բուն Օր հայկական և Տօն ազգային է։ Հայկայ մեծ քաջութեան և անւան համար էր, որ նորա յաջորդները Նաւասարդի օրերուն իրանց ազգի ոյժը ներկայացնող կրտրիճ զօրքերի աշխարհագումար հանդէսներ էին անում, և այն մեծ անձի անունը աւելի անմոռանալի արեցին երկրնքի համաստեղութեանց մէջ դրոշմելով, որովհետև այն համաստեղութիւնը, որ ուրիշ ազգերը Որիոն են կոչում, մենք անւանում ենք Հայկ։ Եւ այսպէս ահա 44 դար է, որ Հայկայ աստղի բարձրանալու օրերը՝ անխափան յիշեցնում են մեր ազգային և հայկական օրը, որ և մենք՝ ինչ վիճակի մէջ որ լինենք, պէտք է նորա անունը յիշենք, տօնենք և անմոռաց հանդիսացնենք, քանի որ Հայ ազգի անուն և լեզու պահում ենք։ Այս տօնն էլ՝ քրիստոնեայ Հայերի մէջ անմահացնելու համար, մեր հայր Լուսաւորիչը այս օրը նւիրեց Ս. Կարապետ Յովհաննուն, որ մեր աշուղներին յայտնի մուրազատու Մշու սուլթանի տօնն է։

Նաւասարդից երկու շաբաթ յետոյ Հայերը մէկ աշխարհախումբ տօն էլ ունէին՝ Հայաստանի ամենից սիրելի և ամենից մեծ խնամակալ պահապանի անունը յարգելու համար, որ է Անահիտ դիցուհին, որին Հայերը շատ պատւում և պաշտում էին և ոսկի արձաններ էին կանգնեցնում։ Մեր Տրդատ թագաւորի թղթից իմանում ենք, որ այդ Անահիտն է մեր ազգի փառքն ու կեցուցիչը, որին ամենայն թագաւորները պատւում էին. նա է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, նորանով կայ և կենդանութիւն է կրում Հայոց երկիրը, Հայերի խնամակալն է։ Ս. Գրիգոր Լուսաւորիչը Անահտին իջեցրեց Հայոց տիկնութիւնից և տեղը բարձրացրեց Ս. Կոյս Աստւածածնին։

Այս բոլոր եկեղեցական տօները այժմ շարժական տօներ են, ուստի և ճշտութեամբ նոյն օրերին չեն կատարւում, բայց և այնպէս յիշեցնում են հին Նաւասարդի տօնե

Ղ. Վ. Ալիշանեան

ՊԼՊՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ո՞նց գաս, իմ չուշնակ, հեզիկ ու հանդարտ
Համասփիւռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,
Եւ ի Նահապետս, որ մտօք մոլար,
Գիշերաժամիկ ժուռ գամ յԱւարայր,
Ուր քաջ ու աննըման իմ հարք Հայկազունք
Ընկան զէտ հըսկայ, ելան զէտ զուարթունք.
Մի՞թէ գաս սփռել ոսկերաց սըրբոց
Ձիւնափայլ ամպէդ ոսկեթել ծածկոց,
Թէ՞ ճերմակ ճակտիդ՝ թէպէտ և պայծառ
Քաջացս արենէն ուզես կարմիր վառ.
Թէ՞ լըռիկ մընջիկ ափշիս տակաւին
Թէ ի՞նչպէս ընկաւ Վարդանն ահագին,
Մահու սև ըստւերն ի սիրտ թըշնամեաց,
Զհոգին ձըգելով յերկին առ Աստւած։
Դու այլ, ով Տղմուտ, տրտում ու արիւնուտ,
Որ գաս կամկար լաս ի մէջ շամբերուտ.
Եւ հովիկդ, որ գաս ի Մակւայ քարէն
Կամ ի ծեր Մասեաց սըրբազան սարէն,
Դու այլ ինձ նման դողդող և երեր
Թոյլ թեօք անցնիս սարեր ու ձորեր,
Անտառէ անտառ, տերևէ-տերև,
Կոծկոծելով գաս ի դաշտիս վերև,
Զայս մաշած շընչիս վերջին հառաչանք
Ջըգեցի Հայոց սըրտից արձագանք։
Ո՛հ դու բարեկամ այրած սըրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ, պըլպուլիկդ, երգէ ի սարէդ,
Զանմահ քաջքն Հայոց երգէ հոգոյս հետ.
Թաղէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սըրտիկս՝ որ ի խաչն էր կիպ՝ թունդ առաւ.
Ի խաչին թևէն թըռայ ու հասայ՝
Գտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ։
Պլպո՛ւլ, քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ հաւ՝ պըլպուլ մեր Աւարայրին,
Եղիշեայ հոգեակն է քաղցրագրուցիկ,
Որ զՎարդան ի վարդըն տեսնու կարմրիկ.
Զըմեռն յանապատ կու գնայ՝ կայ ի լաց,
յԱրտազ գայ զգարունն ի թուփ վարդենեաց,
Երգել ու կանչել յԵղիշէին ձայն,
Թէ պատասխանիկ մ՚ արդեօք տայ Վարդան։

Հ. Ղևոնդ Ալիշան

Մ. Պ Է Շ Ի Կ Թ Ա Շ Լ Ե Ա Ն

Ծնւ. 1827 թ. Պօլիս—մեռաւ 23 նոյեմբ. 1868-ին

Բանաստեղծներ կան, որոնց կարող ենք նմանեցնել մի որևէ ճիւղի վրայ նստած թռչունին։ Նստած է թռչունը, իր կրակոտ երգերն է հնչեցնում և բոլորովին գործ չունի, թէ ինչ է կատարւում ճիւղից ցած, երկրի վրայ։ Առաւօտ և երեկոյ, պայծառ և մռայլ եղանակին, ամեն րոպէ, երբ նա ունի երգելու տրամադրութիւն, միակերպ է հնչում նրա ձայնը։ Ի՞նչ է երգում։ Արդեօք հզօր, գեղեցիկ բնութիւնը, թէ՞ իր զգացմունքները։ Այդ մեզ համար միևնոյն է։ Մենք միայն տեսնում ենք, որ նա օդի երգիչ է, որ նա շատ անգամ ազդում է մեր հոգու տրամադրութեան վրայ, մեզ ուրախացնում է, վշտացնում է, բայց շարունակ բարձրից, երբէք մեզ չնայելով։

Այդպիսի բանաստեղծներին իսկական բանաստեղծ են անւանում։ Բայց կան և այնպիսի բանաստեղծներ, որոնք, ընդհակառակն, բարձր ճիւղի վրայ նստել ու երգել չեն կարող։ Նրանք ման են գալիս երկրի վրայ, նրանք ապրում են մարդկանց մէջ և նրանց երգը հնչում է ժողովրդի, ամբոխի ժխորի միջից, գոյութեան համար կռիւ մղող մարդկանց շարքերից։ Այդ բանաստեղծները սիրում են բնութիւնը, զգացմունքի մարդիկ են, բայց նրանց երգը թռչունի երգը չէ, այլ մարդկային կեանքի երգը։ Նա լալիս է, հառաչում է, ծիծաղում է, բայց լացի, հառաչանքի, ծիծաղի և խնդութեանը առարկաները վերացական չեն, եթերի մէջ չեն ապրում, այլ մեր իրական հողի վրայ։

Այս տեսակ բանաստեղծները հասարակական գործիչներ են, ժողովրդի մտաւոր և բարոյական շահերին ծառայողներ են, իսկ նրանց ստեղծագործութիւնները հրապարակախօսական երգեր են։

Սրանց իսկական բանաստեղծ չեն անւանում։ Բայց ինչ փոյթ։ Գեղարւեստական գրւած օրէնքները, որոնք միանգամից ասել պրծել են թէ բանաստեղծութիւնը աստւածների ձայնն է, կարող են նոյն իսկ արհամարհել այն բանաստեղծներին, որոնք ստորացնում են սուրբ և մաքուր արւեստը՝ ծառայացնելով նրան մարդկանց շահերին.—բայց ազգերը հէնց այդ տեսակ երգիչներին են իրանց համար նւիրական անուններ դարձնում։

Մեր նոր ժողովրդական գրականութեան ամբողջ ընթացքում մենք շատ քիչ ունեցանք ճիւղի վրայ նստած երգիչ-թռչուններ։

Մեր Պէշիկթաշլեանն էլ այդպիսի բանաստեղծներից էր։ Նա արտայայտում էր հասարակական տրամադրութիւնները, նա տա-

շիս էր իր ժամանակի հայերին իդէալներ.—ահա նրա փառքի ամբողջ գաղտնիքը։

Հարկաւոր էր տաղանդ, զգայուն ու սիրող սիրտ—և բնութիւնը չէր զրկել դրանցից Պէշիկթաշլեանին։ Դրանից է, որ նրա խօսքը ազդու էր, դրանից է, որ նա խօսում էր մարդկանց սրտերի հետ։

Մենք չենք ասում, թէ Պէշիկթաշլեանը բացառապէս հասարակական գաղափարներով էր ոգևորւում։ Ո՛չ։ Նրա բանաստեղծութիւնների մէջ դուք կը գտնէք և ճիւղի վրայ նստած երգչի մեղեդիները։ Սէրը, գեղեցկութիւնը, գերեզմանը խլում են նրա սրտից քնարերգական հնչիւններ։ Բայց դա գլխաւորը չէ։ Գլխաւորը «Առ զեփիւռն Այեմզաղիի»-ն չէ, որքան էլ նա գեղեցիկ լինի, այլ «Եղբայր եմք մեք»-ը։

Պէշիկթաշլեանը կեանքից հեռու գտնւող, կեանքին իբրև հանդիսատես նայող մարդ չէր, այլ հասարակական գործիչ։ Կ. Պօլսում նա մէկն էր այն փոքրիկ խմբից, որ հայկական թատրոն ստեղծեց և պահեց։ Զունենալով դերասանի ընդունակութիւն, նա բեմ էր դուրս գալիս, խաղում էր, որպէս զի իր անձնական օրինակով գրաւէ ուրիշներին էլ, ոգևորէ։ Նոյն այդ թատրոնի համար նա գրում էր ողբերգութիւններ, թարգմանութիւններ էր անում։ Նա ուսուցիչ էր և աշխատում էր հայերէն մոռացւած, արհամարհւած լեզուն բարձր շրջաններում սիրելի դարձնել։ Եւ նրա ջանքերը յաջողութեամբ պսակւեցին։ Նրա աշակերտուհիներից մէկն էր օտարացած օրիորդ Վահանեանը, որ մեր գրականութեան մէջ ապագայում դարձաւ յայտնի տիկին Տիւսաբ։

Պէշիկթաշլեանը մէկն էր այն լուսամիտ հայ կաթոլիկ երիտասարդներից, որոնք գործում էին «Համազգեաց» անունով յայտնի բարեգործական ընկերութեան մէջ։ Այդ ընկերութիւնը կազմւած էր կրօնական խտրութիւնները վերացնելու համար. նա ընդհանուր հայկական էր և այնտեղ կարող էին եղբայրաբար հաւաքւել լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական հայերը՝ իրանց ազգի կրթական պէտքերը հոգալու համար։

Պէշիկթաշլեանի ոտանաւորները մի անգամ կարդացողը կը տեսնէ թէ ինչ սիրտ, ինչ խառնւածք էր տւել բանաստեղծը բնութիւնից։ Դա մի մեղմ, փափուկ, համարեա կանացի սիրտ է։ Մրրիկներ չկային նրա հոգու մէջ,—մեղմ, սիրող, շոյող զեփիւռն էր այնտեղ։ Եւ ըմբոստ, յանդուգն, ռազմիկ չէ նրա քնարը։

Պէշիկթաշլեանը չէր յարձակւում մեր Գամառ-Քաթիպայի նման, չէր շանթահարում, կծու, անողորմ ծաղր չունէր. նա մրմնջում էր, նա աղօթում էր, նա պաշտում էր։

Այդ տեսակ սրտին տւած է նուրբ զգացմունքներ արտա-

յայտելու չքնաղ կարողութիւնը։ Եւ Պէշիկթաշլեանը, իրաւ, մըտցնում է մեզ իր զգացմունքների գեղեցիկ, մեղմ աշխարհը, հրապուրում, յափշտակում է մեզ իր գոյների, մեղեդիների քնքշութեամբ և մեղմութեամբ։ Նրան յաջողւում են և քնարերգական զեղումները, բայց և այնտեղ, ուր նա իր ժամանակի մարգարէն է, ուր նա գաղափար, ուխտ ու սրբութիւն է երգում,—այնտեղ էլ հրաբուխի ժայթքումները չեն մեզ զգալ տւողները, այլ նոյն մեղմութիւնը, նոյն զեփիւռային քնքշութիւնը, նոյն հանդարտիկ օրօրւող, թիթեռնիկի պէս թռչող զգացմունքները։

Լէօ

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շըքեղ
Թ՚է երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար,
  Զունին ձայն մի այնքան սիրուն
  Քան զանձկալի եղբայր անուն։

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբա՛յր եմք մեք,
Որ մըրկաւ էինք զատւած,
Բազդին ամեն ոխ չարանենգ
Ի մի համբոյր ցրւեն 'ի բաց։
  Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
  Քան զանձկալի եղբայր անուն։

Երբ ալեոր Մայր Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Սրտին խորունկ վէրքը՛ն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցօղով։
  Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
  Քան զանձկալի եղբայր անուն։

Մէկտեղ լացինք մենք 'ի հընում...
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր և զխնդում
Որ բազմածնունդ ըլլար մեր ջան։
  Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
  Քան զանձկալի եղբայր անուն։

Մէկտեղ յոգնենք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր։
Ընդ ատեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն

Մ. Պէշիկթաշլեան

ԳԱՐՈՒՆ

Ո՜հ, ինչ անուշ և ի՛նչպէս զով
Առաւօտուց փըչես, հովիկ,
Ծաղկանց վըրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափիկ,
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,
Գնա՛ անցի՛ր սրտէս 'ի բաց։ } Կրկին.

Ո՜հ, ինչ ազդու և սրտագին
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերն 'ի յանտառին
Ըզմայլեցան 'ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց,
Գնա՛ թըռի՛ր սրտէս 'ի բաց։ } Կրկին.

Ո՜հ, ինչ մըմռունջ հանես, վըտա՛կ
Ակնակիտ և հանդարտիկ.
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նայի՛ն զիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես վըտակ իմ Հայրենեաց,
Գընա՛ հոսէ՛ սրտէս 'ի բաց։ } Կրկին.

Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց
Աւերակաց շրջին վերայ,
Թէպէտ պըտոր վըտակն Հայոց
Նոճիներո՛ւ մէջ կը սողայ,
Նոքա հառա՛չք են Հայրենեաց,
Նոքա չերթա՛ն սրտէս 'ի բաց։ } Կրկին.

Մ. Պէշիկթաշլեան

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ (1851—1871)

Դուրեանը ծնաւ 1851-ին Կ. Պոլսում. նրա հայրը դարբին էր։ Մանկութիւնից նա ճանաչեց կարիքն ու նեղութիւնը իր բոլոր դառնութեամբ։ Մի կտոր հաց ճարելու համար նա ստիպւած էր յանձն առնել այնպիսի գործեր, որոնք ոչ մի առնչութիւն չունէին նրա կոչման հետ։ Այդ դառն կարիքն էր, որ գերեզման տարաւ Դուրեանին այն ժամանակ, երբ նա նոր էր մտել կեանքի գարունը. 21 տարեկան, հիւծւած թոքախտից, նա պիտի խոնարհէր իր գլուխը մահւան մանգաղի առաջ։ Ո՛չ մէկը հայ բանաստեղծներից այնքան փայլուն ապագայ չէր խոստանում, ինչպէս Դուրեանը և ոչ մէկն էլ նրանցից այնքան նեղ, թշւառ ու կարճատև կեանք չունեցաւ, ինչպէս Դուրեանը։

Դուրեանի երգերը դառն են ու տխուր, ինչպէս իւր կեանքը. նրա երգերի հիմնական մոտիւն է հայրենիք, սէր և մահ.— մանաւանդ մահ, որի ներկայութիւնը նա զգում էր գրեթէ գիտակցութեան առաջին օրից, որի պատճառով նրա ամեն մի տողը, ամեն մի բառը տոգորւած է մի անհուն թախիծով, ինչպէս այդ տեսնում ենք հետևեալ երգի մէջ, որ ըստ աւանդութեան՝ գրել է անկողնու մէջ, հիւանդ ժամանակ։

ՏՐՏՈՒՆՋՔ

Է՜, մընաք բարով, Աստւած ու արև՝
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերև...
Աստղ մ'այլ ես կ'երթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթէ ոչ անբիծ
Եւ թըշւառ ոգւոց անէծք ողբագին,
Որք թըռին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՛ւ արժան՝
Յաւելուն զէնքերն ու զարդերն հըրատ...։
Այլ, ո՜հ, ի՛նչ կ'ըսեմ... շանթահարէ զիս,
Աստւած, խոկն հսկայ փշրէ հիւլէիս՝
Որ ժպրհի ձգտիլ՝ սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուխքն ան'այլի...
Ողջո՜յն քեզ, Աստւած զողդոջ էակին,
Շողին, փըթիթին, ալւոյն ու վանկին,
Դու, որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս
Խլեցիր թրթռումս շրթանց՝ թռիչն հոգւոյս,
Ամպ տուիր աչացս, հեւք տուիր սըրտիս,
Ըսիր մահւան՝ դուռն ինձ պիտի ժըպտիս,

Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,
Կեանք մը անհուն շողի, բոյրի, աղօթքի.
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մէջ համր անշշունչ,
Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Պըլլուիմ անւանդ, մռնչեմ անդադար,
Թո՛ղ անէծք մ'ըլլամ ու կողըդ խըրիմ,
Թո՛ղ յորջորջեմ քեզ. «Աստուած ոխերիմ»։
Ո՜հ, կը դողդոջեմ, դժգոյն եմ, դժգո՜յն,
Փըրփըրի նեարդս ըղձոխքի մ'հանգոյն...
Հառա՛չ մ'եմ հեծող նոճերու մէջ սև,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերև...
Ո՜հ, կայծ տուէք ինձ, կա՛յծ տուէք, ապրի՛մ...
Ի՜նչ, երազէ վերջ գըրկել ցուրտ շիրի՛մ...
Այս ճակատագիր ինչ սև է, Աստուած,
Արդեօք դամբանի մրուրո՞վ է գըծուած...
Ո՜հ, տուէք հոգւոյս կրակի մի կաթիլ,
Սիրե՛լ կ'ուզեմ դեռ 'ւ ապրիլ ու ապրիլ...
Երկնքի աստղե՛ր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,
Կա՛յծ տուէք, կեա՛նք՝ ձեր սիրահարին հէք։
Գարունն ո՛չ մէկ վարդ ճակտիս դալկահար,
Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ'ինձ չե՛ն տար.
Գիշերն միշտ դագաղս, աստղերը ջահեր,
Լուսինն յար կուլայ, խուզարկէ վըհեր.
Կըլլան մարդիկ, որ լացող մը չունին,
Անոր համար նա գըրաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան.
Նախ կեա՜նքը, վերջը լացող մ'իր վըրան։

Ի զո՜ւր գրեցին աստղերն ինձի «սէր».
Եւ ի զո՜ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրել»,
Ի զո՜ւր սիւգեր «սէր» ինձ ներշնչեցին,
Եւ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զո՜ւր թաւուտքներ լըռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերև չառին երբէք շունչ,
Որ չըխռովին... երազքըս վըսեմ,
Թոյլ տուին, որ միշտ ըզնէ երազեմ,
Եւ 'ի զո՜ւր ծաղկունք, փըթիթներ գարնան՝
Միշտ խնկարկեցին խոկմանցս խորան...
Ո՜հ, նոքա ամենքը զիս ծաղրեր են...
Աստուծոյ ծաղրն է աշխարհն ալ արդէն...

1871 թ. Պետրոս Դուրեան

ԻՄ ՄԱՀԸ

Եթէ դժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ,
Շոգիանան ցաւքս ու հոգիս,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթէ սընարըս իմ տխպար
Մոմ մը վառի ու մահադէմ,
Ո՜հ, նըշուլէ ցուրտ ճառագայթ,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթէ ճակտիս արտօսրազօծ
Զիս պատանի մէջ ցուրտ զերթ վէմ
Փաթթեն, ըրնեն սև դագաղը,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթէ հընչէ տխուր կոչնակ,
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնէ իր համր քայլ,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթէ մարդիկ այն մահերգակ.
Որք սև ունին ու խոժոռ դէմ
Համասփռեն խունկ ու աղօթք,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթ' յարդարեն իմ հողակոյտ,
Եւ հեծեծմամբ ու սըգալէն
Իմ սիրելիքը բաժնուին,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Իսկ անմըշան եթէ մնայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՜հ, այն ատեն ես կ'մեռնիմ։

Պետրոս Դուրեան

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ (1840—1891)

Պարոնեանը ծնւել է Ադրիանուպօլիս, 1840-ին, ուր և ստացել է իւր կրթութիւնը։ 1865 թ. սկսում է իւր գրական կեանքը «Արևելեան Ատամնաբոյժ» երգիծական գրւածքով, որով խկոյն անուն և հռչակ է ստանում։ Ապա սկսում է հրատարակել իւր սեփական թերթը—«Թատրոն»։ Սակայն իւր անաչառ և քննադատող գրիչը հաճելի չէր կարող լինել նոյն ժամանակի կառավարական և ազգային անձանց, որոնք չորս տարւայ մէջ ութ անգամ դադարեցնել տւին թերթը, մինչև որ պատրիարքի հրամանով իսպառ խափանւեցաւ։

Այնուհետև նա աշխատակցում էր «Հայրենիք», «Մասիս», «Լոյս», «Փորձ» «Փարոս», «Արձագանք» և այլ թերթերին։ 1878-ին հրատարակեց «Ազգային Ջօջերը», որ ժամանակակից նշանաւոր հայերի կենսագրութիւնն է, երգիծական նուրբ և զւարճալի ոճով գրւած։ Ապա հրատարակեց «Մեծապատիւ Մուրացկաններ», «Բաղդասար Աղբար», «Պտոյտ մը Պօլսոյ թաղերուն մէջ», և այլն…։ Վախճանւեցաւ խեղճ վիճակի մէջ, 1891 թ. մայիսի 27-ին։

Մեծապատիւ Մուրացկանների մէջ Պարոնեանը ներկայացնում է մի միամիտ, բայց հարուստ գաւառացի, Աբիսողոմ աղային, որը գալով Պօլիս, շնորհիւ իւր թեթևամիտ փառասիրութեանը, զոհ է դառնում Պօլսի «Մեծապատիւ Մուրացկանների» շողոքորթ խաբեբայութիւններին։ Հետևեալ հատւածը պատկերացնում է այն տեսարանը, երբ սոված բանաստեղծը ջանք է թափում մտնելու Աբիսողոմ աղայի գրպանը՝ մի քանի ոսկի պոկելու համար…

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ

Աբիսողոմ աղային ներկայացաւ երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանաւորի ալ չէր նմաներ, արհեստաւորի ալ չէր նմաներ, գործաւորի ալ չէր նմաներ, և վերջապէս անանկ բանի մը կը նմանէր, որուն նմանը չկայ։ Հազիւ երեսուն երկու տարեկան կը թուէր։ Կապոյտ աչերով, դեղին մազերով, զարդարւած ըլլալով, ունէր նաև երկու մատ մօրուք, որ մայրաքաղաքիս մէջ կամ աղոյ նշան է և կամ չքաւորութեան։ Հագուստներն այնքան հին էին, որ հնախոյզները զանոնք գնելու համար մեծաքանակ գումար մը կուտային։ Սակայն եթէ հագուստի մասին վանողական էր՝ դէմքի մասին քաշողական զօրութիւն ունէր այս անձը։

—Ծառայ եմ մեծապատւութեանդ, մեծապատիւ Տէր, պօռաց այս երիտասարդն սենեակէն ներս մտնելով և մօտենալով Աբիսողոմ աղային։

—Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ուզէք, հարցուց Աբիսողոմ աղան վախենալով։

—Վսեմափայլ Տէր, ձեր գալուստն լսելով, փութացի հոս գալ, իմ խորին մեծարանացս հաւատքին ձեր ոտքերուն տակը դնել։

—Ոտքերո՞ւս տակը․ շատ աղէկ, դիր, ըսաւ Աբիսողոմ աղան, որ կը կարծէր թէ մուճակ բերած էր իրեն։

—Շնորհակալ եմ, բարձրապատիւ Տէր, ըսաւ երիտասարդը, գլուխը բացաւ և սեղանի վրայ ելաւ կանգնեցաւ։

Աբիսողոմ աղան այս տեսարանին առջև բոլորովին շուարած՝ անհամբեր տեսնել կ'ուզէր թէ ինչ պիտի ընէր այս պարոնը սեղանին վրայ։

Երիտասարդը ծոցէն թուղթ մը հանեց և աչերն

Աբխողոմ աղային տնկելով բոլոր ձայնովը պոռաց.

—Տեարք և տիկնայք...

Աբխողոմ աղա այս անարկու ձայնէն վախնալով՝ նըստած տեղէն երկու կանգուն վեր ցատկեց և չկրնալով ինքզինքը զսպել պոռաց։

—Ո՞վ է սա մարդը, յիմարանոցէն փախած խե՞նթ է, թէ յիմարանոց երթալու յիմար։

—Հայ ազգն, շարունակեց երիտասարդը ձայնը քիչ մը իջեցնելով, այսօր այնպիսի հանդէս մը կը կատարէ, որ մեր հայրենեաց ամենէն քաջ դիւցազնին նուիրուած է...։

—Միտքդ ի՞նչ է, եղբայր...

—Կար ժամանակ մը, ուր խաւարը լուսոյ դէմ կը կուէր, տգիտութիւնը գիտութեան դէմ, անցեալն ապառնիին դէմ, հրամայականը սահմանականին դէմ, սուրը գրիչի դէմ, ատելութիւնը սիրոյ դէմ, կրակը ջուրին դէմ, միսը բանջարեղէնի դէմ, իսկ հիմա անցան այն ժամանակները. անոնք անցեալ են, մենք ապառնի, անոնք խաւար են, մենք լոյս,' անոնք տգէտ են, մենք գիտուն, անոնք սուր են, մենք գրիչ, անոնք ատելութիւն են, մենք սէր, անոնք կրակ են, մենք ջուր, անոնք միս են. մենք բանջարեղէն, անոնք վարունգ են, մենք խնձոր, անոնք փուշ են, մենք վարդ. անցան, անցան այն դարերը, ուր մարդկութիւնը տգիտութեան օրօրոցին մէջ մէյ մը աստին, մէյ մը անդին կ'երթար կու գար...

—Միտքդ ի՞նչ է, եղբայրս, ես քեզի բան մը չըրի. ի՞նչ կ'ուզես ինձմէ, գնա՛ քեզի բարկացնողին զրուցէ այդ խօսքերը...

—Այո՛, մարդկութիւնը կը չարչարուէր, կը նախատուէր անգութ բռնաւորներու ձեռքէն և չէր գիտեր ուր երթալ և որու բողոքել։

—Տէր ողորմեա՛... Տէր ողորմեա՛, ըսաւ ինքնիրեն Աբխողոմ աղա. քաշելիք ունինք եղեր... ես կրնամ հիմա զինքը սեղանէն վար առնել, բայց կը վախնամ որ ծոցէն ատրճանակ մը կը հանէ և կը զարնէ ինծի, վասն զի խիստ բարկութեամբ կը խօսի։

—Իսկ երբ գիտութիւնն եկաւ, շարունակեց ատենաբանը, և վանեց տգիտութիւնն ինչպէս լոյսն՝ խաւարը, սէրն՝ ատելութիւնը, գրի՛չն՝ սուրը, ապագայն՝ անցեալը, այն ատեն, ա՛հ, այն ատեն... այո՛, այն ատեն, այո՛, կ'ըսեմ, այն ատեն միայն հասկցուեցաւ որ մարդկութիւն, ազգ և հայրենիք բառերը բառարանները լեցնելու համար շինուած բաներ չէին, այլ ամեն մարդու մտքին մէջ, սրտին մէջ, հոգւոյն մէկ երկաթեայ տառերով և անջինջ կերպով դրոշմուելու բառեր էին...

—Եղբա՛յր, կ'աղաչեմ, վա՛ր իջիր և այնպէս զրուցէ ցաւդ...

Ատենաբանը կայնած տեղը այնպէս կը դողար, որ Աբխողոմ աղային սիրտը կը հատնէր թէ երիտասարդը գետինը պիտի իյնար։

Ուստի չուզելով այլ ևս համբերել, պոռաց ինքնակոչ ատենաբանին երեսն ի վեր.

—Վա՛ր իջիր սըկէ։

—Կ'աղաչեմ, մի՛ սաստեր զիս։

—Վա՛ր իջիր, ապա թէ ոչ...

—Մի՛ կոտրեր իմ սիրտս, որ ազգին համար կը բաբախէ։

—Ինչ ըսելիք որ ունիս, եկուր քովս մարդու պէս նըստէ և ըսէ, հոն տեղւանքը ելնել ի՞նչ պիտի ըլլայ։

—Կ'աղաչեմ, թո՛ղ տուր վերջացնեմ. ա՛հ, չես գիտեր թէ ո՛րչափ կը յուզուիմ, երբ ճառ կը կարդամ։

—Վա՛ր իջիր։

Ատենաբանը բեմէն կ'իջնայ և կ'երթայ աթոռի մը վըրայ կը նստի։

—Հիմա՛ զրուցէ ինծի, միտքդ ի՞նչ է, կ'ըսէ Աբխողոմ աղա բարկութեամբ։

—Կ'աղաչեմ, մի՛ բարկանար։

—Ի՞նչ կ'ուզես, զրուցէ, շուտ հիմա։

—Բարկութեամբ մի՛ վարուիր հետս, ոտքդ պագնեմ, սիրտս լեցուած է, հիմա կ'սկսիմ լալ։

—Լալու ի՞նչ կայ, եղբայրս։

—Ծառայ կը փափաքի գրականութեամբ ազգին ծառայել, բայց այս ազգը շատ ապերախտութեամբ կը վարուի իր գրագէտներուն դէմ։

—Ատոր մէջ ես ի՛նչ յանցանք ունիմ։

—Դուք յանցանք չունիք և թերևս իրաւունք ունիք... ոտանաւորներ ունիմ գրած Հայրենիքի վրայ, սքանչելի կտորներ, պատւական տողեր, որոնց մէջ երևակայութիւնը, աւիւնը, խանդն, հուրն ու բոցը սաւառնաթև կը սլանան։

—Շատ աղէկ, ատոր համար լալո՞ւ է։

—Մեր ազգն անոնց յարգն ու պատիւը չճանչնար, զանոնք տղայական բաներ կը կարծէ և թող կուտայ որ զանոնք գրողը անօթի մնայ։

—Ես ի՛նչ ընեմ։

—Կ'աղաչեմ, քաղցրութեամբ վարուէ՛ հետս։

—Ի՞նչ ըրած ունիմ քեզի։

—Ձեզի պիտի աղաչէի որ...

—Ի՞նչ, շո՛ւտ ըսէ...

—Մի՛ պօռար երեսս ի վար, հոգիդ սիրես, հիմա կ'սկսեմ լալ...

Նորէն սկսաւ լալ գրագէտը։

—Տէր Աստուած, Դո՛ւն համբերութիւն տուր ինծի, ըսաւ Արիստոմ աղան մեկուսի։

—Խնդիրքս սա էր, որ կ'ուզէի տպել տալ քիչ մը առաջ կարդացած ճառս...

—Գնա տպել տուր, քու ձեռքէդ բռնող կա՞յ։

—Պիտի խնդրէի ձեր Մեծապատուութենէն որ տպագրութեան ստակը դուք տայիք։

—Ինչո՞ւ... ի՛նչ պատճառ կայ որ քու ճառիդ համար ես դրամ տամ։ Լսուա՞ծ բան է որ մէկը իրեն շահուն համար գիրք տպէ, ծախքն Արիստոմը տայ։

—Կը խնդրեմ, սիրտս արդէն խոցուած է, դուք ալ նոր վէրք մը մի՛ բանաք հոս։

—Ինչո՞ւ վէրք պիտի բանամ եղեր. գնա՛ բանըդ, եղբայր, փորձանք եղար գլուխս։

—Գիտէ՞ք ո՛րքան ծանր է գրագէտի մը ատանկ խօսքեր լսելը...

—Չեմ գիտեր և գիտնալ չեմ ուզեր։

—Բանաստեղծի մը սիրտը շատ փափուկ է, ամենաթեթև խօսքէ մը կը վիրաւորուի։ Այս նիւթին վրայ ոտանաւոր մը գրած ունիմ, կարդամ, մտիկ ըրէ՛ք։

—Ոտանաւոր մտիկ ընելու ժամանակ չունիմ։

—Կ'աղաչեմ, ոտանաւորիս հետ խստութեամբ մի՛ վարուիր. այն ոտանաւորին համար զոր դուք չէք ուզեր մտիկ ընել, երկու ամիս աշխատած եմ ես. և երբ անոր նախատիլը տեսնեմ՝ արժանապատուութիւնս կը վիրաւորուի։ Կ'աղաչեմ, ոտանաւորիս համար գէշ մի՛ գրուցէք... կը խընդրեմ, թո՛յլ տուէք ինծ կարդալ զայն անգամ մը...

—Ես ոտանաւոր մտիկ ընելու չեկայ հոս։

—Շատ լաւ. ողբերգութիւն մը գրած եմ, անոր վրայէն անցնինք։

—Չեմ ուզեր, ես անօթի եմ, հիմա կերակուր պիտի ուտեմ։

—Շատ լաւ, ուտելիքի վրայ ատենաբանութիւն մը ընեմ։

—Ժամանակ չունիմ մտիկ ընելու։

—Կ'աղաչեմ, այդ խօսքը ուրիշ անգամ մի՛ ըսեր, ատկէ աւելի ծանր խօսք չկայ հեղինակի մը համար, որ իր մէկ աշխատասիրութիւնն ուրիշի կարդալու փափաք կը յայտնէ։ Կը խնդրեմ, բարձրապատիւ Տէր, քաղցրութեամբ վարուեցէք հեղինակներու հետ։

—Գլխուս վրա՛յ նստեցունեմ քեզի։

—Ոտքդ պագնեմ, մի՛ ծաղրէք զիս. ինչո՞ւ ձեր գլխուն վրայ նստեցունէք։

—Ի՞նչ ընեմ հապա. քսակս քեզի՞ տամ՝ հեղինակներու հետ քաղցրութեամբ վարուած ըլլալու համար։

—Ո՛չ, միայն ճառիս տպագրութեան ծախքը։

—Քանի՞ ոսկիով կը լմնայ գործդ։

—Չորս ոսկիով կը լմնայ, բան մը չէ. իմ Մեկենասս պիտի ըլլաս, ես ալ քու անունդ ոտանաւորով մը գրքոյկին ճակատը պիտի դնեմ։

—Ճակատը գնես պիտի:

—Այո:

—Ինչու համար:

—Որպէս զի ամեն մարդ գիտնայ թէ ձեր ստակովը տպուած է այն գիրքը:

—Շատ լաւ, պատասխանեց Աբխողոմ աղան և քսակէն չորս ոսկի հանեց տուաւ: Հեղինակն հազար յարգանք մատուցանելով՝ դուրս ելաւ:

Աբխողոմ աղան ետևէն կանչեց զինքը և հարցուց.

—Չ°կրնար ըլլալ որ գրքին ճակատը սպասաւորներուս ալ անունները գնես և իմացունես Ազգին որ Աբխողոմ աղան կովեր, ոչխարներ, էշեր և ագարակներ ունի իր քաղաքին մէջ:

—Ատ ձեր ըսածները հովուերգութեան ճիւղին կը վերաբերին:

—Չեմ հասկնար:

—Ատոնց վրայ ոտանաւոր կը գրուի, եթէ կը փափագիք՝ ոտանաւոր մը շինեմ:

—Ի՞նչ ընեմ ոտանաւորը:

—Լրագրի մը մէջ տպել կուտաք:

—Կը տպե՞ն:

—Ինչու չպիտի տպեն. եթէ կէս ոսկի տալու ըլլաք՝ քառասուն անգամ կը տպեն:

—Շատ աղէկ. ատ ըսածդ գրէ:

—Գլուխս վրայ:

—Վաղը առտու կը բերե՞ք:

—Վաղը առտու... ի՞նչ կ'ըսէք... մէկ ամիսէն հազիւ կրնամ պատրաստել:

—Մէ՞կ ամիսէն:

—Հապա. ոտանաւոր կարդալը դիւրին է, բայց գրելը դժուար: Գեղեցիկ ոտանաւորի մը համար քիչէն քիչ երկու ամիս պէտք է:

—Ի՞նչ կ'ըսէք...

—Այո, բայց ես կ'աշխատեմ ամիսէ մը լմնցունել:

—Ատ ի՞նչ դժուար բան է եղեր:

—Ի՞նչ կարծեցիք հապա. երկու ամիս պիտի սպասեմ որ մուսաս գայ և ներշնչէ ինծի, որպէս զի գրեմ. առանց մուսայի ոտանաւոր չգրուիր:

—Եթէ այդ մուսան գալու չըլլայ...

—Անպատճառ կուգա:

—Չ°կրնար ըլլալ որ նամակ մը գրես և աղաչես իրեն որ շուտ մը գայ և դուն ալ երկու ամիս չսպասես:

—Անիկայ ինքն իրեն կուգայ, նամակի պէտք չունի, մեծապատիւ Տէր:

—Ո՞ւր կը նստի... շա՞տ հեռուն է:

—Այո, շատ հեռու է, բայց կուգայ:

—Ցամաքէ՞ն թէ ծովէն:

—Չէ, մեծապատիւ Տէր, չէ:

—Ո՞վ է ուրեմն աս գետնին տակը անցնելու մարդը... ուսկի՞ց պիտի գայ... ըսէ որ ճամբայ մը մտմտանք ու բերել տանք... Եթէ մէկ երկու ոսկի տանք՝ այս շաբաթ կուգա՞յ:

—Այո, երկու ոսկի տալուդ պէս գործը կը դիւրանայ և մուսայս այս շաբաթ վազելով կուգայ, պատասխանեց անմոռաց բանաստեղծը, ոսկի բառը լսելուն պէս:

—Գրէ ուրեմն իրեն, իմ կողմէս ալ յատուկ բարեներ ըրէ, և ըսէ որ Աբխողոմ աղան քեզ տեսնել կ'ուզէ:

—Գլխուս վրայ: Մնաք բարեաւ, Տէր, շնորհակալ եմ ձեզմէ. ծառայ եմ ձեր մեծապատուութեանը, և կ'աղաչեմ որ ընդունիք...

—Ո՛չ, ըսաւ Աբխողոմ աղա բարկութեամբ, ա՛լ երկար ըրիր. ահա ինչ որ ըսիր ընդունեցի և դեռ ի՞նչ կ'ուզես որ ընդունիմ...

—Խորին յարգանացս հաւատալիքը, Տէր... որով մնամ ձեր մեծապատուութեան ամենախոնարհ ծառայ:

—Շատ աղէկ:

Մեկնեցաւ բանաստեղծն, երկու ոսկիով բերել տալ խոստանալով մուսայն, զոր ոմանք աւելի աժան գնով բերել կուտան: Մուսայի մ'օրականն հիւանի մ'օրականէն աւելի չէ այժմ:

Յ. Յ. Պարոնեան

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՍՐՒԱՆՁՏԵԱՆ (1840—1892)

Ծնաւ դեկտեմբերի 14-ին 1840 թւի, Վանում. աշակերտ էր Վանայ մօտ գտնւող Վարագայ դպրոցում, որ բաց էր արել Խրիմեան Հայրիկը. — Յետոյ նա ձեռնադրւեց վարդապետ և եղաւ աջակից և ուսուցիչ նոյն դպրոցում.—Սրւանձտեանը յայտնի էր որպէս հիանալի բանահաւաք. ժողովրդական աւանդութիւնները, սովորութիւնները, նախապաշարումներն ու սնոտիապաշտութիւնները նրա գրչի տակ առնում են մի զարմանալի կայտառութիւն ու կենդանութիւն.—Նրա «Թորոս Աղբարը», «Գրոց-Բրոցը»-ը, «Հնոց-Նորոց»-ը մի մի կոթող են ժողովրդական անգիր գրականութեան։ Ներսէս պատրիարքի յանձնարարութեամբ նա ճամբորդեց Փոքր-Ասիա և Հայաստան՝ հայերի մասին ճիշտ և մանրամասն տեղեկագիր ներկայացնելու։ Այդ ճամբորդութիւնը Թորոս-Աղբարի մէջ նա նկարագրում է այնպէս կենդանի, այնքան պարզ ու բանաստեղծական, որ կարդացւում է ինչպէս մի վէպ։—Սասունցի Դաւթի վէպը նրան ենք պարտական։ Սրւանձտեանը մեռաւ 1892 թ. նոյեմ. 17-ին։

ԱՌԱՒՕՏ

Ա.

Առաւօտ է։ Ինչպէս ամեն տեղ՝ այնպէս էլ Հայաստանի գիւղերում ամենքը շարժողութեան մէջ են։ Գիւղացիները արդէն զարթել են այն փոքրիկ թռչնիկի ձայնից, որ գալիս նստում է երդիքների վրայ ու կանչում. «Լծէ, լծէ»։ Նրանք արդէն լծել են իրանց եզներն ու գոմէշները և բաւական վարել են գետինը։ Տների մէջ մատակներն ու կովերը կթել են։ Ոչխարների հօտն էլ դաշտումը մառդաշ արօտներից արդէն մի քաղցր նախաճաշ է արել։ Տանտիկինըն էլ կովերն ու հորթուկներն է դուրս հանում։

Գիւղի աղջկերքն էլ խումբ-խումբ գնում են դէպի կանաչ մարգագետինը, ծաղիկները կոխելով, ծաղիկներ քաղելով և իրար վրայ ածելով, ծիծաղելով, խայտալով։ Նրանք հանդիպում են կաքաւների երամին, լորին, արտուտիկին, որոնք խոտերի տակից թռչկոտում են թփից թուփ, ուզենալով իրար նմանիլ. դու ասա. աղջկերքը թեւաւոր թռ-

*չուններին, թէ թռչունները ռանաթուրկ աղջկանց։ Նրանք
անցնում գնում են առաջ՝ բանջարներ ժողովելու և կանչե-
լու, աղջկերքը՝ «քա՛, քա՛», կաքաւները՝ «գա՛ւ, գա՛ւ»։*

Բ

*Կռունկը երամով կարաւան է կազմել սլաքաձև, օդի
բարձր տեղերովն անցնելով՝ «կռո՛ւ, կռո՛ւ» է կանչում։
Ծառայ եմ ձայնին։
Երկարասրունք արագիլը կտուցը սրած՝ բոյնից դուրս է
եկել, «հօ՛դ, հօ՛դ» ձայնելով դէպի դաշտն է վազում՝ ջրի
ու ցամաքի օձերը բռնելու և սպանելու։
Զորթան-տարուկը գիւղի տանիքների վրայ ու բակե-
րի մէջ է թագնւել, որ չորթան յափշտակէ։
Կոյր բուն այս ժամանակ իր համար մի բոյն է որո-
նում, որ ծածկւի այնտեղ, վերջացնելով իր «Վա՜յ վա՜յ»-ն,
որով սգում էր գիշերը, մի չորացած ծառի կամ գերեզ-
մանաքարի վրայ նստած։
Ջկնկուլը գետերի ափերն է վազում ու «ձը՛կ, ձը՛կ»
կանչելով՝ ձուկ-մուկ է որոնում կուլ տալու։
Բադն ու սագը ջրերի վրայ նստած՝ կայտառ նաւա-
վարների պէս թափռում են ու երգում։
Սանրակատար յոպոպը անհանգիստ ոստոստում է և
անդադար աղաղակում՝ «յո՛պ, յո՛պ»։
Դեղնապորտիկը փափուկ ու մաքուր, ճերմակ ու դե-
ղին շորեր հագած՝ փոքրիկ մացառների ու թանձր խոտե-
րի միջից գլխիկը ցոյց տալով ու թաղցնելով՝ իր ձայնն է
լսեցնում։
Սոխակի ձայնն էլ լսւում է բոլոր երգողների ձայների
հետ և ամեն լսողի ուշք ու միտքը վերացնում։
Բարբարոս բազէն որոտացող ձայնով վեր ու վայր է
սլանում՝ մի անմեղ ու անզգոյշ ազաւնի կամ տատրակ
պատառոտելու։
Անգղները, ձրի ապրող քիւրդերի պէս, մի սպանւա-
ծի հոտ առել, գնում են նրա դիակի մսերը կողոպտելու։
Ահա արիւծն էլ երևում է. նրա հզօր թևերի բաղխումից
օդը շառաչելով պատռւում է. բոլոր թռչունները մի ան-
գամից լռում են, մինչև անցնի հեռանայ այդ ահեղ ու
փառահեղ թագաւորը։* Գ. Վ. Սրւանձտեան

ԻՄԱՍՏՈՒՆ ՋՈՒԼՀԱԿԸ

Մի Թագաւոր նստած էր իր գահի վրայ։ Հեռաւոր երկրից մի դեսպան եկաւ և, առանց խօսելու, Թագաւորի գահի շուրջը մի կլոր գիծ քաշեց ու լուռ ու մունջ մի կողմը քաշուեց նստեց։

Թագաւորը այս մարդու արարմունքից ոչինչ չհասկացաւ. կանչեց իր իշխաններին. նրանք էլ մի բան չհասկացան։ Թագաւորը շատ վատ դրութեան մէջ էր։ Նրա համար մեծ ամօթ էր, որ իր տէրութեան մէջ մի խելօք մարդ չէր գտնւում՝ դեսպանի արածը հասկանալու համար։ Թագաւորը սաստիկ նեղացած՝ յայտնեց ամենքին, որ եթէ նորան պատասխան տւող չգտնուի, էլ ոչ ոքի կենդանի չի թողնի։

Թագաւորի կողմից խնդրակներ ման եկան ամեն կողմ, և վերջը մի տան մէջ գտան մի ջուլհակ (ոստայնանկ)։ Տեսնում են, որ այն մարդը մի տեղ նստած՝ միևնոյն ժամանակ երեք գործ է շինում.—համ իր կտաւն է գործում, համ երկու երեխայի օրօրոց է օրօրում, համ էլ տանիքի վրայ ցորեն է փռել, մօտը մի ճիպոտ է անկել. երբ ինքը կտաւի թելերը շարժում է՝ կտաւը գործւում է, օրօրոցները օրօրւում են, այն ճիպոտն էլ շարժուելով՝ տանիքի ծտերն են փախչում, ցորենից հեռանում։

Նրանք այս բանի վրայ շատ են զարմանում։ Յետոյ նորան պատմում են, թէ հեռաւոր երկրից մի մարդ եկաւ, Թագաւորի գահի շուրջը մի գիծ քաշեց, և ոչ ոք չկարողացաւ իմանալ, թէ դրանով ինչ էր ուզում ասել։ Վեր կաց, գնանք. եթէ դու նորա միտքը իմանաս՝ Թագաւորը քեզ մեծ պարգևներ կը տայ։

Ջուլհակը մի քիչ մտածում է, յետոյ առնում է երկու վէգ ու մի վառիկ և գնում է հետները։ Հասնելով Թագաւորի մօտ՝ վէգերը հանում է և ձգում է դեսպանի առաջը։ Դեսպանը գրպանից մի բուռը կորեկ է հանում ու շաղ տալիս գետնին։ Ջուլհակը բաց է թողնում վառիկը, որ իսկոյն սկսում է կտցահարել կորեկը։

Այս բանը տեսնելով՝ դեսպանը տրեխները հագնում է ու սուս ու փուս դուրս գնում։

Թագաւորը ջուլհակին հարցնում է, թէ «Այդ ինչ արիր»։ Ջուլհակը պատասխանում է. «Այդ մարդը եկել էր ասելու, թէ «Մեր Թագաւորը գալիս է քեզ հետ պատերազմելու, քո երկրին տիրելու. խոնարհւում ես, թէ կռւով ես ուզում պատասխանել»։

Ես նրա առաջը վէգեր ձգելով հասկացրի, թէ «Դուք մեզ համար երեխաներ էք, գնացէք վէգ խաղացէք. դուք ո՛վ, մեզ հետ կռւողն ո՛վ»։ Նա իր շաղ տուած կորեկով ուզեց հասկացնել, թէ «Մեր զօրքերը անթիւ, անհամար են. դուք ինչ կարող էք անել»։ Եւ երբ ես վառիկս բաց թողի ու նրա բոլոր կորեկը կերաւ, դրանով պատասխանեցի, թէ «Մեր մի մարդը ձեր հազար մարդուն կը ջարդէ. գնա՛ պատմիր քո Թագաւորին»։

Թագաւորը այս բացատրութիւնը լսելով՝ մեծամեծ պարգևներ տուեց ջուլհակին և ուզեց նորան վէզիրի պաշտօն տալ։ Բայց ջուլհակը պարգևների մի մասովը բաւականացաւ և Թագաւորին ասաց. «Ո՛չ, Թագաւոր, թո՛ղ որ ես ջուլհակ մնամ, վէզիրիդ ինչ պատիւ ուզում ես՝ տուր, միայն ջուլհակին ու կօշկակարին էլ մարդու տեղ դիր»։

Գ. Վ. Սրւանձտեան

ԾԵՐԵՆՑ—ԲԺՇԿԱՊԵՏ ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ

(1822—1888)

Ծերենցը ծնուեց Կ. Պօլսում 1822-ին. կրթութիւնն
ստացաւ Վենետիկի Մխիթարեանների մօտ։ Ապա աւարտեց
Պարիզի համալսարանը՝ ստանալով բժշկի աստիճան։ Վե-
րադառնալով հայրենիք, նա ցոյց տուաւ եռանդուն գործու-
նէութիւն որպէս բժիշկ, ճառախօս, որպէս դասախօսու-
թիւնների կազմող և հրապարակախօս։ Հասունեան կռւի
ժամանակ նա դուրս եկաւ որպէս կատաղի հակհասունեան
և մի խումբ կաթոլիկ կրթուած հայերի հետ անցաւ մայրե-
նի—Լուսաւորչական եկեղեցու գիրկը։ Ճամբորդեց Հայաս-
տան, մանաւանդ Կիլիկիա, դորա համար էլ գրաւեց կա-
ռավարութեան ուշադրութիւնը, ուստի և աքսորւեց Կիպ-
րոս կղզին։ Այնտեղ էլ, գրեթէ 50 ամեայ, սկսեց իր ա-
ռաջին պատմական վէպը, Թորոս-Լեւոնի, ուր ցոյց է տա-
լիս Հայերի Կիլիկիա կենդրոնանալը և Ռուբինեան թագա-
ւորութեան հաստատուիլը։—Այս վէպին շուտով յաջորդեցին
Թէոդորոս Ռշտունին և Երկուն Թ· դարու վէպերը։ Զնայ-
ելով որ նա բժիշկ էր, բայց այս վէպերով ցոյց տուաւ,
որ ոչ միայն առաջնակարգ վիպասանական տաղանդ ունի,
և գիտէ անցեալի դէպքերն ու տիպերը զարմանալի հմ-
տութեամբ կենդանացնել, այլ և նա հիմնաւորապէս ծա-
նօթ է Հայաստանի աշխարհագրութեանն ու պատմութեա-
նը։ Նրա վէպերի մէջ տիրող և հիմնական գաղափարն է,
ազգասիրութեան հետ, ժողովրդասիրութիւնը,—և ժողո-
վրդի միջից դուրս բերած հերոսներն են, որ ստեղծում
են ու առաջնորդում պատմական դէպքերին ազգային ո-
գով, ընդդէմ իշխանների, որոնք անհատական նեղ շահե-
րից աւելի բան չէին հասկանում։ Ծերենցը վախճանւեց
Թիֆլիզում 1888-ին և թաղւեց Խօջի-Վանքի գերեզմա-
նատանը։

ԿԻԼԻԿԻՈՅ ՎԻՃԱԿԸ ԺԱ. ԴԱՐՈՒՄ

Արտաքոյ կարգի վիճակ մ'էր այն ատեն Կիլիկիոյ վի-
ճակը. Հայ ժողովուրդ մը Տորոսի լեռներուն մէջ օր ա-
ւուր կ'աւելնար, վասն զի Հայաստան և Փոքր-Ասիա այ-
լակրօնք տիրանալով, անտանելի կ'ընէին հայրենական,
անձնական և կրօնական ազատութիւնը. հալածանք և գե-
րութիւն իր և ամենքին բաժինն էր։

Ժողովուրդը, ինչպէս ասիական ամեն ժողովուրդք,
երբէք չէր երևակայած այնպիսի ազատ կառավարութիւն,
ինչպիսի ունեցած էին Յոյնք և Հռովմայեցիք իրենց պատ-
մութեան մէկ ժամանակին, զոր հանրապետութիւն ան-
ւանած էին։ Մեր եկեղեցական հայրապետք հազիւ թէ
քրիստոնէական կրօնից գրքեր ու գաղափարներ թարգմա-
նելու և տարածելու ժամանակ ունեցեր էին, իսկ ազգայ-
ին պատմութեան մշուշ համառօտութիւնը այնչափ տկար
էր ժողովրդեան մտքին մէջ, որ Հայ զօրավարներ իրենց
զօրաց քաջալերութեան օրինակի համար, Հրէից պատմու-
թեան դիմելու պարտաւորած էին։ Ուստի Տորոսի վրայ
ժողոված Հայուն բազմութիւնը, ինչպէս ժամանակակից
օտարազգիք ալ կը վկայեն, երկու կատարելութիւն ունէր.
պատերազմական քաջութիւն, քրիստոնէական հաւատք.
ամեն մարդ զինուոր և ամեն մարդ իր հայրենի կրօնին
գերին էր։ Իրեն համար ազգային դրօշակ խաչն էր և իր
բոլոր աստուածարանութիւնը Լուսաւորչայ կրօնքն անփո-
փոխ պահպանելն:... Ուստի հալածանք Սելճուկեանց, հա-
լածանք Ամիրապետաց և անթիւ մահմեդական Ամիրայից,
հալածանք Բիւզանդական կայսերաց, հալածանք նաև ի
Վրաց՝ զինք քշեր բերեր էին Տորոսի բարձունքը և հոն
կը լեցուէր, կը դիզուէր ամպի պէս ժողովուրդը, որ կարելի
չէր թէ քիչ-քիչ իբրև վտակ՝ վերջը իբրև գետ և էն վեր-
ջը իբրև հեղեղ չիջնէր և դաշտը չողողէր։

Բայց ժողովուրդը միշտ առաջնորդի պէտք ունէր,
ինչպէս ամեն ժողովուրդք ունեցեր են և պիտի ունենան։
Հայ ժողովուրդը միշտ կը նկատէր երկու տեսակ մարդիկ.

իր կրօնական գլուխները, որ զինք միշտ կը յորդորէին Պօղոսի հետ՝ «Հնազանդ լինել մարմնաւոր տէրանց» և նախարարական հին սերնդոց պայազատքը, որ իբրև թէ փառաց ճաճանչ մը գլխնուն վրայ կը կրէին, յարգանք, պատիւ և իշխանութիւն աննախանձ և անուրանալի սեփականութիւն անձանց համարելով։

Ամեն ամրոց, բերդ կամ դղեակ իշխանի մը ստացուածքն էր, որ միշտ Արծրունի, Բագրատունի, Կամսարական, Սիւնի, Պահլաւունի, Մամիկոնեան և ուրիշ սոյնց նման սերնդոց կը վերաբերէին, որք ազնուականաց բնական առաքինութեամբք և թերութեամբք առաջ կամ ետ կ՚երթային, յօգուտ կամ ի վնաս անձանց և Հայութեան։ Ժողովուրդը միշտ իր սրտի ձայնին և մաքին համօզման հետևելով, այս իշխանաց և բերդակալաց մէջ զանոնք կը վերադասէր, որ առաւել ինքնիշխանութեան և հայրենի հնաւանդ կրօնից և սովորութեանց պաշտպան էին և հետևապէս նաև իրենց ազգին։ Ասկից նաև Ռուբինեանց ժողովրդականութիւնը, որոնք Հայութեան բուն ներկայացուցիչքն էին իր աչքին, մինչ իբրև օտարածին կ՚արհամարհէր յունացեալքն և լատինացեալք, որք սերաստուութեան, տուքութեան և այլ ուրիշ տիտղոսներով Բիւզանդական կայսերէն մեծապատիւ կը վարձատրուէին։

Կային նաև անոնց մէջ այնպիսիներ, որ ոչ միայն իրենց ազգին պաշտպանութիւնը կ՚արհամարհէին, այլ օտարաց հաճոյ լինելու համար իրենց ազգը արհամարհել և անկից օտարանալն ու զանի հարստահարելն իրենց սովորութիւն ըրած էին։

«Թորոս Լևոնի» — Ծերենց

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱԺԻՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ

Խաչատուր Աբովեանը ծնւել է 1804—5 թ. Երևանի մօտ, Քանաքեռ գիւղում։ 10 տարեկան, հայրը նրան տանում է Էջմիածին՝ ուսման տալու և յանձնում է Անտօն եպիսկոպոսին։ 1820—21 թ. նա իր հոգաբարձու Անտօն եպիսկոպոսի հետ գալիս է Հաղբատ և ապա Թիֆլիզ, ուր Ս. Նազարեանի հետ միասին սովորում էր յայտնի հայկաբան Ղարաբաղցի Պօղոս վարդապետի մօտ։ 1823-ին բացւում է Ներսիսեան դպրոցը, ուր և մտնում են Նազարեանն ու Աբովեանը։

Այնուհետև Աբովեանը Էջմիածնում էր իբրև սարկաւագ և տիրացու։ Երբ 1928 թ. Հայաստան է գալիս պրօֆ. Պարրօտը Մասիսը բարձրանալու, Աբովեանն ընկերանում է Պարրօտին իբրև ուղեկից և թարգման և շատ սիրելի է դառնում պրօֆեսօրին։ Լինելով վերին աստիճանի ուսումնասէր, Աբովեանը խնդրում է Պարրօտին, որ իրան տանի հետը Դօրպատ ուսումը շարունակելու։ Պարրօտի միջնորդութեամբ ռուս կառավարութիւնը թոյլ է տալիս Աբովեանին Դօրպատում ուսանելու և 1830-ին մենք արդէն նրան գտնում ենք Դօրպատում։ Վեց տարի Դօրպատում մնալուց և ուսանելուց յետոյ, նա վերադառնում է հայրենիք, բայց աջողութիւն չի ունենում. որովհետև այն ժամանակւայ հայերը կարծում էին, որ բողոքական գերմանացիների մէջ կրթւած Աբովեանը խմորւել է բողոքականութեամբ, ուստի և Յովհաննէս կաթողիկոսը մերժեց նրան տալ թէ կուսակրօնութիւն և թէ ուսուցչութիւն։

Ստիպուած՝ Աբովեանը մտնում է արքունի ծառայութեան և կարգւում է տեսուչ Նահանգական դպրոցի։ 1893-ին՝ արդէն հոգևոր կոչումից հրաժարուած, ամուսնանում է մի գերմանուհու հետ։ 1841-ին Աբովեանին մենք տեսնում ենք խորին և յուսահատական ջանքերի մէջ. նա փորձում է մի դասագիրք հրատարակել, բայց չի կարողանում տպագրութիւնը վերջացնել, որովհետև Կարապետ եպիսկոպոսն արգելում է աշխարհաբար դասագրքի տպագրութիւնը։ Նոյն թւականին, երբ դեռ ևս գոյութիւն չունէր ոչ մի աշխարհաբար հրատարակութիւն, Աբովեանը գրում է իր «Վէրք Հայաստանին», որով և դնում է ամենամեծ հիմնաքարը մեր ներկայ գրական լեզուի։ Ինքը, սակայն, չտեսաւ իր այս և միւս գործերի տպագրութիւնը, ոչ էլ վայելել կարողացաւ գրական մարդու համբաւ։

1843-ին Աբովեանը տեղափոխւում է Երևան աւելի ցածր պաշտօնով, իսկ 1847-ին բոլորովին արձակւում է պաշտօնից։ 1848 թ. ապրիլի 2-ին, լուսադէմին, հեռանալով իր տանից, անհետ կորչում է։ «Միտ դնելով նրա տըրտում և յուսակտուր երգերին, ասում է Ս. Նազարեանը, պէտք է եզրափակել, որ Աբովեանը մի խաւար բոպէի մէջ մահու է տուել իւր անձը»։

Աբովեանի «Վէրք Հայաստանին» շատ ու շատ տեսակէտներով մի վերին աստիճանի նշանաւոր գործ է. նախ՝ դա առաջին վիպասանութիւնն էր հայերէն լեզուով, գրուած պարզ, հասարակ, նոյնիսկ ռամիկ լեզուով, այնպէս, ինչպէս խօսում էին Քանաքեռ գիւղում։ Այն ժամանակւայ համար, երբ ամենքը սովոր էին կարդալ ու գրել միմիայն գրաբար, դա մի չտեսնուած քայլ էր, որ կարող էր անել միայն Աբովեանի պէս տաղանդը։

Սկսած նախապատմական ժամանակներից մինչև Աբովեանի գործը, ոչ մի տեղ դուք հայ ժողովուրդ չէք տեսնում։ Աբովեանն է, որ առաջին անգամ ծանօթացնում է մեզ հայ գիւղացու հետ իր տիպային պարզութեամբ. նրա կեանքը, նրա կենցաղը, նրա ցաւերն ու հոգսերը, ուրախութիւնն ու վիշտը, նրա կինը, մայրը, գաւակը, ընտանիքը, գիւղը, համայնքը, նրա լեզուն, մի խօսքով հայ գիւղը իր բոլոր բնորոշ գծերով։ Դա մի հսկայական գիւտ էր, որ մեր գրականութեան մէջ մտցրեց Աբովեանը՝ լոյս աշխարհ հանելով բուն հայ ժողովուրդը դարաւոր անյայտութիւնից։ Մի Նազարեան, մի Նալբանդեան, մի Պատկանեան, Րաֆֆի և Պռօշեան կարող էին երևան գալ ու գործել միայն այդ գիւտից յետոյ։

Աբովեանը նկարագրում է պարսիկների տուած տանջանքներն ու տառապանքը հայ ազգին. նրա վէպի հերոսը՝ Աղասին, սպանում է պարսիկ զինուորներին, որոնք եկել էին Քանաքեռ՝ մի հայ աղջիկ տանելու պարսիկ Սարդարի համար։ Աղասին իր ընկերների հետ ստիպւում է փախչելու. անցնում է Տաճկա-Հայաստան, ուր նոյն տառապանքն ու թշւառութիւնն է տեսնում. ամեն տեղ օգնելով հայերին, գնում է Անի, որ նրա վրայ անասելի տպաւորութիւն է թողնում։ Վերջը միանում է ռուսաց զօրքին՝ հայրենիքի ազատութեան համար մարտնչելու, և սպանւում է Երևանն առնելուց յետոյ մի պարսկի ձեռքով։

Գիրքը գրուած է այնպէս զգացուած, այնքան տաք ու կրակոտ, հեղինակի երևակայութիւնն այնպէս բոցավառ ու ջերմ է, լեզուն այնքան հարուստ, պարզ և անպաճոյճ, նկարագիրն այնքան բնական սրտաբուխ և ոգելից, որ նմանը մեր գրականութեան մէջ առհասարակ քիչ կարելի է պատահել. Գիրքն ամբողջովին տոգորուած է հայրենիքի, ազգի և ժողովրդի ցաւերի նկարագրութեամբ։ Աբովեանի ոճը նման է մի հեղեղի, որ երկարատև երաշտից յետոյ յանկարծակի թափւում է մի այնպիսի յորդութեամբ, այնքան ուժգին և յորդորառատ, որ ամեն ինչ տակն ու վրայ անելով առաջ է տանում, յեղափոխելու ժամանակակից մտքերի հոսանքը, նոր ճանապարհ բաց անելու այդ մտքերի համար և նոր ընթացք տալու նրանց... և նա հասաւ իր նպատակին։ Մի հուժկու հարուածով պէտք էր կտրատել գրաբարի կաշկանդիչ կապերը, մի «Հայրենասիրի ողբով» պէտք էր իմաց տալ նորածին լեզուի զարթնելը, մի սրտամորմոք, յուզիչ լեզուով պէտք էր երևան հա-

նել հայ ժողովրդին անյայտութիւնից, լեզւով, ձևով, նիւթով և էութեամբ պէտք էր մի նոր գրական կոթող ստեղծել. այդ ամենն արաւ Աբովեանը, իր մի գործով, և անյայտացաւ, այդ բառի իսկական իմաստով, Կոլումբոսի նման, առանց վայելել կարենալու իր գիւտի և իր գործի մեծութիւնը։—Մինչև իսկ այսօր, Աբովեանից գրեթէ 60 տարի յետոյ, մեր հեղինակներից ոչ մինը չի կարող մրցել Աբովեանի հետ զգացմունքների խորութեամբ և ոճի զօրեղութեամբ. անցեալից նրա հետ համեմատել կարելի է միայն Գր. Նարեկացուն։

Գ. Վանցեան

ԱՌԱՋԱԲԱՆ

Քսան-երեսուն տարուց աւելի է, իմ ազիզ հէր՝ իմ սիրելի ազգ, որ սիրտս կրակ է ընկել, էրւում, փոթոթւում է, գիշեր-ցերեկ լացն ու սուգը իմ աչքիցս, ախն ու ուխը իմ բերնիցս չի պակասում, այ իմ արիւնակից բարեկամք, որ մէկ միտքս ու մուրազս ձեզ պատմէի ու յետոյ հողը մտնէի։ Ամեն օր գերեզմանս առաջիս տեսնում էի, ամեն ժամ մահւան հրեղէն սուրը գլխիս պտըտում էր, ամեն րոպէի ձեր սիրտն ու դարդը՝ հոգիս էրում, մաշում էր. լսում էի ձեր քաղցր ձէնը, տեսնում էի ձեր սիրուն երեսը, իմանում էի ազնիւ միտքն ու կամքը, վայելում էի ձեր ազիզ սէրն ու բարեկամութիւնը, մտածում էի ձեր կորցրած փառքն ու մեծութիւնը, մեր առաջին՝ էն հիանալի Թագաւորաց, իշխանաց գործքն ու կեանքը, սեր հայրենեաց, մեր սուրբ աշխարհքի առաջւան սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի աննման բնութիւնն ու արած քաջութիւնները։ Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցոյց էր տալիս՝ թէ ինչ աշխարհքի ծնունդ եմ ես։ Դրախտը մօքումս էր կենդանի, որ ինձ երազում, թէ լուրջ՝ միշտ մեր երկրի անունն ու պատուականութիւնը՝ իմ առաջս էր բերում. Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսաւորիչ քնած տեղս էլ ինձ ասում էին՝ որ ես իրանց որդին

եմ. Եւրոպա թէ Ասիա ինձ անդադար ձէն էին տալիս, թէ Հայկայ զաւակն եմ ես, Նոյեան թոռը, Էջմիածնայ որդին, Դրախտի բնակիչը։ Դաշտում թէ ժամում, չօլում թէ տանը՝ էն քարերն էլ ուզում էին որ սիրտս պոկեն, հանեն, որտեղ որ իմ ազգի ոտը կոխել է, ու էս օր էլ կոխում է. շատ անգամ մէկ հայ տեսնելիս՝ ուզում էի եղած չունչս էլ հանեմ, նրան տամ, բայց ախ, լեզուս փակ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ։ Գանձ չունէի, որ գործով ցոյց տայի ուզածս, անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հասնի։ Մեր գրքերն էլ գրաբար, մեր նոր լեզուն էլ անպատիւ, որ բոխս կարօտը խօսքով յայտնէի. հրամայել չէի կարող, խնդրէի, աղաչէի էլ՝ լեզուս մարդ չէր իմանալ, չունքի ես էլ էի ուզում՝ որ ինձ վրայ չծիծաղեն, չասեն՝ կոպիտ է, յիմար է...

Էսպէս բաները մտածելով, օրս ու ումրըս մաշւել էր։ Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ։ Չէի իմանում՝ թէ սրա չարէն ինչ կ'ըլի։ Թող լսողը չհաւատայ, ամա էս ցաւն էնպէս էր սիրտս առել, որ շատ անգամ գըժւածի պէս ընկնում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ եդ սիրտս լիքը տուն գալիս...

Մէկ բարիկենդանի՝ աշակերտներս որ բաց թողի, սկսեցի, ինչ որ երեխութիւնիցս լսած, կամ տեսած բան գիտէի, տակ ու գլուխ անել։ Վերջը իմ ջիւան Աղասին միտս ընկաւ. Նրա հետ հարիր քաջ տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին ու ամենն էլ ուզում էին՝ որ իրանց ոտը գնամ։ Միւսները մեծ-մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ սաղ սալամաթ՝ փառք Աստուծոյ, Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին ղուրբան։ Ասեցի՝ կեղծաւորութիւն չանեմ, նրան ընտրեցի։ Սիրտս էկել էր, բերնիս հասել։ Տեսնում էի որ էլ Հայի լեզուն խօսող քիչ է գըտնւում։ Մէկ ազգի պահողն էլ՝ լեզուն է ու հաւատը. թէ սրանց էլ կորցնենք, վայն էկել է մեր օրին։ Հայոց լեզուն առաջիս փախչում էր, երեսուն տարւայ փակ բերանս Աղասին բաց արեց։ Մէկ երես բան դեռ չէի գրել, որ իմ մանկական սիրելի բարեկամ ու ազնիւ հայազգի պարոն

դօքտօր Աղաֆօն Սմբատեանը ներս մտաւ։ Ուզում էի թուղթս ծածկեմ, էլ չկարացի. Ինձ համար Աստուած էր նրան էն սհաթին ղրկել, նրա ջանին մեռնեմ։ Զօռ արեց որ կարդամ, բարեկամիցը ինչ պէտք է թաքցրած։ Սիրտս դողում էր կարդալիս՝ մտքումս ասում էի՝ թէ հէնց հմիկ որդի որ է, գլուխը կը պտրտի, ունքերը կը կիտի միւսների նման ու իմ ախմախութեան վրայ մտքումն էլ է հօ կը ծիծաղի, որ երեսիս չասի։ Բայց փիսը ես էի, որ նրա ազնըւական հոգին դեռ լաւ չէի ճանաչել։ Վերջացնելիս՝ որ հէնց էն է թուրն էկել էր, ոսկորին դէմ առել, որ չասեց. «Թէ որ էդպէս կը շարունակէք, շատ հիանալի բան կը դառնայ», ուզում էի վրայ թռչեմ, բերանը, էն քաղցր բերանը համբուրեմ։

Նրա սուրբ բարեկամութեանն եմ պարտական, որ մունջ լեզուս բաց արեց։ Նա գնաց թէ չէ՝ կրակը ջանս առաւ։ Սհաթի տասն էր առաւօտի։ Էլ հաց, կերակուր միտքս չեկան։ Ճանճը առաջովս անց կենալիս, ուզում էի սպանեմ, էնպէս էի վառւել։ Ծնող, տուն, երեխայութիւն, ասած, լսած բաներ էնպէս էին կենդանացել, որ էլ աշխարհքը միտքս չէր գալիս։ Ինչ խուլ, կորած, մոլորած մտքեր ունէի, բոլորը բացւել, եդ էին եկել։ Նոր էի իմանում, որ գրաբար ու ուրիշ լեզվներ՝ մինչև էն սհաթը միտքս փակել, բռնել էին։ Ինչ որ ասում էի, կամ գըրում էն ժամանակը՝ գողացած կամ հնարած բաներ էին, էնդուր համար հէնց մէկ երես բան գրում էի թէ չէ՝ եա՛ քունս էր տանում, եա՛ ձեռս բեզարում։ Գիշերւան մինչև սհաթի հինգը ոչ հացի մտիկ արի, ոչ չայի, չիբուխն էր իմ կերակուրը, գրիչը իմ հացը։ Տանըցոց խնդրելուն, նեղանալուն, խռովելուն էլ չէի մտիկ անում։ Երեսուն թաբաղէն էն է լցւելով էր, որ բնութիւնը իր պարտքը պահանջեց՝ աչքերս գնաց։ Սաղ գիշերը ինձ էնպէս էր երեւում՝ թէ նստած գրում եմ. երանի՜ կ'ըլէր ինձ՝ թէ էն մտքերը ցերեկն էին միտս ընկել…

Հայեր, թող ինձ այսուհետև ագէտ կանչեն… Թող տրամաբանութիւն գիտեցողը իրան համքեարի համար գրի, ես՝ ձեզ համար։

Խ. Աբովեան

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Հայաստանի հողն էն հողն է, էն հիանալի աշխարհն է, ուր որ դրախտն էր եդեմական, ուր Աստուած՝ բոլոր աշխարհը ջրհեղեղովը երբ որ կործանեց, Հայոց սուրբ Մասսայ սարը միայն արժան տեսաւ, որ Նոյեան տապանը նստի ու Հայոց երկրիցը էլի մարդիկ բազմանան ու ուրիշ երկիրներ էլ շինութիւն գցեն. էն սուրբ հողն է, ուր որ անպարտելին Հայկ իր նիզակը ցցեց ու իր սուրբ անունովը Հայաստան կանչեց։ էն ընտիր հողը շատ ուրախութիւն տեսաւ, շատ գեղեցկութիւններով զարդարւեցաւ, շատ թշնամու նախանձելի դառաւ։ Դա էն սուրբ հողն է, ուր Բագրատունեանք, Ռուբինեանք՝ իրանց հազար թշնամու ձեռի անտէր մնացած հայրենիքն էլ եդ գերեզմանից հանեցին, էլ եդ նոր հոգի տւին. էն օրհնեալ հողն է, ուր Ասորիք, Պարսիկք, Հոնք, Ալանացիք, Մակեդոնացիք, Հռովմայեցիք, Արաբք, Օսմանցիք՝ ջրհեղեղի պէս վրայ եկան, հարիւրաւոր ազգ ու աշխարհ ոտնակոխ արին, ջնջեցին, սրբեցին,—թրի, կրակի մատաղ արին, որտեղ որ սար չի մնացել՝ որ արին չտեսնի, քար չի մնացել՝ որ մարդ տակով չանի ու հարիւր մեր հարեան ազգեր էնպէս են հողի հետ հաւասարել, կորել՝ որ էս օր ոչ նրանց շունչը կայ, ոչ անունը։—Բայց սուրբ Հայոց ազգը, անյաղթելի Հայկայ որդիքը, իրանց կեանքը, թագաւորութիւնը, մեծութիւնը, փառքը, իշխանութիւնը, զօրքը կորցնելէն ետև, որ տեսան՝ թէ աշխարհակործան ջրհեղեղին, էս գազան ազգերին չեն կարող դիմանալ, աչքները երկինքը գցեցին, գլխները գոգները դրին ու հազար թրի տակից, հազար կրակի միջից, սիրտը սրտի տւած, հոգի հոգու կպցրած, մինչև էս օր էլ՝ իրանց գլուխը, իրանց սուրբ հաւատը, իրանց սուրբ օրէնքը՝ էն վեհանձնութիւնովը պահպանեցին, որի օրինակը աշխարհքում ոչ էլել է, ոչ կ'ըլի։ Նոյեան դէսը վեց հազար տարի Հայոց խեղճ ազգը հեթանոսի, կռապաշտի, մահմեդականի, անօրէնի ձեռին էր աչք բաց անում, նրանց հետ քեալլայ տա-

լիս, ու շատին շատ անգամ իր ոտի տակին գցում... Բայց կարող է վարդը ծովի միջում զօրանալ, կարող է մանուշակը կրակի առաջ դիմանալ, կարող է կակող ցորնի հասկը էն կայծակին ու կարկտին համբերել, որ մեր ազգը իր թշնամուն համբերել է, կամ դիմացել։

Հայոց ազգ, Հայոց ազգ, ձեր ջանին մեռնեմ. Հայոց ազգ, Հայոց աշխարհ, էն ո՞ր կաթը ծծեցիք, որ դուք էս հոգին ունեցաք, էս սիրտը ձեր միջում պահեցիք, էս հը- [illegible] է ըլի, որ ձեզ չսիրի, ձեր փառքը չգովի։ Դուք իրար պահեցէք, ձեր հոգին ու ազգը պաշտեցէք, ով Հայ-որդիք,—բայց աչքս ճամբի է, ականջս ձէնի՝ ձեր ջանին դուրբան՝ չթողաք, որ էս մուրազը հետս գերեզմանս տանեմ ու հոգումս մարմինս քրքրէ։ Երկնքումս հոգիս [illegible]-վի, երբ իմանամ՝ թէ ձեր սէրը պակսել է, ձեր բարեկամութիւնը ցամաքել։

Խ. Աբովեան

Զ Մ Ե Ռ

Ձիւն եկել դիզւել, սար ու ձոր բռնել էր։ Պարզկայ գիշերը ինչպես էր գետինը սառացրել, որ ամեն մէկ ոտը կոխելիս հազար տեղից տրաքտրաքում, ճրճռում, ճըռճըռում էր ու մարդի ջանը սըրսըռացնում, ձէն տալիս։ Ամեն մէկ ծառի ճղներից, ամեն մէկ տան կտուրից հազար տեսակ սառցի լուլայ, հազար տեսակ ձնի քուլայ կախ էր ելել ու բիզ-բիզ իրար վրայ սառել։ Հէնց գիտես սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել, մահւան դուռն ընկել. շունչն էր մնացել, որ տայ ու աշխարհիս «բարով մնայ» ասի։ Թռչուն, գազան, անասուն, սողուն, որը փէտացել էստեղ, էնտեղ վէր էր ընկել, որն էլ վազ, ամսով առաջ բունը մտել, ձէնը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում։ Գետերի, առուների երեսները սառիցը մէկ գաղ էկել. հաստացել, իրար վրայ

դիզւել, ինչպես էր ջրի, աղբրի բերնին հուփ ուել, որ մոտըններին կանգնողը միմիայն նրանց խուլ ձէնն էր լսում, որ սառցի տակին տխուր տրտում, քըլքըլում էր ու էլ եղ էստեղ, էնտեղ կամաց-կամաց ձէնը կտրում, պապանձւում, սառչում։

Արեգակը էս առաւօտ որ գլուխը քնի տեղիցն ու ազօթարանիցը չի բարձրացրեց ու աչքը աշխարհի վրայ քցեց, շաքր սարերի գագաթին, դաշտերի գլխին, ինչպես [illegible] ըրին տալիս, որ հէնց իմանաս թէ [illegible], եաղութ ու հազար տեսակ-տեսակ անգին քարեր ըլէին դաշտերի, սարերի գլխին, երեսին, դոշին փռած։ Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին ինչպես էր մէկդան բաց [illegible] գլխով տալիս, որ ճամբորդի ըիթ ու պռունգը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում. աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կըտռում, կամ ոտ ու գլուխ փէտացրած, ճամբից խռկում, սար ու չոլ քցում, խեղդում, կամ քարէքար տալիս։

Խ. Աբովեան

Զ Ա Ն Գ Ի

Ինչպէս մէկ կատաղած վիշապ՝ երկնքիցը թռած, գըլխիվայր կախւած, մէկ տուտը Սևանի հանդարտ ծովումը, մէկ տուտը Արագի քըքըւած եզերքումը, սար ու ձոր կխչոր տալով, քանդելով, տապալելով, քափ ու քրտինքը բերանը կոխած, գըզգըզւած, մազերը գագաթին ցցւած, կապը կտրած, գժւած. բերանը աւազով, քարով, աղբով լիքը, այս կողմը փնչացնելով, նորւելով, ջարդելով, յատակ ու եզերք ծամելով, բըղելով,—... այն նեղ, չոր, տխուր Կաքաւասարի տակիցը որ յանկարծ դուրս է պըրծնում, վազում ու հրով, սրով, բոցով, բըով, փռնչալով, մռնչալով, խռնչալով, քարի, քարափի գլուխը ծեծելով, իր

փորը խցկելով, վէմ, ապառաժ իրար խփելով. կայծակին տալով, ճչալով, ճռընչալով. թնդալով, դղրդալով, — ցած ափները, սառնահար գետինը պօկելով, պոռճօկելով, քըրքըրելով, քրքրւելով, կենդանի, անկենդան, մարդ, անասուն գետնին զարկելով, բամբաչելով, խլացնելով, սըրթսըրթացնելով, վըրթվըրթացնելով, — վառւած, կրակւած, աչքերը արիւնով լիքը, բաշը ցցած, ատամները ղըրճըտացնելով, կրճտացնելով, դաշտ ու տափ դըըմբացնելով, դըըն-գացնելով, դըմբդըմբացնելով, դընգդընգացնելով, ու կայծակի թուրը բերանին բռնած, վրայ պրծած որ գալիս է ամեհի Զանգին ու Զօրագեղ մտնում։

Որ քամին մի կողմից, բուքն ու բօրանը միւս կողմից՝ ինչպէս կատաղած դահիճ սրարձակ մորթում, հրա-ցանով, նիզակով՝ սարերի գլխներիցը, ձորերի միջիցը փոշի, ձւաղ, հող, ալը առաջն արած՝ փոսերիցը հանում պատէպատ տալիս, գետնիցը պոկում, քարափին խփում ու՝ ծառերը ջարդելով, խոտերը ճօթռելով, գետինը ճըղելով... մէկ այս քարափին քարով բոնցկում, մէկ այն սարի գլխին խփում ու մէկ կիտուկ հող, ձւաղ՝ շունչդ քաշելիս կամ աչքդ բանալիս երկու ձեռքով բերանդ ու բացքիթդ է խցկում, աչքերդ խաւարեցնում ու ականջիդ տակը հրացանի գնտակի պէս, կամ սուր նետի նման՝ վըզվըզալով, ղըղղըղալով յետ դառնում շուտով, երեսիդ այնպէս խփում, որ աչքերդ մթնած՝ կայծակի են տալիս, ու դու տեղն ի տեղդ ճըմռում ես, շւարում, թմրում, սառսռում, քար դարձած մնում ու սառած կանգնում։

Ու—այս ժամանակ, այս սարսափելի ժամին՝ որ երբեմն էլ երկինքը իր ալէկոծութիւնն է սկսում, սարերը ջարդում, ամպերը որոտացնում, կայծակի լախտը աշխարհի չորս կողմի գլխին խփում, փշուր-փշուր անում. ու Զանգին, սարսափելի Զանգին էլ որ մէկ կողմից գոռում, մռընչում, ու թոյլ ձեռքերը, անկազմ ոտքերը քարէքար տալիս, փոշի բարձրացնում, բառաչում է ու քամու վըզվըզոցը, երկնքի որոտոցը, քարափի ճըռճըռոցը, սարերի դըըմբդըմբոցը, ձորերի դըրնգդըրնգոցը, ծառերի խըշխըշոցը,

այրերի խուլճչոցը, ջրաղացների թըրխկթըրխկոցը, գետնի գըրնգգըրնգոցը, տների թնդալը, պատերի որոտորոտոցը. շների, գայլերի, արջերի, աքաղաղների՝ ծղրտալը, ճչալը, ծւալը, բառաչելը, խառանչելը, վըճգվըճգոցը, կոճձկոճձալը, ճըճգճըճգալը—իր ահագին ձայնի հետ խառնում, ոլորում, փորը քաշում...—այս միջոցին՝ որ Աստուած մի արասցէ, մէկ անծանօթ անցւոր կոնդի դուզն է գնում կամ Ապարանքափոսիցը վայր իջնում, որ Զանգուի վրայով անց կենայ, աչքը շաղւում է, գլուխը շւարում ու այնպէս է կարծում, թէ մէկ ահագին սար վրան փուլ եկաւ։ Քարացած, փէտացած, մնում է տեղն ի տեղը սառած, ցցւած... երբ աչքի առաջին կամ Քանաքեռն է բացւում կամ Նորագեղի դաշտավայրը...

Խ. Աբովեան

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆ

Նազարեանը ծնւեց մօտ 1810-ին, Թիֆլիզում. Նրա հայրը, Տէր-Եսայի քահանան, մի շատ բարի և ուսումնասէր մարդ էր։ Ստեփաննոսը նախնական ուսումն ստացաւ հէնց իր հօր մօտ, ապա Ղարաբաղցի Պօղոս հայկաբան վարդապետի մօտ, ուր և սովորում էր Խ. Աբովեանը. 1823-ին, երբ Ներսէս Ե բաց արաւ Ներսիսեան դպրոցը, Նազարեանը Աբովեանի հետ միասին մտաւ այդ դպրոցը և աւարտեց 1827-ին։ Նազարեանը իր աշխատասիրութեամբ և ընդունակութեամբ սիրելի էր եղել Ներսէս արքեպիսկոպոսին (ապա կաթողիկոս), ուստի և նրա միջնորդութեամբ բժիշկ Սոլոմոն Տէր-Ղուկասեանն ուղարկում է Ստեփանին Դորպատ ուսանելու։ Այնտեղ էր արդէն Նազարեանի սիրելի ընկեր Խաչատուր Աբովեանը։ Համալսարանն աւարտելուց յետոյ նոքա միմեանցից բաժանւեցան և այլևս միմեանց չհանդիպեցան։ Աբովեանն եկաւ հայրենիք, իսկ Նազարեանը դարձաւ ուսուցիչ արաբ և պարսիկ լեզուների Լազարեան ճեմարանում։ Սակայն ինչպէս նրանց կրթութիւնը, այնպէս էլ ապագայ գործունէութեան գլխաւոր արդիւնքն էր՝ աշխարհաբարի հաստատումը և մշակումը։ 1858-ին Նազարեանն սկսում է հրատարակել «Հ ի ւ ս ի ս ա փ ա յ լ» ամսագիրը Մոսկւայում, ուր աշխատակցում էին ժամանակի առաջնակարգ ոյժերը—Նալբանդեան, Ռ. Պատկանեան, Յ. Մելիք-Յակոբեան և այլն։ Հիւսիսափայլը փոքրիկ ընդհատումով շարունակւեց մինչև 1865 թ. և իր ութամեայ հրատարակութեամբ մի կատարեալ յեղափոխիչ հանդիսացաւ մեր կեանքի դրեթէ ամէն ասպարիզում։

1869-ին մենք Նազարեանին տեսնում ենք Թիֆլիզում, իբրև տեսուչ Ներսիսեան դպրոցի, ուր, սակայն, նա երկար չմնաց, այլ կրկին հրաւիրւելով, գնաց ետ նախկին պաշտօնին, Լազարեան ճեմարան, ուր և մնաց մինչև մահը, այն է՝ 1879 թ. ապրիլի 26-ը։

Ս. ՍԱՀԱԿ

Հինգերորդ դարի ճակատումը՝ որպէս մնացելի պարագլուխ հայ լուսաւորութեան, որպէս մի յաւիտեան քաղցր պատկեր հայ դպրութեան, պատմագրի հոգու առջև կանգնած է Պարթևացի Սահակ Մեծը, Հայաստանի 10-րդ հայրապետը, ծնած Կ. Պօլսի մէջ, Ներսէս Մեծի որդին և ձեռնասունը։ 390-ին հասնելով պատրիարքական աթոռի, ամբողջ 50 տարի ամենազգաստ արթնութեամբ կառավարել է նա Հայաստանի եկեղեցին այն բազմապատիկ փոթորիկների տակ, որոնց պէտք է տանէր նա այն միջոցներում։ Հայոց պատմութիւնը և պատմագիրը չի կարող լռել թէ այս մեծ և հոյակապ տղամարդը ո՛րպիսի անարժան ապերախտութեամբ հայ նախարարների և մեծատունների կողմից, ո՛րպիսի անարգ մատնութեամբ պարսից թագաւորի առաջ հրաժարւել է իր հայրապետական պաշտօնից և 540-ին կնքել է իր ճոխավաստակ կեանքը մի տխուր առանձնութեան մէջ՝ սիրտը կոտրած, հոգին լցւած տըրտում մարգարէութեամբ ապագայի վրա։ Նրա գիտնականութիւնը և մեծամեծ վաստակները Հայ ազգի կրթութեան ասպարէզի մէջ կարելի է գտնել նրա գործերից, որ սրանք են.—աջակցութիւնը տառերի գիւտին, որ նա տւաւ Մաշտոցին, գերազանց թարգմանութիւնը հին կտակարանի՝ եօթանասուն թարգմանիչների հիման վրայ։ Մի ճառ եկեղեցու և հոգևորականների բարեկարգութեան մասին։ Այս աշխատութեան խորհուրդն այն է, որ արտաքին աստւածպաշտութեան տնտեսութիւնն աւելի լաւ համակարգէ, սաղմոսերգութիւններն աւելի պատշաճապէս կանոնաւորէ, այլև տօները սահմանէ մի բարեկարգ տօնացոյցի հաստատուն կանոններով։ Բացի սրանից, Մովսէս Խորենացին իր Հայոց պատմութեան երրորդ գրքի մէջ պահպանել է մի քանի նամակ, որ Սահակ պարթևը գրած է դէպի կայսրը Թէոդոս կրտսերը, դէպի Կ. Պօլսի Ատտիկոս պատրիարքը և Անատոլէոս զօրավարը։ Այլև Սահակ Պարթևի անւամբ գտնւում են մի քանի երգեր Հայոց Շարակնոցի մէջ։

«ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼ», Ս. Նազարեան

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի՜ լեզու, մայենի՜ բարբառ,
Անուշ, ընտանի իմ հոգու համար.
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու, սիրոյ քաղցրիկ, առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք տկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար։

Գեղեցի՜կ լեզու, հրաշալի՜ լեզու։
Այդ ինչպէս քաղցր հնչում ես ինձ դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապեր և հայրեր խոր գերեզմանից։

Հնչի՜ր, դու հնչի՜ր այժմ և յաւիտեան,
Մայրենի՜ լեզու, բարբա՛ռ սիրական,
Արի՛, բարձրացի՛ր հնութեան փոշուց,
Դու իմ հա՛յ լեզու, մոռացուած վաղուց.
Ըզգեցիր նոր կեանք սուրբ գրուածքներով,
Որ ամենայն սիրտ վառւի քո սիրով։

Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է, այո՛, միւս այլ ձև ու ոճը.
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր,
Իմ երանական մտածութիւնքը՝—
Ապա կըխօսեմ իմ մօրս խօսքը։

Ս. Նազարեան

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Միքայէլ Նալբանդեանը ծնւեց Նոր-Նախջևան քաղա-
քում 1829 թ. նոյեմբերի 2-ին։ Հայրը՝ ուստա Ղազարը,
բազարի մէջ կպրով առուտուր էր անում։ Ծնողները, որ-
ւին նրան Տէր-Գաբրիէլ Պատկանեան հայկաբան քահանայ-
ին, որ այն ժամանակ Նախիջևան էր և ուսուցչութիւն
էր անում։

Քահանան տեսնելով իր աշակերտի աշխոյժ բնաւորու-
թիւնը, ուշիմութիւնը և բանաստեղծական ընդունակու-
թիւնները՝ առանձին ուշք դարձրեց նրա վրայ և ամենայն
ջերմեռանդութեամբ ու սիրով պարապեց հետը։ Մինչև
1840 թիւը մնաց նա իր վարժապետի մօտ և սովորեց
հայկաբանութիւն, կրօնագիտութիւն, պատմութիւն Հայոց
և մասամբ ռուսերէն ընթերցանութիւն։ Շատ սիրող էր
երգեցողութեան, լաւ ձայն և նուրբ լսողութիւն ունէր։
Մատթէոս արքեպիսկոպոս Վեհապետեանը նշանակւած էր
առաջնորդ Նախիջևանի և Բեսարաբիայի վիճակին, 1847
թւին եկաւ Նոր-Նախիջևան և տեսնելով Նալբանդեանի
ընդունակութիւնը և գրագիտութիւնը՝ առաւ նրան իր մօտ
և շատ ժամանակ չանցած՝ կարգեց քարտուղար։ Քարտու-
ղարութեան պաշտօնը նա պարզերեսութեամբ կատարեց
վեց տարի շարունակ, և արդիւնաւոր ու ջերմեռանդ ծա-
ռայութեամբ համակրութիւնը գրաւեց և՛ հասարակութեան,
և՛ առաջնորդի։ 1853 թւին Նալբանդեանը գալիս է Մոսկ-
ւա և այնտեղից՝ Ս.-Պետերբուրգ, ուր համալսարանում
քննութիւն տալով՝ ստանում է ուսուցչութեան վկայագիր
և Լազարեան ճեմարանի մէջ կարգւում է ուսուցիչ Հայոց
լեզւի։ Սակայն այստեղ ևս հանգստութիւն չի գտնում Նալ-
բանդեանը...

Զգալով իր թերի կրթութիւնը և միակողմանի գրագիտութիւնը, նա սկսում է կանոնաւորապէս ուսանել եւրոպական լեզուներ և իմաստասիրել այն գիտութիւնները, որ անհրաժեշտ են համալսարան մտնելու համար, այնպէս որ կարողանում է Մոսկւայի համալսարանի բժշկական բաժնում պրոֆեսօրի դասախօսութիւնները լսել և հասկանալ։ Բայց չաւարտած և քննութիւն չտւած՝ թողնում է համալսարանը և մասնաւորապէս պարապում է գրականութեամբ։ 1858 թւականին գիտնական և անւանի ուսուցչապետ Նազարեանը հրատարակում է «Հիւսիսափայլ» օրագիրը և Նալբանդեանը լինում է նրա քանքարաւոր գործակիցներից մինը։ Նրա յօդւածները «Հիւսիսափայլի» գլխաւոր զարդն էին և ամեն օրագրի կարող էին պատիւ բերել... Այսպէս երկու-երեք տարի շարունակ փառաւորապէս կրեց նա «Հիւսիսափայլ»-ի դրօշը, իր ճարտար գրչի տակ արգի աշխարհաբար լեզուն մշակելով։

1858 թւականի վերջերը Նալբանդեանը մասամբ առողջութեան պատճառով և մասամբ բան տեսնելու գիտաւորութեամբ գնաց արտասահման, շրջելով Պօլիս, Վիեննա, Փարիզ և այլ քաղաքներ։ Այս քաղաքներում ծանօթացաւ և բարեկամացաւ հայերի հետ և իր՝ «Հիւսիսափայլին» ուղղած նամակների մէջ նկարագրեց նրանց վիճակն ու գործերը։ 1859 թւականի վերջերին վերադարձաւ Պետերբուրգ և սկսեց կանդիդատի վկայագիր ստանալու համար քննութեան պատրաստւիլ, և իրօք 1860 թ. Պետերբուրգի համալսարանում քննութիւն տալով՝ ստացաւ արևելեան լեզւագիտութեան կանդիդատի աստիճան։

Հնդկաստանի մեծատուն հայերը 90—100 տարի սրանից առաջ զանազան հրիտակներով մեծագումար փողեր էին կտակել զանազան քաղաքների, սրանց կարգում և Նախիջևանի անունով. բայց մինչև 1860 թիւը այս ծանրակշիռ գործը մեր ազգի զանցառութեամբ բարձի թողի էր արւած, այքան տարւայ միջոցում ոչ ոք յանձնառու չէր եղել այդպիսի հեռաւոր ճանապարհորդութիւն անելու և գործն աւարտելու։ Նալբանդեանն առաջուց տպեց «Հիւ-

սիսափայլի» մէջ այդ հրիտակները և դրանց մասին մի յօդւած հրատարակեց, առաջարկելով Նախիջևանի հասարակութեան, որ խորհուրդ անեն այդ մասին իրանց մէջ և օր առաջ աշխատեն ձեռք բերել այն փողերը։ Նախիջևանցիք ընդունեցին նրա առաջարկը, ժողով կազմեցին քաղաքական ատեանում (մագիստրատ) և ամենքի համաձայնութեամբ ընտրեցին Նալբանդեանին հասարակութեան կողմից երեսփոխան այդ գործի մասին... Իսկ այդ միջոցին Նալբանդեանը կոչւում է ս. Էջմիածին, և Մատթէոս կաթողիկոսը իր ստորագրութեամբ վաւերացնում է հաւատարմագիրը, որով ուղևորւում է Հնդկաստան։ Անցնում է Պօլիս, Պարիզ, Լոնդոն, և այնտեղից Պարիզի ու Սուէզի ճանապարհով հասնում է վերջապէս Կալկաթա, ուր մեծամեծ դժւարութեանց և արգելքների հանդիպելով և յաղթելով՝ հանում է կտակած փողերի մնացորդը...

Բայց այդպիսի անխոնջ պարապմունքը և այլ հանգամանքները շատ վնասակար ներգործութիւն ունեցան նրա արդէն խանգարւած առողջութեան վրայ. էլ առաջւայ աշխոյժն ու կենդանութիւնը վրան չէր մնացել. բոլոր բարեկամների ու ծանօթների սիրտը մորմոքւում էր՝ նայելով առաջւայ կրակոտ հայի ուրւականի վրայ։

1865 թւականին, երբ նա արդէն իր մասնաւոր գործերը վերջացրած՝ պատրաստութիւն էր տեսնում Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը գնալու, Պետերբուրգի երևելի բժիշկները խորհուրդ տւին մնալ մի քանի ամիս այնտեղ՝ կազդուրւելու։ Սակայն բժիշկների բոլոր ջանքն ու փոյթը իզուր եղան, վասն զի նրա ցաւը անդարմանելի էր. թոքախտը այն աստիճան զարգացել էր, որ էլ ամենևին հնար չկար օգնութիւն հասցնելու նրան։ Այսպէս յոյսը Աստուծոյ վրայ դնելով՝ վեց ամիս հիւանդութեամբ անցընելով, վերջապէս սրտապնդւած ուղևորւեց դէպի Կամիշին։ Մեծ նեղութիւններ կրելով, դեկտեմբերի 7-ին մտաւ այնտեղ աւելի մեռած, քան թէ կենդանի, ինչպէս ինքն ասում էր իր նամակի մէջ, որ գրել էր իր բարեկամներից մինին... Մեռնելուց երկու ամիս առաջ մի նամակ էլ գը-

րում է, որի մէջ սրտաշարժ կերպով նկարագրում է իր թշուառ և ողեաալի դրութիւնը…

Այսպէս չորս ամիս դառն և անմխիթար օրեր տեսնելով, վախճանւեց մարտ ամսի 13-ին (1866 թ.)։

Նրա մարմինը, իր ցանկութեան համեմատ, բերւեց Նախիջեան և մեծ հանդիսով թաղւեց Ս. Խաչ վանքի գաւթում։

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՊԱՆԴՈՒԽՏԸ

Հայ ազգը օր ըստ օրէ թողնում է իր երկիրները և կենդրոնանում է քաղաքներում։ Աշխատութիւնը ստիպում է նրան թողուլ իր տունը, իր ընտանիքը. իր ամուսինը, իր զաւակները և գնալ Պօլիս կամ այլ քաղաք՝ աղքատութիւնից ազատւելու համար։ Բայց այդ տեղերում ևս նրան հանդէպ է դուրս գալիս էապէս նոյն աղքատութիւնը, զուցէ մի փոքր քաղաքային ամօք կերպարանքով։

Բացի սրանից՝ ընտանեկան կեանքից զրկւիլը, դժոխային աշխատութիւնը՝ որով պիտի շահի նա մի քանի յաւելեալ դուրուշներ, անտուն, վարատական և անմաքուր կեանքը, որ պիտի անցուցանէ նա զանազան խջեաններում, երեկոյեան պիտի գայ վաստակեալ, ուժաթափ, շատ անգամ և վիաւուած անդամներով, իսկ լուսաբացին՝ նոյն եգիպտական ծառայութիւնը, որ սպասում է նրան։ Չկայ այն ընտանեկան մխիթարութիւնը, ամուսնու և զաւակների մտերմական և անմեղ հայեացքը, որ առանց ձայնի, առանց խօսելու՝ կարող են ամոքել ճակատագրի դառնութիւնը։ Եւ այսպէս, իբրև գրաստ, իբրև մեքենայ ծառայելով արտաքսելի օտարութեան մէջ, տասն քան տարի, կամ մեռնում է այնտեղ, թողնելով իր ընտանիքը ծայրայեղ թշուառութեան մէջ, կամ վերադառնում է դէպի իր երկիրը։ Վերադառնում է… բայց ո՛չ այնպէս առողջ և զուարթ՝ ինչպէս դուրս էր եկել այն տեղից, այլ հասակն առած, ուժաթափ և թոշնած։ Վերադառնում է իր տունը, երբ կորուսել է աշխատելու ընդունակութիւնը և յարմարութիւնը։

Ուրեմն՝ վերադառնում է նա միմիայն իր ներկայութեամբ իր աղքատ և կարօտ ընտանեաց թիւը աւելացնելու համար։

Եւ ահա նրա տասն և ութը կամ քսան տարեկան որդին, որ աճել և զօրացել է իբրև մի ծաղիկ իր սեփական հողի վրայ՝ առնում է ձեռքը իր հօր պանդխտական գաւազանը և գնում է…

—Ո՞ւր բարով։

—Պօլիս, Տրապիզոն, և այլն և այլն։

—Ինչի՞ համար։

«Աշխատելու և ընտանիքին օգնելու»։

—Աշխատելու և ընտանիքին օգնելու,—կրկնում է խօսակիցը անհնարին տխրութեամբ։

Անցնում է սրա վրայով մի քանի տարի, յանկարծ, այս նորեկը լուր է ստանում, որ իր ծերունի հայրը վախճանւել է, մայրը հիւանդ է։ Մի փոքր ժամանակից՝ և մայրը մեռնում է։

Պանդխտակիցքը գալիս են նրան մխիթարելու։ Մի երկու բաժակ գինի… մի քահանայ, մի «հոգւոց», և պանդուխտի սիրտը պաղում է այն աշխարհից, ուր ծնւել էր… Ի՞նչ բանի համար վերադառնայ։ Նա գտնելու չէ իր տունը, իր ծնողները, նրա աչքերն պիտի հանդիպեն երկու գերեզման և մի ամայի բնակարան, եթէ և այն չէ անցել օտարի ձեռքը։ Նա որոշում է մնալ պանդխտութեան մէջ, և այս որոշումով յօժարում է մինչև տակը խմել թշուառութեան բաժակը. այո, մնում է նա, բայց տունը մարեց։

Արդեօք ո՛րքան գերդաստաններ ընկնում են այսպէս։

Մ. Նալբանդեան

Ա Ղ Ք Ա Տ Կ Ի Ն

Ցուրտը փըչեց, ձըմեռ սաստիկ,
Ջիւնը ծածկեց գետինը.
Ամենայն մարդ մըտաւ իր տուն,
Պատըսպարւիլ ցըրտից։

Ժամի դռանը դողդողալով,
Կանգնած է մի աղքատ կին,
Նըրա հանդերձ պատառ-պատառ,
Ջունի շապիկ իր հագին։
Անհամարձակ նա իր ձեռքը
Պարզում է անցկացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ձեզ, սիրելիք, սեւմ ով էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը տարօրինակ
Կանգնած ժամի դռանը։
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատւով
Ման էր գալիս փողոցներում
Իր սեփական կառքերով։
Այժմ վախով նա իր ձեռքը
Պարզում է անցկացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ամէնայն օր նրա դռանը
Կանգնած էին շատ կառքեր,
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նըւագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանում էր
Լինել նրան բարեկամ։
Այժըմ զըրկւած ամեն բանից՝
Ջունի անգամ հացի գին։
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ամենայն օր իր մարմինը
Անուշահոտ ջըրերով
Լըւանում էր, մազը սանրում
Կըրիայի նուրբ սանդրով.
Նա հագնում էր բեհեզ, կերպաս,
Դիպակ, թաւիշ թանկագին.
Նա չըգիտէր ինչ ասել է
Կարօտութիւնն արծաթին։

Այժմ անըրւայ, մազերն արձակ,
Ջունի հալուստ, թէև հին։
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»,

Ժամի դռանը կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ծուռ.
Նրա նախկին բարեկամքը
Չէն ասում նրան. «Քըղցո՛ւկ,
Ե՛կ դու մեզ մօտ, մենք կ'ամոքենք
Քո վիճակի դառնութիւն,
Կըթուլացնենք ճակատագրից
Խիստ հարւածի սաստկութիւն»։
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վըշտերին։
«Ողորմութիւն արէք պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Մ. Նալբանդեան

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ 1830—1892

(Գամառ-Քաթիպա)

Ռափայէլը ծնաւ Նոր-Նախիջևան 1830-ին. սկզբնական ուսումն ու կրթութիւնն ստացաւ իր բանաստեղծ հօր՝ Գաբրիէլ քահանայի մօտ, Միքայէլ Նալբանդեանի հետ։ Տէր-Գաբրիէլը իր ժամանակի ամենազարգացած և ամենակրթւած քահանան էր, միևնոյն ժամանակ բանասէր ու բանաստեղծ։ Իր սէրը դէպի ուսումն ու գիտութիւնը նա հաւասար չափով ներշնչեց իր երկու տաղանդաւոր աշակերտներին՝ Ռափայէլին և Միքայէլին, որոնք արժանաւոր ուսուցչի աւանդածը լիուլի իրագործելով, դարձան մեր գրականութեան ամենաեռանդուն և շնորհալի մշակները։

Տասը տարեկան Ռափայէլին տալիս են Լազարեան ճեմարանը, որտեղ աւարտելուց յետոյ նա գալիս է Նոր-Նախիջևան դպրոցն ուսուցիչ. սակայն շուտով հեռանում է Թիֆլիզից, ուղևորւելով Դորպատ՝ ուսումը շարունակելու։ Այդ ժամանակ Դորպատի հայ ուսանողութեան ծաղկեալ

ժամանակն էր. այնտեղ էին Աբովեանի աշակերտներից շատերը, որոնք իրանց հետ տարել էին իրանց վարժուած ուսուցչի աւանդած կենդանի—աշխարհիկ լեզուի առոյգ սաղմերը. և հէնց այդտեղ էլ—շաղախուեցաւ այն լեզուն, որ անմիջապէս ծնունդ առաւ ուսանողական ուրախ երգերում և հայրենակարօտ «Ծիծեռնակ»-ում: Հէնց ուսանողութեան ժամանակ էր, 50-ական թւերին, որ մի քանի ընկերակիցների հետ Ռափայէլը հրատարակում է գրքոյկներ «Գամառ-Քաթիպայի արձակ և չափաբերական աշխատութիւնները», որոնց նմանը հայ ազգը դեռ չէր տեսել. լեզուն մաքուր ու կոկ աշխարհաբար, հասկանալի ամեն մի հային, նիւթը, ժամանակի տրամադրութեան համեմատ, մեծ մասամբ ազգասիրական և կամ ուրախ—ուսանողական: Այդ երգերն էին, որ անմիջապէս թև առան և քաղցըր ու գուրեկան եղանակներով թռան ամեն տեղ, ուր հայեր կային, ժամանակցելու նրա ուրախութեանն ու վըշտին, արտայայտելու իղձերն ու ցանկութիւնները, մանաւանդ նրա հայրենասիրութիւնը:

Այդ երգերն էին, որ առաջին անգամ, անցնելով բերանից բերան, կենդանօրէն, անբռնազբօս ու գրաւիչ, ընդհանուր հայութեանը տւին նոր-գրական լեզուի համն ու հոտը, ծուծն ու էութիւնը: Որովհետև, այդտեղ առաջին անգամ 1856-ին լոյս տեսած՝ «Արաքսի արտասուքի» մէջ արտայայտուած են մեր ներկայ լեզուի ոգին և քերականութիւնը, առաւելութիւնն ու պակասութիւնն ամբողջովին: Այդ երգերով նա արտայայտեց ժամանակակից հայութեան իղձերն ու ցանկութիւնները, ուստի դարձաւ ամենասիրուած ու ժողովրդական բանաստեղծը, իրաւամբ արժանանալով «Ազգային Երգիչ» պատուաւոր կոչման, որին չի արժանացել մեր բանաստեղծներից և ոչ մինը:

Ռափայէլը խիստ բազմազան և շնորհալի տաղանդի տէր էր. թէև նա ժողովրդականութիւն և հռչակ ստացաւ իբրև բանաստեղծ, բայց նրա արձակ ու երգիծական գըրուածներն աւելի յայտնի ու նշանաւոր են, քան նրա ոտանաւորների մեծ մասը, որոնք արդէն մեծ մասամբ հնացել են:

«Հիւսիսափայլ»-ի — ամենաեռանդուն աշխատակիցն էր Ռափայէլը, ուր զետեղում էր թարգմանական և ինքնուրոյն յօդւածներ: «Փորձ» ամսագրում նա տպեց «Ես նշանւած էի», «Տիկին և նաժիշտ», «Փառասէրը», վէպիկները, որոնք յայտնի ապացոյց են նրա լուրջ վիպական տաղանդին: Տիպերն այդտեղ բնական են այն աստիճան, որ կարծես լուսանկար լինեն. պատմուածքը կենդանի և գրաւիչ և հեռու ամեն արուեստականութիւնից. լեզուն պարզ, մատչելի և ծայրէ ի ծայր հայերէն: Անզուգական են Պատկանեանի երգիծական պատկերները Նոր-Նախիջևանի բարբառով, ուր հեղինակը ծաղրում է իր հայրենակիցների ներքին կեանքը, վարքն ու բարքը և պակասութիւնները: Նոր-Նախիջևանցիք խիստ վախում էին երգիծաբանի գրչից, որ երբեմն կրքի ազդեցութեան տակ խիստ սուր կերպարանք էր առնում և շատ անգամ դառնում էր թունաւոր: Ռ. Պատկանեանը շարունակ ապրում էր Նոր-Նախիջևանում՝ վարելով արհեստագիտական դպրոցի տեսչի պաշտօնը. նա մեռաւ 1892 թ. թոքախտից և թաղւեց ս. Խաչ վանքի գաւթում, իր մանկութեան ընկերակից և գրական ախոյեան Միքայէլ Նալբանդեանի մօտ *)

Բանաստեղծը կտակել էր ազգին, որ իրան էջմիածին թաղեն. ազգը չկատարեց նրա կտակը, սակայն հաւաքական հանգանակութեամբ գերեզմանի վրայ կանգնած է արդէն նրա խոհուն կիսարձանը:

Դր. Վանցեան

*) Ռափայէլ Պատկանեանը գործ էր ածում բազմաթիւ կեղծանուններ. Միքայէլ Վայելչեան, Ախտամերկեան, Սիւլիկ, մանաւանդ իբրև բանաստեղծ նա յայտնի է Գամառ-Քաթիպա կեղծանուամբ: Այդ անունը կազմւած է Ռափայէլի և նրա ընկերակիցների անուանց և ազգանուանց սկզբնատառերից:

ԽԵԼՔ ԵՒ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Խելօքը կը փնտռէ աշխատանք, խորամանկը՝ հանգըստութիւն. խելօքը գործ ունի բնութեան տարրերի և զօրութիւնների հետ, խորամանկը՝ մարդկային թուլութիւնների հետ: Խելօքը կ'ասէ մարդոց՝ «Դուք ալ շահեցէք, ես ալ շահիմ», խորամանկը կ'ասէ՝ «Ես ձեր կռնակէն շահւիմ, իսկ դուք ինչպէս գիտէք»: Խելօքը մարդոց առջև ճանապարհ կը բանայ, որ ամենքը ազատօրէն հասնեն օգտի կամ մէկ նպատակի. խորամանկը կը բանայ ճանապարհ, բայց ճանապարհի վրայ մէկ փոս ալ կը փորէ, որ անցնողը նրա մէջ ընկնի: Խելօքը մարդոց ճանապարհը կը լուսաւորէ, իսկ խորամանկը ձեռքը բռնած ակնախտիղ լոյսը՝ շիտակ մարդոց աչքին կ'ուղղէ որ շլանան: Խելօքը կ'ապացուցանէ, կը համոզէ, կը խրատէ. խորամանկը կ'աշխատէ իր ճարտար լեզուովը զարմացնելու: Խելօքը որ մէկ ուրիշ խելօք տեսնէ իրեն ընկեր, օգնական կը համարէ. խորամանկը կ'աշխատէ իրան շրջապատել միամիտ, պարզամիտ, խեղճի-աղքատ մարդկանցով, և ուրիշ խորամանկներու հետ չարաչար կը պատերազմէ: Խորամանկը կը փնտռէ այնպէս տեղեր, որ մարդիկ շատ են ու մէջերը կը մտնէ. բայց վերջը իր չորս կողմը անապատ կը դարձնէ. խելօքը կը մտնէ անապատ տեղ. շուրջը մարդիկ կը ժողովէ և անապատը մարդաշատ տեղ կը դարձնէ: Խելօքը իր գլխու ուղեղը Աստուծոյ ձեռքէն է ստացել. խորամանկը ստացել է սատանայէն:

Խելօք Արամը կանգնեցուց Հայաստանը, խորամանկ Վասակը կործանեց: Խելօքի գործը գոհար է՝ կոշտ կճեպով ծածկած, խորամանկի գործը շաքարով փաթթած թոյն է: Խելօք մարդը սրտանց կը ցանկանայ մարդոց լուսաւորութիւն և կը պատուէ լուսաւորեալներուն. խորամանկը թէև երեսանց կը գովէ լուսաւորութիւն, բայց լուսաւորեալներուն չարաչար կը հալածէ: Խելօքին երբ Աստուած լեզու տուեց, ասաց՝ «Դրանով սրտիդ խորհուրդները մարդոց պարզէ, յայտնէ». իսկ երբ որ սատանան տուեց խորամանկին լեզու, ասաց. «Մտքիդ խորհուրդները շատ խօսելով

ծածկէ»: Խելօքի քիչ խօսքէն շատ բան կը հասկացուի. խորամանկը թէև բոլոր կեանքը խօսէ, ոչինչ չի հասկացնիլ: Խելօքը գինի ու օղի չի սիրիլ, և եթէ խմէ, կը հարբի. խորամանկը խմել կը սիրէ, և որքան ալ խմէ, չի հարբիլ, բայց միշտ սուտ հարբած կը ձևանայ: Խելօք մարդը քաղցածին, չքաւորին իր տունը կը բերէ, կը կերակրէ, կը կշտացնէ. խորամանկը մեծատուններուն յարգանք կու տայ:

Քանի աւելի է վաճառականի խելքը, նա այնքան հեռուներէն կը ցանկանայ ստակ վաստակելու ու իր կեցած տեղը բերելու. իսկ խորամանկը կ'աշխատէ որքան կարելի է մօտիկէն ստանալու իր շահը, այսինքն քովի մարդոց գրպանէն: Խելօքը ինքը կը գործէ և ուրիշին ալ կը քարոզէ որ մարդս ծնած է աշխարհքի համար. իսկ խորամանկը համոզուած է, որ աշխարհը ստեղծուած է մենակ իր համար: Խելօքը կ'ուզէ իրեն չորս կողմը բարեկամներ տեսնել. իսկ խորամանկը՝ ստրուկներ: Խելօքին երեսը միշտ տըխուր է, բայց հոգին՝ զուարթ. խորամանկի երեսէն ժպիտը երբէք չէ հեռանալ, բայց նրա սիրտը տարին տասներկու ամիս թոյն ու լեղիի մէջ թաթխուած է:

Եւրոպայի մէջ կը թագաւորէ խելքը, Ասիայի Աֆրիկայի ու Աւստրալիայի մէջ՝ խորամանկութիւնը: Խորամանկը թէև շուտ և շատ-շատ կը գտնէ, բայց միշտ ինքը կը յաղթուի. խելօքը առանց գտնելու կը յաղթէ:

Խելքը բարութիւն է, խորամանկութիւնը զօրութիւն: Խորամանկութենէն յառաջացած առաջին պտուղները թէև շատ են, բայց նրա վերջը միշտ կործանական է. խելքի արգասիքը ի սկզբան թէև չեն երևիր, կամ շատ սակաւ կ'երևին, բայց գնալով կը շատանան: Խորամանկ Թալէյրանի և Նապոլէոնի ոչ մի պտուղները չմնացին. բայց Վաշինգտոնի սխրագործութիւններէն առաւել կը շահին Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգները:

Խելքը և խորամանկութիւնը ուղեղի տարբեր ոյժեր են. մինը դէպի բարին ուղղած՝ միւսը դէպի չարը. բոլորովին նման այն մարդուն, որ երկու որդի ունի. մինը բարի, շինող, օգտաբեր. իսկ միւսը չար, քանդող, փա-

սաբեր։ Աշխարհքը և պարագան խելքինն են և ոչ խորամանկութեանը։ Խելքը Աստուծոյ հրեշտակն է, խորամանկութիւնը սատանայի օձը։ Օձի օրհասը կրունկի տակն է։ Խելքի և խորամանկութեան մէջ չափազանց մեծ տարբերութիւն չտեսնելը նշան է պակասամտութեան։

Ռ. Պատկանեան

ՔԱՀԱՆԱՅ

Այն ո՛վ է կանգնած ամբիոնի վրայ,
Դողդոջուն ձեռքերն երկինք ամբարձած,
Գըթառատ աչերն լի արտասուքով,
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած.
Որին ամենը հայր են անուանում,
Ծանօթ, անծանօթ՝ հաւասար յարգում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
Սրտի գաղտնիքը նորան են յայտնում։
Քահանայ է նա՝ բուժող մեղքերու.
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
Հովիւ է անխոնջ Քրիստոսի հօտին,
Երկնաբեր գանձին նա է արթուն դէտ։
Երբ մենք թաթախուած Ադամայ մեղօք
Եկանք այս աշխարհ լցեալ ցաւերով,
Ո՞վ մեզ սփոփեց իր սուրբ խօսքերով,
Ո՞վ սրբեց, մաքրեց մեր հին մեղքերը.
Կամ՝ երբ ժանտախտած, ընկած մահճումը՝
Մտատանջ. անյոյս մահ էինք խնդրում
Պանդխտի նըման ամենից թողած՝
Ո՞վ մեզ առաջին հասաւ օգնութիւն.
Կամ՝ երբ մոլորուած գառներու նման
Կոյր վազում էինք դէպի խորխորատ՝
Ո՞վ արդեօք այն օր փրկեց մեզ մահից,
Դիւական գըրէն հանեց անարատ.
Կամ՝ երբ մեղսալի աչքերըս բըննաւ
Չենք համարձակում երկինք ամբառնալ՝
Որի՞ն կանչում ենք միջնորդ հաշտութեան,
Ո՞ւմով յոյս ունինք թողութիւն ստանալ.
Եւ կամ՝ ըզգրաղած ունայն գործերով,
Մոռցել ենք Աստուած, կրօն, սուրբ հաւատ։

Ո՞վ է մեր տեղը մեր մեղաց համար
Արտասուք թափում աչքէն յորդառատ։
Քահանան է այն, և միշտ քահանան,
Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ,
Որբոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,
Արտասուաց սրբող, յանցանաց քաւիչ։
Ե՛կ պատուենք, եղբա՛րք, այդ սուրբ քահանան,
Սիրենք միշտ նորան մանկական սիրով,
Որ ամբողջ գիշեր իր որդոց վըրայ
Պատրաստ է հսկել անքուն աչքերով։
Նա բոլոր կեանքը զոհեց մեզ համար,
Զուգեց փառք, պատիւ, զըօսանք աշխարհիս,
Քանց սուրբ քահանան էլ ո՞վ է կարող
Արդեօք մեզ համար լինել հայր բարի։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ. — Ռ. Պատկանեան

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին-հին դարուց յիշատակ,
Ալեաց մէջ պըտրում եմ։

Բայց նորա միշտ յեղյեղուկ,
Պղտոր ջրով եզերքին,
Դարիւ-դարիւ խփելով,
Փախչում էին լալագին։

—Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չհասած՝
Սըգաւոր ես ինձ նման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ, հպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի՛ պըղտորիլ յատակդ,
Հանդարտ հոսէ խայտալով,—
Մանկութիւնը քու կարճէ,
Շուտ կը հասնիս դէպի ծով։

Վարդի թփեր թող բըսնին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։

Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջըրին
Ծըկուն ոստըն ու տերև
Թո՛ղ թաց անեն տապ օրին։

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թո՛ղ գան համարձակ,
Գառն ու ուլը քու վըճիտ
Ջուրը մտնեն միշտ արձակ։—

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով,
Էսպէս խօսեց յատակից.

«Խիզա՛խ, անմի՛տ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարեւոր
Վըրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։

Սիրելիի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գլուխ պաճուճւի
Իր զարդերով թանկագին:

Որի՞ համար զարդարւեմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,—
Տատերն ինձ են ատելի,
Տատերին ես օտար եմ...

Կար ժամանակ, որ ես էլ
Ծքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պճնանքով
Փախչում էի ափերէս:

Ցատակըս պարզ ու վճիտ,
Կոհակներըս ոլորուն,
Լուսաբերը մինչև այգ
Ջրերիս միջին էր լողում:

Ի՞սչըս մնաց այն օրից,
Ո՞ւր ջրամոտ գեղերըս,
Ո՞րը իմ շէն քաղաքից,
Ո՞ւր բերկրալի տեղերըս:

. . . .
. . . .
. . . .
. . . .

Մինչ իմ որդիք,—ո՛վ գիտէ—
Ծարաւ, նօթի, անտէրունչ
Օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով 'կխաշունչ...

Հեռո՜ւ, հեռո՜ւ քըշեցին
Բընիկ ազգըն իմ Հայկեան,
Նորա տեղը ինձ տւին
Ազգ անկրօն, մոլեկան:

Դոցա համա՞ր զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը.
Եւ կամ ղոցա՞ հրապուրեմ
Ծըպոտ, պըլշած աչերը:

Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մնան պանդուխտ,
Ինձ միշտ սըգւոր կըտեսնէք.—
Այս է անխախտ իմ սուրբ ուխտ:»

Էլ չըխօսեց Արաքսը,
Ցորձանք տըւեց ահագին,
Օղակ-օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին:

Ռ. Պատկանեան

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ

1861-ից «Հիւսիսափայլի» էջերում երեան է գալիս մի երի-տասարդ բանաստեղծ, որ կրթւել ու կազմակերպւել էր Նազա-րեանի և նրա շրջանի անմիջական ազդեցութեան տակ: Այդ երի-տասարդը դեռ այն ժամանակ Լազարեան ճեմարանի ուսանող, Սմբատ Շահազիզեանն էր:

50-ական թւականների սկզբում Շահազիզը դեռ 10 տարե-կան երեխայ, իր հայրենի Աշտարակ գիւղից գնում է Մոսկւա, Լազարեան ճեմարանը, ուր աւարտում է 1862-ին: Դեռ դպրոցա-կան նստարանի վրայ սկսում է գրել ոտանաւորներ: Սկզբում թունդ գրաբարական էր և նրա առաջին ոտանաւորները, որոնք տպագրւեցին 1859-ին «Ծռաքաղի» մէջ, գրաբար էին: Բայց նա շուտով թողեց թէ գրաբարը և թէ «Ծռաքաղը»:—1864 թւականը բանաստեղծի գեղեցիկ շնորհքի առատութեան տարին էր, որ, ա-ւա՜ղ, այլևս չկրկնւեց: Այդ տարին Շահազիզը գրեց բազմաթիւ մեծ ու փոքր ոտանաւորներ, ինչպէս նաև «Լևոնի Վիշտը»—պօէման: Ինքը, Շահազիզն ամենից լաւ է բացատրում թէ ինչ է ին-քը. «Նախ քաղաքացի և ապա, պոյէտ»: Քաղցր մեղկութեան և անգործութեան, գինու և սիրոյ երգիչ չէ նա, այլ «բաժանորդ է ազգի ցաւի հետ» *):

Լէօ («Ստեփաննոս Նազարեան» հ. II)

ԵՐԱԶ

Ես լըսեցի մի անոյշ ձայն—
Իմ ծերացած մօր մօտ էր.
Փայլեց նըշոյլ ուրախութեան:—
Բայց ափսո՜ս, որ երազ էր:

Կարկաչահոս աղբիւր այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.
Նա յըստակ էր որպէս բիւրեղ:—
Այն երազ էր ցնորամիտ:

*) Սմբատ Շահազիզը մինչև վերջին տարիները ուսուցիչ էր Լազարեան ճեմարանում հայերէն լեզուի և այժմ էլ ապրում է Մոսկւայում:

Եւ մեղեդին տխուր մայրենի
Յիշեց մանկութեան օրեր.
Մօրըս համբոյրն ես ըզգացի։—
Ա՜խ, ափսո՜ս, որ երազ էր։

Կուրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց—շատ թաց էր—
Բայց արտասուքս գնում էին…
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր։

Ս. Շահազիզեան

ԱՇՏԱՐԱԿ

Գեղեցկանիստ է Աշտարակ.
Շատ այգիներ նա ունի,
Այնտեղ երկինքն է կապուտած,
Այնտեղ օդն է քաղցրալի։

Մեծ, ընդարձակ կանաչ դաշտեր
Լի են ծաղկով քաղցրահոտ,
Մարգահասակ, խնկանուէր,
Բարձրանում է այնտեղ խոտ։

Այդ սիրուն գիւղն ունի մի գետ,
Եւ այն լի է ձըկներով.
Այնտեղ իշխան և կարմրախէտ
Խաղ են կապում խայտալով։

Եւ հարազատ այգիներից
Տարածւում է քաղցրութիւն,
Եւ Քասախը ուրախալից
Բերում է Ձեզ իր ողջոյն։

Բայց այդ բոլորն ըստըրկութեան
Կաշկանդւած է կապանքով.
Ժողովուրդը թշւառական,
Խեղդւած է մեծ խաւարով։

Ս. Շահազիզեան

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆ

Ծնւել է Աշտարակում 1837-ին. ուսել է Ներսիսեան դպրոցում, ապա եղել է ուսուցիչ գրեթէ մեր բոլոր գաւառական քաղաքներում, ուր թէ դպրոց է հիմնել, թէ թատրոն, և եռանդուն մասնակցութիւն է ունեցել 40 տարիների ընթացքում մեր բոլոր հասարակական գործերում, աշխատակցելով միևնոյն ժամանակ թերթերին։ Եղել է նաև թեմական տեսուչ, պարապել է լուսանկարչութեամբ և մինչև օրս էլ կռւել է ու կռւում է կարիքի և նեղութեան դէմ, ծանրաբեռնւած մեծ ընտանիքով։—Պերճ Պռօշեանը մեր ամենաբեղուն գրողներից է. Նրա վէպերի նիւթն են հայ գիւղը, մանաւանդ հայրենի Աշտարակը իր նիստ ու կացով, սովորութիւններով, լեզւով, աւանդութիւններով, չարով ու բարիով։ Դրա համար էլ այդ վէպերը պարունակում են հարուստ նիւթ ազգագրութեան և լեզւական հարստութեան։—Նրա գլխաւոր երկերն են. Սօս և Վարդիթեր, Կռւածաղիկ. Շահէն, Ցեցեր, Հացի խնդիր, և այլն.—Նա Աբովեանին հետևելով, շատ անգամ գրում է այնպէս, ինչպէս խօսում է ժողովուրդը Աշտարակում՝ անխտիր գործածելով թուրք և թաթար բառեր։ Չնայելով դրան, Աբովեանից յետոյ, Արարատեան բարբառի նրբութիւններն ու կատարելութիւնները ոչ ոք այնպէս ճիշտ և այնպէս վարպետօրէն չի ներկայացնում, ինչպէս Պռօշեանը։—Նրա ներկայացրած տիպերը գիւղական կեանքից, կարծես լուսանկարած լինեն, այնքան նրանք ճիշտ են և իրական։—Նրա վէպերից մի քանիսը թարգմանւած են ռուսերէն և գերմաներէն։

ՁՄԵՌ

Ձիւն ձմեռ։ Երկու կարճ խօսք տաս՝ ու երեք չորս երկար ու ձիգ ամիսներ մտիր տունդ, դուռը պինդ փակիր, տաք քուրսու տակին, կամ տաւարի շնչով տաք բաղնիս դարձած գոմի օդայումը մի կողքի վրայ ձգւիր, արջի նման երեք քառասունք չլայ մտիր։

—Ձիւն ձմեռ. ասում է աշխատանք սիրող երկրագործը և մոքամոլոր տարակուսում։ Ի՞նչ պիտի անենք երեք չորս երկար ամիսներ տխուր տրտում, մտածում է նա, ջանս ցեց է մտել, գործելու սովոր եմ, աշխատել եմ ուզում, գործ չկայ։ Ձիւնն եկել, հողի երեսը պինդ ծածկել է. պարզիկան ու սառնամանիքը կանաչ ու զւարթ ծառերին մերկացրել, շինել են չոր ցախ, ցուրտն ու բուքը իմ աշխատաւոր չորստանի ընկեր եզանը, իմ գոմշին, իմ ոչխարին, իմ կթան ու լծկանին կապերի մէջ է կոխել ու չի թողում, որ երկնքի երես տեսնեն, կէս գազի հաստութիւնով սառուցը մեր գոչգոչան գետերին, մեր կչկչան առուներին պապանձացրել է. գործ չի մնացել՝ գործենք, անելիք չկայ՝ անենք, ծոյլերի վրայ ծիծաղում ենք, էն օրի ենք հասել, որ ուզենք, չուզենք՝ պիտի մենք էլ ծուլանանք։

—Է՛յ խելքի պտուկ, էդ ի՞նչ ես ասում, յուսահատութեան դուռը հասած մրաջան ընկերի երեսը քորում, յանդիմանում է նրանից աւելի աշխարհ տեսած մարդամիջի գտնւած, ծեր պապերի խրատները ականջին գինդ արած մի ուրիշ աշխատաւոր. տխար դու չգիտե՞ս, որ աշխարհքիս գիրքն ու կանոնը բոլորը ստեղծողի կողմից չափած ձևած է, մեռնիմ Ստեղծողի ողորմութիւնին, ի՞նչ կը լինէր շունչ կենդանու հալը, եթէ ձմեռը չլինէր։ Տարին 12 ամիս եզը կը դիմանա՞ր, եթէ ինն ամիս լծի ու բեռան տակ չարչարւելուց յետոյ՝ մի երեք ամիս չհանգըստանար. Ջրաղացի քարը, որ պինդ քար է, էն էլ իրար շատ քսւելուց մաշւում է, միս ու արիւնից շինւած մարդ, թէ անասուն, եթէ ձմեռը չհանգստանային, երկու տա-

րումը կը մաշւէին, ույժ ու զօրութիւնից կ՚ընկնէին ու էլ պէտք չէին գալ։ Ծառ ու թփի, խոտ ու ծաղկի արմատները հողի տակին են. աշնանացան ցորենդ աշնան վերջին մի քիչ կանանչել, փչչել, բարձրացել էր. ցելդ գութանած, թողւած է, թէ որ ձիւնը չգար, վերմակի պէս Աստծու ստեղծած էդ բոլոր կանանչեղէն ու արմատեղէնը չծածկէր, ցուրտը սուր ասեղի պէս գետնի սրտումը կը թաղւէր, ողջը ցրտատար կ՚անէր. էս օրւայ հաստ ձիւնը թէ որ գարունքը չհալւէր, ջուր չկտրւէր, քո ծառ ու տնկի արմատները չկակղացնէր—քո ինն ամսւան աշխատանքդ փուչ կը լինէր։

Դէհ, շտապենք, կրկնում են միմեանց պարզասիրտ և աշխատասէր գեղջուկները, քանի տաքութիւնը հողի մէջ չի մտել, քանի ամբարներս չեն դատարկւել, քանի կարասներիս մէջ կատար տաքացնող Քրիստոսի արիւնը՝ վրան նայելուս՝ երեսներիս ծիծաղում է, քանի ասլանի կաթը (արաղ) տկերի մէջ լխլխկում է, քանի իրար հետ նստել վեր կենալու, սուփրէն բաց անելու, սուփրէն չէն անելու, Աստծու տւած ազատ օրերից օգտւում ժամանակ ունինք, Աստծու անունով եկած չքաւորին ու տնանկին քաղենք, հոգևոր և մարմնաւոր աշխատաւորներին շահենք կշտացնենք, ու սրտերս ուրախ, խղճմտանքներս հանգիստ՝ ուտենք, խմենք, պարենք, երգենք, ամեն խէթ ու նախանձ մեր ներսից դուրս շպրտենք, որ կարողանանք մեծ պասի երկուշաբթի օրը պարզ սրտով, պարզ երեսով ժամ գնալ, «Լուացարուք սրբեցարուքը» լսել ու էդ օրւանից սկսել մեր հոգու ճանապարհը մաքրել։ Եւ երբ որ աշխատանքի օրերը կըբացւին. մեր կապած տաւարը դաշտը հանենք, գութանը սարքի քցենք, բահ, հօտոց, կացին, ցաքատ, մանգաղ ու ամեն տեսակ դաշտի ու այգիների գործիքներ սրբենք, սրենք, պատրաստենք, որ ինչ ժամանակ օրը կը գայ բարին հետը՝ երեսներիս խաչ հանենք, մեր հալալ աշխատանքին կենանք։

Եւ ամակտար հողագործն այլևս տխուր չէ. նա ձմեռ-

նամոլին իր ձմռան կատարելիք ծրագիրը կազմեց և մինչև գարնամուտը անթերի կատարեց։

Հմի, ընթերցող, քեզ եմ հարցնում, մեր նկարագրած եղանակից ի՞նչ դուրս եկաւ։

Քո կարծիքը չգիտեմ, բայց ես եկայ այն հաստատ համոզմանը, որ աշխարհս իր ամբողջութեամբ կեանք է և տարին իր չորս եղանակներով կեանքի գործօնն է։

(«ԼՈՅՍ» օրացոյցից) Պերճ Պռօշեան

Գ Ա Ր Ո Ւ Ն

Գարուն է։ Օ՛հ, ինչքան սրտեր յանկարծ բաբախեցին այս կախարդիչ անունը լսելիս։ Ի՞նչ ուրախութիւն, որ կողմը կ՚ուզես՝ աչքդ դարձրու՝ սար ու ձորեր, դաշտ ու անտառներ, շնչաւոր ու անշունչ — բոլորը այսօր այն չեն, ինչ որ երէկ մէկել օրը։ Ո՞ւմ հոգն է, թէ դեռ մարտի սկզբին ենք, ո՞վ է բանի տեղ դնում, թէ երկնքի սիրելի, երկնքի հետ քաղցր համբոյրներ տուող, երկնքի հետ օր ու գիշեր սուսլիսի բռնած ոստերը՝ սպիտակ պատանում կոլոլուած դեռ խռմփում են ու վախտ-վախտ իրանցից բաց թողած կատաղի քամիներով՝ քիչ է մնում, աշխարհքը տակով անեն։ Ո՞վ է գիժ մարտի փոփոխական բնութիւնից մազաչափ երկիւղ անում։ Թէկուզ դաշտերի երեսին թզաչափ ձիւնը նստած է՝ Աստծու ստեղծած բոլոր արարածների համար՝ ո՛նց որ զամբարակի ուղտի ականջին մոծակի բզզոցը։

Համեցէք, դուրս արի դաշտը, երեկուան երկաթից պինդ ձիւնը մատով շարժիր, մէկ էլ կը տեսնես մատդ մէջը թաղուեց. խեղճն ալիւրի թեփի պէս փխրացել է ու թէ որ կանգնածդ տեղը քիչ արևկող է, կասկած մի՛ տանիր, ձիւնը յետ տուր։—Ըհը, էս ի՞նչ է, տօ, ձիւնի տակից կանանչ խոտի ծլեր են գլուխները խլուշ-խլուշ դուրս ցցել։ Փառքիդ մեռնիմ, Աստուա՛ծ, խոտի տերևների մէջտեղից ինչ սիրուն դեղին ծաղիկ է կոկոնը պատռել ու բացուել։

—Չեմ հաւատում, ինչ էք ասում, ձիւն ու ծաղի՛կ։

—Այո՛, այո՛, սիրելիս, պինդ բռնիր, բաց չթողնես, ձեռքով խառնածդ ձիւն է, իսկ տակինը ծաղիկ, իսկական ծաղիկ։ Հապա երկու բառը իրար հետ միացրու, տես, ի՞նչ դուրս կը գայ—ձնծաղիկ—գարունքը մեզ աչքալոյս տուող ծաղիկ—ձնծաղիկ։

Էդպէս է գարունը. էս օր ցուրտ, էգուց՝ տաք, էս օր մրրիկ ու մառախուղ, էգուց արև արքայութիւն, գիժ մարտի քամիների շնորհքը մեծ է, փչեց թէ չէ, ամպ ու թուխպ սրտաճաք կը լինին, գլուխ կ՚առնեն կը կորչեն, կապուտ երկնքի միջից Աստծու աչք-պայծառ արևը կը փայլի, ձիւն ու սառուցի հոտն-ու հետքը չի թողալ։ Բոլորը կը հալուին, ջուր կը կտրեն, գետ ու ձորերը կը լցուին, չորս ամսուան մեռած երկիրը չորեքօրեայ թաղուած Ղազարոսի նման յարութիւն կ՚առնի։

Դէ՛հ, հիմի կացէք ու խնդացէք, Աստծու ստեղծուած արարածնե՛ր. գութանդ բա՛ն քցի՛ր, աշխատասէր ռանչպա՛ր, հողը փափկել է, վարիր ու ցանիր։ Հօտդ դաշտը քշիր, դաշտի սիրահար հովիւ, կանանչը դաշտի երեսին ցնծելն է տալիս, արածացրու, հօտերդ գիրացրու, մսակալացրու։ Այգուդ թաղը վեր տուր, խաղողիդ մատները հողի տակից հանիր, ժրաջան այգեպա՛ն, կեռակտուց հօտոցդ սրիր, կուդրակիդ մատերն էտիր, կորատիր ու պապերի սասած յոյս ներշնչող առածն երգի՝ «Մարտի ինը, մառը կորէ ուրախ-ուրախ երգիր։
քցի ձինը», եղանակով

Բանջարքաղիներդ բան քցեցէք, ողջ ձմեռը տներում փակուած, ազապ ու սիրուն աղջիկնե՛ր, հարիւր տեսակ բանջարեղէններ՝ գառան դմակից փափուկ ու թարմ՝ ձեզ են դաշտերում սպասում, քաղեցէք երգելով ու խնդալով, գոգնոցներումդ պինդ կապեցէք, ցած դրէք, կանաչ խոտի վրայ բոլորուանքի ընկէք, ձեռք ձեռքի, կուռ կռափ տուէք, մի կողմից եալլի պարեցէք ու իրիկմի կողմից երգեցէք, ձեր սիրած տղէքանց անապահին՝ կչկչալով հռհռալով, ձեր սիրած տղէքանց անանց՝ ... տուն վերադարձումները ափաշկարայ իրար յայտնելով՝ տուն վերադարնունները ափաշկարայ իրար յայտնելով՝ տուն վերադարձէք։ Մի՛ վախէք, ոչ գայլ ու գազան կը համարձակուին աձէք։ Մի՛ վախէք, ոչ գայլ ու գազան

մայի դաշտումը ձեզ մօտ գալ ու ո՛չ անիրաւ թիւրքերը սիրտ կ՚անեն ձեր շւաքին մօտիկ տալու: Այ դուք սատանի եատի ուտեր, հօ լա՛ւ գիտէք, որ պահապան հրեշտակներդ խանչալները կապած, քարերի տակից, քարափների ճեղքերից, ձորաթմբերի փոսերից ողջ օրը ձեզանից աչք չեն հեռացնում, ձեր գաղտնիքն իմանում են, ձեր երգերով մայիլ եղած՝ ձեզ վրայ հսկում են: Ի՞նչ ամաչեցիք ու կարմրեցիք, դուք որ սիրտ ունիք, դուք որ սիրում էք, հապա ագապ տղէքը մի՞թէ քար ու պողպատից են, չէ՞ որ նրանց կրծքի տակ ձեր սրտերի պէս մի մին պստիկ բռնցքաչափ պինդ մսեր ձեր սիրովը տպտպում, տրոփում են: Վայ էն գալ ու գաղանին, էն թուրք աւազակին, որ ձեր շւաքիցը եօթն օրէն ճանապարհ հեռու չի փախչիլ. մեր կորիճ երիտասարդների ձեռից՝ նրանց օրն ու արեը սև կը լինի:

Այո, այո, գարուն է և գարունը տարւան չորս եղանակներից աւելի սիրելին, աւելի կեանք տւողն է: Ծառ ու ծաղիկ, երգող ու չերգող թռչուններ, ուլ ու գառներ գարնան կեանքի բերքն ու պտուղն են, մարտ, ապրիլ... մայիսը տարւան 12 ամսի անմեղ մանկութիւնն են: Կիսամեռ ծերունին էլ գարունը դաշտն է դուրս գալիս, լիքը կրծքով անուշ օդ ու անուշ հոտ է ներս ծծում ու երիտասարդանում, կեանք է առնում, որովհետև գարուն է:

Իսկ այս բոլորի առիթը յուսահատեցնող ձմռան սաստկութիւնն է: Գարունը յոյս է. գարունն էն բժիշկն է, որի դեղով շունչը փչող հիւանդը յոյս ունի, թէ պիտի նորից առողջանայ, նորից կեանք վայելի: Այդպէս էլ լինում է. հաւատը հրաշքներ է գործում, յոյսը երբէք անհետևանք չի մնում:

Թո՛ղ ուրեմն ամեն ճնշւած ու հարստահարւած, ամեն խեղճ ու տնանկ յուսով ապրի և յոյս ունենայ, թէ իրան սեղմող, իրան կուչ ածող, իր կեանքի թշնամի ձմռան դէմ իրան թև ու թիկունք, իրան պաշտպան կը լինի կեանք տւող գարունը:

Պերճ Պռօշեան

Ա Մ Ա Ռ

— Ո՞վքեր են նրանք, որ մի մին սփռոց կապոց են արել, գլխներին դրել ու դաշտի երեսն ընկած՝ գնում են:

— Նրանք մեր գիւղի ջահէլ ու սիրուն հարսներն են, մեր տների տնարար ու աշխատաւոր տանտիկինները: Նրանք առաւօտը վաղ վեր են կացել, իրանց տանու գործը վերջացրել, իրանց սկեսուրների եփած փլաւը մեծ պղնձներով սուփրի մէջ կապել, գլխներին դրել, մի ուրիշ կապոցով էլ թղթից սպիտակ, ջուր ցնցղած լաւաշներ, աղը դրած, Սևանայ ծովի ախորժակ բաց անող կողակ ձկան խոտոցներ (կտոր), մի քանի կտոր պանիր հացերի մէջ փաթաթել, իրանց առջևից վազող 10—12 տարեկան երեխաների շալակներն են կապել ու հարևան հարևանի հետ քաղցր զրոյց անելով, տաժան շոգը չհարցնելով՝ շտապում են արտերը:

Աչքերը լո՛յս հնձւորների. նրանք հեռւից տեսան իրանց համար ճաշ բերողներին, մանգաղ, գերանդի, դէն շպրտեցին ու բոլորւանքի շարւեցին արտի ափերի կանանչների վրայ:

— Կերէք, ձեզ մատաղ, հալալ ձեր մօր կաթի պէս իմ քէյվանու (տանտիկին) ձեռով եփած խուղալի փլաւը. դալար մնա՛յ կռներդ...

Արևը թէպէտ այրում-խանձում է ամեն ինչ, բայց արևի թէժութիւնից վախեցողները կեանքերը հովերում անցկացրած քաղաքացի վաճառականներն են ու աղա մարդիկը. առուտուրականները հիմի խանութներում թմրած՝ քնի ու աչքերն ուտող ճանճերի հետ են կռիւ տալի և սպասում, թէ որտեղից որտեղ մի կորած մոլորած գիւղացի մուշտարի տուն պիտի ընկնի, որ խաբեն՝ փտած ապրանքները գլուխը կապեն, գրպանը դատարկեն. աղա գրագիրներն էլ սարերի ու անտառների հով ու զովերումն են անգործութիւնից օրերը մթնացնում: Իսկ մեր չարքաշ մշակն արևի տաքութիւնից երկիւղ անողը չի. հակառակի պէս՝ քանի արեգակը զօռ է անում, նրանք կրակ են կր-

տըւում ու իրանց ներսը բորբոքւող բոցով սկսած գործե-րը լափում, վերջացնում։

Էստեղ՝ կալ են կասում, էնտեղ՝ խոտ են հնձում, կամ կրում, այգիներում հօ՝ աչքդ բարին տեսնի, սկսել են ի-րար ետեւից հանել թութը, կեռասը, բալը, ծիրանը, շլոր ու դամբուլը, շաքարկենի, մեղրակենի, թթւաշ ու քաղցր, դեղին ու կարմիր խնձորները, մալաչի ու քօլի տանձերը․ էս բոլորը թափ տալ, քաղւել, ժողովւել են պահանջում. խելքը հացի հետ է կերել ուրեմն գործատէրը, որ շոքից վախենայ, կռները ծալի, պարապ նստի։

Կեանք է, կեանք ամառը, էն էլ՝ մի ուրիշ կեանք։

(«ԼՈՅՍ» օրացոյցից) Պերճ Պռօշեան

Ա Շ Ո Ւ Ն

Փառք Աստծու, ամբարներս բերնէ բերան լըցւած են, մառանս մինչեւ շէմքը ձեռիս աշխատանքով լիքն է, կալ ու կուտս հաւաքել—վերջացրել եմ, եկող տարւան ցելերս արած պատրաստ են, քաղցուս կարասներում քաղցրու-թիւնից պճպճում, եփ է գալիս, մի քանի օրից եփը կը նստի, մաճառ կը դառնայ, կատարներս կը տաքացնի, իւղ ու պանիրս, պաս ու ուտիսւան բունւածքներիս ու թըթ-ւեղէնիս տարեկան պաշարը կապել եմ, ընչի՞ չեմ ուրա-խանայ։

Ահա այն խօսքերը, որ առատ տարւայ աշնանը լըս-ւում են ջանասէր գիւղացու բերանից։ Այո՛, ռանչպարի, այգեգործի, անասնապահի ինն ամսւան քրտինքի կաթիլնե-րն աշնան վերջերքին մարգարտի հատիկներ են, ալմաստ քարի շաւաղ տւող ակներ են. գիւղացին իր աշխատանքի պտուղը քաղել է, նրա հոգին հանդարտ, նրա սիրտն ու-րախ է։

Արդարեւ, ռանչպարի աչքը լի է, ձեռքն առատ, երբ իր աշխատանքն օրհնւել, իր ջանքերը պսակւել են։ Այդ-պիսի աշնանը՝ գիւղացու քրտինքով ապրուստ անողները

բոլորեքեան անխնայ, լի ու լի ստանում են։ Սկսած գեղ-ջուկի հոգու փրկութեան համար աղօթող, վանքերում փակւած անքուն սաղմոս քաղող հայր սուրբերից, ժողո-վրդի ուրախութեանն ուրախակից, ցաւերին ցա-ւակից, նրան մկրտող, պսակող, թաղող տանու իրիցից, Աստծու անունով երկրագործի դուռն եկած մուրացկանից, ժամհարից, նախրապանից, հօրթարածից, գլուխ խուզող, արիւն թողնող դալլաքից մինչեւ թաջագլուխ թուրք դար-ւիշները, ջինգեանէքը, զըրրաց, տիրացու ու մօլլաները, նետ գնող, գարի քցող հմայութիւն անողները, աշուղները ու փահլեւանները, բոլորը, բոլորը, դատարկ ձեռքով ներս են մտնում ռանչպարի մօտ, լիքը ձեռքով դուրս գնում։ Այգետէրերից ժողոված էջմիածնապատկան պտղի կոչւած կամաւոր տուրքի աւելորդ գինին, բացի սուրբ Աթոռը ղրկւածը. մնացածը տէրտէրների, ժամհարների ու աչքա-ծակ երեցփոխների կարասներն էլ է լցնում, թէպէտ վերջին-ները իրանց բաժինն էլ յատուկ ստանում են։ Վանքին հասա-նելիք իւղ ու պանիրը վանքի միաբաններին էլ են լիացնում, կոնսիստորի գրագիրներին, հոգեւոր կառավարութեան ան-դամներին ու ծառայողներին, մինչեւ իսկ ծառային էլ են ձեւա-ձեռով կշտացնում։ Մի տէրտէրի տարած կալավարձը գիւ-ղի առաջին համփայի ունեցածից շատանում է։ Հոգիները լոյս կտրւի վերջին տարւանս մէջ ժամանակի ու անժա-մանակ մեռնողների. նրանք իրանցապատկան սուրբ խաչի խորովուն, եօթնի, քառասունքի, տարելիցքի ժամ պատա-րագները, գերեզմանօրհնէքներն ու հոգեհացերը անթերի տանում են։ Գիւղացին կուշտ թէ քաղցած, բերրի թէ անբերրի տարին իր բերանի պատառը կըկիսի, իր նոր վախճանւածի հոգու փրկութեան հոգսը կը քաշի, իսկ ա-ռատ տարին՝ 800 տարւան մեռած պապ ու տատերն էլ են ժամ պատարագով, հոգեհացերով յիշւում, յիշատակ-ւում։

Վայը կը գայ աշխատաւոր գեղջուկի գլխին, եթէ, բերանից թռչի, քամին տանի, երաշտ ու անբերրի տա-րի լինէր ու մեր չարատանջ գիւղացի եղբօր ցաւերի վը-

րայ հարկ սուած անտանելի ծանրութիւնն էլ աւելանար։ Բերանս չի զօրում եռման ջրի վրայ կարկտից սառը ջուր լցնել, պակասաւոր տարու դժուարութիւնները մէկ-մէկ մատնահաշւի տակ դնել։ Թշուառ մարդ, հարկերի ու գիւղական արդար ու անարդար ծախսերի համար վերջին շապիկդ, օջախիդ պղինձը, երեխէքանցդ ցրտից պատսպարւելու հասարակ կտաւէ վերմակը քանի՞ ու քանի պակասաւոր աշունքներ գիւղամէջ է քաշ տուել ու ծախել։ Այս բոլորը քեզ ցաւ է եղել, բայց քո համբերատար հոգին չէ ընկճւել. դու չես յուսահատւել, ապագայ տարւայ յուսով քեզ և քո ընտանիքին այս խօսքերով ես յուսադրել.—«Աստծու կամքն էր, մեռնիմ Աստծու ողորմութիւնին, մեր սիրտն է նեղ, թէ չէ Նրա սիրտը շատ լայն է. ողջ առողջութիւն լինի, եկող տարին էս տարւան վնասներն էլ կը հանենք, մենք էլ ուրախ կ'ապրենք, ուրախ կեանք կը վայելենք»։

Մենք մեղաւոր անարժաններ ենք, խնդրենք գութը շատ, Երկնային Թագաւորից, որ արժանաւորաց աղօթքը լսի, Իր քաղցր աչքը աշխատասէր հողագործի վրայ պահի, նրա ձեռքի աշխատանքը կարկտից, խորշակից, մորեխից, թրթուրից, մկնից, առնէտից և ամեն ցասում պատահարներից ազատ պահի, մշակի կռանը զօրութիւն, անձին առողջութիւն տայ։

Էն ժամանակը քաղաքացի, գիւղացի, հարուստ, աղքատ, ամենքն էլ կուշտ կը լինին, ամենքն էլ մարդավայել կեանք կ'ունենան»։ Որովհետև՞։—Որովհետև տարին առատ է, իսկ առատութիւնը կեանք է։ Ուրեմն, առատ աշունը կեանք է ու կեանք։

Փերճ Պռօշեան.

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

Աղայեանը ծնւել է 1840-ին Թիֆլիզից ոչ հեռու գտնւող Բօլնիս գիւղում։ Առաջին ընթերցանութիւնը նա սովորել է Ճամբուլդա գիւղի քահանայից։ 1853-ին նա մտնում է Ներսիսեան դպրոցը. այնուհետև մի տպարանական ձուլարան՝ իբրև աշակերտ, ուր Համբարձում Էնֆիաճեանցի հովանաւորութիւնն ու խրախուսանքը նրան ասպարէզ են տալիս առաջ գնալու։ Էնֆիաճեանի շնորհիւ Աղայեանն ընկնում է իր ժամանակի առաջաւոր մարդկանց՝ Ախվերդեանի, Մարկոս Աղաբէգեանի և այլոց շրջանը։ Այդտեղ ահա, տպարանում ծառայելիս, նա տպում է իր անդրանիկ երկը, 1862 թ. «Մեղուի» մէջ։ Աղաբէգեանի խորհրդով, արհեստն ու ուսումը կատարելագործելու համար, Աղայեանը թողնում է իր արդէն ապահով պաշտօնը և գրեթէ առանց որևէ միջոցի ուղևորւում Ռուսաստան, ուր Մոսկւայում, կրկին մտնում է տպարան գրաշարութեամբ ապրելու և միաժամանակ ուսումը կատարելագործելու նպատակով։ Մի քանի տարի շարունակ Մոսկւայում և Պետերբուրգում փոխ առ փոխ ապրելուց և արհեստի մէջ կատարելագործւելուց յետոյ, Աղայեանը վերջապէս ընկնում է Եգեանի շրջանը։ Վերջինի մօտ այդ ժամանակ ժողովներ էին տեղի ունենում, ուր ուսանողները պարտաւոր էին գրաւոր շարադրութիւններ կարդալ թէ անձնական զարգացման և թէ մանաւանդ նորաբոյս լեզւի մշակման համար։ Այդ ժողովների արդիւնքն է ահա Աղայեանի առաջին յայտնի աշխատութիւնը. «Արութիւն և Մանուէլ»։ Ինքն Աղայեանը հետևեալ կերպով է որոշում իր գրած վէպի արժէքը.—«Ոմանք այն միտքը տարածեցին ընթերցող հասարակութեան մէջ, որ իբր թէ իմ աշ-

խատութիւնը մի հետևութիւն է անմահ Աբովեանցի վէպի։ Այդպէս չէ։ Նրա «Վէրք Հայաստանին» մի ողբ է, ողբ հայրենիքի թշուառութեան վրայ։ «Արութիւն և Մանուէլը» բերում է մի բոլորովին նոր ուղղութիւն։ Սա մի պատերազմ է յայտնում հին գաղափարների, հին դաստիարակութեան դէմ, որոնց վրայ չի ողբում, այլ յարձակւում է անխնայ և նրանց տեղը տարածում նորը և լաւագոյնը»։

1870-ին Աղայեանը հրաւիրւում է Ախալցխա՝ ուսուցիչ, այստեղից էլ Ալէքսանդրապօլ, որպէս տեսուչ, ապա նոյն պաշտօնով տեղափոխւում է Երևան և Շուշի։ Այնուհետև նա նշանակւում է Թիֆլիզի նահանգում թեմական տեսուչ։ Ապա հինգ տարի շարունակ խմբագրում է «Աղբիւր» մանկական թերթը, ուր մի կողմից նա սքանչելի լեզւով խօսում էր մանուկների հետ, իսկ մեծերի բաժնում, գրում և արծարծում մանկավարժական և լեզւական խնդիրներ։ Այդ տարիների արդիւնքն է ահա նրա սկսած կռիւը «ու»-ի դէմ, որի շնորհիւ այսօր շատերը հետևելով Աղայեանին, գրում են միայն «ւ» այնտեղ, որտեղ «ու» կարդացւում է «վ»։ Աղայեանի գործերից յայտնիներն են. «Արութիւն և Մանուէլ» և «Երկու քոյր».—Սակայն իբրև մանկական գրող նա իր նմանը չունի մեր գրականութեան մէջ. «Անահիտը», «Տորք Անգեղ», «Արեգնազան», «Օձամանուկ» և «Արևհատ», «Արևամանուկ», մեր մանուկների ընթերցանութեան ամենալաւ գրւածքներն են, չհաշւած նրա միւս փոքրիկ և հրաշալի ստեղծագործութիւններն արձակ թէ չափաբերական։ Աղայեանի դասագրքերը իրանց նմանը չունին մեր գրականութեան մէջ։

Այդպիսի մի բազմակողմանի տաղանդի հետ Աղայեանն ունի մի ազնիւ ու շիտակ բնաւորութիւն, դրա համար էլ անխտիր ամենքից յարգւած ու սիրւած է նա։ Քիչ գործիչներ կարող են պարծենալ, որ իրանց կենդանութեան ժամանակ այնքան սիրւած ու յարգւած լինին, ինչպէս Աղայեանը։

Գ. Վանցեան

ԱՐՈՒԹԻՒՆԻ ԱՂՕԹՔԸ

Ո՜հ, Աստւած իմ, Աստւած, Դու բարի ես, Դու միշտ ողորմած,
Շատ ժամանակ է, որ Քո գթութիւնդ երբէք չեմ յիշած.
Ներիր ինձ, ներիր, Հայր իմ Արարիչ, ես մեղաւոր եմ,
Դու ինձ շնորհել ես ուժ ու զօրութիւն, ես մոռացել եմ.
Դու հրամայել ես լինել գործունեայ, ես նոր եմ յիշում,
Ես այսուհետև գործել կըսկսեմ իմ բոլոր կեանքում.
Գործունէութեամբ իմ մէջ կըգտնեմ ես ինձ բարերար,
Գործունէութեան դէմ չըկայ ոչինչ անհաս և դժւար։
Թող այս ձեռներս, որ այժմ քաջառողջ, պարապին գործով,
Թող այս ճակատըս, որ այժմ լայնացած, ճոխանայ մտքով,
Թող այս ոտներըս, որ այժմ ամրացած, ուղիղ ընթանան,
Թող այս աչքերըս, որ այժմ բացւած, նոր փայլ ստանան.
Յօժար եմ, յօժար, ամենայն անձամբ գործունեայ լինել,
Հաստատուն յուսով, անվեհեր սրտով միշտ յառաջ դիմել—
Դէպի նպատակ—դէպի կատարեալն և դէպի բարին,
Որին ձգտելը մի անհրաժեշտ պարտք է մարդկային։
Դու մի հաստատուն, ով իմ Արարիչ, կամք տուր ինձ միայն,
Իսկ Քեզ վայել է և փառք և պատիւ այժմ և յաւիտեան։

ՁՄԵՌՆ Է

Ձմեռն է, ձմեռ, սիրուն երեխէք,
Ձմեռն է, և դուք դողում, մրսում էք,
Բայց դուք մենակ չէք, ես էլ եմ մրսում,
Ես էլ եմ ձեզ պէս դողում, սարսըռում։
Բայց գիտէ՞ք արդեօք ինչ է ձմեռը,
Այդ պատկառելի համարւած ծերը.
Ո՜հ, մի՛ հարցնէք, դուք կըսարսափէք,
Որ պատմեմ ձեզ մէկ-մէկ։
Երբ դրա բարքը պատմեմ ձեզ մէկ-մէկ։
Երբ դրա բարքը պատմեմ ձեզ մէկ-մէկ։

Դըրա երկխուղից ջուրը քար կտրեց,
Բշքըրչան առուն լռեց, պապանձւեց,
Դալար բոյսերը սառան, փչտացան,
Նախշուն հաւքերը թռան, հեռացան,
Բայց էլի շատրին իր ճանկը ձըգեց,
Բուք-բորան արաւ, բոլորին խեղդեց,
Սիրուն վարդենու թուփը չորցըրեց,
Սոխակի լեզուն տակիցը կտրեց։

Ո՛վ դու կեղծաւոր փարիսեցի ծեր,
Դու ունիս, գիտենք, շողոքորթներ էլ,
Որոնք բորանըդ, թիփիդ չեն տեսնում,
Ոչ բուք-բորեադիդ տակ ցրտահարւում.
Սառցեղէն սրտին ինչ բուք, ինչ բորան
Կարէ ներգործել, կամ ինչ ցուրտ՝ ինչ բան.
Օրը կարճացել, գիշերն երկարել,
Լոյսը նւաճւել, խաւարն է տիրել,
Երկինքն ամպապատ, գետինքը սառած,
Գարունը հեռու, ցուրտը կատաղած.—
Այսպէս է ահա սոսկալի ձմրան
Ալեքով ծածկած պատկերը դաժան...

Ցուրտ է, սաստիկ ցուրտ, սիրուն երեխէք.
Եթէ ինձ նման դուք էլ մրսում էք,
Եկէք միասին մի հնար գտնենք,
Ձմռան ճանկերից մեր գլուխն ազատենք։
Դուք ձեր մանկական անարատ մտքով,
Ես իմ հասակիս բազմամեայ փորձով,
Եթէ կամենանք, խելք խելքի կըտանք,
Եւ ինչից ասես՝ կրակ կըստանանք,—
Կրակ լուսատու, պայծառ, անստւեր,
Որ տաքացնէ սառցեղէն սրտեր,
Որ կենդանացնէ գօսացած ձեռներ,
Որ հալեցնէ սառցապատ լեռներ.—
Օրինակ առնենք մեզ կից-ապակին,
Եւ մենք կըհանենք մեր նպատակին։

Ղ. Աղայեան

ԱՇՈՒՂ

Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և մեր երկրում երգերը դարերի ընթացքում ապրել են ժողովրդի բերանում, սերնդից սերունդ անցնելով։ Երգի հետ միասին առաջ է եկել և երաժշտութեան նախնական ձևը՝ սրինգն ու սազը, որ մի տեսակ պահանջ դառնալով ժողովրդի համար, առաջ է բերել երգող երաժիշտների մի ամբողջ բազմութիւն, որ մեզանում աշուղ են անուանում։

Անդրկովկասի ժողովրդական երգիչներ-աշուղները, որոնք բացառապէս նւիրւած են իրանց արհեստին, թափառական կեանք են վարում։ Նրանք տուն չունին, նրանք շրջում են գիւղից գիւղ, գաւառից գաւառ, երգում, ստեղծագործում... Պէտք է ասել, որ ժողովրդական երգիչը մեծ յարգ ունի մեր գաւառներում, նրա կուրութեան առջև պատկառում է գիւղացին, իսկ նրա ստեղծագործութեան մէջ Նախախնամութեան մատը տեսնելով՝ ժողովուրդը երկիւղածութեամբ է վերաբերւում դէպի աշուղը։

Օտար աշուղը գիւղում ամբողջ հասարակութեան հիւրն է. ձմեռը նրան տնից տուն են տանում և, մի քանի ընտանիք ժողովւելով մի որ և իցէ գոմում, սաքուի վրա, բոլորւելով երգչի շուրջը, մի խուղէ ճրագի լոյսի տակ, որ մի խորհրդաւոր տեսք է տալիս ժողովին, ականջ են դնում երգչի նուագախառն երգին և սրտի յուզմունքների բոպէներում աշուղին սև կոպէկներ նւիրում։

Պէտք է ասել, որ գիւղերում ձմեռւայ հանդէսները աւելի ընտանեկան բնաւորութիւն ունին, իսկ ամառը, մանաւանդ լուսնկայ գիշերները, մի մեծ հրապարակի վրայ, գլխաւորապէս կրպակի մօտ՝ ամբողջ գիւղը լցւում է երգչին ականջ դնելու և աւելի հետաքրքրւում է աշուղների մրցութիւնով։

Աշուղների մրցութիւնը, այն էլ յայտնի, արդէն հռչակ ստացած աշուղների մրցութիւնը մի ամբողջ դարագլուխ է կազմում գաւառական կեանքի մասւոր պատմութեան մէջ։ Երկու նշանաւոր աշուղների մի գիւղ գալը

խմացւում է գաւառում մի քանի օր առաջ. հարևան գիւղերից շատերը գալիս են ներկայ գտնւելու երգերի այդ ճակատամարտին, և ամբողջ գաւառը անհամբեր, լարւած հետաքրքրութեամբ սպասում է մրցումի վախճանին, որի մանրամասն պատմութիւնը սկսում է բերանից բերան շրջել գաւառներում և երկար ապրում է սերունդների յիշողութեան մէջ։ Պատմում են, որ աշուղների այնպիսի մրցումներ են եղել, որոնք օրեր ու շաբաթներ են շարունակւել։ Այն երգչի մասին, որ տանում է յաղթանակը. ժողովուրդը ասում է, օրինակ՝ «Աշըղ Օհանը աշըղ Դաւթին կապեց։

ԱՇՈՒՂՆԵՐԻ ՄՐՑՈՒՄԸ

Գիւղի քեթխուդաները, քահանան և բոլոր կանայք ու երեխայք հաւաքւել էին և աշուղի շուրջը ծալապատիկ նստոտել գետնի վրայ։ Այդ խմբին մօտեցաւ մի ուսում առած երիտասարդ Յարութիւն անունով։ Սա ոչ ոքի վրայ ուշք չդարձրեց, բացի աշուղի նւագարանից (սազ), որի մեծութիւնն ու զարդարանքը գրաւեց իրան։ Ուստի անվախ ու համարձակ մօտեցաւ աշուղին և գլուխ տւեց նրան, ասելով.

—Է՛շխ օլայ, ուստայ *)։

—Էշխին չօխ օլայ, սաֆա գեալդըն **), պատասխանեց աշուղը։

Նրանք իրանց խօսքերն ու երգերը շարունակեցին տաճկերէն, որոնց թարգմանութիւնը այս է.

ՅԱՐՈՒԹԻՒՆ Վա՛րպետ, չի՞ կարելի արդեօք, որ մենք գօտիկ գօտկի խփենք, շնորհք շնորհքի։ Ես լսել եմ քո համբաւաւոր անունը և եկել եմ, որ՝ եթէ կարելի է, մեր շնորհքը իրար հետ համեմատենք։

ԱՇՈՒՂ Գլխիս վրայ, մեծ ուրախութեամբ, շա՛տ սիրով, շա՛տ բարի, շա՛տ բարի... Բայց, իմ սիրելի, իմ աչ-

*) Զւարթ կաց, վարպետ։ **) Շատ զւարթ կաց, բարով եկար։

քիս լոյս, ես տեսնում եմ, որ դու աշուղ չես, դու նւագարան չունես, նւագարանդ ուրիշի՞ն ես տւել, ինձ մօտ առանց նւագարանի եկել... Ո՛չ, այդպէս չէ՛ լինում... Ինձ մօտ նւագարանով են գալիս, առանց նւագարանի գնում... Դու մոլորւած ես, քեզ խաբել են, դու երիտասարդ ես... Իմ գիրն այնպիսի գիր չէ, որ ամեն մարդ կարդայ. իմ ջուրն այնպիսի ջուր չէ, որ ամեն մարդ խմի... Ի՞նչ կ՚ասես, սա՛ն եախշի (դու լաւ ասա)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ (իր մէջը) Այս ինչ ճարտար մարդ է, սրան չի կարելի յաղթել։ Է՛հ, շատ հոգըս չէ, ինչ ուզում է՝ լինի, ձու հօ չեմ, որ կոտրւեմ, աշուղ չեմ, որ անունս կոտրւի։ (Ձայնը բարձրացնելով) Գիտե՞ս ինչ կայ, վա՛րպետ, դու ուղիղ ես ասում, ես աշուղ չեմ, ուզում եմ աշուղ դառնալ, բայց նւագարան չունիմ։ Քո նւագարանը ինձ շատ է դիւր գալիս։ Ա՛րի մրցենք (բաս մտնենք), ինչ ուզում է՝ թո՛ղ լինի։ Եթէ դու յաղթես, ես իմ հրացանը քեզ կը տամ, որ Ղրիմ-բաղչասարայի է, երկու հարիւր ռուբլով է առած։ Թող վկայ լինեն այս բոլոր քեթխուդաները։ Իսկ եթէ ես յաղթեմ, որ յոյս ունեմ Աստուծով, նւագարանը, ինչպէս աշուղների օրէնքն է, մեծահոգութեամբ ինձ կը տաս։

ԱՇՈՒՂ Շա՛տ բարի, շա՛տ բարի... Բայց դու գոնէ աշուղների օրէնքը գիտե՞ս, որ սկզբի ասելու իրաւունքն իմն է. որովհետև դու՛ ես եկել ինձ մօտ, դու՛ ես ուզում իմ նւագարանը ձեռքիցս առնել, որ երազով էլ չես տեսնի...

ՅԱՐՈՒԹԻՒՆ Գիտեմ, գիտեմ, բոլոր կանոնը գիտեմ։ Կարող էք սկսել։

Նրանք հարցրին իրար անունը. աշուղն ասեց որ իր անունը Շոհլայի է, Յարութիւնն էլ իր անունը փոխեց, ասեց՝ «Քերովբէ եմ»... Յարութիւնը իր մահակը նւագարանի տեղ բռնեց և ծունկ չոգեց աշուղի դիմացը։ Ամենից առաջ սկսեցին պարծենալ։ Բայց որովհետև սկզբի ասելու իրաւունքը աշուղինն էր, նա առաջ սկսեց։ Յարութիւնը պարտական էր նրա երգի յանգին (ղաֆիայ) հետևել։

ՇՈՀԼԱՅԻ (սկսում է երգով պարծենալ).

Ընդունի՛ր ողջոյնս, աշխոյժ պատանի,
Համարձակ, քաջի պէս դո՛ւրս արի մէյդան.
Թող չելլէ՛ ասպարէզ, ո՛վ շնորհք չունի,
Աշուղ անուն տալը նրան չէ՛ արժան։

ՔԵՐՈՎԲԷ.—Ընդունում եմ ողջոյնդ, պատուելի՛ վարպետ,
Ես ունեմ խօսքերիդ մէկ մէկ պատասխան.
Ձեմ միայ քո դիմաց յետադէմ, անպէտ,
Համարձակ կանգնող եմ քո դէմ յանդիման։

ՇՈՀԼԱՅԻ.—Կանչել եմ անունը Մըշու Սուլթանի,
Որ մարդին *) նամարդի նա մոհտաջ չանի.
Երևի քաջ լինել դու չես արժանի,
Քեզնից պէտք է խըլել քո զէնք հըրացան։

ՔԵՐՈՎԲԷ.—Ես այդ չեմ ընդունում, դու սո՛ւտ ես խօսում,
Ի զուր ես ինձանից շուտով բամբասում.
Ոսկեռանգ լարերը սազիդ չե՞ն ասում,
Որ յետ երկ՚րոպէի ինձ է սեպհական։

ՇՈՀԼԱՅԻ.—Իմ ոսկեթել սազին շատերն են հաւնել,
Շատերը քեզ պէս մէյդան են ելել.
Բայց նրա՛նք են իրանց սազից զըրկուել,
Եւ սարսափած փախել մինչի Հընդստան։

ՔԵՐՈՎԲԷ.—Վա՜յ, վարպե՛տ, վարպե՛տ, 'պա չե՞ս ամաչել,
Որ այդպէս խոր ու մութ երգեր ես կանչել...
Այդ ո՛չինչ, թէև դու սովոր չես փախչել,
Այժըմ նրանց յետքից կ՚երթաս Խորասան

ՇՈՀԼԱՅԻ.—Դու որ կաս՝ փետուր ես, ես որ կամ՝ քար եմ՝
Կարծում ես թէ ես էլ քեզ պէս անճա՛ր եմ.
Սպասի՛ր, քո առջևդ մի թակարդ լարեմ,
Որ դու ընկնես մէջը ճընճղուկի նըման։

ՔԵՐՈՎԲԷ.—Ես այնպէս տըղայ չեմ, որ թակարդ ընկնեմ,
Ինձ ի՞նչ պէտք է ասես, որ ես չըգըտնեմ.

*) «Մարդին» բառի մէջ, որ նշանակում է «ազնիւ» դն ր չպէտք է հնչել։

Բայց քո վերադ այնպէս մի քար կը դնեմ,
Որ հէնց մընաս տակը այժմ և յաւիտեան։

—Դրան վերջ չկայ, ձայն ուլին քեթխուդաները. դո՛ւ կ՚ասես, նա կ՚ասի...Շո՛ւտ արէք, թէ բան էք ասելու, ասեցէք, տեսնենք ո՛րըդ էք յաղթում, ո՛րըդ չէ։

ՇՈՀԼԱՅԻ.—Դուք շատ էք շտապում, թո՛ղ լինի այդպէս,
Սրա պէս պարծեցողին չեմ անի անտես.
Աշուղ Շոհլային եմ, գիտուն, սըրատես,
Ձեմ ուզում լինել ցածհոգի, անբան։

ՔԵՐՈՎԲԷ.—Քո բոլոր գիտութիւնն ինձ վաղուց է յայտ,
Մի նայիր որ սազի տեղ ձեռքումս է փայտ.
Անբաղդ Քերովբէն եմ, աշուղ եմ անյայտ,
Ո՛հ, թէ այսպէս մընամ մինչ օրն իմ մահուան։

Սրան հետևում է հանելուկ թեժլիսը, այսինքն հարց ու պատասխանը։

ՇՈՀԼԱՅԻ.—Լըսի՛ր, թէ գիտուն ես, ո՛վ քաջ ձևացող,
Այն ո՞վ էր, որ ջո՛ւր հանեց ոսկրից,
Այն ի՞նչ պոզաւոր էր, երեսին կար քող,
Ո՞վ է ծնուել երկու անգամ մօրից։

ՔԵՐՈՎԲԷ.—Քո ասածներին կամ պատրաստ լըսող,
Սամփսոնն էր՝ ջուր հանեց ոսկրից,
Պոզաւոր Մովսէսն էր՝ երեսին կար քող,
Յովնանը ծընաւ երկու անգամ մօրից։

ՇՈՀԼԱՅԻ.—Ի՞նչ ծառ է, որ անհող, անջուր է բսնում,
Առանց տերևների ճիւղեր արձակում.
Ի՞նչ բան է սուր՝ քան թուր սըրտի մէջ ցցւում,
Այն ինչ արարած է, որ ծընաւ հօրից։

ՔԵՐՈՎԲԷ.—Բախըի եղջիւրները անհող, անջուր են բսնում
Առանց տերևների ճիւղեր արձակում.
Դառը խօսքն է սըրտում սըրի պէս ցըցւում,
Քո կարծիքով Եւան ծընել է հօրից։

ՇՈՀԼԱՅԻ.—Այն ո՞վ էր, որ սայլով երկինք վերացաւ,
Սողոմոն իմաստունը ինչ բան չիմացաւ,

Կարմիր ծովը քանի՞ տեղից պատռեցաւ,
Շոհլային եմ՝ շատ լաւ տեղեակ բոլորից։

ՔԵՐՈՎԲԷ.—Եղիան էր՝ սայլով երկինք վերացաւ,
Սողոմոնն իմաստուն միտքը չիմացաւ.
Կարմիր ծովը տասներկ տեղից պատռեցաւ.
Քերովբէն եմ՝ շատ ու շատ գոհ այս օրից։

Հարցնելու հերթը հասաւ կեղծանուն Քերովբէին. ուստի սկսեց, բայց ոչ թէ տաճկերէն, այլ հայերէն։

ՔԵՐՈՎԲԷ.—Ես քո սուր հարցերը մէկ մէկ լուծեցի,
Չկամիմ հեռանել քո մոլորութեան.
Հէնց այժըմ մի չընչին խօսք մըտածեցի.
Ո՞վ է հիմքը դրել Հայոց ազգութեան։

Աշուղը մնաց լուռ ու գունաթափ. չիմացաւ թէ ինչ պատասխանի։ Բայց քեթխուդաները հարկադրեցին Քերովբէին որ նա աւարտէր իր երգը, ուստի նա շարունակեց.

Եթէ դու գովէիր Հայոց Քաջերին,
Մի համբոյր կը տայի սազիդ լարերին.
Բայց դու հաւատում ես սուտ սուտ խօսքերին,
Չգիտես՝ ովքեր են Արամ ու Տիգրան։
Քեզ Սուրբ Կարապետը շընորհք է տւել՝
Պարզամիտ Հային խաբել, սուտ ասել.
Դու հայերէն անգամ չես ուզում երգել,
Որտեղից կ՚իմանաս՝ ով էր Գայլ Վահան։

—Է՜ վալլայ, ասեց աշուղը՝ սազը տալով Յարութիւնին։ Յարութիւնը սաստիկ ուրախանալով՝ չիմացաւ ինչ անի։ Յանկարծ միտքն ընկաւ իր սովորական երգը, որ այս էր.

Աշըղըմ չալ քչեղանկ,
Մըհանի կանչեմ քու տեղանկ.
Աղջիկ չըմ, թա հըմանչիմ,
Տըղայ ըմ, ծիլ ծիլ կը կանչիմ...

Այս մէկ տունը երգեց ու խելոյն հեռացաւ, որ սազը ձեռքից յետ չխլեն։

Ղ. Աղայեան

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ

Սունդուկեանը ծնւել է Թիֆլիզում 1825 թ., սովորել է գիմնազիայում և ապա աւարտել Պետերբուրգի համալսարանում պատմա-լեզւաբանական ֆակուլտէտը, որից յետոյ մտել է պետական ծառայութիւն՝ հասնելով գեներալի աստիճանի։

Նա իր գրական գործունէութիւնն սկսում է 1863 թւին, մի վօդըվիլով։ 1871-ին առաջին անգամ ներկայացրին Պէպօն, որ Սունդուկեանի գործերից ամենանշանաւորն է։ Դրանից առաջ նա արդէն գրել էր «Խաթաբալա», «Էլի մէկ զոհ», այնուհետև լոյս տեսան «Քանդւած օջախ», «Օսկան Պետրովիչն էն կինքումը» և «Ամուսիններ»։

Այս բոլոր պիէսները, բացի վերջինից, գրւած են Թիֆլիզի բարբառով, կենդանի և գեղարւեստօրէն ներկայացնում են Թիֆլիզեցու կեանքը, նրա չարն ու բարին, լաւն ու վատը, առաքինութիւններն ու պակասութիւնները։ Դրանց մէջ Թիֆլիզի հին սերունդը վաճառականն ու կինտօն, կինն ու ծառան, ազնիւն ու անազնիւը, անմահացած են ֆոտոգրաֆիկան ճշտութեամբ։

Չնայելով մի քիչ նեղ ու գաւառական բնաւորութեանը, այս պիէսները լինելով միակը և ամենայաջողը մեր ինքնուրոյն բեմական գրականութեան մէջ, մինչև հիմա էլ, շարունակ ներկայացւում են բոլոր գաւառական հայ բեմերում։—1901 թ. հայ հասարակութիւնը նրա հետ միասին ռուս և վրացի բեմերը մեծ հանդիսով տօնեցին Պէպօ-ի երեսնամեակը, որի պատճառով Սունդուկեանն արժանացաւ մեծամեծ պատիւների և ցոյցերի։—Հայերէնից ոչ պակաս՝ Սունդուկեանի պիէսներն աջողութիւն ունին և խիստ սիրւած են Վրաց բեմում, անշուշտ շնորհիւ այդ պիէսների խորին գեղարւեստական արժանիքների, որոնց մշակութիւնը Սունդուկեանը հասցրել է գերազանց կատարելութեան։

ՊԷՊՕ

Կատակերգութիւն 3 արարւածով, հեղ. Գ. Սունդուկեանի։

Բովանդակութիւն եւ հատւած

Արութին աղան պարտ է Պէպօ-ի հանգուցեալ հօրը 1000 ռուբլի։ Այդ փողը Պէպօն խոստացել է իր քրոջ նը-

շանածին։ Նշանածը պահանջում է խոստացած փողը, որ պսակւի, այլապէս թողնելու է աղջկանը։ Արութին ազան չի ուզում վճարել, մինչև անգամ բացարձակ ուրանում է իր պարտքը, գիտենալով, որ տուած մուրհակը կորած է։ Պէպօն բարկացած նրան անպատւում է։ Արութինը նրան իր տանից դուրս է անում և մինչև անգամ բանտ է քցել տալիս։ Այդ ժամանակ միայն բացւում է նրա խարդախութիւնը, որովհետև կորած մուրհակը գտնւում է Պէպօ-ի ազգական Գիքօ-ի մօտ։

Պէպօ, Կակուլի, Շուշան, Գիքօ

ԿԱԿՈՒԼԻ. Բարով, դէդի ջան։

ՇՈՒՇԱՆ. (Կակուլուն) Ապրիս, վուրթի։

ԿԱԿՈՒԼԻ. Օ՜, ադա Գիքօ, բարով՝ 'ես ու դուն (Առաջ գալով եւ Պէպօին ցածր։) Սրա վրայ լաւ դօնաղ չգթա՞ր, տօ։

ՊԵՊՕ. Մուլափ... (Շուշանին) ի՞նչ իմացաք։

(Կակուլին Գիքօի ետեւից նրա նման իբր թէ քթախոտ է քաշում, բայց իսկոյն դադարում է եւ ուշադրութեամբ լսում խօսողներին։)

ՇՈՒՇԱՆ. Էլ ինչ իմացայ. գեդինը պատռէ ու ինձ դէվէր տանէ։ Թէ էսօր չճարեցինք, Պէպան ջան, էս գիշիր դիփ մէտի մօշլա է ըլում... Ա՛յ, 'Երգնքէն տանիս մագիէրն, Արութին։ (Դարիբան վեր առնելով։) Նա խօ էսօր չի տայ ու ուրիշ տիղ ո՞վ ինչ կու ատայ միզ։ Էլի հոքուն վրայ հասաց էն կապ-կտրած նաթէլին, թէ չէ էն է վիրչի խօսքն էր տանում նուր ախչկայ տիրուչմէն էն միր սիւէրես փեսի մօդ։ Սատանէն անէ նրա գիժանը, հրմ։

ՊԵՊՕ. Տ՛օ, փեսիմէն ինչ իս ուզում. ինչ խոստացել ինք պիտի տանք թէ չէ։ Նա էլ մարթ է, գլխին գդակ ունէ ծածկած, միզմէն էլ վո՞ւրդի խափվի. աշխարքն ալան թալան խօ չէ... Էնդադա սաւի, վուր մուլափ, դէդի, ջեր փուղը դուս գայ, իժում էինք նշնի. ամա ձիր օխտէմէն ո՞վ գու գայ... Ի՞նչ հաջաթ ու, ո՞ւր կու կորչի ու, Արութինը միր միխկն ինչ կ'օնէ ու, հաշա խօմ չի ուտի ու... դէ, գնա տօ, տեսնիմ վո՞ւնց իս տանում։

ԳԻՔՕ. (Նստելով սեղանի մօտ եւ երկար յօգւոց հանելով։) Ա՛խ, իմ գօզալ բարա՛թ... եարաբ վո՞ւնց կորաւ։

ՊԵՊՕ. Չէ՛նդ, Գիքօ, թէ չէ, մասաբս գիդենայ, ինչ ջիգրն ունիմ, դիփ քիգ վրայ կու հանիմ էս սահաթիս։ Դուն վուր չէիր խառնըվի էս բանումը, էս խայտառակութինն էլ չէր գա միր գլուխը. ջհա՛նդամը փուղի գլուխը, նրա մօգօնողին էլ ինչ ասիմ...

ԿԱԿՈՒԼԻ. Մուլափ, մէ բան ասիմ 'ես, Պէպօ. օքմին վկայ չկա՞յ, վուր վրահասու ըլի էտ պարտկին։

ՊԵՊՕ. Միթա՛մ դուն էլ խելքիդ զօռ տվիր. էտով վուր բան էր դառի, խօ էս խաթարալէն էլ չէր ըլի։

ԳԻՔՕ. Ա՛յ. վկայ չի՛մ, բաս ինչ դահրումար իմ... ամա վուր չէ ըլում։

ԿԱԿՈՒԼԻ. Վա՛հ, ինչի՞։

ՊԵՊՕ. (Կակուլուն։) էս բանումը վկայ-մկայ չի ըլի, կ'ասէ, չիս իմանում։

ԿԱԿՈՒԼԻ. (Առանձին, գլուխը շարժելով։) Չէ, 'ես նրան պիտի հարցնիմ։

ՇՈՒՇԱՆ. Ախար, էն օրը էն սեւ սրտովը ինչ ջուղաբ էրիտ կարական։

ՊԵՊՕ. Միթամ ջեր չիս իմացի... Ասաւ՝ 'ես միտս չունիմ, կ'ասէ, դաւթրներումս չէ էրեւում, կ'ասէ, թէ բարաթ իմ տվի ձիզ, բերէք ու փուղը տարէք, կ'ասէ։

ՇՈՒՇԱՆ. Բաս միթամ հաշա է ուզում ուտի։ Էտ վո՞ւնց կ'օնէ, Պէպան. արա քիմէն չիմ արմընում։ Էնէնց հարուստ մարթը լոյիղ պիտի անի էտ հանգի բան։ Նրա համա հարուր թումանն ինչ—մէ գրօշ, վուր ուզենայ բաշխելով էլ կու բաշխէ։

ՊԵՊՕ. Վո՞ւնց չէ, դէմ է բերում։

ՇՈՒՇԱՆ. Ա՛յ, կու տեսնիս թէ չէ... (Լացի ձայնով։) կ'էհամ, տաչիւը կու չոքիմ, լաց կու՛լիմ, իր վուրթկերանց արիւ սադաղա գ'ուզիմ. օրթում կ'ուտիմ, վուր թէ միր մէչը բարաթ լուս ննգնի, թիքա-թիքա անէ միզ, բաթընամա կու տամ, տասը վկի ձեռք կու քաշիլ տամ. մէ օր հոքի ունէ տալու, իր հոքէմէն ձեռը վո՞ւնց կու վիկալնէ։

ՊԷՊՕ. Մուլափ, մուլափ, դէղի, 'ես կ'էհամ, 'ես, էս սհաթիս յիդ գու քամ, ինչըու դուք նստեցէք։

ՇՈՒՇԱՆ. Ջեր մէ թիքայ հաց կի. մէ սահաթ առաջ ըլի, յիդ ըլի, դիփ մէկ է։

ՊԷՊՕ. Չէ, ինչըու չտեսնիմ, բօղազումս հաց չի դէվէր գնա. շուրիրս վուրթէնն է։

ՇՈՒՇԱՆ. Էրէգ դանդուկը դրի։

ԿԱԿՈՒԼԻ. 'Ես էլ գամ, Պէպօ։

ՊԷՊՕ. Չէ, դուն գնա, բանդ տիս, էս սահաթին գալիս իմ։ (Դուրս է գնում աջ դռնից։)

ԿԱԿՈՒԼԻ. Դուն գիդիս... (Խփելով իր կրծքին։) Ա՜խ, Արութին, 'ես թէ քու օխտէմէն չէկայ ու կու տեսնիս...
(Դուրս է գնում միջի դռնից։)

Շուշան, Գիքօ

ԳԻՔՕ. (Նստած, սեղանի մօտ, քթախոտ քաշելով։) Է՜հ, Աստուծ, օրհնվի քու դադաստանը։

ՇՈՒՇԱՆ. (Նստում է տախտի վրայ եւ ձայնը երկարացնելով։) «Ա՜խ, Աստուծ, վա՜խ Աստուծ, վուրին կու տաս ակլով փէտ, վուրին չիս տա՛ ցախ, Ա՛ստուծ»։

ԳԻՔՕ. Հա՛, հա՛, Շուշան։

ՇՈՒՇԱՆ. Է՜հ, օրհնվի Նրա դարգահը. վուրին էնդադա դօվլաթ է տալի, վուր իր դօվլաթը չէ կանացի մարսի, ու վուրիմէն օրւան թիքէն խլում է ու էն էլ դօվլաթաւուրին է տալի... Փա՛ռք Իրան, Իր կամքն է. հալբաթ միր ճակտին էս էր գրած։

ԳԻՔՕ. Էլի Աստուծ օղորմած է, Շուշան...

ՇՈՒՇԱՆ. Էլ ինչ օղորմած է, ջուրն էկիլ է միզ տարիլ է։ Էն անաստուածը վուր էլի մի բան մօզօնէ ու փուղը չտայ էսօր, եարաբ ինչ կու՛լի միր չարէն. ճլէ՛րք կուննգնի խիղճ ախչիկս։ Թավաթ օրն օրվան վրայ հալվում է, էլ ինչը կու ապրեցնէ նրան։ (Լացով։) Խիղճ իմ Կէկէլ, նօրշի արիվդ պիտի փչանայ, էլի՜, թագի մազիէր սևգերեզմանը պիտի մտնիս... (Լաց է լինում։)

ԳԻՔՕ. (Լացի ձայնով։) Օ՜հ, օ՜հ, օ՜հ... (Աչքերը սըր-

բելով դուրս է գնում ձախ դռնից։ Ներս է մտնում Պէպօն զարդի հագուստով։)

Շուշան, Պէպօ

ՇՈՒՇԱՆ. Տօ, ախար, ջեր մէ թիքա հաց կ'ուտէիր։

ՊԷՊՕ. Հաց չէ, զա՛հրումար ուտիմ... Ի՞նչ կ'օնիմ հաց. զանա հացի արժանի ի՞մ... (Գօտիկը կապելով։) Հացը վուր ստիղծած է, զանա ի՞նձ համա է ստիղծած. հացը վուր 'ես ուտիմ, աղա Արութինը ի՞նչ ուտէ։ Նա՛ էլ հաց ուտէ, 'ես էլ հաց ուտի՞մ... (Դառը ծիծաղով։) Հը՛մ, հը՛մ, հը՛մ...

ՇՈՒՇԱՆ. Սիվցիլ էր իմ օրը, ահը՛մ։ (Աչքերը սրբելով դուրս է գնում։)

ՊԷՊՕ. (Մենակ արխալուխի կոճակները մէջ զցելով։) Գնա՛. Պէպօ, գեդին լզէ, խալխի վուտներուն պա՛չ արա, նրանց վուտի ցխը լզէ... Ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն. ինչ մարդաւէսաբուն իս դուն. ինչ անում ունիս դուն... 'Եփոր գ'ուզին, վուտի տակը կու գցին քիզ, վրէտ կու ման գան, գեդնի հիդ կու հաւսրին... ինչ հաջաթ, ջիհանդան... Դուն խօ մարթ չիս, մարթկեճվէլի վրայ ինչո՞վ իս ու ել... Գի՜շեր չարչըրանց համա կերակուր է ստիղծի քիզ Աստուծ... անձրևի ու վի, ցերեկ չարչըրվի, 'երգնքի տակը լուսացրու, ամառը աքամու հիդ կռիւ տու, ձմեռը ցրտէմէն կոնկոռնա, գնա՛ էնէնց մէ թիքա հաց րեզակի շուքումն էրվի ու խօրովվի... պահէ... Էս ճարէ ու էն թիքա հացով դէդիտ ու քվիրդ պահէ... ինչ, ինչ մարթութին... էսէնց շունն էլ է ճարում մէ թի... Միթամ դուն էլ շուն իս... քա, վուր տունը պահում է... դուն էլ շա՛ն պէս կեքանի աշխրքիս էրեսին ման իս գալի, (Դադար։) Մա՛րթ էիր ուրակրվի... էս ինչ մարթութին է... ինչ մարթիք կու թալնէիր, գուղուգում դառնա. կ'էհէիր մարթիք կու գրնէիր. քառնուհինգ թին կ'օնէիր, իմ նման խղճերուն կու թափիլ տէիր, էն արտահազար տիղ արէն արտըսունք կու թափէին օսկէ տնիր... մէսունքնիրը փուղ կու շինէիր ու էն փուղով օսկէ ... դրօշկա, կալասկա, ձիանիր չը փառաւուր ման գու քէիր... կու սարքէիր, քառնուհինգ ինձպէսին գլխիդ զարաւաշ կու կանգնեցնէիր... Ա՜յ, էն չախը կ'օսէի քիզ՝ մարթ իս, Պէպօ, ինչ մարթուն պիտի... ինչ քէփդ գ'ուզէր, էն սահաթին կու ճարէիր... էն չախը դիփունքը քիզ գլուխ կու տէին, կու մեծրէին, պատիւ կու տէին ու մէկս մէկու գլուխ կու կոտրէին, վուր քու աճկը նրանց վրայ քաղցր ըլի...
(Դուրս է գնում դիմացի դռնից։)

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

Գէորգ Բարխուդարեանը ծնւել է Թիֆլիզում 1835 թ. նոյեմբերի 10-ին. նրա հայրը, Նիկողայոսը, դերձակի արհեստանոց ունէր։ Գէորգը սովորում է գիմնազիայում։ Այդտեղ նա աշակերտում է յայտնի Առաքել վարժապետ Արարատեանին։ Այդ միջոցներին Դորպատի անունը սիրելի էր դարձել Թիֆլիզի հայ երիտասարդների համար Խաչատուր Աբովեանի շնորհիւ. Գէորգն էլ այնքան է ոգևորւում Դորպատով, որ գիմնազիայի վեցերորդ դասարանից դուրս գալով պատրաստւում է և 1851 թ. սեպտեմբերին փուրգոնով ուղևորւում է դէպի Դորպատ։ Գէորգի հետ է լինում նաև 10-ամեայ Սմբատ Շահազիզը։ Այդ ժամանակ Դորպատի հայ ուսանողութեան ամենածաղկեալ շրջանն էր. ուսանողութիւնը ոգևորւած էր վերածնութեան գաղափարով։ Գէորգն ընկնելով հայրենասէր երիտասարդների մէջ, ինքն էլ ոգևորւում է դրանց քարոզած գաղափարներով և ամենկերպ աշխատում լաւ հայերէն սովորել, որովհետև Դորպատ գալով՝ նա միայն Թիֆլիզի բարբառով էր կարողանում հայերէն խօսել։ Դորպատում Գէորգը երկար չէ կարողանում մնալ. աչքերի հիւանդութիւնը ստիպում է նրան 1853 թ. աշնանը կրկին Թիֆլիզ վերադառնալ։ Բժշկւելուց յետոյ նա քննութիւն տալով՝ գաւառական ուսուցչի ցենզ է ձեռք բերում և գաւառներում ուսուցչի պաշտօն վարում։ Այդ միջոցներին Գէորգը ոտանաւորներ գրելու փորձեր է անում և տպագրում «Մեղու Հայաստանի» լրագրում և յետոյ «Հիւսիսափայլ»-ում և ապա դառնում է «Փորձի» ամենաեռանդուն աշխատակիցը, ուր նա դնեղեց Շիլլերի Դօն-Կարլոսը։—1879 թ. Բարխուդարեանը Վրաստանի և Իմերէթի թեմի Հայոց ծխական-եկեղեցական դպրոցների թեմական տեսուչ նշանակւեց և այդ պաշտօնը վարեց մինչև 1883 թ.։ Նրա նախագահութեամբ 1882 թւին տեղի ունեցաւ մեր առաջին և վերջին ընդհանուր ուսուցչական ժողովը Թիֆլիզում։ «Փորձ» ամսագիրը դադարելուց յետոյ Բարխուդարեանը թէ իր ինքնուրոյն բա-

նաստեղծութիւնները և թէ թարգմանութիւնները տպագրել է «Արձագանքում», «Հանդէս գրականական և պատմական» «Լումայ», «Թատրոն», «Մուրճ» հանդէսներում։

Թէպէտ Բարխուդարեանն իբրև ինքնուրոյն բանաստեղծ աչքի ընկնող տեղ չի գրաւում մեր նորագոյն գրականութեան մէջ, իբրև թարգմանիչ-բանաստեղծ այժմ առաջինն է նա և նրա անունը հայ մատենագրութեան մէջ միշտ շաղկապուած կմնայ Շիլլերի ու Գէօթէի անունների հետ։ «Գլուխ գործոցը»՝ Բարխուդարեանի թարգմանութիւնների «Ֆաուստը» մի այնպիսի մատենագրական գանձ է, որ հայ գրականութիւնը երբէք չի մոռանայ նրա առաջին բանաստեղծ-թարգմանչին։

Գէորգ Բարխուդարեանի գրիչը հաւատարիմ մնաց «Դորպատեան»-ների աւանդական իտէալներին։

Իսահակ Ցարուխեան

ՁՕՆ

Կրկին յայտնւում էք, պատկերներ աղօտ,
Որ երևեցաք երբեմն իմ աչքին.
Փորձե՞մ այս անգամ պահել ձեզ ինձ մօտ,
Փարձե՞մ այս անգամ պահել ձեզ ինձ մօտ,
Զգո՞ւմ ես իմ սիրտը հակւած այն ցնորքին։
Խմբւում էք իմ շուրջ օդում մշուշոտ։
Շատ լաւ, հակառակ չեմ ես ձեր կամքին.
Կուրծքս զգում է այժ պատանեկան,
Դիպչելով ինձ ձեր շունչը դիւթական։

Բերում էք ձեզ հետ ուրախ օրերի
Պատկերներ և սիրելի ստւերներ.
Իբր աւանդութիւն անցած դարերի,
Զարթում է սրտումս առաջին սէր։
Վիշտս նորոգւում, սրտիս լարերի
Հնչիւնը կրկնում է հին գանգատներ,
Եւ անւանում է սիրելիներին,
Որոնք հեռացան, թողին ընկերին։

Նոքա չեն լսում իմ նոր երգերը,
Որոնց երգեցի երգերս առաջին։
Աւա՜ղ, ցրւած են բարեկամները.
Քնարս չէ՛ հնչում նոցա ականջին։
Երգս լսում են անծանօթները,
Սրտախ չեմ անգամ, թէ գովել հաճեն,
Իսկ որոնք էին երգովս զմայլւած,

Թէև ապրում են, հեռու են ցրւած։
Եւ ինձ քաշում է բուռն ցանկութիւնը
Դէպի կախարդական խաղաղ աշխարհը.
Իմ թոթով երգը արձակում հնչիւն,
Ինչպէս էօլի տաւիղի լարը։
Դողում եմ, լացն է ինձ թեթևութիւն,
Նա հալածում է սրտիս խաւարը.
Այն, ինչ որ ունիմ, հեռու է թւում.
Ինչ որ էլ չկայ, ինձ պարզ երևում։

«ՖԱՈՒՍՏ»—ԳՅՕԹԷ. Թարգմ. Գ. Բարխուդարեանի

Ա Ր Ձ Ա Կ Ա Ն Ք

Խոր ձորի մէջ գնում եմ ես,
Պարզ գիշեր է աստեղազարդ,
Բնութիւնը քնած է կարծես,
Եւ չորս կողմս լուռ ու հանդարտ։
Ո՛չ սոխակի երգն է լսւում,
Ո՛չ վայ տալիս իր գլխին բուն,
Ծառերի մէջ հով է խաղում,
Չկայ մի ձայն, չկայ ծպտուն։
Ես ընկղմած մտքերիս մէջ
Առաջ եմ գնում և իմ հոգին
Մտածում է.—«Կլինի՞ վերջ
Հայոց ազգի տառապանքին։
Յանկարծ կուրծքիցս դուրս թռաւ.
«Էրնեկ մէկն ինձ տար պատասխան».—
Արձագանքը տարաւ բերաւ
Եւ հնչեցրեց.—«Ա՛ռ պատասխան»։
—Պատգամախօս անտես անյայտ,
Մէկ հարցմունքիս լու՛ ուշ դարձրու։
Արձագանքը միայն կիսատ
Կրկնում է ինձ խօսքս.—Հարցրու՛։
«Ի՞նչ է սպասում խեղճ հայ ազգին,
Միթէ կորուստ, ո՞չ փրկութիւն»։
Արձագանքը որոտագին
Պատասխանում է.—«Փրկութի՛ւն»։

Գէորգ Բարխուդարեան

Ր Ա Ֆ Ֆ Ի

(1835 թ. Փայաջուկ—1888 Թիֆլիզ)

Քննելով մեր վիպագրութեան թէ սկզբնաւորման և թէ
զարգացման հանգամանքները, մենք հանդիպում ենք մի ե-
րևոյթի, որ կարող է առաջին անգամից զարմանալի զու-
գադիպութիւն թւել։ Մեր վէպի ծնողը Խաչատուր Աբով-
եանն էր, իսկ զարգացնողը, ծաղկեցնողը՝ Րաֆֆին։ Ո՞վ
էր Աբովեանը։—Մի գիւղացի, որ լոյս աշխարհ էր տեսել
պարսական լծի տակ, որ անձամբ կրել էր այդ լուծը, որ
խրապէս զգացել էր, թէ ինչ է նշանակում լինել քրիստո-
նեայ հայ և մահմեդականի ստրուկ։ Նրա լեզուն բացեց,
նրան աննման ոգևորութիւն ներշնչեց հէնց այն տանջանքը,
որ կրում էր հայ ժողովուրդը։

Խաւար ու ֆանատիկոս Պարսկաստանի մի խուլ մռաց-
ւած անկիւնն էր այն տեղը, որ «Խենթի», «Կայծերի»,
«Դաւիթ-Բէկի» հեղինակի հայրենիք պիտի կոչւէր։ Դա
Սալմաստ գաւառի Փայաջուկ գիւղն է, ուր 1835 թւա-
կանին, տեղական մէլիքի՝ Միրզա-բէկ Մէլիք-Յակոբեանի
ընտանիքում ծնւեց մի մանուկ, որին տւին Յակոբ ա-
նունը։ Մէլիք Միրզա-բէկը, բացի իր պաշտօնական դիր-
քից, յայտնի էր և նրանով, որ վաճառական էր և յարա-
բերութիւններ ունէր զանազան տեղերի հետ։

Նրա հայրը, առևտրական գործերով Թիֆլիզ գալով,
հասկանում է, որ այստեղի դպրոցները Տէր-Թոդիկների
դժոխքները չեն. նա Յակոբին Թիֆլիզ է ուղարկում և
մտցնում է գիմնազիա, բայց մի երկու-երեք տարուց յե-
տոյ, 1857-ին, կանչում է նրան իր մօտ, Պարսկաստան, և
Յակոբը հարկադրւած է լինում կիսատ-պռատ թողնել ու-

սումը և գնալ իր հօր առևտրական գործերը կառավարելու։ Թիֆլիզից նա մի առանձին մտաւոր պաշար չտարաւ, բացի միայն նրանից, որ փոքր ի շատէ սովորեց ռուսերէն լեզուն։

Պարսկաստանում նա երկար մնաց և ինչ էր անում։ Նստած էր խանութում, ծախում էր ապրանք, առնում էր։ Բայց այդ չպիտի լինէր նրա կոչումը։ Նա այդ զգում էր և հոգս էր տանում իր ինքնակրթութեան վրա։ Հայոց գրականութիւնը ինքնուրոյն ստեղծագործութիւնների հարստութիւն չունէր, բայց երիտասարդ վաճառականը կարդում էր ամեն ինչ, որ կարողանում էր ձեռք բերել։ Հայերէն թարգմանութիւնների միջոցով նա ծանօթանում էր եւրոպական հեղինակների հետ. այդ հեղինակները կարող էին նրան միայն օրինակներ, ճաշակ տալ. մնացածը պիտի լրացնէր Մէլիք-Յակոբեանի սեփական, ինքնուրոյն աշխատութիւնը։ Եւ նրա մէջ այնքան մեծ ընդունակութիւն երևան եկաւ, որ նա սեփական աշխատութեանը ուեց մի բոլորովին ինքնատիպ, ուժեղ կերպարանք։

Նա տեսնում էր իրան շրջապատող կեանքը և թափանցում էր կեանքի փիլիսոփայութեան խորքերը։ Փոքրիկ ճանապարհորդութիւնները, որ նա սիրում էր կատարել Սալմաստի զանազան կողմերում, ոչ միայն յագեցնում էին նրա բանաստեղծական հոգու գեղասիրութիւնը, այլ և հարստացնում էին նրա առջև կանգնած կենսական փաստերը։

1858-ին նա դուրս է գալիս Սալմաստի սահմաններից, հայ ուխտաւորների հետ գնում է Մուշի ս. Կարապետի վանքը։ Մի շատ կարևոր ճանապարհորդութիւն էր դա, որ այնքան առատ նիւթեր ուեց մեր վիպագրողին։

Տեսաւ նա Թիւրքաց Հայաստանի մի նշանաւոր մասը, տեսաւ քաղաքներ, գիւղեր։ Բնութեան սիրահար բանաստեղծը հիացմունքի, յափշտակութեան որքա՜ն հարուստ, բազմազան առարկաներ է գտնում։ Գեղեցի՜կ աշխարհ, դրա՜խտ։ Նրան զարդարում են հայի համար նուիրական յիշատակներ, հին-հին, աւերուած, հռչակաւոր յիշատակներ,

որոնք հայի հին պատմութեան ոգևորող էջերն են բաց անում ուղևորի առաջ։ Եւ այդպիսի մի աշխարհում, այդքան գեղեցկութիւնների, այդքան սրբութիւնների մէջ նոյնքան գեղեցկութիւնների... և իրականութիւնը, ինչ որ էր Պարսկաստանում. այստեղ էլ հայը աշխատող, մշակ, գրաստ էր. իսկ քուրդը իշխող, վայելող։

Եւ Րաֆֆին լցւեց մի դառն, թունաւոր ատելութեամբ այդ հրէշաւոր օրէնքի դէմ։ Բանաստեղծի հոգին թեամբ այդ հրէշաւոր օրէնքի դէմ։ Նա իր ամբողջ զգաց, որ բռնութիւնը չէ աշխարհի տէրը։ Նա իր ամբողջ կեանքի ընթացքում դարձաւ մի կրակոտ բողոք բռնութեան դէմ։

Մելամաղձոտ, յուսահատ զանգատներով է նա առաջին անգամ գրական հրապարակ դուրս գալիս «Հիւսիսափայլի» էջերում։ Նկարագրում է Աղթամարի կղզին, նկարագրում է տեղացի հայերին, և մենք տեսնում ենք, որ այնքան ազանչելի բնութիւնը, սրբավայրի հին հռչակը չեն խօսեցնում նրան, որքան այն, որ սարուկ ժողովուրդը իր առաջնորդների ձեռքով աւելի ևս փաթաթւում է սարկութեան ցանցերի մէջ։ Ոչ մի տեղից լոյս չէ մտնում այդ խուլ ու թշւառ անկիւնը, որովհետև լոյսը հալածւած է, ասելի է այդտեղ. քրդի նիզակից այնքան չեն վախենում, որքան միտք ու հոգի կենդանացնող լոյսից։ Եւ—յիշում է—երիտասարդ վաճառականը իր տեսածը, իր զանգատները ամփոփում է ամենքիդ լաւ յայտնի տողերի մէջ.

«Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ...»

Առաջին գրական գործը չափազանց անսովոր բան է մի երիտասարդ վաճառականի համար։ Վաճառականութիւնը չէ սիրում այդքան բարձր խորհուրդներ. նա իր առանձին պաշտամունքն ունի, և Մէլիք-Յակոբեանը ոչ միայն չհարստացաւ, այլ ունեցածն էլ կորցրեց։ Ինչքան լաւ էր, որ այդպէս եղաւ։ Կ՚ունենայի՞նք մենք Րաֆֆի, եթէ խոր այդպէս եղաւ։ Կ՚ունենայինք մենք Րաֆֆի, եթէ խո-Մէլիք-Յակոբեանին նութիւն ու վաճառականական գազը Մէլիք-Յակոբեանին ռակու կոյտեր տային, լցնէին նրա տունը մամոնայի բարիքներով։

Եւ ահա մենք տեսնում ենք ապագայ Րաֆֆիին սե-

փական գործից զրկւած, մի կտոր հացի համար ուրիշնե-
րին ծառայելիս։ Ճակատագիրը բարեհաճ է գտնւում՝ բե-
րելով նրան Թիֆլիզ, ուր նա գործակատարի պաշտօնով
մտնում է շորեր ծախողի մի խանութ։ Խեղճ, համեստ
գործակատարը ծանօթանում է Գրիգոր Արծրունու հետ.
այդ ծանօթութիւնը պատճառ է դառնում, որ նա առև-
տուրի աշխարհից մտնում է ժամանակակից գաղափարա-
կան երիտասարդութեան շրջանը, խրւում է գործի, ժողո-
վրդական կենդանի գործի մէջ։ Նրան գնահատում են,
նրան գրկաբաց ընդունում է հայ երիտասարդութիւնը և
նա դառնում է «Մշակի» մշտական աշխատակից։ Եւ անա
ստեղծւում, կազմակերպւում, ուժեղանում է Րաֆֆին...

«Մշակի» առաջին երեք տարիների ընթացքում Րաֆ-
ֆին արդէն յայտնի գրող էր։ Բայց գրականութեան ո՞ր
ճիւղն էր նրա իսկական կոչումը։ Դեռ յայտնի չէր։ Ինքը,
Րաֆֆին, կարծես ուզում էր ցոյց տալ, որ հրապարակա-
խօսութիւնն է ընտրել. աւելի հասարակական և գրական
հարցեր ուսումնասիրելն ու քննադատելն է սիրում։ Պարս-
կաստանում գրած մի քանի պատկերներ ու երկու հատոր
«Փունջերը» հրատարակելուց յետոյ նա կանգ առաւ, վէպ
համարեա այլևս չէր տալիս։ Մեր կեանքը խաղաղ էր,
առօրեայ յուզիչ հարցեր չէր տալիս, ուստի մեր գրող ե-
րիտասարդութիւնը աւելի ընդհանուր մարդկային հարցերի,
ինքնաքննութեան մէջ էր նիւթ և ոգևորութիւն որոնում։
Րաֆֆին գրեց «Հայ կինը», «Հայ երիտասարդութիւնը»,
կազմեց «Մարդը գոյութեան կռւի մէջ» թարգմանական
յօդւածը, բայց չտւեց վիպական մի նոր փոքր ի շատէ
նշանաւոր գործ։ Րաֆֆին առժամանակ թողեց Թիֆլիզը և
ընտրեց ուսուցչութեան գաղափարական ասպարէզը։ Այդ
պաշտօնը տանում է նրան Թաւրիզ, ուր Րաֆֆին ընդհար-
ւում է հայրենակիցների ադայական կամայականութիւնների
հետ և կռիւ է բաց անում թէ խօսքով և թէ գրչով։
Յաղթւելով կամայականութիւնից, նորից վերադառնում է
Թիֆլիզ և այստեղից գնում է Ագուլիս դարձեալ ուսուց-
չութեան պաշտօնով։

Բայց մինչդեռ Րաֆֆին գործում էր այդ ասպարէ-
զում, մեր կեանքի մէջ առաջացաւ մի նոր, մեծ շարժում։
Արևելեան հարցը, որ 1876-ին ռուս-թիւրքական պատե-
րազմի ժամանակ առաջնակարգ խոշոր իրողութիւն
դարձաւ միջազգային կեանքի մէջ, մեզ համար էլ բարդ
ու դժւար խնդիրներ ստեղծեց։ Թիւրքաց Հայաստանը
դարձաւ խօսքի, մտածութեան առարկայ։ Րաֆֆին սկսեց
մի գործունէութիւն, որ պիտի անմահացնէր նրա անունը
մեր տարեգրութիւնների մէջ։ Պատերազմից յետոյ եւման,
ակնկալութիւնների կարճ ժամանակամիջոցում միմեանց
ետևից հրապարակ եկան նրա հռչակաւոր վէպերը—«Ջա-
լալէդդին», «Խենթը», «Դաւիթ-Բէկ», ապա և «Կայծերը»։
Շատ չեն այն գրողները, որոնց վիճակւում է դառնալ ի-
րանց ժամանակի ոգու և տրամադրութեան արտայայտու-
թիւն։ Րաֆֆին այդ սակաւաթիւ բաղդաւորներից մէկն
էր։ Նրա վէպերը մինչև այդ չտեսնւած, աներևակայելի
ազդեցութիւն արին։ Կարդում էին յափշտակութեամբ,
կարդում էին ոչ թէ մի անգամ, երկու անգամ, այլ ան-
ընդհատ, շարունակ։ Հայերէն գրքի ամենամեծ յաղթա-
նակի ժամանակն էր։ Նա, այդ գիրքը ոգևորում էր, յու-
զում էր, ուղղութիւն էր ցոյց տալիս։

«Ջալալէդդինը» Րաֆֆիի համար ոչ միայն փառքի
դուռը բացեց, այլ և համեմատաբար ապահով հիմքերի
վրա դրեց նրա ապագայ գործունէութիւնը։ Այդ վէպերը
նա գրեց այն ժամանակ, երբ ուսուցիչ էր Ագուլիսում։
Գրիգոր Արծրունին, տպագրելով «Ջալալէդդինը» իր
«Մշակի» մէջ, բերել տւեց Րաֆֆիին Թիֆլիզ, ուր
սկսեց կանոնաւոր վարձատրութիւն տալ նրան և այդպի-
սով մի համեստ, բայց անկախ կեանք ապահովեց հայ գր-
ողի համար։

Տասն և հինգ տարի սրանից առաջ, ապրիլեան մի խո-
նաւ ու անձրևոտ օր, Թիֆլիզի փողոցներով անցնում էր
մի տխուր յուղարկաւորութեան բազմամարդ հանդէս։ Հայ-
երը ճանապարհի երկարութեամբ փակել էին իրանց խա-
նութները. փողոցներում տեղ-տեղ կախւած էին կանանչ-

ներից հիւսած շարաններ, տեղ-տեղ խունկ էին ծխում։ Հայ ժողովուրդը սգաւոր էր. դրա նշանն էին եօթանասունից աւելի պսակները, որոնք հետեւում էին դագաղին։ Այդ դագաղի մէջ դրւած էր նախկին սալմաստեցի վաճառականը, որ այժմ Հայութեան համար նւիրական Րաֆֆի էր.

Նա մեռաւ 53 տարեկան։

Այժմ Խօջիվանքի գերեզմանատանը բարձրացրած է մի կլոր մարմարիոնեայ սիւն, որի ծայրը պսակում է մի փոքրիկ քնար։ Րաֆֆին է հանգչում այդ սիւնի տակ։ Պատւանդանի վրայ քանդակւած է նրա սեփական խօսքերը.

...Քա՛ր է քո սիրտը և խիղճդ է մեռած.
Քանի՜ արիւններ, քանի՜ կոտորած
Տեսար, լռեցիր և դարձեալ պայծառ
Հայ երկրի վրայ կապում ես կամար։

Այս է ասում նա իր յաւիտենական օթեանից։ Իսկ հայ ընթերցողը այսօր էլ որոնում է իր սիրելի գրողի գործերը, այսօր էլ կարդում է նրանց աննման քաղցրութեամբ։

Լէօ

ՄԻ ՊԱՏԿԵՐ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ

1877 տարւայ մայիս ամիսը մօտենում էր իր վախճանին։ Աղբակայ դաշտերից մէկի վրայ մի բանակ էր երեւում՝ բազմաթիւ վրաններից բաղկացած։ Մէջտեղը կար մի ընդարձակ հրապարակ, ուր անբացատրելի խռովութեան մէջ շարժւում էին զինւորւած տղամարդիկ, որոնց երեսները արտայայտում էին կատաղի անհամբերութիւն։ Նոցա ամեն մէկ շարժւածքը ցոյց էր տալիս, թէ դոքա մի սարսափելի պատերազմի են պատրաստւում։ Վերջապէս գլխաւոր վրանի առջև կազմւեցաւ մի ամբիոն՝ թամքերը միմեանց վրայ դարսելով։ Մի պատկառելի ծերունի բարձրացաւ նրա վրայ, որ իր արտաքին կերպարանքով ներկայացնում էր մի անձնաւորութիւն, որ միևնոյն ժամանակ և բարձր հոգևորական է և հզօր զինւոր։—Նա՝ և՛

շէյխ էր, և՛ զօրավար։ Նա իր ձեռքում բռնած ունէր կարմիր դրօշակ։ Զինւորած ժողովուրդը այս հրաշալի երեւոյթը տեսնելով՝ այնպէս էր երևակայում, իբրև թէ իրանց հզօր պապերը կենդանացել են և ոգելից ճառ պէտք է խօսեն։

Շէյխի քարոզը սկսւեցաւ օրհնութիւններով և փառաբանութիւններով։ Ալլահի, Մուհամմէդի և նրա յաջորդների անունները արտասանւում էին մեծ ջերմեռանդութեամբ։ Յետոյ սկսեց բաջալերել այսպէս.

«Ո՛վ Իսլամի որդիք, մեծ մարգարէն—փառք իր զօրութեանը—կոչում է ձեզ մի սուրբ գործի համար, կոչում է ձեզ պատերազմել իր կրօնի թշնամիների դէմ, որոնք սկսել են թափել Աստուծոյ ծառաների արիւնը։ (Եւ թող նզովեալ լինեն նոքա)։

«Վհատութիւնը, երկչոտութիւնը և կասկածը թող հեռու լինեն ձեզանից, որովհետև երկիւղը Աստուծոյ զինւորների համար չէ։ Տէրը ինքը կը տայ ձեր բազուկներին զօրութիւն և թշնամու պարանոցները ձեր սրերի առջև կը կտրատւին, որպէս չորացած հասկը հնձողի մանգաղի առջև։ Դուք ձեր ձեռքով կը բռնէք նրանց գնդակները և դէպի իրանց յետ կը դարձնէք։ Ձեր անձերը պաշտպանւած կը լինեն երկաթեայ պարիսպներով, որոնց ձեր աչքերը չեն տեսնի։ Ձեզ աջակից կը լինեն կոտորող հրեշտակների աներևոյթ գունդերը, որոնց մարգարէն ձեզ օգնութեան կ'ուղարկէ։ Մեծ է Իսլամի Աստւածը և բացի նորանից ուրիշը չկայ։

«Բոլոր գեաւուրները պիղծ են Աստուծոյ առջև։ Նրանց կայքը, ընտանիքը և ամեն ինչ, որ պատկանում է անհաւատներին, Աստւած մատնում է ձեր ձեռքը։ Յափշտակեցէք, կողոպտեցէք, այրեցէք և կոտորեցէք, որքանով կը լիանայ ձեր սիրտը։ Աւարը և իր կրօնի թշնամիների արիւնը՝ Աստւած հալալ է անում սուրբ պատերազմի զինւորներին...

«Սուրբ կրօնի թշնամիների արիւնի հոսումը հաճելի է Տէրի առջև։ Անհաւատների աւերակների ծուխը նա ըն-

դունում է, որպէս մի ողջակէզ, որից ծուխը ուղիղ բարձրանում է դէպի Յաւիտենականի աթոռը։ Կողոպտեցէք, որքան կարող էք դուք։ Եւ ձեր կոտորածների արիւնի իւրաքանչիւր կաթիլի համբարքով՝ դուք կը ստանաք վարձ Աստուծոյ դրախտի մէջ։

«Մեծ է ուղղափառների Աստուածը և բացի նրանից չկայ մի ուրիշը։

«Եթէ ձեր վեր առած գերիներից՝ ձեր սրտերին հաճելի կը լինի ընտրել կնիկներ կամ աղջիկներ,—եթէ դուք ծառայեցնելու համար կ՚ընտրէք պատանի տղուկներ ձեր ձեռքը ընկած գեաւուրներից,—Աստուած չէ արգելում ձեզ միայն այն ժամանակ, երբ նրանք կ՚ընդունեն Իսլամը։ Իսկ եթէ հաստատ մնացին իրանց մոլորութեան մէջ, ձեզ թոյլ է տրւում սպանել։ Իսկ ծերերին խնայել չկայ։ Անհաւատութիւնը նրանց մէջ ամրացած է իրանց ոսկորների նման...»։

Դեռ ևս երկար խօսում էր Շէյխը. նա կանգնած էր ամբիոնի վրայ, որպէս Իսլամի մարմնացած ոգին, որպէս հալածասիրութեան և մոլեռանդութեան մի կենդանի օրինակ։ Նրա ձայնը ազդու էր և սուր, և այն վայրենի ժողովրդեան կարողացաւ ոգևորել մարդկանց մորթելու համար։ Երբ վերջացրեց նա ճառը, կրկին դարձաւ դէպի բազմութիւնը այս խօսքերով.

«Աստուած ձեզանից ուխտ է պահանջում, և թող ձեզանից ամեն մէկը կատարէ իր երդումը»։

Երբ երդումը կատարեցին և բոլոր արարողութիւնները վերջացան, լսելի եղաւ թմբուկի ձայնը։ Ամեն մարդ վազեց իր ձին նստելու, վրանները հաւաքեցան, և մի քանի ժամից յետոյ՝ ամբողջ բանակը պատրաստ էր ճանապարհ ընկնելու։ Նա շարժւեցաւ, երբ Շէյխը իր ձին նստած՝ կարմիր դրօշակը ձեռին՝ առաջ ընկաւ։ Աւելի քան տասն հազար քիւրդեր հետևում էին այդ սարսափելի ծերունուն։

Այսպէս սկսեցաւ Շէյխ Ջալալէդդինի արշաւանքը դէպի տաճկական Հայաստանը։

Անցաւ մի ամբողջ շաբաթ։

Մի ճանապարհորդ էլ չէր ճանաչում իր ծանօթ լեռները։ Այժմ տեսնում է բոլորովին դատարկ, առաջ այսպէս չէր։ Խոտաւէտ արօտներում արածում էին հօտեր, ձորերի մէջ կազմւած էին խաշնարած հայերի վրանները, և հովիւների սրինգը հեռուից հնչում էր թռչունների առաւօտեան ձայների հետ։ Այն ժամանակ հովիտների և լեռնադաշտերի վրայ հողագործ հայը, իր սովորական երգը երգելով, կամ վարում էր կամ հնձում։ Իսկ այժմ։—Այժմ ամեն գործ դադարել էր, ոչ մի շունչ չէր երևում, էլ անց ու դարձ անող քարաւաններ չէին երևում, այլ միայն գիւղերի ճարակն ու ծուխը երկինքն է բարձրանում։ Աւերակներ և ամայութիւն ամենայն տեղ։

«ՋԱԼԱԼԷԴԴԻՆ». *Րաֆֆի*

Ռ Շ Տ Ո Ւ Ն Ց Ի

Չէ կարելի տեսնել և չհիանալ այդ առողջ, կենդանի, մշտազւարթ ժողովրդով։ Նա երբէք չէ թառամում, որպէս իր ծմակների մշտականաչ կիպարիսը։ Նա երբէք չէ ծերանում, որպէս թաւուտների դարևոր եղնիին։ Հզօր կուրծքը մերկ, զօրաւոր բազուկները հոլանի, գլխին թաղիքեայ կոնաձև քոլոզը դրած և նրա վրայ գոյնզգոյն թաշկինակներ փաթաթած, որոնց ծայրերը, ոսկեգոյն մազերի երկայն գիսակների հետ թափւում են լայն թիկունքի վրայ. հագին մի կարճ քազախայ (բաճկոնակ) հագած, որի ամրութիւնը, երկաթեայ զրահի նման, կարող է դիմանալ ամենասուր դաշոյնի առաջև, ներքին հագուստը մազեղէն գոլ-գոլ անդրավարտիքի մէջ հաւաքած,—դուք կը տեսնէք Ռշտունեաց լեռների այդ զաւակին, որ երկայն նիզակը ձեռքին, թեթև, վագրի նման, անցնում է մի ապառաժից դէպի միւսը։ Նրա նիզակը, որ երկու ծայրերում սև սուր երկաթներ ունի՝ ծառայում է և՛ իբրև զէնք, և՛ իբրև նեցուկ, որը գետնի մէջ ցցելով՝ յենւում է նրա վրայ և

ոստիւններ է գործում սարսափելի վհերի վրայից։ Այդ բոլորը այնպէս արագ է կատարւում, որ դու կարծում ես, թէ նա թռչունի նման թևեր ունի և օդի մէջ սլանում է։

Նրա թաղիքեայ փափուկ տրեխների տակերը ամբողջապէս գամած են սրածայր բևեռներով, որ չսահեն, չսայթաքեն ժայռերի վրայ ման գալու ժամանակ։ Գօտու մէջ խրած ունի մի կեռ խենջար, որի կոթը դերձանով կապած է պատեանին. այդ կապանքը նրա համար է, որ մինչև արձակելը նրա բարկութիւնը անցնի. իսկ երբ մերկացրեց սուրը՝ գործողութիւնը արդէն վճռուած է, մինչև արեան մէջ չշողացնէ՝ իր տեղը չի դնի։

Թշնամու հետ անգութ է՝ իբրև գազան, բարեկամի հետ բարի է՝ իբրև հրեշտակ։ Իր հովիտների բարձրահասակ սօսիների նման գեղեցիկ է նա։ Երբ նայում է քո երեսին՝ դու զմայլում ես։ Նրա կապուտակ աչքերը այնպէս լուսափայլ, այնպէս ընդարձակ և այնպէս խոր են, որպէս այն կապուտակ ծովը, որ ծփում է նրա աշխարհի մօտ։ Նրա այրական դէմքը այնպէս արձակ ու այնպէս պայծառ է, որպէս Ռշտունեաց պարզ երկինքը։

Ռշտունեաց պարզ երկնքի նման՝ այդ խաղաղ դէմքը յանկարծ մռայլւում է, մթնում է, շանթեր է արձակում՝ երբ եղանակը փոխւում է, և տեղի է ունենում վերահաս փոթորիկը... Այդ միջոցին նա չէ խօսում, այլ որոտում է, և այդ որոտման ձայնի մէջ դու լսում ես նախկին հայի ուժեղ բարբառը իր բոլոր կոշտ և անտաշ ձևերով։ Բայց այդ կոշտ հնչիւնները քո հոգուդ այնքան ազդու են, քո սրտին այնքան կախարդիչ են, որ որքան էլ ընկած լինես դու հոգով՝ յանկարծ ներշնչւում ես մի անբացատրելի ոգևորութեամբ...։

Րաֆֆի

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՏՈՀՄԸ

Լուսաւորչի տոհմը ունէր իր սրբազան անցեալը, որ նուիրագործուած էր մեծահռչակ և վսեմ աւանդութիւններով, որ ժողովրդի սրտին և հաւատին շատ մօտ էին,

որ նրա համար անմոռանալի էին։ Ժողովուրդը պաշտում էր այդ տոհմը և ընդունում էր նրան իբրև ամենաբարձր հոգևոր հեղինակութիւն։ Այդ էր պատճառը, որ Հայաստանը սիրում էր այդ տոհմի մէջ միայն տեսնել իր եկեղեցու ներկայացուցչին, նրան միայն արժան էր համարում հայրապետական աթոռը, և միշտ նրա բարերար ձեռքումն էր փափագում տեսնել իր ծայրագոյն հովւապետի գաւազանը։ Այդ զգացմունքներից առաջ եկաւ այն ժառանգական կաթողիկոսութիւնը, որ իշխում էր Լուսաւորչի տոհմի մէջ յորդւոց յորդի։

Եւ այդ հայրապետական տունը, իր գոյութեան ամբողջ ընթացքում, միշտ արդարացրեց ժողովրդի թէ հաւատը և թէ նրա փափագները։ Նա միշտ մնաց անբիծ և անարատ, և ամենայն անձնւիրութեամբ կատարեց իր յանձն առած բարձր հոգաբարձութիւնը։ Իսկ այդ հոգաբարձութիւնը որքան հաճելի է ժողովրդի համար, նոյնքան ծանր է թագաւորների համար։ Ամենայն անաչառութեամբ սանձահարում էր նա թագաւորների մոլութիւնները և նրանց կամայականութիւններին սահման էր դնում։ Նա, իրաւ, ճնշում էր գործ դնում թագաւորների վրայ, բայց երբեք գահին չէր դաւաճանում։ Հայրենասիրութիւնը և արքայական թագի պաշտպանութեան գաղափարը՝ այդ տոհմի գերագոյն առաքինութիւններից մէկն էր։

Լուսաւորչի հայրապետական տունը, իր վեհափառութեան բարձր դիրքի համեմատ՝ արքայավայել կացութիւն ունէր։ Այդ տունը աւելի փայլ ստացաւ Ներսէս Մեծի օրերում։ Թագաւորը այնտեղ մտնելու ժամանակ՝ իրաւունք չունէր նստելու, մինչև հայրապետը տեղ ցոյց չտար։ Բայց հայրապետը թագաւորի արքունիքը մտնելու ժամանակ ազատ էր ամեն տեղ նստելու։ Ծառայողների և գանազան պաշտօնակալների մի ստւար բազմութիւն միշտ ներկայ էր այնտեղ։ Տասն և երկու եպիսկոպոսներ հայրապետի անբաժան գործակիցներն էին և խորհրդակիցները։ Զօրս վարդապետ և վաթսուն երէց միշտ անպակաս էին նրա սպասից։ Աշխարհականներից մինչև հինգ հարիւր

հոգի ամեն օր սեղան էին նստում։ Բացի դրանցից՝ հայրապետը ունէր իր այլ և այլ պաշտօնեաները, որոնք էին՝ սենեկապետ, փակակալ, դռան եպիսկոպոս, դպրապետ, հիւրընկալ, սարկաւագապետ, դռան վարդապետ, դռան երէց և այլն։

Հայրապետական տունը, Լուսաւորչի բոլոր ժառանգների օրերում, փակւած չէր այս կամ այն վանքի առանձնութեան մէջ։ Նա աշխարհից չէր անջատւած և աշխարհի առջև միշտ բաց էր։ Լուսաւորչի ժառանգները՝ Աբրահամի, Իսահակի և Յակոբի նման, միևնոյն ժամանակ թէ ժողովրդի հայրեր էիր և թէ գերդաստանի հայրեր։ Նրանք բնակւում էրն իրանց ընտանեկան խաղաղ շրջանում։

Մեծ էր փառքը հայրապետի, երբ նա մի որ և է տեղ էր գնում։ Մի ամբողջ բանակ շարժւում էր նրա հետ։ Մի քանի հարիւր սպառազինւած ձիաւորներ իր թիկնապահներից՝ ուղեկցում էին նրան։ Մի քանի հարիւր եպիսկոպոս, վարդապետ, երէց և այլ եկեղեցականներ ջորիների վրայ նստած՝ ընթանում էին նրա առջևից և ետևից։ Ինքը հայրապետը նստած էր լինում կամ սպիտակ ջորու վրայ կամ կառքի մէջ, որ նոյնպէս տանում էին երկու սպիտակ ջորիներ, որ միայն թագաւորն իրաւունք ունէր գործ ածելու։ Ջորիների թամբերը և այլ հանդերձանքը զարդարած էին լինում ոսկով։ Հայրապետը սովորաբար երեսը ծածկած էր ունենում սև քօղով։ Առջևից տանում էին հայրապետական գաւազանը և, իբրև սրբազան դրօշ — բարձր խաչվառը։

«ՍԱՄՈՒԷԼ».—Րաֆֆի

ԱՐԱՔՍ

Հին Արաքսը… զարմանալի քմահաճութիւններ ունէր՝ Անյիշելի ժամանակներից յամառութեամբ կռւում էր իր անհաւասար եղերքի հետ և, կարծես, դժգոհ էր այն նեղ շաւղից, որ գծել էր նրա ընթացքի համար նոյնքան քմահաճ բնութիւնը։ Նա սիրում էր ազատութիւն։ Նեղ շաւիղը վրդովում է էր նրան։

Երբեմն լեռնային երկու զուգահեռ գոտիներ միաբանում էին և սեղմում էին նրան իրանց անձուկ և խորին ձորակի մէջ։ Այդ միջոցին նրա կատաղութիւնը չափ չունէր։ Անհելի յորձանքներով զարկւում էր իր ապառաժոտ ափերին, գոռում էր, գոչում էր, փրփրում էր, և մարդ, կարծես, լսում էր նրա սոսկալի որոտմունքի մէջ այս ճակատագրական խօսքերը. «Նեղ է… խեղդւում եմ»…

Երբեմն լեռնային գոտիների միաբանութիւնը խախտւում էր, բաժանւում էին միմեանցից, հեռանում էին միմեանցից և բաց էին անում նրա առջև լայն, ընդարձակ տարածութիւն։

Այդ միջոցին նրա կամայականութիւնը չափ չունէր։ Ազատւելով իր նեղ կիրճից մի չար վիշապի նման, անխնայ ողողում էր, յեղյեղում էր իր հարթ, կանաչազարդ ափերը,—և կամ, մի արբած հսկայի նման, երբեմն դէպի աջ էր թեքւում, երբեմն դէպի ահեակ էր խոտորւում, և երբէք ուղիղ ճանապարհով չէր գնում։

Նա ազատութիւնը խելացի կերպով վայելել չգիտէր։ Յանկարծ վիթխարի թևերը բաց էր անում, խլում էր ցամաքից մի կտոր հող և, ճնշելով իր գով գրկի մէջ, կղզիացնում էր նրան։ Առժամանակ երեխայական սիրելութեամբ՝ սկսում էր փայփայել և խնամել իր խաղալիկը։ Կղզին աճում էր, կանաչազարդւում էր, աճում էին թուփերը, վառւում էին ծաղիկները։ Երկնքի թռչունը հիւսում էր այնտեղ իր բոյնը, վայրի անասունը սնուցանում էր այնտեղ իր ձագուկներին։ Կղզին ներկայացնում էր մի գեղեցիկ փունջ, որով զւարճանում էր նա և, պճնասէր երիտասարդի նման, զարդարում էր իր հպարտ կուրծքը։ Բայց, յանկարծ, կարծես ձանձրանում էր նա. ալիքները փրփրալով բարձրանում էին, կոհակները կատաղաբար մռնչում էին և մի քանի րոպէի մէջ կլանում, ոչնչացնում էին գեղեցիկ զարդը և նրա հետքն անգամ չէր երևում։

«ՍԱՄՈՒԷԼ».—Րաֆֆի

Շ Ի Ր Ւ Ա Ն Զ Ա Դ Է

Ալեքսանդր Մովսիսեանը (Շիրւանզադէ) ծնւել է Շամախի 1858 թ. ուսել է նախ՝ նշանաւոր բողոքական Սարգիս վարդապետի մօտ, ապա հայոց դպրոցում. այնուհետև ռուսաց գաւառական ուսումնարանում (Уѣздное училище)։ 17 տարեկան հասակում նա գնում է Բագու, ուր ծառայում է նահանգական ատեանում իբրև գրագիր. ապա եղել է հաշւապահ զանազան առևտրական տներում, մինչև 1887 թիւը։ Բագւից նա արդէն թղթակցութիւններ էր գրում «Մեղու Հայաստանի» և «Մշակ» լրագիրներին։

Շիրւանզադէի առաջին գործը, որ արժանացաւ ուշադրութեան, «Հրդեհն» էր, տպւած «Մշակում» 1883 թ. այնուհետև Շիրւանզադէն գալիս է Թիֆլիզ և 1884-ից սկսում է աշխատակցել «Արձագանքին» և սկսում է պարապել զուտ գրականութեամբ։ Նշանաւոր գործերն են. «Հրդեհ», «Գործակատարի յիշատակարանը», «Նամուս», «Օրիորդ Լիզա», «Նորերից Մէկը», «Արամբին», «Արսէն Դիմաքսեան», «Ցաւագար», «Քաոս» և այլն։ Շիրւանզադէի վէպերի նիւթը քաղաքի կեանքն է։ Նա էր, որ առաջին անգամ սկսեց խորը մշակել իր ներկայացրած տիպերի հոգեբանական կողմը և միջավայրը, որով հիմք դրեց հոգեբանական վէպին մեր մէջ, միանգամայն հեռանալով մինչ այն մեզանում սիրւած ու տարածւած ժողովրդագրական կամ ազգասիրական վէպերից։

ՀՐԴԵՀԸ ՆԱՒԹԱՀԱՆՔՈՒՄ

Հրդեհն արդէն բաւական ընդարձակւել էր։ Այրւում էր ամենաարդիւնաբեր հորերից մինը։ Կրակը, բուրգի ստորին մասից սրընթաց դուրս գալով, շտապում էր ընդգրկել ամբողջ աշտարակը։ Երկնի հորիզոնի վրայ ձգւել էր մթին ծխի մի լայն ժապաւէն, որ քամու ընթացքով տարածւում էր հեռու և հեռու։

Մշակները շրջապատել էին վիթխարի խարոյկը և

կազմել կենդանի օղակ սարսափած դէմքերի, ապշած աչքերի։ Մի խումբ մտել էր ասպարէզ և աշխատում էր դուրս բերել բուրգի տակից մեքենան, միակ բանը, որ կարելի էր կրակից ազատել։

Միքայէլի առաջին միտքն էր, գտնել եղբօր զաւակներին ու կնոջը։ Առանց տատանւելու, վազեց դէպի այն պատշգամբը, ուր այնքան ծանր հառաչանքներ էր արձակել կրծքից, նայելով դիմացի լուսամուտներին։ Կրակը դեռ չէր հասել բնակարանին, բայց արդէն մօտենում էր։ Մշակներն աշխատում էին բուրգի և բնակարանի մէջտեղում գտնւող նաւթային լճակը ապահովել կրակից։ Եթէ նա վառւէր, ամբողջ տունը կորած էր։

—Եկէք ետևիցս,—գոչեց Միքայէլը, դառնալով առաջին մշակներին։

Շրջանից բաժանւեցին երեք հոգի՝ Զուպրովը, Ռասուլը և Կարապետը։ Նրանք հէնց նոր էին հասել հրդեհի տեղը և դեռ չգիտէին վտանգը ո՛ր կողմումն է։ Ամենից առաջ վազեց Զուպրովը, հրելով ընկերներին աջ ու ձախ։ Ամբոխը տեսնելով հսկային սանդուխի վրայ, ոգևորւեց։ Մի քանի վայրկեան կարմիր շապիկը փայլփլեց բոսորագոյն լոյսի ներքոյ և չքացաւ։

Ծուխն արդէն շրջապատել էր ամբողջ տունը։ Մի քանի րոպէ ևս, և ամեն ինչ կարող է ուշ լինել։ Եթէ կրակ էլ չլինէր, ներսում եղողները պիտի ծխից խեղդւէին։ Նաւթային հրդեհը նման չէ սովորական հրդեհներին։ Հանքերում ու գործարաններում կրակը երբեմն տարածւում է հողմի արագութեամբ։ Այստեղ այրւում է ամեն ինչ, նոյն իսկ օդն ու երկիրը՝ ամենուրեք տարածւած նաւթի ու գազի շնորհով։ Շատ անգամ մարդիկ հազիւ լսում են շւիչների սուլոցները, և արդէն նրանց կեանքը վտանգի մէջ է։ Դեռ լաւ է, եթէ կրակն սկսւում է բուրգից կամ շէնքից։ Իսկ եթէ կրակն սկսել է նաւթամբարից, վտանգն անխուսափելի է։ Ամբարի ազատ տարածութեան մէջ կուտակւած գազը, ընդհարւելով կրակի հետ, պայթում է հարիւրաւոր թնդանօթների ուժով, և կրակի հեղեղը սփռւում չորս կողմ։

Զուպրովը պատշգամբի վրայ ուժեղ ձեռներով յետ մղեց Միքայէլին, գոռալով՝

—Այս ձեր տեղը չէ։

Նա վազեց ներս։ Նա հասկացել էր, որ այնտեղ մարդիկ կան, որոնց պէտք է ազատել։ Թէ ովքեր էին այդ մարդիկ, միևնոյնն էր նրա համար։ Արհամարհել ամեն վտանգ և ազատել մարդկանց—այս էր հասարակ մուժիկի պարզ սկզբունքը։

Լճակը բռնկեց բուրգից թափւող խոշոր կայծերից։ Կրակը մի քանի րոպէում կլանեց կիզանուտ հեղուկը։ Սև ծխի թանձր ամպերը պատեցին չորս կողմ։

Զուպրովը լսեց ամբոխի աղաղակը և բնազդումով գուշակեց, որ վտանգն անցնում է բնակարանի ներսը։ Նա երեսը խաչակնքեց, չմոռանալով գդակը վերցնելը, և վազեց յաջորդ սենեակը։ Այս տագնապալի վայրկեանին նա մի ձեռով խլեց Ալեօշային, միւսով փետուրի պէս բարձրացրեց Վասիային։ Մանուկներն ապշած էին, չըգիտէին ինչ է կատարւում։

—Մամա—գոռաց Վասիան, ամուր գրկելով Զուպրովի պարանոցը։

Մի քանի վայրկեան անցած, դռների մէջ երևաց Կարապետը, որ ուսերի վրայ դուրս էր բերում Անտօնինա Իվանովնային։ Տիկինը արձակում էր յուսահատական ճչեր։

Կարապետի ետևից յայտնւեց Ռասուլը, տիկնոջ ադախնին շալակած։

Միքայէլն իջաւ բակը միայն այն ժամանակ, երբ համոզւեց, որ ներսում ոչ ոք չմնաց։

Այժմ բակում տիրում էր բաբելոնեան խառնակութիւն։ Մշակներն աւելի գոռգոռում էին, քան օգնում։ Միմեանց հրում էին, միմեանցից առաջ վազում, վայր ընկնում, վեր կենում թրջւած, ցեխոտւած։ Ուրախացան, երբ լսեցին, թէ աղայի ընտանիքը այժմ ապահով է։

Կիզանուտ հեղուկով տոգորւած փայտաշէն բուրգն այժմ ներկայացնում էր մի հսկայական ջահ, վառւած ծայրէ ի ծայր։ Կրակն արագ լափում էր բուրգի տախ-

տակները, ինչպէս սոված կենդանին լափում է ծառի չոր տերևները։ Բիւրաւոր խոշոր կայծերը, փամփուշտների պէս, բարձրանում էին վեր, ծխի ալիքների մէջ կատաղի պըտոյտներ գործում և թափւում ներքև։ Գոյացել էր մի սքանչելի հրեղէն անձրև։ Քամին կայծերը հաւաքում էր ու տանում կիտում պատերի տակ, անկիւններում ու երկրի խոռոչներում այնպէս, ինչպէս կիտում է ձիւնը։

Կային միամիտ մշակներ, որ ճգնում էին ջրով հանգցնել բուրգը, մի բան, որ անհնարին էր։ Կրակը ծիծաղում էր ջրի մի բազկաչափ հոսանքի վրայ, որ չրթչրթալով դուրս էր գալիս ռետինի խողովակից, ձեռաշարժ ջրմուղի միջոցով։ Ալովի ահռելի լեզուները, ընդհարւելով հակառակ տարրի հետ, արձակում էին դիւական քրքիջներ։ Ջուրը, մի վայրկեան շոգի դառնալով, աւելի ոյժ էր տալիս կրակին, քան կռւում նրա հետ։

Փորձւած բանւորները աշխատում էին նաւթամբարները ապահովել հրեղէն անձրևից։ Այրւող բուրգից ոչ այնքան հեռու կար նաւթով լի մի գետնափոր շտեմարան։ Մօտ քառասուն մշակ, մոռանալով ամեն վտանգ, հաւաքւել էին նրա հողային կտուրի վրայ և թրջւած թաղիքներով ծածկում էին բաց տեղերը, ուսկից դուրս էր գալիս նաւթային գազը։ Մի թեթև ընդհարում ալովի հետ, և նաւթամբարը պիտի պայթէր, իր հետ օդը ցնդեցնելով մշակներին։

«ՔԱՕՍ». Շիրւանզադէ

ՀՈԳԵՀԱՑ

Տան ընդարձակ բակում խռնւել էր խեղճերի անհագին բազմութիւն։ Հանգուցեալի գործակատարներն ու սպասաւորները նրանց կերակուր էին բաժանում։ Տիրում էին անասելի աղմուկ և իրարանցում։ Կեղտոտ, կիսամերկ մուրացկանները միմեանց հրում էին, խփում, հայհոյում՝ աշխատելով իրարու առաջել և մօտենալ խոհանոցին։

Պղնձէ կաթսաների հնչիւնները, ծառաների գոռում-գոչիւնները, քաղցած խուժանի կառաչիւնը ընդհանուր առմամբ ներկայացնում էին քաոս, ուր տիրում էին կողտութիւնը, կեղտը, ցնցոտիներն ու հայհոյանքը։ Մի կոյր հայ փայտով անխնայ հարւածում էր աջ ու ձախ։ Մի պատանի պարսիկ, նրա փէշերից քաշելով, աշխատում էր ինքն առաջ ընկնել։ Մի ռուս անդամալոյծ սայթաքեց, ընկաւ մի ասորի կնոջ վրայ և կատաղութիւնից խածեց ոտը։ Մի կարմրերես լեզգի, որի թևերը մինչև արմունկները կտրած էին, սրա ու նրա վրայ էր արձակւում, ատամներով խլում մսի կտորները և գրեթէ առանց ծամելու կուլ տալիս։ Շների վոհմակը խառնւել էր մուրացկաններին և մռմռալով կրծոտում էր գետնի վրայ թափւած ոսկորները և լակում կերակուրների կեղտոտ հեղուկը։

Բոլոր ուտելիքները բաժանւեցին, խոհանոցի դռները փակւեցին, բայց խուժանը դեռ չէր հեռանում։ Նրանց շան պէս փայտերով չէին արտաքսում, և այս նշանակում էր, որ մի բան կայ։ Ահա սանդուխի վրայ յայտնւեց Սրաֆիօն Գասպարիչի հանդիսաւոր կերպարանքը։ Նա հրամայեց ծառաներին — մէկ մէկ մուրացկաններին թոյլ տան իրան մօտենալու։ Ձեռում բռնած էր մի գոյնզգոյն թաշկինակ արծաթի դրամներով լի։ Այրի տիկին Ոսկեհատն էր հրամայել սեպհական փողերից հարիւր ռուբլի բաժանել մուրացկաններին հանգուցեալի յիշատակին։

Սրաֆիօն Գասպարիչը թաշկինակը շարժեց, դրամները հնչեցին։ Արծաթի ախորժալուր ձայնը, էլէքտրական տօկի պէս անցնելով խուժանի մարմնով, ցնցեց նրան։ Քանի մի վայրկեան անշարժ էր և ապշած նայում էր վաղեմի աստիճանաւորի դիւթական թաշկինակին։ Բայց ահա շարժւեց, գռռաց և, խուլ աղաղակ բարձրացնելով, արձակւեց թաշկինակի վրայ, որպէս գիշակեր ագռաւների երամ։ Այլ ևս ոչ ծառաներն ու գործակատարները և ոչ փողոցից եկած ոստիկանները չկարողացան զսպել մերկանդամ բանակը։

Խուժանը շրջապատեց ծերունուն։ Հարիւրաւոր կեղ-

տոտ, առողջ և զօս ձեռներ միաժամանակ ցնցւեցին օդի մէջ. կազմւեց մի շարժուն անտառ։ Կային անդամալուծներ, զուրկ երկու ոտներից։ Ձեռների վրայ սողալով, սրա ու նրա ոտները բռնահարում էին և երբեմն կծոտում, որ իրանց համար ճանապարհ բանան։ Պատանիները արմուկների հարւածներով միմեանց քիթը և ծնօտն էին ջարդում։ Կանայք, ճչալով իրարու մազերն էին քաշքշում։ Պարսիկները օրհնում էին հանգուցեալի յիշատակը և աղերսում նրա համար երկնային դրախտ։ Քրիստոնեաները անզուսպ հայհոյում էին «անհաւատներին», անխնայ ծեծելով նրանց։ Խլացուցիչ ժխորի մէջ լսւում էին ամենակեղտոտ ածականներ, ամենազազրելի յիշոցներ, որ դարերի ընթացքում կազմւել էին ցեխի կոյտերից, այն աղտոտ մթնոլորտում, ուր ապրում է ու շնչում է մերկութիւնը։

Տեսարանը հետաքրքրել էր հիւրերից շատերին։ Պատշգամբի վրայ հաւաքւած, նայում էին դէպի ցած և զւարճանում։ Դրանք մեծ մասամբ հարուստ երիտասարդներ էին։

Այստեղ էր նաև բանաստեղծ-հրապարակախօս-թղթակից Արմենակ Մարգպետունին, թուխ - դեղնագոյն դէմքով, մեծ քթով, փոքրիկ մօրուքով մի երիտասարդ, հագին երկայն մահուդեայ սև սիւրտուկ, որի անթիւ ծալերը ցոյց էին տալիս, թէ նոր է սնդուկից դուրս բերւել։ Տեսարանը թելադրում էր նրան մի յօդւած, որ պիտի կրէր «Հակադրութիւն» վերնագիրը։ Նայում էր դէպի ցած—քաղցի ու մերկութեան սոսկալի պատկեր, ուր մարդիկ շներից չէին ջոկւում։ Նայում էր դէպի վեր—կշտութեան ու անհոգութեան կենդանի մարմնացում։ Այնտեղ մերկ մարմիններ, կեղտոտ ու գզգզւած մազերով ողորմելի գլուխների մի քստմնելի ճահիճ։ Այստեղ վերջին տարազի հագուստներ, ոսկէ շղթաներ՝ թանկագին «բրելօկներով», ադամանդեայ մատանիներ ու փողկապի քորոցներ։ Կարելի էր խղճալ ստորիններին, [illegible] համակրել նրան, բայց գրաւիչը վերինն էր։ Ահա ինչու Մարգպետունին աշխատում էր իր

վրայ դարձնել հարուստ երիտասարդների ուշադրութիւնը, պտոյտ-պտոյտ անելով նրանց շուրջը։

Մօտեցաւ Սմբատին, հանգուցեալի որդուն, որ դիտում էր իր սեղանի փշրանքների վրայ կուտող խուժանին, և ասաց.—Ես այսօր ևեթ կը նկարագրեմ թաղման հանդէսը և կ'ուղարկեմ լրագրին...

—Լաւ,—արտասանեց Սմբատը անտարբեր։

—Մեր պարտքն է ասպարէզ հանել հանգուցեալի օրինակելի բարեգործութիւնը...

—Իմ կարծիքով, կարելի է և չգրել այդ մասին։

—Ոչ, անպատճառ պէտք է գրել, որ ուրիշներին օրինակ լինի...

Սմբատը երեսը շուռ տուեց, հազիւ կարողանալով թագցնել արհամարհանքը դէպի թղթակիցը։

Մօտեցաւ ազատամիտ Տէր-Աշոտը։

—Ցտեսութիւն, Սմբատ Մարկիչ, թոյլ տուէք կրկին ու կրկին ասել, որ ձեր հայրը իրան անմահացրեց...

Մօտեցաւ պահպանողական Տէր-Սիմօնը։

—Պարոն Սմբատը իր հանգուցեալ հօր արածը մեզանից լաւ է հասկանում,—ասաց. հակառակորդին մի կատաղի հայեացք պարգևելուց յետոյ, սիրալիր նայելով հարուստ ժառանգին։

Սմբատը քաղաքավարի, բայց սառն սեղմեց մէկի ու միւսի ձեռը և, երեսը դարձնելով, հեռացաւ։

«ՔԱՕՍ». Շիրվանզադէ

ԵՐԿՈՒ ՃԱՄԲՈՐԴ

Օգոստոսի սիրուն առաւօտներից մինն էր, երբ ես ու ընկերս՝ կանխաւ արած մեր որոշման համաձայն, դուրս եկանք քաղաքից ձիով՝ հայրենի գաւառակի գիւղերը պտտելու և մի քանի աւերակներ անձամբ տեսնելու։

Մենք պատկանում էինք «տուն վերադարձող» այն նորբեկների թւին, որոնք ընտանիքի հացը հայթայթելու հա-

մար ստիպւած են լինում տարիներով ապրել մեծ քաղաքում, ծծել միշտ նրա անառողջ օդը, սնւել աւելի փոշիով, քան թէ կերակրով և, հետևապէս, կարօտել այնպիսի բարիքների, որ բնութեան մէջ ապրող մարդը վայելում է առատօրէն, առանց սակայն նրանց արժէքը գնահատել կարենալու։

Ի՞նչ բան է, օրինակ, մաքուր օդը, դաշտի կանաչը, հովտի առուակը, անտառի զովը... Մի՞թէ կարելի է կարօտել դրանց, կամ ցանկացած ժամին չվայելել։ Լեռնցի գեղջուկը, որ կարիք բառը հասկանում է միայն նիւթական վերաբերմամբ, անշուշտ կը ծիծաղէր, եթէ իմանար թէ մեր գրկանքը կազմում են այդ չնչին, հազիւ երբեմն իր կարիքը ցուցանող բաները։

Բայց ով տարիներից ի վեր ապրել է մեծ քաղաքում, միշտ միևնոյն նեղ փողոցի վրայ, նոյն ապականւած մթնոլորտի մէջ և գործել շարունակ լուսից ու օդից զուրկ մի գրասենեակում, որի բոլոր հրապոյրը կազմում են եղել չոր հաշւեմատեանները, երկաթէ պահարանը և անմիտ համարիչը, իրեր, որոնք առնչութիւն ունեն միայն փողի և հաշւի հետ, բայց որոնց անծանօթ է սիրտը և աւելի ևս զգայուն հոգին, իրեր, որոնք մարդու ուղեղը բթացնում, աշխոյժը մարում և հոգին նւաստացնում են... այդպիսին, հարկաւ, կարօտելով կը կարօտի այն ամենին, ինչ որ անարժէք է բնութեան զաւակի համար. կը կարօտի նրա դաշտին ու մարգին, նրա հովտին ու առուակին, նրա անտառի անոյշ հովերին։

Մենք էլ, ահա, այդ կարօտեալներից էինք։ Ընկերս վերադարձել էր Մոսկւայից, իսկ ես Թիֆլիզից։ Երկուսս այժմ միացած՝ գնում էինք բնութեան քաղցրութիւններից մեր կարօտն առնելու։

Պետրոս Մինարեանը (այս էր ուղեկցիս անունը), հայոց հոգևոր դպրոցի սան էր. տակաւին երիտասարդ, միջահասակ, փոքր ինչ թուլակազմ, բայց աշխոյժ ու գրաւչադէմ։ Բնաւորութեամբ բաւական անհամբեր և դիւրագրգիռ էր, երբեմն նոյն իսկ յանդուգն ու անքաղաքավար,

բայց սրտով բարի և անկեղծ: Ունէր տարօրինակ հայեացքներ, որոնք իր խօսակիցներին մերթ զայրոյթ և յաճախ՝ զւարճութիւն էին պատճառում: Սիրում էր խառնուել ուրիշների գործին, կամ յաճախ՝ ինքնակոչ դատաւոր հանդիսանալ: Սիրում էր վիճաբանել, ազատ մտքեր յայտնել, բայց երբեմն աւելի հակառակելու, քան մի ճշմարտութիւն տալու համար: Այսուամենայնիւ, այս բոլոր տարօրինակութիւնների հետ միասին, ճանապարհի լաւ ընկեր էր, որովհետև սրտոտ էր, կամարար և սակաւապէտ:

Բաւական ժամեր էին անցել՝ ինչ ելել էինք քաղաքից և թէպէտ առաւօտը զով էր ու հեշտալի, այսուամենայնիւ, քանի արևը բարձրանում էր, այնքան աւելի օդը ջերմանում և նեղացնում էր մեզ: Միջօրէի մօտ մենք գտնւում էինք արդէն բաց դաշտի վրայ: Արևի ճառագայթները այրում էին. չկար ոչ հովի շունչ, ոչ ծառերի շքարան: Այդ պատճառով աշխատում էինք ժամ առաջ հասնել գիւղը, որ գտնւում էր մեր հանդէպ եղող լեռան գեղադիր լանջի վրայ:

Չնայելով որ քաղաքից ելածներիս միջոցին ընկերս պատմում էր թէ մի օր հիացմունքով էի մտածում այն ժամի ու ու վայրկեանի մասին, երբ մայրաքաղաքից հեռացած՝ գտնւում կը լինէր հայրենիքում, նրա ազատ օդի ու դաշտերի մէջ՝ և չնայելով որ այդ ժամին նրա փափագն արդէն կատարւած էր, այսուամենայնիւ, նկատում էի, որ երիտասարդի համբերութիւնը ենթարկւում է փորձութեան: Տօթից, ըստ երևոյթին, նա շատ էր նեղանում, ուստի և յաճախ գանգատւում էր:

Երբ մի ձորակի գետակն անցնելով՝ սկսանք դէպի գիւղը տանող առապարը բարձրանալ, միջօրէի տապը աւելի ևս զգալի դարձաւ, որովհետև արևի ճառագայթներից զատ այրել սկսան մեզ նաև կեծացած ժայռերը, որոնք եզերում էին առապարը երկու կողմից:

—Ա՛խ, մի հասնէինք այն սօսիներին, բացականչեց յանկարծ ընկերս այնպիսի մի կարօտով, որ կարծես գտ-

նւում էր Սահարայի անապատում և ուր որ է խորշակը շնչասպառ պիտի անէր իրան:

—Համբերութիւն, բարեկամ, սօսիներին էլ կը հասնենք, նկատեցի ես:

—Համբերութիւն... միշտ համբերութիւն, շշնջաց Պետրոսը, դժգոհ եմ խօսքից և ապա դառնալով ինձ, հարցրեց.

—Ի՞նչ ես կարծում, ո՞վքեր են համբերում:

—Ինչպէս թէ ո՞վքեր. համբերատարները, պատասխանեցի ես:

—Իսկ ես չեմ կամենում համբերատար կոչուել:

—Ինչո՞ւ, հարցրի նրան:

—Որովհետև համբերում են միայն թոյլերն ու տկարները. այսինքն մարդիկ, որոնք այս կամ այն չարիքը սեփական ուժով իրանցից չհեռացնելով՝ տանում են նրա պատճառած նեղութիւնները սովորաբար: Եւ որպէս զի այդ անարգանք չհամարւի իրանց, ասում են թէ՝ «համբերում ենք»:

—Էհ, եթէ չհամբերես, ի՞նչ պիտի անես. կարո՞ղ ես արևի հրավառ գունդը հեռացնել քո գլխից, կամ այս շիկացած ժայռերը հովանաւոր ծառերի փոխել:

—Չեմ կարող:

—Ինչո՞ւ ուրեմն ի զուր աղմուկ ես հանում:

—Նրա համար որ ցոյց տամ թէ՝ անզգայ արարածի մէկը չեմ, թէ իմ մէջ կեանք ու կենդանութիւն կայ, թէ հեշտութիւնն ինձ հաճոյք, իսկ նեղութիւնը՝ դժգոհութիւն է պատճառում:

—Իսկ դրա օգո՞ւտը:

—Այն, որ մարդիկ ճանաչելով ինձ՝ զգաստ լինեն իմ վերաբերմամբ և զգուշութեամբ վարուեն հետս: Ինքդ էլ հօ գիտես որ աշխոյժ ու չսանձահարուող ձիուն մօտենում են երկիւղով ու փաղաքշանքով և հազիւ ուրեմն կարողանում հեծնել. մինչդեռ համբերատար իշին ականջներից քաշելով՝ բարձում են միշտ որքան կամենում են, առանց նրա կամքն ու ցանկութիւնը հարցնելու:

Ես ծիծաղեցի:

—Դու այս կարծիքին չե՞ս, հարցրեց ընկերս։

—Ո՛չ, ասացի։

—Ինչո՞ւ։

—Որովհետև համբերել բառը աւելի բարձր նշանակութիւն ունի, քան ինչ որ դու տալիս ես նրան։ Էշերի ու ձիաների ընկերութեան մէջ՝ հաւանական է որ համբերութիւնը համարւի անարգ ունակութիւն, բայց մարդկային հասարակութեան մէջ ճանաչւում է այն իբր առաքինութիւն։

—Միջնադարեան վարդապետների կարծիքով, ընդհատեց Պետրոսը։

—Նոյն իսկ դարավերջի փիլիսոփաների կարծիքով, յարեցի ես։

—Պատճա՞ռը։

—Որովհետև համբերութիւնը բարիք է արտադրում, մինչդեռ անհամբերութիւնից միայն չարիք է առաջանում։

—Ի՞նչպէս։

—Աշխարհում համբերում են, առհասարակ, կամքի ոյժ, հոգւոյ արիութիւն և սրտի կորով ունեցողները, հետևապէս, մեծ գործերն էլ ստեղծում են դրանք։ Կարդա պատմութիւնը և կը տեսնես որ աշխարհի բոլոր նշանաւոր գիւտերը, բոլոր մեծամեծ գործերը արդիւնք են եղել դժւարատար նեղութեանց ու հերոսական համբերութեանց։ Անհամբերութիւնն, ընդհակառակը, նշան է թուլութեան և անզօրութեան։ Ուստի երբէք չէ տեսնւած որ անհամբերի մէկը կարողանար մարդկութեան համար ստեղծել մի մեծ բարիք։ Այս է, ահա, պատճառը որ համբերութիւնը համարւում է առաքինութիւն, և բարոյախօսներից մինը, մինչև անգամ, աւելի մեծ փառք է համարում մարդու համար՝ մեծամեծ նեղութեանց համբերելը, քան մեծ գործեր կատարելը։

—Այդ գուցէ այդպէս է, բայց երբ արևն այրում է, հօ կարելի՞ է նրա դէմ տրտնջալ։ Չէ՞ որ տրտունջը թեթևացնում է մարդու նեղութիւնը։

—Ընդհակառակը, պէտք է սովորել՝ երբէք և ոչ մի

բանի դէմ չտրտնջալ, այլ դրա փոխարէն աշխատել՝ նեղութեան պատճառը մէջտեղից հեռացնել։ Ծոյլ ու անզօր մարդը ճանճի շփթելու դէմ էլ է տրտնջում, փոխանակ լռութեամբ ձեռքը բարձրացնելու և նրան քշելու։

—Ճանճը կարելի է քշել, արևը ո՞րտեղ քշենք։

—Այդ դէպքում էլ արևը քշելու փոխարէն քո ձին պէտք է քշես և մի կէս ժամ առաջ հասնես տուն. համբերատար և գործունեայ մարդու համար միշտ փրկութեան ճանապարհ կայ։

Ընկերս լուռ էր։ Զգիտեմ համաձայնեց ինձ հետ, թէ չկամեցաւ անզօր երևալ իմ աչքում։ Այնուամենայնիւ, ոչ մի նոր առարկութիւն չանելով՝ շարունակեց ճանապարհը առանց այլ ևս տրտնջալու արևի դէմ, որ այրում էր մեզ, արդարև, անողորմաբար։

Քիչ ժամանակից յետոյ մենք գիւղը հասանք և ուղղակի դիմեցինք ընկերոջս ազգական գիւղացու տունը։ Վերջինի հովանաւոր սրահը և հիւրընկալի քաղցր ընդունելութիւնը շուտով մոռացրին մեզ ճանապարհի շոքից կրած մեր նեղութիւնը։

Մուրացան

ԻՄ ՊԱՆՈՐԱՄԸ

Ա

Ես մի ծեր մարդ եմ, սիրելի՛ մանուկներ, իմ ընթերցողներ. պտըտել եմ շատ գիւղ ու քաղաքներ, անցկացել գետեր ու ծովեր, շատ բաներ տեսել ու շատ բան լսել, երբեմն ուրախացել, երբեմն տրտմել, այժմ ուզում եմ պանորամիս մէջ փոքրիկ պատկերով տեսածս ցուցնել…

Դէհ, շուտով այստեղ, դուք ժիր մանուկներ,
Մեծ ու պստիկներ, խելօք ու չարեր,
Կարգ-կարգ շարւեցէք, ինչ որ կըլսէք
Եւ կամ կըտեսնէք, ձեր մտքում ամուր,
Ամուր պահեցէք…

Սկսում է։ Ահա մի պատկեր։ Մի մեծ քաղաք է, մեծ-մեծ տներով, լայն-լայն քուչէքով, ուր պտըտում են մարդիկ ոտով ու կառքով, տաք-տաք մուշտակներ ուսերին ձգած, սիգար, պապիրոս բերանները դրած՝ փի՜ւ, փի՜ւ, ծծում, փչում են մուխը թանձրացած։

Թո՛ղ ծըծեն, փըչեն, փորերն ուռցնեն,
Ի՞նչ ունին պակաս, որ ինչ հոգս անեն...

Ահա մի պատկեր դարձեալ նոյն տեղից. մի խուլ փողոց է, ցեխոտ ու կեղտոտ. խարխուլ տնակներ աջ ու ձախ շինած, երկու դրկիցներ դռան առաջին զրոյց են անում քիթ քթի տուած։ Եւ հեռուն կանգնած մի աղքատ կնիկ, շորերը պատռտած, ոտքերը բոբիկ, մի հիւանդ մանուկ բռնած իր գրկում, եկող գնացողին ձեռք է դէմ անում...

Այժմ ձեզ ցոյց տամ մի այլ տեսարան.
Դարձեալ նոյն քաղքում մի լայն փողոց է.
Եղևնու ճիւղեր աջ ու ձախ փռած,
Մի մեծ բազմութիւն առաջ է անցնում
Դիակառքի չորս կողմը լըցուած։

Առջևից գնում են քահանաները, ծաղկեայ փիլոններ ուսերին ձգած և նրանց հետ էլ շատ տիրացուներ, մոմ ու խաչվառներ ձեռքներին բռնած. իսկ վերջից, տեսէ՛ք, ինչքա՜ն կառքեր կան, սևազգեստ կանայք մէջը նստոտած. ա՜խ, ինչպէ՜ս տխուր, ինչպէ՜ս վշտալից, հետևում են սրանք մեռելի ետքից։

Դարձեալ մի պատկեր. քաղաքի ծայրում հինգ-վեց մշակներ ուսերի վրայ տանում են անբախտ ընկերի դիակ, որ քանի տարի իր երկրից հեռու, ծանր բեռի տակ մաշել է իր կեանք... չկան յուղարկներ — ո՛չ քոյր, ո՛չ եղբայր, չեն տեսնում նաև ոչ հայր և ոչ մայր. լուռ է փողոցը, լուռ են և մարդիկ. տեսնում է այս բոլոր միայն պարզ երկինք...

Ահա ձեզ մի այլ պատկեր. բարեկենդան է. մի մեծ դարդարուն սենեակ ձեր առաջ. կանթեղ ու լամպա վառած ձախ ու աջ, մեծ-մեծ հայելիք կախած պատերին,

աթոռ, բազկաթոռ ամեն տեղ շարած, իսկ մէջտեղ երկայն սեղանը ձգած, տասնեակ մարդ ու կին ընթրիքի նստած. ինչե՜ր նրանց առաջը, ա՜խ, չկան դրած.

Շամպայն ու մադէր, անուշ գինիներ,
Խաշած ու խորւած լաւ ձկնեղէններ,
Խաւեար ու պանիր, տապակած հաւեր
Ու քանի՜ տեսակ քաքցրաւենիներ...
Ուտում են, խմում, քա՜հ-քա՜հ ծիծաղում,
Բարեկենդանը լաւ անցկացնում...
Ես էլ մաղթում եմ բարի վայելում։

Ահա նոյն տան կից փոքրիկ խրճիթում, մի թոյլ ու աղօտ ճրագի լուսում, չոր թախտի վրայ մայրը որդոց հետ բարեկենդանի ընթրիքն է անում։ Չկայ ոչ սեղան, ոչ համեղ ընթրիք, չկան գինիներ ու քաղցրաւենիք, այլ մի հին, մաշուած սփռոց առաջները, հացի կտորտանք նրա մէջ դրած ու մի ամանով պանրի փշրտանք, ուտում են անձայն, գլուխ քաշ ձգած...

Տխուր է խրճիթը, խոնաւ և անշուք, տխուր են դէմքերը մօրն ու որդոց. միայն չար փիսոն նրանց մօտ պլ- պլգած. շարժում է պոչը, աչքերը պլշած...

Այժմ ծերուկիս թողէք որ գնամ,
Եկող անգամը շատ բան ցոյց կըտամ.
Դէ՜հ, մնաք բարեաւ, դուք, ժիր մանուկներ,
Մեծ ու պստիկներ, խելօք ու չարեր։

Բ

Անցան ամիսներ, բոլորեց տարին, ահա խեղճ ծերուկս կայ ձեր առաջին. եկէք մանուկներ, իմ աչքի լոյսեր, դառնացած սրտիս դուք միակ լոյսեր. դարձեալ բերի ձեզ ես իմ պանարամ, մի քանի պատկեր նորից ձեզ ցոյց տամ.

Պատկեր լաւ ու վատ երբոր կը տեսնէք,
Աղաչում եմ ձեզ, մտքից մի՛ հանէք։

Դէ՜հ, սկսում է։

1

«Ամառը սարում»

Տեսէք այս սարը կանաչով պատած, այստեղ ու այնտեղ վրաններ թողած, վրանի դիմաց հայ, թուրք գիւղական մի-մի գործ ձեռին բանի է նստած, որը տաշում է, որը սրում է, որը կար կարում, տղին օրօրում, որը հաց կամ կաթ տաքացնում, կարագ ու պանիր, մածուն պատրաստում։

Ահա քիչ հեռի նրանց տաւարը, ոչխարի հօտեր, ձիանց բոլուկներ, մինչև փորի տակ խոտերում ծածկուած կամ գլգլան ջրի ափը հաւաքուած, տկզած կանգնել են, չեն շարժւում տեղից, ինչու-որ կուշտ են ու գոհ վիճակից։

Եւ գիտէք ո՞վ է մոթալ փափախով,
Հաստավիզ մարդը իր դագանակով,
Որ աչքը տնկած սարի լանջերին,
Մի բան է երգում գիլ-գիլ խոտերին.
Դա է նախրապանը—տէրը տաւարի,
Որ սար է գալիս ամենայն տարի։

2

Ահա նոյն նախիր, նոյն հօտն ու ձիեր, բայց ոչ թէ ամառը սարի խոտերում և ոչ քրչքրչան ջրի ափերին, այլ ցուրտ ձմեռը գիւղի գոմերում։

Հալւել է միսը, ոսկրները ցցւել, տկզած փորերնին մէջքներին կպել, քաղցած է տաւարը՝ խոտ չկայ տալու, սառել են դաշտեր՝ գարունն է հեռու։

Կրծում են սովից մսուրի փայտեր,
Դոփում կճղակով, պլրշում աչեր.
Մայում, բառաչում, վիզերնին ծռում,
Թուլացած ընկնում, քաղցից սատակում։
Իսկ մեր գիւղացին, ո՜հ, ինչպէս խղճուկ
Կանգնած նայում է ու թափում արցունք…
Մեծ է նրա վիշտ, մեծ է նրա ցաւ,
Երբ մի անասուն իր ձեռքից անցաւ։

3

Ահա ձեզ մի ուրիշ պատկեր.

«Գարնան սկզբում գիւղացու յոյսեր»

Գարուն է, գարո՜ւն. ինչ քաղցրիկ անուն։ Արտերը կանաչել են, ծառերը ծաղկել, ծաղկունքը բացւել, ջրերը փռւել, գեղջուկ մշակը յոյսերով լցւել։

Կըգայ ամառը՝ կը դեղնի ցորեն, հունձը կըհնձէ կըժողվէ ամբար, կըհասնեն պտուղք՝ թափ կըտայ, կըլցնէ կթոց, կըկախէ շարեր։

Խոտ կայ տաւարին, գարման ձիերին,
Ծաղկունք մեղուին, մեղր մանուկներին.
Ո՛հ, մեր գիւղացին ինչպէս երջանիկ
Կ'անցէ այդ տարին…

4

Պատկերը փոխուեց.

Ահա նոյն գեղջուկ ամառ ժամանակ, տխուր նստած է իրան կտրի տակ. ո՞ւր է նրա յոյս, իր արտն ու այգին, ինչու է ժանգոտ մանգաղ-գերանդին։

Մարախը եկաւ արտերը կերաւ,
Մարախից պրծածը՝ կարկուտը տարաւ.
Թրթուրը խժռեց ծառերի տերև,
Պտուղ չըմնաց՝ ողջ այրեց արև։

Սոված մեղուներ թռան փեթակից,
Բճիճը մնաց դուրկ ծորան մեղրից.
Դաշտը չորացաւ՝ խոտ չըկայ կովին,
Ամբարն է դատարկ՝ մահ է գեղջուկին.

Ո՛հ, ինչպէս թշւառ, ինչպէս յուսահատ
Կ'անցնէ այդ տարին…

5

Նայեցէք հովտի փոքրիկ քաղաքին, ուր սև-սև ամպերը սարերի նման կանգնել են գլխին։ Բնութիւնը խաղաղ է, խաղաղ է և գետը, որ սարի կողմից իջնում է քաղաք,

ջրում պարտէզներ, պտղտում ջաղացք, վշշալով անցնում, կորչում ձորերում, ամենայն տարի յոյս և կեանք բերում։

Ահա ամբոխը կանգնած գետափին, ուրախ է հոգով, երկնից ամպերին, որ անձրև կըտայ, կըջրէ երկիր, կեանք կ'առնէ մարգը, դաշտ ու այգին…

Իսկ փոքրիկ տղաք տես ինչպէս անհոգ
Խաղում, վազվզում են, «Անձրևը երգում»,
Որ ցած գայ ջրէ, բռնէ կանանչ խոտ,
Աւլէ փոշիներ ու մաքրէ վատ օդ։

6

Ահա նոյն քաղաք, նոյն սև-սև ամպեր, որից թըրջում են կրակէ նետեր, անձրևի փոխանակ կարկուտ է թափւում, որտում երկինք, երկիր դղրդում։

Մարդիկ հաւաքւած իրանց տները, քարացած նայում են այդ ահեղ պատժին, որ փշրում է, ջարդում, տուն ու տեղ աւրում, այգի ու պարտէզ խլում, հետը տանում։

Լացում է մանուկը մօր վզին փաթթւած,
Բառաչում է տաւարը դրսում մնացած,
Գոռում գոչում է գետը կատաղի,
Ահ, սարսափ պատում ամեն սրտերի…
Եւ ահա յանկարծ մի ձայն է լսւում,
Մի ձայն դժւարբեր ամենքին հասնում.
«Հեղեղ, հեղեղ, կանչում են մարդիկ,
Ա՜խ. մեռանք, կորանք, խնայէ, երկինք…»։

7

Հեղեղը եկաւ, հեղեղը գնաց,
Բայց տեսէք ահա տեղը ինչ մնաց.

Ահա մի ծերուկ խոտած մի գլակ, կիսամեռ ընկել է իր փլած տան տակ. Նրանից հեռի գետնին տարածւել տասնամեայ մանուկ՝ մօր հատիկ զաւակ։

Ահա քոյր, եղբայր միմեանց գրկած, ընկել են իրանց ծնողաց կրծքին, իսկ այնտեղ խեղդւել սկեսուրն ու հարս, օրօրոցում կապած մանուկը կողքին…

Սգում է քաղաքը, սգում են ամենքը, որը իր հայրը,

որը իր որդին, քոյրը իր միակ եղբայր թանկագին։

Որբի լացի ձայն երկինք է հասնում, մեծ ու փոքրի սիրտ շարժում, մղկտում…

Ա՜խ, թողէք ծածկեմ այս տխուր պատկեր,
Պատկեր սոսկալի, արիւնով ներկւած,
Որի ժանտ տեսիլ դեռ մինչև այսօր
Սարսափ է ազդում դժբախտ բնակչաց։

Կ. Մ.-Շահնազարեան

ԹԱԹԱԽՄԱՆ ԵՐԵԿՈՅ

Երեկոյ է, գարնանային թարմ, անուշ երեկոյ։ Մութը կոխել է ամեն տեղ. ներհում է Սիւնիքի հսկայ բնութիւնը, ամեն ինչ հանգիստ է, անվրդով։ Աստղերը հեզ ու մունջ ճպճպում են, ճպճպում են բարձրից Տաթևի վանքի վրայ, կաթիլներ են միկարծես ծանր ու ցածր արտասունքի ւ ցած գլորում այն խեղճերի վրայ, որոնք փռւած են վանքի բակում։

Տաթևի դրսի մեծ դռների վրայ կայ մի փոքրիկ եկեղեցի։ Այդ եկեղեցու առաջ, հրապարակում, թափւած է մեծ եկեղեցուց դուրս արած ամբոխը։ Այդտեղ վանքի աղբիւրը ամեն օրւայ պէս մեղմ ու հանդարտ քչքչում է, իսկ պարսպի տակ փափուկ գորգի վրայ նստած է թուրք խանը։ Վառւած է մի հատ խարոյկ, որ արդէն մռայլւել է. և նւազ ու բարակ բոցերը թրթռում են, մի երերուն, դողդող լուսով լուսաւորում են տեսակ-տեսակ դէմքեր և խանի կնճռոտ, մաղձոտ դէմքն ու հինայով ներկած նօսր ու սրածայր միրուքը։

Դեռ նոր էին բեռնած ջորիներ ուղարկել վանքից. իսկ խարոյկի մօտ դեռ կուտւած էր վանքի անօթների, թանկագին զգեստների մի կոյտ։

Խանը բարկացած էր, ուզում էր ինքն իրան ուտի։

Ամեն մէկի գլխագինն էին որոշում։ կամ այսքան ոսկի տուր, կամ թէ գլուխդ։ Ամենից առաջ Աւթանդիլ տա-

նուաէրի և Մէլիք-Միհրանի գլուխներն էին գնահատել, վերջացրել։ Մնում էր գինը տալ և կապանքներից ազատուել։ Սակարկութիւնը դեռ երկար պիտի տևէր. խանը շատ էր գնահատում, իսկ փրկանք տուողները գետանքարշ սողում էին, աղաչում էին պակասացնել գլխագինը։

—Հա՛,— յանկարծ գոռաց խանը,— Ասադը, Ասադը… տուէք ինձ իմ ամենալաւ մարդը…

Թիւրքերից միայն մէկն էր սպանուել և դա՝ Ասադն էր։ Գին էին անում Ասադի արիւնը. եթէ վճռուած գինը չտային, 12 լաւ տղամարդականց արիւն պիտի թափուէր, որ խանի սիրտը հովանար։

—Ո՞վ սպանեց նրան. գտէք, տուէք, ինձ. ես նրա միսը կտոր-կտոր պիտի վերցնեմ ատամներովս. տուէք, շներ, խոզի ճտեր…

Խանն այնքան բորբոքուած էր, որ տեղից կանգնեց, երկու քայլ առաջ գնաց և ոտը գետնին խփեց։

—Ողորմութիւն արա,— լալահառաչ ձայն արձակեց թափուած ամբոխը։

—Տո՛ւտ, հա՛, թէ չէ՝ բոլորիդ, բոլորիդ կը կոտորեմ։ Տղե՛րք,— ասաց նա իր մարդկանց,— սո՛ւր պատրաստեցէք։

Բազմութեան մէջ մի խուլ, յուսահատ մրմունջ անցաւ։ Մութ անկիւնից դուրս եկաւ մէկը, չոքէչոք մօտեցաւ, վիզը ծռեց և ասաց լացի ձայնով.

—Ես տեսայ. Հալեձորցի Թաթոսն սպանեց։

Ամբոխն օրհնեց այդ մարդուն։ Բայց խանը աւելի սաստիկ գոռաց.

—Ո՞րն է, ո՞վ է այդ անպիտան շունը, դո՛ւրս բերէք, տուէք տեսնեմ…

—Խեղդուած փսփսոցը մտաւ ամբոխի մէջ։ Անցնում էին րոպէներ. իւրաքանչիւր կապուած խեղդւում էր, հոգի տալ էր պատրաստւում։ Ո՞րտեղից գտնեն Թաթոսին։ Նա չկայ, և այսքան մարդիկ գլուխ պիտի տան նրա պատճառով։ Դատնութեան ժամը մօտենում է և ամբոխը կծկըւում է անտանելի մորմոքների մէջ։

Բայց կապուած Մէլիք-Միհրանը առաջ է սողում, խօսում է։ Խանը նստում է իր տեղը, կարճատև հանդարտութիւնը քաղցրացնում է գետնատարած ամբոխի րոպէները։

—Խա՛ն, գլխիդ ու արևիդ մատաղ,— ասաց Մէլիքը.— խղճա՛ մեզ, խեղճ ենք, ողորմելի ենք, քո ծառաներդ ենք։ Նա այստեղ չէ, կորել է, Աստուած վկայ, սուտ չենք ասում։ Եթէ այստեղ լինէր, ինքներս նրան կտոր-կտոր կանէինք։ Հրաման արա՛, էգուց կամ միւս օրը, երբ որ լինի, կը բռնենք նրան, ձեռքերը կապած ոտդ կը բերենք։

—Տուն, տեղ ունի՞,— հարցրեց խանը մի քիչ ցած ձայնով։

Ամբոխի միջից մէկն իսկոյն պատասխանեց սիրտ առած.

—Ունի, կնիկ էլ ունի, մէկ էլ մի երեխայ, տասնուչորս ամսական։

—Էգուց առաւօտ կը բերէք ինձ մօտ,— հրամայեց խանը։— Իւզ-Թափալարի մօտ, այնտեղ է մնացել իմ մարդկանց մեծ մասը. ոտաբոբիկ, գլխաբաց կը բերէք… Ես գիտեմ, թէ ինչ կանեմ… եթէ չէք ուզում, որ ձեր գիւղերը քարուքանդ անեմ, կը բերէք… Իսկ հիմա արիւնի գինը տուէք, երկու բուռը…

Վերջին խօսքի վրայ խանի ձայնը յանկարծ կտրուեց. վերևից, պարսպի գլխից, մի ահագին քար թռաւ, ընկաւ խանի գլխին։ Նա ցած գլորուեց։

Թուրքերն իսկոյն վրայ վազեցին, բռնեցին խանին։ Բայց նրա գլուխը բոլորովին ջարդուել էր։

Անհնարին սուգ ու շիւան ընկաւ բազմութեան մէջ։ Աղաղակում էին ամենքը, ողբում էին, կրծքները ծեծում։

—Երկի՛նք, Աստուա՜ծ,— պաղատում էր ամբոխը։

Մի սոսկալի ահ դողացնում էր ամենքի ծնօտները. կարկամած լեզուները անհասկանալի ձայներ էին հանում։ Խանը սպանուած էր… Բազմութեան սիրտը պատռւում էր…

Երկու Թուրք փախան դէպի դռները, բայց այդ ժամանակ հինգ մարդ վազէվազ իջան եկեղեցու քարէ սանդուխներով։

—Թաթոսն է, Թաթոսն է.— լեղապատառ գոչեցին մի քանիսը և վազեցին, որ բռնեն նրան։

Մնացածները լալով ասում էին.

—Քո տունը քանդուի, դու մեր տունը քանդեցիր, կրակ թափի գլխիդ, այս ի՞նչ բերիր մեր գլուխը:

Թաթոսը մի մեծ սուր ձեռքին ցատկեց, խարոյկի մօտ կանգնեց: Նրա ընկերներից մէկը մի սարսափելի ձայն, վայրենի աղաղակ հանեց բերանից. ամենքը դողդողացին այդ ձայնից, և ինքը, այդ մարդը, խելագարի պէս սկսեց արագ պտոյտներ գործել, դէս ու դէն թռչկոտալ. Նրա ձեռքում էլ կար մի մեծ սուր, որ անդադար շողշողում էր, երբ նա կրակին էր մօտենում: Դրան իսկոյն ճանաչեցին. ահագին փափախի տակ մտած մի մարդ էր, որ ունէր կարճլիկ հասակ, բայց բաւական հաստ էր, դէմքը փոքր էր, թաւամազ. Նրա ոստիւնների առաջ մարդ չէր կարողանում կանգնել:

—Դռները փակած են,—գոռաց Թաթոսը.—ով որ հայ է, քրիստոնեայ է, թող սրանցից մէկին սպանէ:

Բազմութիւնը քարացել էր: «Թող ինքն անէ,—լսեցան այս ու այն կողմից ձայներ,—թող ինքն անէ, մենք արնատէր չենք, մենք նեղացած, չարչարուած ենք»:

Խարոյկի բոցը բարձրացաւ, Թաթոսի հետ եկած մարդիկ փայտ էին դարսում նրա վրայ: Առաջ գնաց Թաթոսը. նա տանում էր մի աւելորդ սուր ևս: Նա մօտեցաւ Աւթանդիլին:

Խոնարհ ու հանդարտ կերպով նայեց նրան, գլուխը ցածրացրեց և սուրը մեկնեց նրան, կոթը դրաւ նրա ձեռքում, որ չուանով կապկապած էր: Աւթանդիլն ընդդիմացաւ. Թաթոսն ուզում էր արձակել նրա ձեռքը կապանքից, բայց նա թոյլ չտուեց, կռնով դէն հրեց իրան մեկնած սրի կոթը: Բայց Թաթոսը չէր հեռանում. նա զարմացած նայում էր այդ իշխանին և աշխատում էր նրա տխուր, յուսահատ դէմքի վրայ մի պատասխան կարդալ: Աւթանդիլը առաջ շարժուեց սողալով, և Թաթոսը պատկառանքով ճանապարհ տուեց նրան: Աւթանդիլը խօսեց. նրա ձայնը տխուր էր, աղաւորի ձայնի պէս էր.

—Մարդիկ, եթէ գժուել էք, այս գժին լսեցէք. բայց

իմացէք, թէ էգուց մեր գլուխն ինչ կը գայ: Սրա գլուխը ծախուած է, պրծած: Խանի մարդիկ էգուց կը գան... էգուց կնիկ ու երեխայ գերի կը գնան Բարկուշատ: Ես արիւնի տէր չեմ. տեղիցս չեմ էլ շարժուի, կապանքներս չեմ էլ արձակի:

Եւ նա գլուխը կախ արած մի կողմն անցաւ, թուրքերին մի ինչ որ բան ասաց:

—Անիծուի՜ դա,—գոչեց գերիների խումբը:

Թուրքերը սրեր հանած, կանգնած էին: Նրանց և Թաթոսի հետ եկածների մէջ դեռ միայն հայհոյանքներ էին փոխանակւում: Բայց Աւթանդիլի խօսքերից յետոյ նրանք առաջ անցան և սուր շողացնելով վրայ թափեցան: Թաթոսն իր ընկերների հետ խնայել չգիտէր. սրի հարուածները թափեցան, և թուրքերը յետ ու յետ գնացին: Թաթոսը սուրը բռնած ընկաւ ամբոխի մէջ:

—Կոտորեցէք դրանց,—գոռում էր նա և ձեռք ընկածին հարուածում էր սրի տափակով:

Էլի բարձրացաւ բազմութեան աղեկտուր հեծեծանքը:

—Խե՜ղճ ենք, մե՜ղք ենք, վա՜յ... գոռգոռում էին այս ու այն կողմից: Սարսափահար բազմութիւնը այս ու այն կողմ էր փախչում, վանքի ընդարձակ բակում մի աննհարին խառնակութիւն էր տիրել:

—Կոտորեցէ՛ք,—գոչում էր Թաթոսը սարսափելի ձայնով. նա կրճտացնում էր ատամները, նրա աչքերը արիւնով լցուել էին, տրաքւում էին:

Կարճլիկ ու բրդոտ մարդն այդ միջոցին վերջացրել էր իր գործը: Թուրքերը զինաթափ էին եղել և հաւաքուած մի անկիւնում՝ լուռ ու մունջ իրանց դատաստանին էին սպասում: Եւ կարճլիկ մարդը մօտեցաւ Թաթոսին, շարժւում էր նրա հետ միասին. նա ոչինչ չէր խօսում, այլ միայն բարձրացրած սուրը շարժում էր մարդկանց վրայ:

—Քարերո՛վ, քարերով,—լսւում էր Թաթոսի բոլորովին փոխուած ձայնը:

Ամբոխը անից սարսափած, դողահար ընկաւ քարակոյտի վրայ, որ դիզուած էր այդտեղ: Եւ ամեն մէկը մի մի

քար վերցնելով, վազեց դէպի Թուրքերը։ Սրանցից միքանիսը փախել էին պարսպի գլխով։ Լսեցին, թէ ինչպէս աղաղակում էին նրանք՝ «շուն գեաւուրները կատաղել են»։ Մնացածները՜ դեռ կանգնած էին։

Եւ քարերը կարկտի պէս թափւեցան մնացածների վրայ։ Իսկ կարճլիկ ու հաստ վայրենին խրախուսում էր մարդկանց և իր սրի ծայրով մանր-մանր հարւածներ էր տալիս ընկած Թուրքերին։ Նա, կասես, հանաք էր անում։

Խաւարը մարել էր. միայն կրակն էր քիչ լոյս տալիս իր չորս կողմին։ Թաթոսը դէս ու դէն էր վազում. նա կրակ էր կորել։ Նրա ոտը մի ինչ-որ բանի դիպաւ և նա հազիւ պահւեց վայր ընկնելուց։ Նա ցած խոնարհւեց և նայեց։ Իր ոտների տակ դեռ պառկած էր Աւթանդիլը, չւանը դեռ կապկապած էր նրա ձեռքերն ու ոտքերը։ Մի սարսուռ ընկաւ Թաթոսի երակների մէջ. մի ակնթարթում նա խղճաց նրան և կռացաւ, որ նրան բարձրացնէ։ Բայց Աւթանդիլը գոռաց.

—Կորի՛ր, աւազակ. մարդկանց տունը քանդել ես, իմն էլ ես ուզում քանդել...

—Բոլորին կոտորեցին,—ասաց Թաթոսը դողալով։ Նա առաջին անգամն էր մեծ մարդու հետ խօսում։ Եւ աւելացրեց.

—Վե՛ր կաց, իշխան, ընկնելուց ի՞նչ օգուտ։

Աւթանդիլը երեսը շուռ տւեց և լռեց. Թաթոսը դողդողալով հեռացաւ նրանից, բայց էլի յետ դարձաւ։

—Մեռած մարդ,—գոչեց նա և իր սուրը բարձրացրեց։ Սուրը սաստիկ թափով իջնել էր ուզում ընկածի ուսի վրայ, բայց Թաթոսի սրտում զարմանալի փոփոխութիւններ էին կատարւում. մի վայրկեանում նա փոշմանեց, դէն տարաւ սուրը, մինչև անգամ մի քայլ հեռացաւ, բայց նորից յետ դարձաւ և, խոնարհւելով նրա վրայ, խորին զզւանքով թքեց նրա երեսին. դողոցը այնպէս էր բռնել նրան, որ նա չկարողացաւ պահել, և նրա սրի ծայրը ծակեց իշխանի կողը։

Աւթանդիլը բղաւեց. նրա շուրջը հաւաքւեցան մար-

դիկ։ Բայց Թաթոսը ուշադրութիւն չդարձրեց. նա հեռացաւ, որոնում էր միւս իշխանին։ Բայց չտեսաւ նրան և անցաւ վանքի փոքրիկ բակը։

Քիչ ևս անցաւ, ամեն ինչ վերջացաւ։ Յոգնած, մի կարճ ժամանակում մաշւած մարդիկ հաւաքւեցան միասին, դառնութեամբ խօսում, աղաղակում էին։

Լէօ

Մ Ա Յ Ր Ե Ր Ը

Գիւղական փոքրիկ եկեղեցու կիսախաւարի մէջ խնկի ծուխը պալան-պալան բարձրանում էր այն երեկոյ և բակկապում փոքրիկ լուսամուտների շուրջը։ Կանթեղի աղօտ լոյսի առաջ քահանան մռմռալով քաղում էր աղօթքները և բազմաթիւ ժամաւորները մերթ գետնատարած խսիրների վրայ, մերթ ոտքի կանգնած ու բազկատարած՝ մրմընջում էին մի ընդհանուր ու խուլ մռմռոց հանելով։ Կանանց բաժնում սևացած սեան վրայ կախւած էր Աստւածածնի նկարը մի մգլած, դեղնած շրջանակի մէջ և նրա առաջ կանգնած էր մի տարիքաւոր կին՝ Սուսանը։ Այդ կինը և այդ նկարը երկու մայրեր էին, որոնք նայում էին իրար ակնապիշ և կարծես ջանք էին անում հասկանալ միմեանց մտքերը, կարդալ միմեանց սրտերը։ Տիրամայրը վերևումն էր՝ սեան վրայ, Սուսանը ներքևում՝ գետնի վրայ. մէկը սուրբ էր, կարող և հրաշագործ, միւսը խեղճ, վըշտահար, անզօր մի պառաւ, որ եկել էր նրա առաջ լաց լինելու, աղերսելու։

Միածնի փոքրիկ, գանգրահեր գլուխը սղմած իր կուսական կրծքին, Աստւածամայրը խանդաղատանքով ու ժըպիտով նայում էր վար, իր ոտների տակ սողացող, գալարւող բազմութեանը, նայում էր նոյն ժպտով նաև Սուսանին, որ եկել էր ցաւոտ կուրծքը նրա առաջ բանալու։

Սուսանն աղօթում էր իր միակ որդու, իր ղարիբ Թափառական Սաքօի համար, որ քանի մի օր առաջ թողեց, գնաց մութ անյայտը, դէպի հեռուն...

«Ո՜վ սուրբ Տիրամայր, ասում էր նա, բոլոր ցաւոտ սրտերի, բոլոր վշտացած հոգիների, բոլոր մղկտացող մայրերի դու գթոտ մայր, ձեռքս քո փէշն եմ ձգել, էրւած, մորմոքւած սիրտս բերել եմ քո սուրբ ոտների տակ դնելու. բաց այն, Տիրամէր, տես, արցունքը մի կողմ, կրակը միւս կողմն են բռնել սրտիս և արցունքը վառ կրակը մարել չի կարողանում, բոցերը շատ են. բաց ու նայիր, անճարների մայր. չէ՞ դու սրտերի կրակը հասկանալ, զգալ գիտես, տես ինչեր կան իմ եփւած սրտում, ու յետոյ մի ճար, մի դարման, ողորմած Թագուհի։ Իմ ծով մեղքից էս ծեր օրերիս փալագը մի դաղ քաշեց սրտիս, մի խոր դաղ և էրւած տեղը դեռ մխում է, մխում. դու հօ տեսար, սուրբ մայր, թէ էն մէկ ջիւանս, սարի պէս տղամարդ, ինչպէս կտոր-կտոր արին անօրէնները. մի ցաւով ծնած, մեծացրած զաւակիս էս կտրած ձեռներովս արիւնոտ գերեզման իջեցրի։ Ի՞նչ անեմ, գուցէ իմ մեղքից, գուցէ Աստւած էր վրաս բարկացել։ Այս մէկն էլ գնաց... մղկտացի, աղաչեցի, լաց եղայ, ձեռք ու ոտքն ընկայ, որ չը գնայ, բայց գնաց... թէ ո՞ւր, այն դու ինձանից լաւ գիտես, Տիրամէր... հեռու սարերում, ձորերում, քարը՝ բարձ, ժայռն՝ անկողին, օձերի հետ ջուրը, գազանների հետ բունը կիսելով՝ նա թափառում է և ես անտէր, անտիրական, ձեռքս չոր գետնին, սիրտս՝ դող, հոգիս՝ ցաւած, օրս՝ սև, թաց աչքս դռանը բռնած գիշեր, ցերեկ մղկտում, վշվշում եմ։ Փրկի՜ր նրան, իմ զաւակին, Տիրամէր, բարեխօս եղիր նրա մօտ, որ այնպէս սիրով գրկել, սղմում ես քո սուրբ կրծքին. տես նա ինչպէս փարում է քո մայրական ստինքներին, ինչպէս ուզում է լսել քո սրտի ձայնը, մա՛յր, մա՛յր, ախր ես էլ եմ մայր, ես էլ սիրտ ունիմ, մայրական կաթովս քանիսի՛ն կերակրեցի, կրծքիս վրայ քանիսի՛ն ջերմացրի և էլ չկա՛ն, չկա՛ն, ոչ մէկը չկայ, ութ ծնունդ նրստեցի, ութ երկունք քաշեցի, և այժմ էն մէկն է։ Մոմերը մէկիկ-մէկիկ այրւեցին ու մարեցին, Աստւածածնի և Քրիստոսի դէմքերը կամաց-կամաց կորան խաւարի մէջ. քահանայի ձայնը լռեց, աղօթաւորների մրմունջները դադարեցին, եկեղեցին դատարկւեց։ Սուսանն այնտեղ մնաց մենակ և դեռ աղօթում էր, դեռ նա աչքերը վար չէր բերում Տիրամօր պատկերից, դեռ չորացած բազուկները տարածած նա օգնութիւն, գթութիւն էր աղերսում և լալիս էր ու լալիս...

—Սուսան խաթուն, ուշ է. ժամը պրծաւ, որդի։ Կինը գլուխը բարձրացրեց. խօսողը ծերունի քահանան էր։

—Տէրտէր ջան, աջիդ մեռնեմ, աղօթում եմ։

—Հա՛, որդի, գիտեմ, որ աղօթում ես, լաւ ես անում, թող Աստւած լսի. ասում եմ, որ ժամը պրծաւ, էլ մարդ չկայ, տե՛ս։

—Դու գիտես, չէ՞, հայր ջան, էն մէկն էնպէս բեմուրազ եղաւ, մէկէլները գնացին, արեան ծով էր, խեղդեց բոլորին, էս մէկն էլ չոլերն ընկաւ, ես եկել եմ Աստւածածնի փէշերից կախւել։

— Լաւ ես անում, զաւակս, լաւ ես անում, բայց ուշ է արդէն։

—Գիտե՛ս, հայր ջան, չեմ թողնի, չեմ թողնի նրա փէշերը. ամեն օր էսպէս կը գամ, ես ի՞նչ եմ արել, որ էսքան սևը մենակ քաշեմ, որ էսքան ցաւը մենակ ինձ տան, մեղք չե՞մ, էէ՜, սա էլ մայր է, էս Տիրամէրը տես, տես ինչպէս գրկել է իր զաւակին, տես ինչպէս սղմում է կրծքին, իսկ ես ոչ ոք չունեմ, ոչ ո՛ք։ Դու գիտես չէ՞, տէրտէր ջան, չէ՞ քեզ հետ դրինք հողը արնակոլոլ զաւակներիս։

—Հա՛ հա՛, որդի, դէ հիմա բաւական է, մնացածն էլ էգուց։

Սուսանը խաչակնքեց երեսը ու կամաց-կամաց երերալով դուրս գնաց։ Քահանան կանգնած նայում էր նրա յետևից և երբ այդ փոքրիկ, դողդոջուն ստւերն խապառ ծածկւեց դրսի խաւարի մէջ, նա գլուխն օրօրեց խորհրդաւոր ձևով։

—Խեղճ կին, ասաց նա կամացուկ, ի՞նչ է լինելու վերջը, խելքն արդէն կարծես տեղը չէ. փառք քեզ, Աստւած, հազար բերան փառք։

Դուրսը մութ էր։

Էլի գարուններ եկան բոլորեցին Սուսանի գլխով, էլի դաշտ ու ձորեր ծաղիկներով ու կանաչներով ծածկեցին։ Բակի մի հատիկ խնձորենին մի քանի անգամ ծաղկեց և բուրմունք արձակեց իր շուրջը. պատերի նեղ ճեղքերի մէջ ճնճղուկները բուն դրեցին և ձագեր հանեցին. հօտերն ու նախիրները դաշտերը կենդանացրին, իսկ արագիլներն արդէն քանի անգամ չուեցին հեռու, հեռու և կրկին վերադարձան։ Էլի աշուններ եկան իրանց վհատ քամիներով և ծառերի տերևները լիզեցին, թռչուններն ահագին ու տխուր երամներով թողին ու հեռացան դեղնած դաշտերից, կռունկները վշտոտ կզզոցով սև ցեյերի վրայ հատիկներ մուրալով երկնքի երեսից անցան, բայց Սուսանի որդին չկար ու չկար։

—Բօղար, խնձորենին ծաղկել է. շուտով նա կը գայ, այնպէս չէ՞։

Եւ Բօղարը օրօրում էր իր պոչը, շէշտակի նայում տիրուհու աչքերին՝ ասես ի նշան համաձայնութեան։ Անցնում էր գարունը, անցնում էր ամառը, էլի վրայ էին հասնում աշնան ցրտերը, խնձորենին մերկանում էր տերևներից և տխրութեամբ օրօրում իր կատարը ցուրտ հովերի առաջ, Սուսանը նայում էր վշտով և կրկին դառնում էր իր շանը.

—Բօղար, չեկաւ, չեկաւ բէբաղդը, գարնանը կը գայ, այնպէս չէ՞։ Եւ շունը կրկին օրօրում էր իր պոչը և պառաւն սպասում էր յուսով նոր գարնանը, որ խնձորենին ծաղկի, որ թռչունները վերադառնան և նրանց հետ միասին Սաքօն յայտնուի։ Դրա հետ միաժամանակ նա կատարում էր իր ուխտը սրբութեամբ. ամեն երեկոյ գնում էր եկեղեցի, վեց մոմը դողդոջուն ձեռքով կպցնում Տիրամօր պատկերի սևացած, այրուած շրջանակի վրայ, ձեռքերը տարածում էր դէպի երկինք և աղօթում, աղօթում։ Եւ ամեն երեկոյ աղօթքից յետոյ, երբ բոլոր ժամաւորները դուրս էին գնում, նա դառնում էր տէրտէրին.

—Սաքօն կը գայ, այնպէս չէ՞, տէրտէր։

—Հա՛, որդի, ի հարկէ կը գայ, քո այնքան արցունքը, աղօթքները...

—Բերանդ տաճար է, տէրտէր ջան, տաճար, բերնիդ մեռնեմ. ասա՛, ասա՛, այսպէս ասա՛. դու որ ասում ես, Տիրամէրն էլ ժպտում է, յոյսը սրտիս մէջ վարդի պէս բացւում է։

—Հապա, որդի, Տիրամէրը ո՞ւմ խնդիրն է թողել անկատար. երկնքի դռները նրա բարեխօսութեան առաջ միշտ բաց են։

Եւ Սուսանը հանգստացած տուն էր վերադառնում։

Սուսանն անքուն է դեռ. նա նստած է և մտածում է իր Սաքօի մասին. ո՞ւր է նա այժմ. ո՞ր չոլում, ո՞ր ձորում, ո՞ր այրի մէջ, կամ ժայռի տակ կծկւած։ Սարերում այժմ ինչպէս ցուրտ է. նա էլ երևի թրջւած է, կրակ չունի, ինչպէս վառի, նրանք կրակ չեն անում, այն թափառականները, որ վառեն, լաւ չէ, ասում են... հիմա ինչպէս մրսում է իր Սաքօն, այսպիսի գիշեր...

Բակի դուռն են թակում, Բօղարը հաչած նետուեց դէպի այն կողմը։

— Թըր՛խկ, Թր՛ըխկ...

Սուսանը ցնցւեց ու դողաց բոլոր մարմնով, բայց ինքն էլ չիմանալով ինչու, մի վայրկեան մեխւած մնաց իր տեղում անշարժ և ամբողջապէս լսողութիւն դարձած, բերանաբաց, շնչակտուր. նա լսում էր, թէ ինչպէս շունը կատաղաբար չանգռում է դուռը,—Թըր՛խկ, Թըր՛խկ, խըփում են դրսից։

— Ո՞վ է... ո՞վ ես դու...

—Ես... ես Աստուծոյ մարդ եմ... անվնաս ու անպէտք. դողում եմ ցրտից, թրջւած եմ, հեռուից եմ գալիս... անձրևի տակ մնացի, մութը վրայ հասաւ սարերում, նոր հասայ, ես անպէտք մարդ եմ, Աստուծոյ արարած... Տէ՛ս, ես դողում եմ, մի տեղ, մի կրակ, մի ճար, Տիրամօր սիրուն...

—Տիրամօր սիրուն, կրկնեց Սուսանը մեքենայաբար,

մի վայրկեան լռեց, յուսահատ դայլոյթով կրծոտեց շըրթունքները մրմնջալով.

—Նա չի՛, նա չի՛, ո՜, անողորմ մարդ։

—Չար գիշեր է, շարունակեց անծանօթը, խեղճին ո՛վ տեղ կը տայ, քանի՛ դուռ եմ թակել, բացող չկայ, վախենում են, ես անպէտք մարդ եմ, էլի վախենում են. դէ ես էլ Աստուծոյ ստեղծածն եմ։

—Ղարիբի տէր եմ, դու էլ ղարիբ ես, ներս արի, ասաց նա վերջապէս։

—Տիրամէրը հասնի ղարիբին։

—Հա՛, Տիրամէրը ղարիբին. սուս, Բօղար, սուս, մի՛ զայրացիր, ի՞նչ անենք, Աստուծոյ ստեղծածն է, խեղճ է, անճար է. Տիրամէր, բոլոր անճարներին, բոլոր տառապեալներին հասիր, յետոյ նրան, մրմնջում էր պառաւը ցեխերի միջից դանդաղութեամբ քայլելով և օտարականը հետևում էր նրան։

Ներս մտան. ձէթի ճրագը պլպլում էր. պառաւը դարձաւ, նայեց օտարականին։ Ծեր մարդ էր, սպիտակ մազերով ու միրուքով. խղճուկ զգեստները ողջ թրջւած՝ ծըլանքներից ջուրը կաթկաթում էր։ Նա դողում էր ցըրտից ամբողջ մարմնով։ Նրա մի ուսից կախւած էր մի պարկ, կիսով չափ լի հացով, իսկ միւս ուսից մի երկար բան, որ սազի էր նմանում։ Սուսանը նայում էր ուշադրութեամբ։

—Աշո՞ւղ ես, հարցրեց նա։

—Չէ, մէրիկ, աշուղ չեմ, այլ գղրար. ես թափառում եմ գիւղից գիւղ, դռնից դուռ, գզում եմ բուրդ ու բամբակ, ով տալիս է. այս էլ աշուղութիւն է, մէրիկ. տես, ես զարկում եմ այս լարին, նա ցոյց տւեց իր գործիքը, և նրա հաստ լարը լաց է լինում իմ հարւածների տակ, և լալով բուրդ է գզում, այդ լացի գնով, սև օրով ես ապրում եմ. ինչ անեմ, մէրիկ, ջիւանները արնակոլոլ եղան մեր վէրան աշխարհում, ես եմ մնացել, ծեր օրերիս, մէրիկ, անպէտք եմ. Աստւած հոգիս չի առնում, որ ազատւեմ։ Օտարականը վար դրեց իր պարկը, ցած բերեց ու-

սից գործիքները, մօտեցաւ թօնրին, կծկւեց ու մնջեց։ Լուսացաւ. անձրևը դադարեց. բացւեց աշնանային մի ցուրտ ու պայծառ օր։ Մարդիկ դուրս սողացին բնակարաններից։ Սուսանի հիւրը նոյնպէս պատրաստւում էր դուրս ընկնելու իր գիշերային ապաստարանից։ Նա դանդաղութեամբ վերցրեց իր պարկը, կախեց ուսից, առաւ նաև բուրդ գըզելու գործիքը և դարձաւ Սուսանին։

—Շէն մնաս, մէրիկ. օջաղդ վառ մնայ։

—Գնո՞ւմ ես։

—Հա՛, գնում եմ ցնցոտիներս ու անպէտք գլուխս երկրէ երկիր, գիւղէ գիւղ, դռնէ դուռ քաշ տալու, մինչև մի տեղ շունսատակ լինեմ ու մաշւած, տրորւած ոսկորներս հանգիստ առնեն։ Եւ մինչև օտարականը խօսում էր, պառաւը մտածում էր, տեսնես սա չի՞ տեսել նրան, էն սարերի արծւին։

—Լսի՛ր. դու շա՞տ տեղ ես ման եկել։

—Շա՜տ, խիստ շատ։

Պառաւը գլուխը քաշ գցեց ու լռեց։

—Ինչո՞ւ ես հարցնում, մէրիկ։

—Է՜հ, հէնց էնպէս, տեսնում եմ, որ շատ տանջւած ես։

—Հա՛, մէրիկ, տանջանքը իմ եղբայրն է, մենք սխասին ծնւեցինք, իսկ այժմ էլ անբաժան ենք։

—Լսի՛ր, դու սարերում արծիւ տեսե՞լ ես, հարցրեց Սուսանը։ Նրան թւաց, որ այս օտարականն էլ պիտի հասկանայ, որ ածիւը նա է, Սաքօն է։

—Բան չեմ հասկանում, մէրիկ, ասաց նա, ես արծիւ չեմ տեսել, սև օր շատ եմ տեսել, խեղճ ու կրակ գղրար եմ, քո յարկի տակ աղ ու հաց կերայ, թէ բուրդ ունիս, բեր գզեմ, գնամ իմ ցաւը հոգամ։ Պառաւի աչքերը փայլեցին. Նրա գլխով կարծես մի լուսաւոր միտք անցաւ. որդու անկողինը, այդ ինչպէս է, որ նա մոռացել է։

—Բուրդ, հա՛, բուրդ ունիմ, ինչ լաւ ասացիր, ողորմի հօրդ, գզելու բուրդ, որ փափուկ լինի, էնպէս չէ՞, որ գզեն, բուրդը փափուկ կը լինի, անկողինն էլ լաւ. մա-

տերովս եմ քրքրել, բայց այդ քիչ է։ Եւ նա ծալքից ցած բերեց որդու անկողինը, քանդեց, բուրդը դուրս թափեց գզրարի առաջ։

—Ա՛յ, գզիր, գա՛րկ, լաւ գա՛րկ լարիդ. թող փափկի։ Օտարականը գործիքը ցած բերեց ուսից, հացի պարկն էլ մի կողմ դրեց, ծունկ չոգեց և սկսեց գարկել իր գործիքի հաստ լարին։ Բուրդը գզւում էր ամպերի պէս՝ քուլա-քուլա բարձրանում, իսկ լարն ասես լալիս, հեծում էր նորա հարւածների տակ։

Սուսանը լռութեամբ և հիացմունքով նայում էր։ Գործը շարունակւում էր, գզրարն այս անգամ և՛ գարկում էր, և՛ երգում, կարծես իր լարի հետ մէկ տեղ հեծեծում էր ու լալիս. նա ասում էր. «Գարահիսար լերան կրծքին նա էլ ընկաւ վիրաւոր, կուրծքը պատռած, սիրտը խոցւած, չար թշնամու գնդակով. Ժէռոտ լերան լերկ կատարից վար սլացիր սև արծիւ, թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանին հով արա։

«Խոցւած սրտից մուգ արիւնը կաթիլ կաթիլ կը ծորայ, ա՛խ, ջիւանի կեանքն է հոսում ցաւոտ կրծքի լայն վէրքից. Ժէռոտ լերան լերկ կատարից վար սլացիր, սև արծիւ, թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանին հով արա»։

Սուսանը լսում էր սկզբում ուշադրութեամբ, բայց կամաց-կամաց նա կարծես մի մեծ սարսափի առաջ աչքերը չռեց ու գունատւեց։

—Այդ ի՞նչ ես երգում... ա՛յ մարդ։

Օտարականը գլուխը բարձրացրեց, գործը թողեց. նայում էր զարմացած այս կնոջ յուզմունքի վրայ և կարծես խօսք չէր գտնում պատասխանելու։

—Սո՛ւս, սուս, անողորմ, շարունակեց Սուսանը, թող այդ սև արծւի երգը, ես սեր չեմ ուզում։

—Տէր Աստւած, այդ հին բան է, շատ հին, ամենքը գիտեն, հին երգ է, ամենքն են երգում։

—Հի՞ն է... Սուսանը կարծես մի փոքր հանգստացաւ, որ «բանը» այնպէս հին է։

—Հին է, մէրիկ, քանի՜ տարի է ինչ երգում են ամեն տեղ։

—Ո՞վ է, ո՞վ է այն ջիւան վիրաւորը։

—Չգիտե՛ս, արար աշխարհ գիտէ Գարահիսարի բանը, եաման բան էր. վէրան մնայ Գարհիսարը. քանի՜ման էին...

—Ո՞վ է ջիւանը, քեզ ասում եմ, անողո՛րմ...

--Միթէ չգիտես, Սաքօն է։

—Սաքօ՛ն... ուո՜ւհ, անաստւած, նզովք քո շրթունքներին, քո եկած ճանապարհին, քո ծննդին... սուտ է, սուտ է. Տիրամայրը կայ, աղօթքս, մոմերը, սուտ ես խօսում, չար սատանան ես դու, դուրս, դուրս, դուրս... Բայց չէ, կաց, կա՛ց, աղաչում եմ, սուտ էր, այնպէս չէ՞, դու սուտ ասացիր...

Սուսանը դեռ վազվզում էր բակում խելագարի պէս. կուրծքը՝ բաց արած, չորացած ստինքները բռնած ցոյց էր տալիս երկնքին.

—Նայի՛ր վերից, Կապուտաւոր,*) նայիր էս չորացած աղբիւրներին, քանիսի՜ն կերակրեցի սրանցով. քանիսի՜ն իմ միս ու արիւնը տւի, մեծացրի, էլ չկան, չկան. ոչ մէկը չկայ... Մէկը Սաքօն է, Սաքօ՛ն, էն սարերի արծիւը, էն էլ... ի՞նչ ասաց անիրաւը... ճի՞շտ է, դու չտեսա՞ր... Սաքօ՛ն, սարը մթնեց, արծիւը սև կապեց, ճի՞շտ է։ Բա դու ի՞նչ ասիր, ի՞նչ արիր։ Մայր եմ, չէ՞, մայր էի, էլ մայր չեմ, ութը ծնունդ, ութը երկունք, հազար ցաւ, հազար խոց սևաւոր սրտիս... ուո՜ւհ... և նա ջարդւած ընկաւ խնձորենու տակ, ծեր գլուխը կախւեց կրծքին, արցունքը թափւեց, թափւեց. իսկ վերևից ծառի վերջին, դեղնած տերևները մէկիկ մէկիկ մաղւում էին նրա գլխին և ճիւղերը մերկ ու դողդոջուն օրօրւում էին աշնան սառն քամու առաջ։

Սուսանը հիւանդ է, Սուսար մեռնում է...

—Հին բան է, որդի, հին բան, ասում էր նրա գլխաւերևը նստած ծերունի քահանան, որ եկել էր հիւանդին վերջին մխիթարութիւնն ասելու, վերջին հաղորդութիւնը տալու։

—Հի՜ն բան է, կրկնում էր մեռնողը, Տիրամէրն էլ գիտէ՞ր, տէրտէր ջան։

*) Աստւած։

—Աշխարհը գիտէր, որդի, քեզանից բացի ամենքը գիտէին։

—Դո՞ւ էլ գիտէիր։

—Գէ, որդի, թէ քեզ էլ ասէինք, ինչ օգուտ, ցուդ դրանով չէր թեթևանայ. այնքան մայրեր լաց եղան, այնքան սրտեր փշրուեցին, այնքան գլուխներ սև կապեցին, էհ, ինչ անենք, մեր ճակատագիրն է։

—Չէ, չէ, Տիրամէրը խաբեց, ես խռով եմ ժամից, պատարագից, Տիրամօրից, երկնքից, թող այսուհետև դըժոխքի բոցերին բաժին դառնամ։

—Մի ասիր այդ, որդի, մի ասիր, հոգուդ մեղք մի անիր։

Զատկին քահանան եկաւ տունն օրհնելու, մխիթարութիւն խօսելու, մերժեց. այժմ էլ հիւանդ ընկած, անկողնում. նա մեռնում է, չի ուզում հաղորդուել։

—Չէ, չեմ ուզում, գիտմամբ չեմ ուզում, որ հոգիս սատանայի բաժին դառնայ։ Ես կը կանգնեմ Աստուծոյ գահի առաջ և Տիրամօրից գանգատ կ'անեմ և յետոյ այնպիսի բաներ կ'ասեմ, այնպիսի բանե՜ր։ Այ, էս չորացած ստինքներս ցոյց կը տամ ու կ'ասեմ, ինչ արիր, Տէ՜ր, մեռանք, փոթոթուեցինք, վարամ ճչացինք, աղերսեցինք, ձայներս աստղերին հասաւ և դու մեզ չհասար. հիմա տար ինձ կպրի կարասը, ես ինչ, ես մի կտոր բոց եմ, ձգիր ինձ կրակի մէջ, բոցը բոցին ինչ կ'անի. հա՛, կպրի կասեմ, որ ինձ նման սևաւոր բոլոր մայրերը բոց դառած հանեն ինձ և ամենքս միասին հրդեհ կազմենք, այնպիսի հրդեհ, որպիսին վառումն է, վէրան սև վաթանում *), թող երկինքն էլ վառուի նրա պէս, թող երկինքն էլ մոխիր դառնայ, տար, տար, ինձ կպրի կարասը, ես բոց եմ, մի կտոր կրակ։ Այ, այսպէս կ'ասեմ։

—Որդի, աղաչում եմ, ասաց լացակումած քահանան, այդ ինչ ես ասում. տես, էս ծեր տեղովս ես քեզ աղերսում եմ. մի ասիր այդ, քեզ համար ես էլ պատասխանատու եմ Աստուծոյ առաջ։

*) Հայրենիք։

—Պատասխանատո՞ւ ես, դո՞ւ էլ. Տիրամէրը խաբե՜ց, մայր էր, սիրտ պիտի ունենար, բայց խաբեց, ինքը երջանիկ է, ինքը զաւակը կրծքին սղմած ունի, իսկ ուրիշին խաբե՜ց...

—Տիրամէ՞րը։

—Հա՛, Տիրամէրը։

—Նայիր այստեղ։

Քահանան ցոյց տուեց իր Աւետարանը, նրա երեսի խաչելութիւնը։ Խաչուած Քրիստոսի ոտների տակ սգում էր Աստուածածինը մի խուրձ սրեր մխուած սրտում։

—Ճանաչո՞ւմ ես, շարունակեց քահանան մատը դնելով Աստուածածնի վրայ. սա էլ է Տիրամէր։

Պառաւը նայում էր աչքերը լայն, բերանը բաց, զարմացած։

—Նայի՛ր, նայիր, երկար նայիր, ասում էր քահանան, դու միայն երջանիկ Տիրամէրն ես տեսել, տե՛ս և այս սգաւոր, այս դժբաղդ մայրը։ Պառաւը ձգուեց առաջ շընչակտուր, դողդոջուն ձեռքերը մեկնեց և բռնեց Աւետարանը, մօտեցրեց աչքերին։

—Տե՛ս, քանի՜ սուր է մտել սիրտը, չէ՞ այն էլ նրա որդին է խաչուած վերևում։

—Հա՛, հա, նրա որդին է խաչուած։

—Նա մեռնում է աշխարհի համար, մեր բոլորի համար։

—Նա մեռնում է մեր բոլորի համար... Իսկ իմ Սաքօն...

—Սաքօն, որդի, էհ, նա էլ մեր սև ու վէրան աշխարհի... Այդպէս է, որդի, մայրերը ծնում են երկունքով, պահում են ցաւերով, մարդակեր աշխարհը տանում է, տանում, ի՞նչ անենք։

—Մայրերը ծնում են երկունքով, պահում են ցաւերով ու աշխարհը տանում է, հա, հա, տանում է անողորմ աշխարհը։

—Սաքօն էլ գնաց, ուր շատերն են գնացել նրանից առաջ, եւ ուր շատերն էլ կ'երթան նրանից յետոյ, ինչ անենք։

—Սաքօն էլ գնաց, ուր սա է գնացել, հա, տէրտէր ջան, էս խաչի մեռնողը։

—Հա, որդի, նոյն ճանապարհով, աշխարհի համար։

—Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ, ես մեղաւոր եմ,—պառաւի ձայնը կերկերաց, արցունքները թափուեցին, նա Աւետարանը սղմեց շրթունքներին մրմնջալով.

—Խե՜ղճ մայրե՜ր, խե՜ղճ մայրեր...

Ա. Ահարոնեան

ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Գնչուներ եւ հայ բօշաներ

«Ուզան բերանը կթան կովէն լաւ է»։
Բօշ. առած։

Մի ժողովուրդ, որ ազգութիւն, հայրենիք և կրօն չունի, որ «չի ցանում, չի հնձում, թռչունի պէս ապրում է», որի հայրենիքը աշխարհն է ամբողջապէս, հովանին երկինքը, հարստութիւնը մի աւանակ և մի քանի չուլ ու փալաս,—դա բօշան է։ Նա դիմանում է հիւսիսի սառնամանիքին, տանում է հարաւի խորշակն անվնաս։ Ամեն տեղ նա ապրում է և ընտելանում է որպէս իր սեփական տանը. ubi bene, ibi patria*), ահա նրա գաղափարը հայրենիքի մասին։ Դաւանում է այն բոլոր կրօնները, որոնց ծանօթ է, ընդունում և խօսում է այն բոլոր ազգերի լեզուները, որոնց հետ մօտիկ յարաբերութիւն ունի։ Ամեն երկիր նա անխտիր համարում է իր հայրենիքը, ամեն լեզու, որի գիտենալուց շահ է սպասում, իր մայրենի լեզուն և ամեն ինչ իր սեփականութիւնը։ Մի անօրինակ, եզակի աշխարհ-քաղաքացի՝ կօսմօպօլիտի մի կատարելատիպ—դա գնչուն է առհասարակ և բօշան ի մասնաւորի։

Հպարտ իր աղքատութեան մէջ, անկախ և ազատասէր առանց որևէ քաջութեան, աշխարհակալ և հարկառու առանց զէնքի և աշխարհասասան պատերազմների. անհոգ, որպէս երկնքի թռչունը, նա հնձում է այնտեղ, ուր չի ցանել. պահանջում և տանում է այն, որ չի տուել. վայելում է այն, որ իր քրտինքով չի վաստակել. «մի այսուհետև հոգայցէք վասն վաղուի, զի վաղիւն վասն իր հոգասցի», դա բօշայի կեանքի բնաբանն է։

Նա վստահ է, որ ամեն տեղ կ՚իշխէ, կը տիրապետէ, այն մտքով, ինչ մտքով որ բօշան է հասկանում իշխել և տիրապետել բառերը։ Նա համոզուած է, որ ամենքը պարտական են իրան հարկ տալու, և հաւատացած է, որ ամենից կը ստանայ իր պահանջը, ուստի և նա ամենուրեք, ամեն տեղ է, ուր բանաւոր արարածներ կան։ Սարերն

*) Ուր լաւ, անդ հայրենիք։

ու ձորերը չեն խափանում նրա ընթացքը, ծովն ու անապատը արգելք չեն դառնում նրա անընդհատ թափառելուն։ Եղանակների յանկարծական փոփոխութիւն, անձրև, արև, ձիւն կամ փոթորիկ երկիւղ չեն ազդում նորան։

Տոկունութեամբ յաղթելով բոլոր բնական արգելքներին և պատահարներին, նա իր թռուցիկ բնակարանով մերթ երևում է հարաւի տօթակէզ անապատներում, մերթ հիւսիսի սառնամանիքում և չքանում է որպէս պատկեր։ Նա չի ճանաչում ոչ սահման, ոչ տարածութիւն և ոչ արգելք, ուստի և թափառում է աշխարհի բոլոր մասերում և բոլոր ազգութիւնների մէջ անխտիր։

Զուր չէ այն աւանդութիւնը, որ մեր բօշաներն իրանց Կայէնի սերունդ են համարում, հաւատալով, թէ երկնային անէծքն է, որ նրանց «երերեալ ու տատանեալ» թափառել է տալիս իրանց նախահօր մեղքը քաւելու համար։ Չունենալով հող և մասնաւոր սեփականութիւն, նա ամբողջ աշխարհի բերքն իր սեփականութիւնն է համարում, ուստի և սեփականատիրոջ վստահութեամբ մտնում է ամեն մի օտարականի տուն, ըստ երևոյթին արդարացի պահանջով, թէև այդ պահանջը քողարկած է լինում աղերսախառն բառերով և արտայայտւում է խնդիրքի ձևով.—Նա իր հարկը, իր ապրուստն է պահանջում. և վա՜յ նրան, ով չի յարգի այն կօսմօպօլիտի խնդիր-պահանջը։ Կարկտի նման կը թափուի բօշայի բերանից նրա անսպառ անէծքը մերժող տան գլխին։ Այդ իր իրաւունքն է համարում նա. նրա զէնքը իր կծու անէծքն է և տգէտ ու սնոտիապաշտ ժողովրդի վրայ ազդում է նա այդ միջոցով։ Բօշան ապրում է իր ճարտար լեզուի և ռամիկներին սարսափեցնող անէծքի շնորհիւ։

Բօշայի ազնիւ յատկութիւններն աւելի աչքի են ընկնում, եթէ նրան համեմատելու լինինք ոչ թէ մի նստակեաց և քիչ թէ շատ քաղաքակիրթ ազգի հետ, այլ իր ցեղակից և համարեա նոյն միջոցներով ապրուստ հայթայթող թուրք գնչուի հետ, որ կրօնով մահմեդական է։ Թէև սոցա կեանքի հանգամանքներն, աւանդական պարապմունքը

միևնոյնն են, թէև ծագումով նոքա պատկանում են միևնոյն ցեղին, բայց վարք ու բարքի մաքրութեամբ և հոգեկան ազնիւ յատկութիւնների առաւելութեամբ հայ բօշան շատ ու շատ բարձր է Թուրք գնչուից:

Մինչ վերջինը պատրաստ է յարմար րոպէին՝ առանց առիթը բաց թողնելու թալանել մտած տունը, գողանալ ամէն մի ձեռն ընկած առարկայ, եթէ նրա գործողութիւնը դիտող չկայ, կամ զբաղեցնել տանտիրոջը հմայութիւններով, որ ընկերակիցը միջոց գտնի մի բան թռցնելու, հայ բօշան երբէք, ոչ մի դիպւածում այդպիսի տորութիւն յանձն չի առնի:

«Զգողանալ»-ը նրա ցեղի աւանդական և սրբազան պատուէրներից մինն է: Երբէք ոչ մի անգամ բօշան չի բռնւած գողութեան մէջ. գոնէ ինչքան հետաքրքրւել ենք, չենք պատահել մէկին, որ մեր ասածի հակառակը պնդէր:

Այդ է պատճառը, որ ոչ մի տեղ արգելւած չէ բօշայի մուտքը. ամէն տանտէր վստահ է նրա հաւատարմութեանը. մինչդեռ, ոչ մի Թուրք գնչու այդպիսի հաւատ չի վայելում և ազատ մուտք համարեա չունի տներում: Նոյնն է և Եւրոպայի գնչուն, որին առհասարակ հաւատ չեն ընծայում.—Նրանք իրանց արդարացնում են մի բնորոշ աւանդութեամբ. Եւրոպայի գնչուների ասելով չորրորդ մեխը Քրիստոսի խաչից՝ գողացել է մի գնչու, ուստի այդ օրից նրանց ներելի է համարւում գողութիւնը, և գնչուներից ով շատ գողութիւն անէ, այնքան էլ շուտ դրախտ կը գնայ:

Թուրք գնչուն աւելի գործնական և խորամանկ է, երբ բանը գալիս է մարդկանցից փող կորզելուն: Նա շատ լաւ գիտէ օգտւել ռամիկ ժողովրդի մնահաւատութիւնից զանազան խաբեբայութիւններով: Գնչու թրքուհիները իրանց «ֆալ»-երով (հմայութիւն) եղունգներին նախշելով, վհկութեամբ կամ անբարոյական կաքաւով, տղրուկի նման ծծում են միամիտ ամբոխի արիւն քրտինքով վաստակածը: Հայ-բօշան բոլորովին չգիտէ գործադրել այդ՝ թէև ստոր բայց դիւրին փող կորզելու միջոցներից և ոչ մինը:

Զզւելի է Թուրք գնչուի թախանձանքը. նրա խմբի

մօտից չի կարելի անցնել առանց նոցա ազահութեանը բաւարարութիւն տալու: Եթէ կառքով ես և կամ ձիով, նոքա արձակում են իրանց մերկանդամ մանչ և աղջիկ երեխաներին, որոնք ամենաշուտ գնացող կառքի յետևից էլ վազում են անընդհատ մի քանի վերստ՝ և մինչև բան չեն ստանում, յետ չեն դառնում: Քարասիրտ անցորդը միայն անբաժին կարող է թողնել այդ ստահակներին, որոնցից ազատւելու ոչ մի հնար չկայ: Հայ բօշաների մէջ այդ սովորութիւնը բոլորովին չկայ. նոցա մանուկները խնդրելու սովորութիւն չունին: Այդ պարագմունքը պատկանում է միմիայն կանանց. այն էլ երբէք նոքա դրամ խնդրելու սովորութիւն չունին. մանաւանդ ճանապարհին: Նոցա խնդիրքը միմիայն տներից է լինում: Ցաճախ Թուրք գնչուները իրանց հետ ման են ածում կապիկներ ժողովրդին ցոյց տալու համար և նոցա պարել տալով, փող են հաւաքում: Այս պարագմունքները անծանօթ են մեր բօշաներին: Նոյն իսկ արտաքին հագուստից կարելի է ճանաչել այս ցեղակից թափառականների բարոյական տարբեր աստիճանները: Թուրք գնչուն կարծես բոլորովին զուրկ է ամօթխածութիւնից և վայելչութեան զգացմունքից. նա շրջում է համարեա մերկ առանց քաշւելու. նա լկտի է և անպարկեշտ: Մինչդեռ բօշան միշտ խուսափում է մերկութիւնից: Նրա հագուստը թէև հնոտի, ծածկւած է բազմագոյնի կարկատաններով, բայց երբէք անվայելուչ և պատառոտած չէք տեսնի. նա սաստիկ բարոյական է:

Սակայն պէտք է աչքի առաջ ունենալ, որ նոցանից մինը կրօնով մահմեդական է և այդ կրօնի շնորհիւ նրա մէջ պիտի երևան գային որոշ յատկանիշներ, որոնք կարող են ծնել միայն այդ կրօնից. մինչ հայ բօշան, իբրև քրիստոնեայ-լուսաւորչական ժողովուրդ, որ մշտապէս ապրում և շփւում է մեզ հետ, շատ բարձր պիտի լինէր նրանից: Բացի այս, թէև նոքա միևնոյն ծագումն ունին, բայց պատկանում են տարբեր ընտանիքների. այնպէս որ իրանց ցեղական լեզուները միմեանց անհասկանալի է և խորշում են միմեանցից:

Գր. Վանցեան

ԵՒՐՈՊԱՑՈՑ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

Օսմանեան կայսրութեան մէջ հայերն են ամենամեծ առուտուր ունեցողները և միևնոյն ժամանակ այդ գործը ամենից աւելի հմտութեամբ առաջ տանողները: Նրանք համբերող են, խնայող ու անխոնջ, նրանք ճանապարհորդում են Ասիայում և Հնդկաստանում, նրանք խանութներ ունին ամեն տեղ: Հայոց մեծ մասը մեքենական արհեստներով են պարապում: Նրանք սեղանաւորներ են, կապալառու և փաշաների ու ուրիշ մեծամեծ անձերի գործակալներ: Նրանց մեղադրում են իբրև թէ ոչ մի միջոց չեն խնայում հարստանալու համար և թէ, երբ կարող են, խաբում են ապրանքների մէջ: Սակայն պէտք է խոստովանել, որ ձգտելով ձեռքից եկածի չափ շատ փող աշխատելու՝ հայերը, շատ սակաւ է պատահում, որ ճիշտ չկատարեն իրանց պարտաւորութիւնները և ճիշտ են կատարում իրանց խոստմունքները:

Հայերը խիստ են իրանց վարք ու բարքի մէջ, ճըշտութեամբ պահպանում են իրանց հաւատի պատուէրները, տգէտ են և նախապաշարւած. նրանց պակասում է միայն կրթութիւն և մի տէրութիւն, որ այնքան ճնշող չլինէր, որքան Տաճկականը և աւելի արդար լինէր, որպէսզի հայերը վերին աստիճանի յարգելի ժողովուրդ դառնային:

Եթէ այս պատկերի վրայ աւելացնենք պարզ ճաշակ, խիստ խնայողութիւն, զարմանալի կանոնաւորութեան ոգի, մեծ ընդունակութիւն առևտրական գործերում՝ մենք նկարագրած կը լինենք հայերի լաւ կողմերը: Թուցէ ոչինչ հակադիր պատկեր ներկայացնելու չունենայինք, եթէ հայերը, անկախ ազգ կազմելով՝ միշտ խաղաղ դրութեան մէջ ապրած լինէին և կառավարւէին սեպհական օրէնքներով. բայց հրէաների պէս, կապւելով իրանց պատմական յիշատակներով աշխարհի սկզբի հետ, նրանց պէս ցրւած լինելով բոլոր Ասիայում՝ նրանք միշտ ենթարկւած են եղել բռնակալ տէրութիւնների, հպատակւած լինելով Տաճկաստանում տարբեր հաւատի տէրերի, որոնք ուրիշ առաջնորդ չեն ունեցել, բայց եթէ իրանց կրքերը, և ոչ ուրիշ օրէնք, բայց եթէ կամքը:

Նրանց շքեղ ապրուստը. հարստութիւնները կարող էին գայթակղել իրանց բռնակալներին, և նրանք դիզում էին գանձեր և ժլատ էին: Մի անզգոյշ խօսք, մի անկեղծ կարծիք կարող էր յաճախ կորցնել նրանց—նրանք լուռ և երեսպաշտ դարձան: Երախտագիտութիւնը դէպի իրանց պատւազուրկ եղած բարերարները կարող էին վնասել իրանց, նրանք երբեմն ապերախտ են դարձւած: Մահմեդական երկրներում չկարողանալով մեծամեծ պաշտօնների ու պատիւների հասնել՝ վաստակելու սէրը նրանց գործունէութեան միակ շարժառիթը դարձաւ: (Օլիվիէ):

Աշխարհիս երեսին եղած հայերի թիւը կարելի է երեք միլիօն համարել: Կիսից աւելին բնակւում են Տաճկաստանում: Շատերը ապրում են Ռուսաստանում, մանաւանդ Կովկասեան նահանգներում. շատ հայեր կան նոյնպէս և Պարսկաստանում... Ամենայն տեղ, ուր գտնւում են նրանք, համարւած են ճարպիկ և բանիմաց մարդիկ և բոլորքեան համաձայն են և խոստովանում են որ նրանք հասարակ խելքի տէր մարդիկ չեն:

Տաճկաստանում նրանք աւելի բարձր են հանդիսացել, քան շրջակայ ազգութիւնները իրանց առևտրական գործունէութեամբ և այն ընդունակութիւններով, որ ունին դէպի մեքենական արհեստները: Գլխաւոր վաճառականները հայերն են, ինչպէս և բոլոր սեղանաւորները, և դուք կարող էք համոզւած լինել որ կը գտնէք նրանց ամեն մի ձեռնարկութեան և գործի պարագլուխ, որ մասնագիտական պատրաստութիւն է պահանջում:

Նրանք տաճկի հաստատամտութիւնն ունին՝ առանց նրա անշարժութեան, նրանք յոյնի նուրբ ու թափանցիկ միտքն ունին, առանց նրա թեթևամտութեան. միով բանիւ նրանք արևելքի անգլօ-սաքսոնացիքն են: (Դիլլոն).

Ասում են, որ հայերը արևելքում նոյնն են, ինչ որ

նուիցերացիք Արևմուտքում. աւելի արդար կը լինէր հոլլանդացիների հետ համեմատել նրանց. Նրանց մէջ նկատւում է նոյն յարատև, բայց հանգիստ գործունէութիւնը, նոյն ձգտումը՝ հարստութիւն ձեռք բերելու, թէև դա մի փոքր բան լինէր, նոյն արհամարհանքը դէպի արտաքին փայլը։ Նրանց բոլոր առաջադիմութիւնները, որ կատարւում են անդորրութեան մէջ, անյայտ են Եւրոպային, ուր չեն համնում Նրանց գրքերը և պարբերական հրատարակութիւնները։ (Դիւլորիէ)։

Բոլոր նշաններից երևում է որ հէնց այս ազգը աստուածային տեսչութեամբ ընտրուած է իբրև առաջնորդ՝ քրիստոնէութիւնը և քաղաքակրթութիւնը տարածելու արևելքում։ Տարակոյս չկայ, որ մեծ պատմական համաշխարհական նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ այս քրիստոնեայ ժողովուրդը ցրուած է մի մեծ տարածութեան վրայ, Մարոկկոյից սկսած մինչև Չինաստան և միևնոյն ժամանակ նրա բոլոր անդամները կապուած են միմեանց հետ կրօնական կապերով։ (Հաքստհաուզէն)։

«Փորձ»

Ա. Վ. ԵԼԻՍԷԵՎԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

(կարդացւած Ս. Պետերբուրգի կայսերական Աշխարհագրական Ընկերութեան նիստում *1887* թ. մարտի *4*-ին)

Տաճիկներից յետոյ մենք դասում ենք հայերին, թէպէտ սրանք աւելի տարածուած լինելով Փոքր-Ասիայում՝ գուցէ աւելի բազմաթիւ լինեն, քան թէ միւս բոլոր ազգերը այս ազգագրական տարրերով հարուստ աշխարհում։ Հայը, որպէս և հելլենացին կենդանի հանգոյց է կազմել արևմուտքի և արևելքի մէջ մարդկութեան կեանքի երկու նշանաւոր վայրկեաններում, երբ արևմուտքի քաղաքակրթութիւնը թափանցում է մինչև արևելքի սիրտը՝ նրան դարերի նիրհից զարթեցնելու համար։ Հայոց դերը այժմ աւելի պատուաւոր է, որովհետև նրանք տարածում են քաղաքակրթութիւնը մինչև այն լեռները, որոնք հիւսիսից ներփակում են Միջագետքը։ Բացի այդ նշանաւոր պատճառից, հայերը արժանի են մեր առանձին ուշադրութեանը ոչ թէ միայն մարդաբանական, այլ և կենսաբանական և պատմական տեսակէտներից։ Մի ազգութիւն, որ կարողացել է պաշտպանել իր անհատականութիւնը Նեբրովթի և Շամիրամի ժամանակներից մինչև մեր օրերը, պահպանելով մասամբ և իր տիպը, սովորութիւնները, լեզուն և կրօնը՝ չնայելով որ ոչ մի ազգ, նոյն իսկ հրէաները, չի ենթարկւել այնքան տառապանքների,—պատմութեան մէջ երբէք չպէտք է մոռացւի։

Զարմանք է յարուցանում և գոյութեան կռւի տեսակէտից ոյժերի յարատևութիւնը և տոկունութիւնը այս փոքր ազգի, որ այնքան դարեր հզօր ազգերի մէջ սեպաձև մխւած է։ Կործանւեցան Մեծ-Ասորեստանը և Բաբելոնը, պարսից ահագին պետութիւնը, պարթևաց, մակեդոնացոց հռովմայեցոց, արաբացոց տէրութիւնները. մեծամեծ ազգեր բնաջինջ անհետացան աշխարհիս երեսից, իսկ հայոց ազգը ոչ միայն կենդանի մնաց, այլ և լի կեանքով և յուսով տոչորւում է գիտութեան ծարաւով և սիրով դէպի աշխատանքը։ Մինչև այժմ խորհում է նա թօթափել հազարամեայ լուծը, զարգացնում է իր լեզուն, ուսանում է գիտութիւններ, առաջ մղում ինքն իրան և արդէն շատ բանի հասել է։

Այս ազգը մի աւելի խորին հանելուկ է պատմութեան համար, քան թէ հրէաներն ու գնչուները։ Այս երկու աշխարհաքաղաքացիները համարեա մշտական թափառականներ են, զուրկ հայրենիքից, որոնց համար ubi bene, ibi patria. իսկ երկրագործ հայը չէ թողել իր Հայաստանը, Վանայ ծովակի ափից չէ գաղթել և Մասիսի ստորոտից չէ հեռացել։ Հայ երկրագործի սերտ կապը իր մայրենի հողի հետ՝ կենդանի հերքումն է այն անձանց սխալի, որոնք դասում են նրան հրէաների հետ մի կարգում՝ համարելով հայերին միայն վաճառական ժողովուրդ։ Ճշմարիտ է, որ ճակատագիրը նշանակելով հային, ինչպէս և յոյնին, միջ-

նորդական կապ արևմուտքի և արևելքի միջև, շնորհել է նրանց հաւասար յատկութիւններ՝ ճարպիկութիւն, հնարագիտութիւն, յայտնի մտքերի նրբութիւն, բնաւորութեան տոկունութիւն. որոնք թէ հայոց և թէ յունաց ընդհանուր յատկութիւններն են։ Բայց այս ամենը բաւական չէ՝ բացատրելու համար հանելուկը հայերի գոյութեան, այն հայերի, որոնց հետ Եւրոպան սկսում է փոքր առ փոքր ծանօթանալ, և տակաւին Բերլինի վեհաժողովում նա հրաժարւում էր իբրև ազգութիւն ճանաչել հայերին։

Չնայելով սրանց բազմադարեան պատմութեանը, հազարաւոր արկածներին, որոնց ենթարկւել է այս ազգը, հայոց տիպը ներկայացնում է այնուամենայնիւ աւելի հաստատ տոկունութիւն, քան թէ Փոքր-Ասիայի ազգերի որ և է ուրիշ տիպ, այնպէս որ ամենամաքուր արիւն պարունակող ազգերի թւում կարելի է դասել և՛ հայերին, որոնք միևնոյն ժամանակ հանդիսանում են և՛ տիպի մաքրութիւնը պահպանող՝ այն չափով, ինչ չափով որ նրանք իրանց հայրերից ու պապերից ժառանգել են։

«ՄՇԱԿ». Ս. Ց.

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Վասակի վերջին օրերը

Մի հանդիսաւոր օր պարսից թագաւոր Յազկերտ հրամայեց ընթրիքի հրաւիրել բոլոր մեծամեծներին և երևելի իշխաններին։ Հրաւիրւած էր և Վասակը։ Նա հագաւ այն պատւական զգեստը, որ ստացել էր թագաւորից. գլխին դրեց ոսկէ խոյրը (գլխարկը), մէջքին կապեց մարգարիտներով և ակնեղէններով զարդարւած ոսկէ գօտին, ականջներից կախեց օղերը, վզից՝ մանեակը, ուսերին գցեց սամոյրը, և բոլոր ունեցած պատւանշանները հագին՝ գնաց պալատ։ Արքունիքի բակում շղթայակապ նստած էին մի քանի հայ իշխաններ և քահանաներ։ Երբ նրանք տեսան զուգւած և զարդարւած Վասակին՝ սկսեցին ծաղրել նրան

և ասել. «Ո՛վ անխելք վաճառական, պատիւդ վաճառեցիր մի քանի կանացի զարդարանքների. բայց իմացիր, որ շատ շուտ կը զրկւես նրանցից»։ Անցնելով դրանց առաջով՝ Վասակը մտաւ ներսի դահլիճը, որ մեծ իշխանների հրապարակն էր, և նստեց։ Այս միջոցին դուրս է գալիս արքունիքից թագաւորի սենեակապետը, մօտենում է նրան և ասում. «Թագաւորն ուղարկեց ինձ քեզանից հարցնելու, թէ ո՞ր արդար վաստակներիդ համար ես ստացել այդ պատւանշաններդ»։ Յիշեցրեց այն բոլոր չարագործութիւնները, որոնց համար դատապարտել էին նրան. ասաց, որ նա ապօրինի կերպով տիրեց Սիւնեաց աշխարհին, նենգութեամբ և քսութեամբ սպանել տւեց իր հօրեղբայր Վաղինակին և ինքը ստացաւ նրա իշխանութիւնը։ Դատապարտեց նրան և այլ շատ բաների համար, որոնց վկայ էին բոլոր մեծամեծները։ Վասակը պապանձւեց և իրան արդարացնող ոչ մի բան չկարողացաւ ասել։ Այնուհետև մահւան վճիռ կարդացին նրա գլխին։ Դահճապետն եկաւ, հանեց նրանից այն բոլոր պատւանշանները, որ ստացել էր թագաւորից, և հագցրեց մահապարտի զգեստ։ Կապեցին նրա ձեռներն ու ոտները, կանացաբար նստեցրին էգ ձի և տարան ձգեցին այն բանտը, ուր գտնւում էին բոլոր մահապարտները։ Ամեն օր դուրս էին բերում նրան հրապարակ, բոլոր զօրքի առաջ խայտառակում էին և ծաղրում։ Կողոպտեցին, հանեցին նրանից ամեն բան, որ ունէր իր հետ, և այնպիսի ծայրայեղ աղքատութեան մէջ էին պահում, որ իր ծառաները հաց էին մուրում և կերակրում նրան։ Նա տւեց իր բոլոր կալւածները, նոյն իսկ կանանց զարդերը արքունիքին նա տուժեց, բայց էլի չըկարողացաւ հատուցանել այն բոլոր պարտքերը, որ դրել էին նրա վրայ։

Այսպէս անարգւեց Վասակը ամեն կողմից. բանտումը նա ընկաւ ծանր ցաւերի մէջ։ Մահւան հոտ փչեց նրա մարմնից, նոյն իսկ ծառաները փախան նրանից։ Միայն լեզուն էր կենդանի նրա բերանում, բայց խոստովանութիւն չէր դուրս գալիս նրա շրթունքներից։ Նա ճաշակեց

ամենադառն մահը. իր բարեկամներն անգամ ոտի տակ տուին նրան, իսկ թշնամիները սաստիկ հարուածներով էլ չկշտացան։ Եւ չգտնուեց գերեզմանի տեղ այն մարդու համար, որ կամենում էր մատնութեամբ Հայոց աշխարհի թագաւոր լինել։ Նա չէր թողել իր կեանքում ոչ մի չարութիւն, որ արած չլինէր, բայց և չմնաց ոչ մի չարչարանք, որ չանցնէր նրա գլխով մահուան ժամանակ։ Շան պէս սատակեցաւ և էշի նման քաշուեցաւ։

Եղիշէ

Ծառի ճըճին ծառէն է,
Չար թշնամին տանէն է.
Վա՜յ այն տոհմին, այն ազգին,
Որոյ մատնիչն ազգէն է։

Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ (1837—1889)

Ստեփաննոս Պալասանեանը ծնուել է Մոլդաւիա, Բոտուշան քաղաքում 1837-ին, ուր և ստացել է իր սկզբնական ուսումը։ 1852-ին գնում է Պարիզ և մտնում է Մուրադեան վարժարանը. 1858-ին աւարտելով ուսումը, հրաւիրւում է ուսուցիչ Թէոդոսիա՝ Խալիպեան դպրոցը։ Հէնց այդ ժամանակներն էլ սկսում է գրել «Մասեաց Աղաւնի» հանդէսում։ 1863-ին գալիս է Թիֆլիզ Ներսիսեան դպրոց իբրև ուսուցիչ։

Արարատեան լեզուի համն ու հոտը Պալասանեանն առնում է Խ. Աբովեանի անմահ «Վէրք Հայաստանի»-ից և ապա դառնում է մեր աշխարհիկ լեզուի մշակողներից մինը՝ հրատարակելով աշխարհաբարի քերականութիւնը։ 1881-ին Պալասանեան հրաւիրւում է Գէորգեան ճեմարան որպէս ուսուցիչ, ուր և 1883-ին տօնւում է նրա 25-ամեայ ուսուցչական գրական գործունէութիւնը։ 1889-ին կնքում է նա իր մահկանացուն, թաղուելով Էջմիածին, Գայիանէի վանքի գաւթում։

Պալասանեանն աշխատակցել է իր ժամանակակից

գրեթէ բոլոր թերթերում, բայց նրա լաւագոյն քննադատական և բանասիրական յօդուածները լոյս են տեսել «Փորձ» ամսաթերթում։ Պալասանեանի գլուխ գործոցն է «Հայոց պատմութիւնը», որ տասնեակ տարիների քրտնաջան աշխատութեան արդիւնք լինելով, իր մահից յետոյ միայն հրատարակուեց և մի քանի տպագրութեամբ հազարներով ցրուել է ժողովրդի բոլոր խաւերում։

Իսահակ Ցարութինեան

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Հայերը ի բնէ ժիր և աշխատասէր ժողովուրդ լինելով՝ շատ վաղ ժամանակներից իրանց տուին երկրագործութեան և անասնապահութեան։ Հայաստանի բերրի դաշտերն ու ճոխ արօտատեղիքը այն բնական ձգտողութեան զօրաւոր պատճառներն են։ Բացի սրանից՝ զրադաշտական վարդապետութիւնը երկրի մշակութիւնը մարդուս հարկաւոր առաքինութիւններից մինն էր համարում։ Հայաստանի արգաւանդ դաշտերը տարէ ցտարի առատութեամբ տալիս էին ցորեն, գարի, բրինձ, հովիտներն էլ, որոնք լի էին արօտներով, սնուցանում էին անհամար ընտանի կենդանիներ՝ ձի, ջորի, գոմէշ, ոչխար, այծ, էշ ու կով։ Բացի սրանից՝ իւրաքանչիւր նահանգ կամ գաւառ կլիմայի և դրութեան համեմատ՝ տեսակ տեսակ բերքեր ու հանքեր էր տալիս. հիւսիսային արևմտեան կողմերը տալիս էին աղ և բուրեղ, Աղձնիքը և Տուրուբերանը ունէին պղնձի, երկաթի և կապարի հանքեր, Արարատը և Սպերը ոսկի, Փայտակարանի կողմերը բամբակ, Տուրուբերանը՝ գազպէն ու մեղր, Գողթան գաւառը՝ անուշահոտ ու առատ գինի, Տայքը՝ թուզ, նուռ, սերկևիլ ու նուշ. Ուտի նահանգը՝ ձիթենի, Այրարատը՝ որդան կարմիր ներկը. Երասխի ափերի և Սիւնեաց Փայտակարան նահանգների անտառները տալիս էին ամեն տեսակ ազնիւ փայտեր, ո-

րոնց գործ էին ածում պալատների շինութեան համար։

Այսպիսի բնական ու արուեստական բերքերով լի երկիրը, ժողովրդեան պիտոյքը լցնելուց յետոյ, բնականաբար ընդարձակ վաճառականութեան ասպարէզ պէտք է բանար հայոց համար։ Եւ յիրաւի. հայերը նշանաւոր էին իրանց վաճառականութեամբ ամենահին ժամանակներում։ Հայաստանը թէև ցամաք երկիր է, բայց իր շուրջը երեք ծով ունի և մէջը չորս երևելի գետ, որոնց միջնորդութեամբ միանում է ծովերի հետ։ Ճորոխ գետով կապւում է Սև ծովի հետ, Երասխ գետով միանում է Կասպից ծովի հետ, Եփրատ ու Տիգրիս գետերով միանում է մէկ կողմից ովկիանոսի հետ, իսկ Եփրատը Սամոսատի և Մարաշի կողմից մօտենում է Միջերկրական ծովին։ Այսպիսի դիրք ունենալով՝ Հայաստանը դիւրութեամբ կարող էր վաճառականական յարաբերութիւններ ունենալ նոյն ժամանակի բոլոր ծանօթ ազգերի հետ։

Բայց ծովային վաճառականութիւնից առաջ սկսեց հայոց մէջ ցամաքայինը. այս վերջինն էլ սկզբումը դրացի ազգերի հետ էր լինում, որոնց հետ հայերը փոխանակում էին իրանց բերքերը։ Յետոյ կամաց կամաց սկսեց հեռաւոր երկրներ գնալ և աւազակների յարձակմունքից ազատ մնալու համար՝ կարաւաններով, այսինքն՝ բազմութեամբ էին ճանապարհորդում ասիական սովորութեամբ, մինչև որ սկսան գետերի ու ծովերի վրայ գնալ։ Այնուհետև ցամաքային վաճառականութիւնը, որ մեծ նեղութիւններով էր լինում, երկրորդական տեղն է բռնում և ծովայինը ընդարձակութիւն ստանում։ Արևելքում հայ վաճառականները Երասխ և Կուր գետերով գնում էին Կասպից ծովը, այնտեղից էլ Եաքսարտէս, և Ոքսոս գետերով բագտրիացոց, սոգդիացոց, պարթևաց և հնդկաց երկրներն էին գնում և այնտեղից իրանց ապրանքները բերելով Սև ծովով Յունաստան և մինչև Իտալիա էին ուղարկում։ Արևմտեան հարաւում կարաւաններով Կապադովկիայից Փիւնիկէ էին հասցնում հայ երկրի բերքերը։ Տիւրոսի և Տարսոնի վաճառանոցներում վաճառւում էին հայոց երկրի

բազմաթիւ ձիերն ու ջորիները, որոնց վրայ Սուրբ-Գիրքն էլ յիշատակութիւն է անում, և յետոյ տարածւում էին դրացի երկրները, մանաւանդ Պաղեստին։ Նրանց տեղ բերւում էին Հայաստանի վաճառանոցները կամ, ինչպէս որ հները ասում էին, «շահաստան քաղաքները» ոսկի, արծաթ, գոհարեղէն, ազնիւ կտաւեղէններ ու ներկեր, ցորեն, իւղ ու մեղր։

Աւելի յաճախ երթևեկութիւն ունէին հայերը Նինուէ ու Բաբելոն, ուր Եփրատ ու Տիգրիս գետերի միջնորդութեամբ մեր վաճառականները տանում էին Հայաստանի գինին, մրգեղէնները, փայտը, տախտակը և ուրիշ վաճառքները, ու նրանց տեղ բերում էին Բաբելոնի գոյնզգոյն թանկագին կտաւեղէնները, կերպասները, գորգերը, որոնց մասին հարևանցի ակնարկում է Մ. Խորենացին։ Հերոդոտոսը այսպէս է նկարագրում Բաբելոն գնացող հայ նաւերի կազմութիւնը. «Հայաստանում, ասում է նա, նաւերի կողերը ուռիներից են շինում և յետոյ դրսից մորթով պատում են. նաւի ոչ առաջին կողմը յայտնի է, ոչ յետինը սուր, այլ վահանի ձևով է բոլոր բոլորակ»։ Այսպիսի նաւերի մէջ ապրանք բարձելով՝ մանաւանդ գինի, երկու մարդ թի քաշելով, ասում է, տանում էին գետի վրայ։ Յետոյ աւելացնում է. «Այս նաւերի մէջ մեծեր էլ կան, փոքրեր էլ. ամենից մեծերը մինչև 1000 տաղանդ բեռն էին տանում։ Իւրաքանչիւր նաւ ունի իր մէջ մէկ էշ, մեծերը աւելի շատ։ Երբ որ նաւավարները Բաբելոն են հասնում և բեռը թափում, փայտն ու յարդը ծախում են, իսկ մորթերը էշերի վրայ բարձելով՝ Հայաստան են քշում, որովհետև անկարելի է գետի ընթացքին հակառակ գնալ, այնքան սրընթաց է. հէնց այս պատճառով նաւերը փայտից չեն շինում, այլ մորթից»։

Ս. Պալասանեան

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Կառավարութեան սկիզբը խոր հնութեան մէջ ծածկւած է։ Իւրաքանչիւր ժողովուրդ, երբ միասին հաւաք-

ւում են՝ ընկերութեամբ կեանք վարելու համար, պէտք է կարգաւորեալ կառավարութիւն ունենայ որոշ օրէնքներով։

Բայց կառավարութեան մէկ կամ միւս ձևը կախուած է երկրի դրութիւնից, ժողովրդական կեանքի հանգամանքներից և շրջակայ ազգերի բնաւորութիւնից։ Պատմութիւնից տեսնում ենք որ ժայռոտ, աւազոտ, քարքարոտ տեղերում և ծովային ափերի մօտ բնակող ժողովուրդները, իրանց չոր ու ցամաք երկրի պատճառով, շուտով ստիպւում են դաշտային երկրները ասպատակել՝ կողոպուտ անելու դիտաւորութեամբ։ Այսպիսի ժողովուրդների մէջ բնականաբար գերագոյն իշխանութիւնը անցնում է հէնց սկզբից այն գերդաստանի ձեռքը, որից դուրս են գալիս քաջասիրտ և յաջողակ առաջնորդներ. կազմւում է ժառանգական հարստութիւն. և միապետական իշխանութիւնը անզգալի կերպով հաստատութիւն է ստանում։ Ուրիշ բան է պատահում հովուական ու երկրագործական ժողովուրդների մէջ։ Այստեղ առանձին գերդաստաններ են միանում և ցեղական ընկերութիւններ են կազմում առանձին ցեղապետների պաշտպանութեան տակ, որոնց պարտքն է հովուել իրանց ցեղը և պաշտպանել նրա սեփականութիւնը և աշխատանքի պտուղը անիրաւութեան դէմ։ Այստեղ արիւնակից գերդաստաններ կամաց-կամաց ցեղական ընկերութիւններ կազմելով՝ գերդաստանի հօր իրաւունքներն էլ անցնում են ցեղապետին և այսպիսով կազմւում է կալւածական կամ տանուտիրական կառավարութիւնը, որ հայոց էլ իբրև հովուական ու երկրագործական ժողովրդի, սեպհական էր սկզբնական ժամանակում։ Մեր առաջին նահապետները, մինչև Արամը, ժողովրդեան համար ոչ այլ ինչ էին, բայց եթէ հայրեր, որոնք խնամում էին իրանց ցեղը այնպէս, ինչպէս որ գերդաստանի հայրը հոգում է իր որդւոց պիտոյքը, կամ ինչպէս այժմեան գիւղական կեանքում տանուտէրը կամ ծերը կառավարում է իր գիւղը։ Զանազանութիւնը միայն նրանումն էր, որ մեր նահապետների մէջ միշտ կար մէկը, որ ժառանգութեամբ ստանում էր ազգի ընդհանուր կառա-

վարութիւնը և որի հովանաւորութեան տակ գտնւում էին միւս բոլոր ցեղապետները։ Այս առաւելութիւնը ունէին Հայկից յետոյ ուղիղ գծով յաջորդող նահապետները, որոնց տանուտիրական իրաւունքների ընդհանրութիւնը հիմնւում էր ժառանգական սեպհականութեան վրայ, որով մէկը, իբրև գլխաւոր նահապետ, իր ուզածին պէս կամ հին սովորութեան համեմատ՝ բաժանում էր կալւածները արիւնակից ցեղերին։ Բայց այս գլխաւորութիւնը այնպէս անզգալի էր, որ երբեմն գլխաւոր տանուտէր նահապետը իր հայրերից իրան ժառանգութեամբ ընկած երկիրը թողնում և ուրիշ տեղեր էր գաղթում։ Այսպէս՝ Ամասիան թողնում է Արմաւիրը և գնում է Մասիսի ստորոտը գաղթում, Գեղամը գաղթում է Սևանայ լճի ափերը և այն կողմերը իրան սեպհականում։ Սրանից երևում է, որ գլխաւոր նահապետի իրաւունքը շատ չէր զանազանւում երկրորդական նահապետների կամ ցեղապետների իրաւունքից։

Այս տանուտիրական խաղաղ ու պարզ կառավարութիւնը տևեց հայոց մէջ մինչև այն ժամանակ, երբ Հայկի սերունդը սկսեց շփւել դրացի ազգերի հետ, որոնց յարձակմունքներից պաշտպանւելու համար՝ հարկ էր բոլոր ցեղերը միացնել և մէկ մարմին կազմել նրանցից՝ մէկ անձի հրամանի և իրաւունքների տակ։ Այս բանը կատարեց Արամը, որ միապետական իշխանութեան սկիզբը դրեց Հայաստանում։ Արամի հաստատած միապետութիւնը ժողովրդական կեանքի հանգամանքներից բղխելով և ոչ իշխանական փառասիրութիւնից՝ արդիւնաւոր հետևանքներ կ'ունենար հայոց համար, եթէ Ասորեստանի տիրապետութիւնը չընդհատէր այդ բնական ու պարզ կառավարութիւնը։ Նինուէի թագաւորները ուրիշ նահանգների պէս, Հայաստանն էլ կառավարեցին մինչև ութերորդ դարի սկիզբը և նրանից յետոյ էլ մինչև Պարոյր՝ ընիկ կուսակալների ձեռով, որոնց գլխաւոր պարտքն էր հարկ հաւաքել՝ մէկ մասը թագաւորութեան և միւսը իրանց պիտոյքի համար։ Նրանք իրանց ձեռքի տակ ունէին բազմաթիւ գա-

տաւորներ, որոնք ցրուած էին երկրի բոլոր նահանգներում և փոքրիկ գաւառներում։ Այս վերջինները ունէին իրանց տեղական կառավարիչները, որոնք առանձին խորհրդի միջնորդութեամբ հոգում էին ժողովրդի պիտոյքը։

Տարակոյս չկայ որ այս վարչական ձևը առանց ազդեցութեան չմնաց հայոց կառավարութեան վրայ Պարոյրի և նրա յաջորդների ժամանակ, որոնց կառավարութեան եղանակի վրայ թէև ոչինչ չենք իմանում, այնուամենայնիւ հաւանական է որ սրանց կամ աւելի ճիշտ՝ Տիգրանի ժամանակ, մտած լինին հայոց մէջ առաջին կարգաւորեալ կառավարութեան ձևերը՝ բարեկարգ դատաւորներով, գլխաւոր օրէնքներով և դաշնագրութիւններով և այլն, որոնք պարսից և յունաց լեզուով էին գրւում։

Ս. Պալասանեան

ՄԵՀՐՈՒԺԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ա

Մեհրուժանը Արծրունեաց հայ իշխանական ցեղից էր։ Նա շատ փառասէր էր և մտածում էր մի օր հայոց թագաւոր լինել։

Երբ մեռաւ Արշակ երկրորդը՝ Մեհրուժանը օգտւեց այդ դէպքից, դաւաճանեց իր հայրենիքին, ուրացաւ իր հաւատքը, անցաւ պարսից կողմը և դարձաւ կրակապաշտ։ Պարսից թագաւոր Շապուհը, որ վաղուց ուզում էր վերջացնել Հայաստանում քրիստոնէութիւնը, շատ է ուրախանում Մեհրուժանի հաւատուրացութեանը։ Նա վճռում է նրա օգնութեամբ նւաճել Հայաստանը և հայերին կրակապաշտ դարձնել։ Մատնիչ նախարարին աւելի գրաւելու համար՝ նա ընծայում է նրան շատ գիւղեր, կնութեան է տալիս իր քոյր Որմիզդուխտին և խոստանում է տալ նրան հայոց թագաւորութիւնը՝ եթէ միայն հնազանդեցնէ իրան հայ իշխաններին և մտցնէ իր մայրենի երկրում կրակապաշտութիւնը։

Փառասէր Մեհրուժանը ուրախութեամբ ընդունում է

Շապուհի առաջարկութիւնը և ստանալով նրանից բազմաթիւ զօրք՝ արշաւանք է գործում Հայաստան։ Նա աւերում է շատ գիւղեր և քաղաքներ, առնում է մի քանի բերդեր, գերում է հայ իշխանների կանանց, հաւատացած լինելով, որ դրանով կը ստիպէ նրանց ամուսիններին անձնատուր լինել իրան։ Բացի այս՝ նա շղթայակապ ուղարկում է Պարսկաստան հայ եպիսկոպոսներին և քահանաներին, որ ժողովուրդը մնայ առանց հովիւների. այրում է ձեռն ընկած գրքերը, արգելում է հայերէն խօսել և ստիպում է բոլորին պարսկերէն սովորել։

Վշտացած Ներսէս կաթողիկոսը չդիմացաւ Մեհրուժանի այս չարագործութիւններին. նա ուզեց դրանց առաջն առնել և դիմեց յունաց կայսեր օգնութեան։ Քրիստոնեայ կայսրը խղճաց հայերին, տւեց Յունաստանում գտնւող թագաժառանգ Պապին՝ Արշակի որդուն, օգնականութեան զօրք և ուղարկեց նրան Հայաստան։

Շքով և հանդիսով եկաւ Պապը հայրենի երկիրը, որ անհամբերութեամբ սպասում էր իր թագաւորին. խորը խոցւեց նրա սիրտը՝ երբ նա տեսաւ, որ ամենքը սգի մէջ են, երկիրը աւերակ է դարձել և նենգաւոր Մեհրուժանը տիրացել է իր թագաւորութեանը։ Ունենալով պատրաստի զօրք՝ նա յարձակւեց դաւաճան իշխանի վրայ և կարճ միջոցում քշեց նրան իր երկրից։

Զարասիրտ Մեհրուժանը ուզեց իր պարտութեան վրէժն առնել հայ նախարարներից. նա հրամայեց բերդապահներին՝ պարսպներից կախել գերած կանանց և թողնել նրանց դիակները գիշակեր թռչուններին, ապա ինքը վախկոտ նապաստակի նման փախաւ Պարսկաստան։

Բ

Պարսից արքայ Շապուհը սաստիկ չարանում է իր սկսած գործի անաջողութեան համար. նա հաւաքում է անթիւ զօրք և նոյն Մեհրուժանի առաջնորդութեամբ ուղարկում է Հայաստան։ Յունաց կայսրը, իմանալով այս մասին՝ անօգնական չէ թողնում Պապ թագաւորին և տա-

լիս է նրան ընտիր զօրք՝ պաշտպանելու անօրէն թշնամիների դէմ։ Պատերազմը Ջիրաւ դաշտումն էր։ Երկու կողմի զօրքերը վստահութեամբ ճակատ ճակատի են տալիս։ Սկսւում է կատաղի կռիւը. զէնքերի շաչիւնը, զինւորների աղաղակները դղրդեցնում են դաշտը։ Հայ իշխանների մանուկները իրանց կամքով նոյնպէս վազում են կռւի դաշտը, առաջնորդութեամբ Սմբատ Բագրատունու, որ ասպետական ցեղից էր *). Նրանք խրոխտ կերպով ձի նստած, վահաններով զինաւորւած՝ յարձակւում են իրանց հակառակորդ պարսիկ մանուկների վրայ և նիզակահար անելով՝ գետին են գլորում նրանց դիակները։

Այս արիւնահեղ տեսարանին վկայ էր Մեծն Ներսէսը, որ նստած Նպատ լեռան գագաթի վրայ, ձեռքերն երկինք ամբարձած՝ խնդրում էր Ամենակարողի պաշտպանութիւնը քրիստոնեայ զինւորներին։ Ահեղ էր պատերազմը. զինւորները կռւում էին անասելիք աջութեամբ, կարծես ամեն մէկը ուզում էր զարդարել իր գլուխը յաղթութեան պսակով։ Յանկարծ, կռւի ամենատաք րոպէին, երկինքը ծածկւում է ամպերով, մութ է պատում չորս կողմը... Բարձրանում է սաստիկ հողմ, որ փչում էր ուղղակի պարսից դէմ։ Ջայն, աղաղակ է լսւում թշնամեաց գնդերի մէջ, պարսից զինւորները շփոթւում են և յուսահատւած սկսում են փախչել։ Բայց Մեհրուժանը յետ է մնում փախուկ պարսիկներից. նրա ձին վիրաւորւել էր։ Սմբատ քաջը շտապով վրայ է հասնում, կալանաւորում է նրան և լաւ է դատում՝ չտանել նրան հայոց բանակը, որովհետև երկիւղ էր կրում, որ Մեծն Ներսէսը կարող էր իր մեծահոգութեամբ խղճալ դաւաճանին և ազատել նրան մահից։ Այս պատճառով նա օգտւում է դէպքից, որ նոյն տեղում կրակի շուրջը նստած են եղել մի խումբ մարդիկ. վերցնում է նրանցից հրաշէկ շամփուրը և պսակաձև բոլորելով նրան կալանաւոր մատնիչի գլխով՝ ասում է. «Պսակում եմ քեզ,

*) Այս ցեղի իշխանները ասպետ էին կոչւում այն պատճառով, որ նրանք էին թագ դնում հայոց թագաւորների գլխին։

Մեհրուժան, որովհետև դու կամենում էիր լինել հայոց թագաւոր. իբրև ասպետ դնում եմ այս թագը քո գլխին»։ Զգիմացաւ այս տանջանքին Մեհրուժանը. նա պատժւեց իր անթիւ չարագործութիւնների համար այս խայտառակ մահով։

Կ. Կ.

ՎԵՐՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վերջին արևելեան պատերազմը օսմանեան տէրութեան անխոհեմութիւնից ծագեց։ Բոսնիայի քրիստոնեայ ժողովուրդները տուրքի վճարման համար մեծ նեղութիւններ կրելով՝ ապստամբեցին օսմանեան տէրութեան դէմ 1875 թւին։ Թիւրքերը այս մեծ ապստամբութեանը վերջ տալու համար՝ սուլթան Ազիզին գահազուրկ անելով՝ նրա եղբօրորդի Մուրադին կայսր նստեցրին և Բոսնիայի ապստամբներին օգնող չերնոգորիացոց դէմ պատերազմ սկսեցին։ 1876-ին բուլղարներն էլ գլուխ բարձրացրին սուլթանի իշխանութեան դէմ։ Թիւրքերը ամենքին յաղթեցին և դըրեթէ Չերնոգորիայի մայրաքաղաքը առնելու վրայ էին, երբ գործը ուրիշ կերպարանք առացաւ։ Եւրոպացիք բուլղարների մէջ բաշիբօզուկների (անկանոն զօրքերի) և չէրքէզների գործած անգթութիւններն իմանալով՝ սաստիկ գայրացան և Բ. Դռնից պահանջեցին որ երկրի կառավարութիւնը բարեկարգելով՝ քրիստոնեայ ժողովուրդների չարչարանքներին վերջ տայ։ Սուլթանը նախ ընդունեց եւրոպական տէրութեանց առաջարկութիւնը, բայց որովհետև նրանք կամենում էին որ բարեկարգութիւնները իրանց ձեռքով կատարւեն՝ մերժեց նրանց միջամտութիւնը։

Բոլոր օսմանցիք միացան պատերազմելու Ռուսաստանի դէմ, որ Եւրոպայի անունով գնաց բռնի ընդունել տալու տէրութիւնների առաջարկութիւնը։ Այդ միջոցին սուլթան Մուրադը տկարութեան պատճառով գահից հրաժարւեց, և իր տեղը իր եղբայրը՝ սուլթան Համիդը նստե-

ով պատերազմ հրատարակեց։ Թիւրքերը թէ Եւրոպայի և թէ Հայաստանի մէջ ռուսաց դէմ ինն ամիս շարունակ կատաղի պատերազմ տալուց յետոյ յաղթուեցին։ Ռուսները ռումինացոց, չեռնոգորիացոց, սերբիացոց և բուլղարների օգնութեամբ նրանց ամուր քաղաքները յարձակմամբ առան, և վերջապէս Ասիայի կողմից Կարսն, իսկ Կ. Պոլիս առաջ հասան։ Կ. Պոլսի մերձակայ Այա-Ստեֆանոյ գիւղի մէջ, Դադեան գերդաստանի ամարանոցում կնքուեց ռուսաց և տաճկաց առաջին դաշնադրութիւնը, որի 16-դ յօդուածը հետևեալն է. «Որովհետև ռուսաց զօրքերը Հայաստանի մէջ գրաւած երկրներից քաշուելուց յետոյ՝ յիշեալ երկրներում կարող են տեղի ունենալ զանազան կռիւներ ու խառնակութիւններ, որոնք երկու տէրութիւնների միջև հաստատուած լաւ յարաբերութիւնները կարող են խանգարել, Բ. Դուռը յանձն է առնում անյապաղ իրագործել այն բարենորոգումները, որ տեղական պիտոյքները պահանջում են հայոց բնակած նահանգների մէջ, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը քրդերի և չէրքէզների դէմ»։ Այս յօդուածը դաշնադրութեան մէջ մտցնելու համար շատ աշխատանք կրեցին Կ. Պոլսի հայոց մի քանի նշանաւոր անձինք և ամենից աւելի Ներսէս պատրիարքը (Խրիմեանի յաջորդը), որ ռուսաց հրամանատար Նիկոլայ մեծ դքսին տեսութիւն գնալով՝ մեծ դժուարութեամբ կարողացաւ աջողել։

Յետոյ կարճ միջոցում Ռուսաստանի և Եւրոպայի միւս մեծ տէրութիւնների լիազօր դեսպանները Բերլինի մէջ վեհաժողով կազմելով՝ 64 յօդուածից բաղկացած նոր դաշնադրութիւն կնքեցին և սուլթանին էլ ընդունել տուին։

Թիւրքիայի հայերը Բերլինի վեհաժողովից Հայաստանի հիմնական բարեկարգութիւն խնդրելու համար՝ Ներսէս պատրիարքի համախոհութեամբ Եւրոպայի զանազան արքունիքները ուղարկեցին երկու բարձրաստիճան եկեղեցական՝ Խրիմեան Մկրտիչ եպիսկոպոսը և իր քարտուղար Մինաս Չերազ անունով երիտասարդ ուսուցիչը, որոնք ուղևորուեցին Իտալիա, Աւստրիա, Ֆրանսիա և Անգլիա,

իսկ Խորէն եպիսկոպոսը գնաց Պետերբուրգ և ռուսաց տէրութեան կարեկցութիւնը խնդրեց Հայաստանի դժբախտ վիճակի վրայ։ Երկու պատուիրակները Բերլինում միացան Ստեփան Փափազեանի հետ և մի յիշատակագիր մատուցին վեհաժողովին, ուր մանաւորապէս Ֆրանսիայի երեսփոխան Վադդինգտոն նախարարը ի նպաստ հայոց խօսեց։

Տէրութիւնները միաձայն հաւանութեամբ Դաշնադրութեան 61-րդ յօդուածը խմբագրեցին այսպէս. «Բ. Դուռը յանձն է առնում անյապաղ իրագործել այն բարենորոգումներն ու բարւոքումները, որ պահանջում են տեղական պիտոյքները՝ հայոց բնակած նահանգների մէջ, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը չէրքէզների և քրդերի դէմ։ Բ. Դուռը սրա համար գործ դրուած միջոցները պարբերական պէտք է ծանօթացնէ տէրութիւններին, որոնք պէտք է հսկեն նրա գործունէութեան վրայ»։

Չէրքէզները և մանաւանդ քրդերը մեծամեծ անգթութիւններ գործեցին Հայաստանի զանազան տեղերում։ Ալաշկերտի և Բայազէտի հայերը կամեցան Ռուսաստան գաղթել, բայց անօթութիւնից և ցրտից հազարաւոր մարդիկ մեռան։ Մնացածներից շատ քչերը յետ դարձան, երբ օսմանեան տէրութիւնը խոստացաւ ազդու միջոցների դիմել հայոց հարստահարողների դէմ. բայց մինչև հիմա այդ խոստումը չկատարուեց։

Ս. Պալասանեան

ՌՈՒՍՆԵՐԸ ԷՐԶՐՈՒՄՈՒՄ

Սեպտեմբերի 1. Եօթն օրւայ մէջ կտոր-կտոր պէտք է դուրս գնան քաղաքից ռուսաց զօրքերը և այսօր առաջին գունդն է գնում։ Արդեօք բա՞ց են խանութները, թէ ոչ. այս հարցով ես տնից դուրս եկայ։ Դարձեալ նոյնն է հանդիպանում աչքիս առաջ. խանութները փակ, ժողովուրդը առաւօտից սկսած առաջնորդարանի առաջ և գերեզմանատան պարսպում կիտուած է։ Մինչև իմ գալս, նա-

հանգապետը պտտել է փողոցները. համոզել է բանալ խանութները, լսող չկայ։ Քաղաքապետ Կամսարականը պատահեց ինձ, հետն առաւ և մենք փողոցէ փողոց պտըտելով, յայտնում ենք խանութպաններին, որ եթէ կէս ժամից յետոյ խանութները չբանան, տասը տաս ռուբլի տուգանք կառնուի։ Դուրս եկաւ որ, քանի մի պարոններ գաղտնի յայտնում են ժողովրդին՝ ով որ միայն համարձակի բանալ խանութը, իսկոյն նրանք կթալանեն։ Բատըրժաճեան Յարութիւն էֆէնտին պատահեց և մեզ օգնեց այս գործի մէջ. ո՛րին բռունցք տալով, ո՛րին յիշոց, կէս ժամւայ մէջ գլխաւոր փողոցի բոլոր խանութները բանալ տուեց և առուտուրը սկսուեց։

Սեպտեմբերի 4. Զարմանալի է, թէ գեներալ Լազարեւը ինչ մեծ համակրութիւն է վայելում այստեղի հայերից, ինչ մեծ ազդեցութիւն ունի ամենքի վրայ և ո՛ր աստիճանի վախ են զգում նրանից նոյնիսկ տաճիկները։ Երեկւան կարդացած ուղերձը Կարնոյ հայոց գրած, Կարնոյ մէջ պատերի վրայ ամենանշանաւոր տեղերը կպցրած է. ամենքը կարդում են կամ միմեանցից հասկանում բովանդակութիւնը. հայերը վստահանում են ուղերձի վրայ, որովհետև դա իրանց սիրելի Լազարեւի գրածն է, տաճիկներն էլ ուրախ են, որ հայերի պատճառով ռուսները մուսուլմաններին չդիպան։ Տաճիկներն այն աստիճան վախեցած են, որ չեն համարձակւում պատերի վրայ կպցրած ուղերձները, ըստ իրանց սովորութեան, պոկել։

Սեպտեմբերի 5. Այսօր քանի մի ցաւալի լուրեր ըստացել են գիւղերից։ Երեկոյեան վեց հատ տաճիկ Կրիչք անուանուած գիւղի մօտ մտել են Յարութիւն հայի ջաղացքը, իրան սաստիկ ծեծել, և ձեռքն ու ոտքը կապելով իրանց հետ բերած սայլերի վրայ բարձել են ջաղացի մէջ գտնուած ալիւրը և ցորենը և գնացել։ Յարութիւնը աւազակներին չէ ճանաչած։

Նոյնպէս երեկոյեան մի քանի զինուորուած ձիաւոր տաճիկներ գնացել են Նորշէն գիւղը, որտեղի հայք անցեալ օրը մտադիր էին գաղթել, մտել են հայոց տները,

ամբողջ գիշերը զւարճացել... ստակ առել, ոչխարներ մորթել և մեծ սպառնալիքներ արել, թէ ինչպէս համարձակեցիք գաղթելու դիտաւորութիւն ունենալ։ Առաւօտեան դէմ հեռացել են՝ հայերին ահ ու դողի մէջ թողնելով։ Կարծում են որ նշանաւոր աւազակ Միհրալիի խմբից են այդ կտրիճները։

Սեպտեմբերի 15. Առաւօտը սովորաբար լիքն են լինում մեր հիւպատոսարանի դռները բողոքատու գիւղացիներով. այսօր բացի աշչի Կարապետից, որի պատճառով եղան օգոստոսի 31-ի անցքերը, ոչ ոք չկայ... Երեկոյեան դէմ Կամսարականի հետ ձիերով գնացինք տաճկական թաղերը պտըտեցինք և յետոյ մէկ առ մէկ անցանք հայոց թաղերը։ Մուսուլմանները խոժոռ դէմքով են նայում մեզ, բայց քթի տակ փնթփնթալով շտապում են ճանապարհ տալ։ Իսկ հա՛յք... երբ միայն երևում ենք փողոցում, ամենքը դուրս են թափւում տներից և հազարումէկ օրհնանքներ ուղարկում մեր ետևից...

Սեպտեմբերի 16. Մօտ 50 հոգի վաճառական և արհեստաւոր հպատակներ են մնացած այստեղ, մեծ մասը Ախալցխայի և Ալէքսանդրապօլի կողմերից, բոլորը հայք։ Այս առաւօտ դրանք, համաձայն ռուսական օրէնքին, ալեքսանդրապօլցի Մարտիրոս աղայ Ջիթողցեանին ընտրեցին իրանց համար մեծ կամ աւագ, որ միանգամայն պէտք է լինի իրանց առևտրական շահերի պաշտպանը, վէճերի ժամանակ. դատաւորը հաստատեց աջող ընտրութիւնը։

Երեկոյեան մօտ ժամի 5-ին, մուսուլմանները տեսան նորածին լուսինը, ներսաբերդից որոտացին թնդանօթները՝ բայրամը աւետելով. մօլլաները բարձր մինարէների վրայից սկսեցին իրանց փառաբանութիւնը. տաճիկներն ուրախ են այդ տօնին, հայք միայն անհանգիստ են։ Մենք ևս ի պատիւ տաճկաց, բացինք հիւպատոսարանի դրօշակը։ Գիշերը Կամսարականի հետ ելանք փողոցները պտըտելու. ամեն տեղ լռութիւն է և հանգստութիւն...

Սեպտեմբերի 18. Ահա քանի օր է, ո՛չ մի բողոք չէ լսւում, ո՛չ մի հարստահարութեան ձայն չկայ։ Երանի թէ

այսպէս շարունակւէր միշտ։ Երէկ ուսումնարանի դահլիճում ժողովւել էին Կարնոյ հայ երիտասարդները, որոնք միտք ունէին Կարնոյ մէջ հաստատել հայ թատրոն, տպարան, լրագիր և մի ընթերցարան։ Եկող կիրակի թատերական ներկայացումն պէտք է լինի և գոյացած ստակը յիշեալ նպատակին պէտք է ծառայէ։

Սեպտեմբերի *19. Այսօր վերջին օրն է, երբ իբրև թէ մուսուլմանները պէտք է ջարդեն քրիստոնեաներին։ Զգուշացնող եղաւ մեզ, իբր թէ ջարդը մեզնից պէտք է սկսուի։ Բայց ահա լուսացաւ, հայերը իրանց գործին գնացին, մուսուլմանները նմանապէս սկսեցին իրանց սովորական պարապմունքը և ամենայն ինչ հանդարտ է։ Կամսարականը փոքր ինչ տկարացաւ և ինձ ուղարկեց գնալ պտըտել տաճկաց թաղերը։—Առաջին անգամն է այսօր ձիւն գալիս, որ քաղաքիս մէջ շուտով փոխւեց անձրևի. արդեօք անցեալ տարուայ սարսափելի ձմեռը պէտք է կրկնուի՞...*

Ա. Երիցեան

Ալ. Երիցեանը ծնաւ Թիֆլիզ 1842 թ. դեռ գիմնազիայում, մի խումբ ընկերակիցների հետ նա պարապում էր հայերէն և այն էլ գրաբար.—չաւարտած գիմնազիան, նա դուրս է գալիս և նւիրում իրան գրականութեան, դառնալով մեր մօտիկ անցեալի ամենալաւ պատմաբանը։—Գրած ունի «Հայոց կաթողիկոսների պատմութիւնը», «Ներսիսեան դպրոցի պատմութիւնը» և այլն։ Մեռաւ 1902 թւին Թիֆլիզում։

ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ

Ես փառահեղ չինովնիկ էի 1862 թւին։ Ունէի կօշիկներիս կրունկներին կպցրած գլնդգլնդան մեխեր, կամ ինչպէս ասում են մեզանում՝ շպորներ, իսկ գլխարկիս ճակատին՝ կոկարդ. մէկ խօսքով՝ գեղեցիկ, արծւաքիթ, մեծ յօնքերով մի երիտասարդ էի և ունէի կապոյտ դայթանով բոլորած գտակ։

Կապոյտ դայթանը իմ ուսումնականութեան նշանն էր։ Ես կատարեալ ուսումնական էի։ Կարդում էի Բելինսկին և մէկ քանի ժամանակից յետոյ անցայ դէպի Բոքլը, որից իմացայ թէ ես սաստիկ կոսմոպոլիտ պէտք է լինիմ...

Ես իմ ազնուական ու գիտնական չինովնիկութիւնով մէկ օր զբաղւած Բելինսկիով, Բոքլով և Լիւսով, ամենադատարկ գրպաններով, անցնում էի մէկ մեծ փողոցով, տեսայ մէկ յայտարարութիւն՝ պինդ կպած պատին։ Ես մօտեցայ և կարդացի, յայտնի բան է, շատ դժւարութեամբ. Ա Ր Շ Ա Կ Բ.—գործող անձինք. Շահխաթունեանց, Ամերիկեանց, Մատինեանց, Սուքիասեանց և այլն և այլն. Դ Ա Լ Ա Լ Ղ Ա Ղ Ո Ց, որի տակ դարձեալ կային՝ Մատինեանց, Սուքիասեանց, Ամերիկեանց և այլն։ Տոմսակները ծախւում են այս-ինչ տեղ։

Ես վազ տալով գնացի այն-ինչ տեղը և գտայ այնինչ «Արշակ Բ.» և «Դալալ Ղաղոյ» ներկայացման տոմսակները։

Մէկ նիհար մարդ հանդարտ, անվրդով նստած էր այն-ինչ տեղի մէկ սենեակում։

—Խնդրեմ մէկ տոմսակ, ասացի ես։

—Տոմսակ չկայ, պատասխանեց ինձ նիհար մարդը։

—Ի՞նչպէս թէ չկայ, բացականչեցի ես, զգալով որ այդ պարոնը ինձ լաւ չէ տեսնում, որ նա չի նկատում ոչ իմ գլնդգլնդան մեխերս, ոչ իմ կապոյտ դայթաններս, ոչ իմ կոկարդս։

—Չկայ, ասում եմ, պատասխանեց նա առաւել անվրդով։

Ես չրխկչրխկացրի շպորներս և բարկացած դուրս գնացի այն-ինչ տեղից։

—Ի՞նչ անեմ, ասացի ես, և գլուխս ծագեց մի հիանալի միտք։

«Ես կ՚երթամ թատրոն, կը խնդրեմ որ ինձ համար մէկ աթոռ դնեն, որի համար ես կը վճարեմ երկապատիկ գին»։ Մտածեցի, վճռեցի և դիմեցի եօթն ու կէս ժամին Թիֆլիզի քաղաքային թատրոնը։

Գնացի, մտայ, տեսայ տոմսարկղը փակած և նախամուտքը լցուած հայ բազմութիւնով և տոմսավաճառներով։

Հայ վաճառականների գործակատարները նորաբոյս հայկական թատրոնից մեծ եկամուտ նախագուշակելով, գնել էին շատ տոմսակներ և թատրոնի նախամուտքում ծախում էին եռապատիկ գներով։ Բայց ինձ ինչ փոյթ, ես պէտք է թատրոն տեսնէի, հայկական թատրոն։ Բայց վճռեցի վաշխառուներից տոմսակ չառնել և մտայ թատրոնի կորրիդորը։

Նիհար երիտասարդը դարձեալ առաջս եկաւ։

—Խնդրեմ, պարոն, դարձեալ ես դիմեցի նրան, բայց այս անգամ շատ վրդովւած։

—Այս րոպէիս, պարոն, այս րոպէիս, ասաց նա թոթովելով և տուեց ինձ մի տոմսակ։

Մտայ թատրոնի դահլիճը։

Դահլիճը լիքն էր, և լիքն էր նա հիանալի, գեղեցիկ, շքեղ և զգայուն հասարակութիւնով։—Օթեակներում կային հիանալի մնդած օրիորդներ, լաւ ռուսէրէն խօսողներ, անպայման գեղեցիկ կրթւած՝ տիկին Ֆավրի մօտ և այլ այս տեսակ ուսումնարաններում։ Բազկաթոռներում կային հայ ջէնտլէմէններ հիանալի ձեռնոցներով, սպիտակ շապիկներով, կրթւած զանազան բարձրաստիճան ուսումնարաններում։ Աթոռներում կային հաստաքիթ, հաստափոր, բարակափոր, խիտամազ, սերտամազ և այլն զանազան տեսակ վաճառականներ, չինովնիկներ և անյայտ գործունէութեան տէր մարդիկ։ Ես մտայ, նկատեցի այդ բոլորը և նստեցի ինձ համար պատրաստած աթոռի վրայ, ու կարգի բերելով իմ անձնական, սպիտակ, արծաթազարդ թրագօտիկս և իմ զանգակաձայն շպորներս, շատ բաւական ինքս իմ էութիւնով՝ նայեցի չորս կողմս։

Մոռացայ դարձեալ մէկ տեսակ անձնաւորութիւններ, այն է... վրացա-եւրոպական հագուստով տիկինները։

Ես երջանիկ էի ամեն կողմից, և անհամբերութեամբ սպասում էի վարագուրի բաց անելուն։

Ինձ հետ սպասում էր նրա բացելուն և բոլոր այդ հասարակութիւնը։

Բացւեց վարագոյրը։ Լսւեց խորական երգ՝ «Մեծափառ արքայ»...

Դուրս եկան մի քանի երիտասարդ՝ անկիրթ, անդիպլոմ, դէսից դէնից՝ Ղազախից, Շամշադինից և այլ երկրներից հաւաքւած երիտասարդներ։

Ես հասայ իմ երջանկութեան բարձր աստիճանին։ Դուրս եկաւ Վահան Մամիկոնեան, հայրենիքի բարեկաւութեան համար մերձ ի մահ վիրաւորւած հայ նախարարը։ Ես ճչացի «բրաւօ» և յիմարացայ. որովհետև ամենքը շուռ եկան և ինձ նայեցին։ Բայց որ ցոյց չտամ թէ ես յիմար եմ, սկսեցի անկեղծօրէն պարապել իմ թրագօտիկով ու շպորներովս։ Դուրս եկաւ Դրաստամատը...

Արքայից արքայ Շապուհը, հզօր, շքեղ, պարթևատոհմ Շապուհը, մահու և կեանքի հրամանատար թագաւորը (պ. Աբովեան) բեմ դուրս եկաւ, յաղթական պատերազմից յետոյ։ Պարթևների և հայերի զօրքերը, զարդարւած կարտոնների մէջ՝ անդադար «կեցցէներ» էին գոչում։ «Կեցցես դու, Շապուհ» յաղթական երգով ուղեկցում էին արքային մինչև աւան-սցենան՝ Ղազախից, Շամշադինից և այլն կորած մոռացած՝ երկրներից, տկլոր, սոված, չքաւորութեան մէջ ճնշւած երիտասարդները, ինչպէս ասացի վերև, առանց որ և է բարձր ուսումնականութեան դիպլոմի գրպանում... Մեծ ուշադրութեամբ սկսեցի ուսումնասիրել այդ թատրոնական գոյութիւնը բեմի վրայ,—«Իսկ դու, քաջդ Դրաստամատ, դարձաւ արքան դէպի հայ նախարարը, պարգև պահանջիր ինձնից»։ «Պարգև, թագաւոր, պատասխանեց նա։ Ոչինչ պարգև չեմ ուզում։ Ես իմ պարտքս եմ կատարել։ Ես հաւատարմութեամբ պէտք է ծառայէի իմ տիրոջը, և ծառայեցի։ Հայերը միշտ հաւատարիմ են եղել դէպի պարթևների սանձը և կը մնան հաւատարիմ, քանի որ կը զգան նրանց բարեկամութիւնը»։

Այս և սրա նման խօսքեր արտասանեցին հրապարակական թատրոնի բեմի վրայ ուժեղ ճշմարտութեամբ, կատարեալ բեմական հայի մաքուր արտասանութեամբ և արհեստն իմանալով։

«Ո՞վ է, հարցրի ես դես ու դէն։ Այս հարցիս պատասխանն էր միայն ծափահարութիւնը և «կեցցէների» ու

«բրաւօնների» դղրդիւնը դանդաղում։ Ծափահարում էին Դրաստամատին (Ամերիկեանցին)։

Կողքիս նստածներից մէկից ես ուզեցի դիտակ և սկսեցի զննել Դրաստամատին. նա էր միջահասակ, փոքր ինչ ծաղկատար, խոժոռ կերպարանքով և կաղաքայլ։

Ես զգացի, որ այդ երիտասարդի մէջ կայ բեմական տաղանդ, որ կարող է զարգանալ հայկական թատրոնի բեմի համար։

Այդ ներկայացումից յետոյ ես վճռեցի... ինչ էք կարծում, ինչ... նուիրել ինձ թատրոնին։

«ՓՈՐՁ». Գ. Չմշկեան

Ճ Ա Մ Բ Ո Ր Դ Ա Կ Ա Ն

Այց Լեմբերգի հայերին

1899 թ. յունիսի վերջերին՝ ես առ միշտ մնաս բարով ասացի Եւրոպային։ Յարմարագոյն ճանապարհը՝ հայրենիք վերադառնալու, ընկնում էր Միւնխէնի, Վիէննայի և Լեմբերգի վրայով։

Լեմբերգ հասայ ես գիշերը ժամը 10-ին։ Առաւօտ կանուխ շտապեցի հայ կանոնիկոս Աւգուստ Թէոդորովիչի տունը, որի հասցէն ձեռքս էր. սակայն մեծ եղաւ հիասթափումս, երբ ժամը 9-ին նրան տանը չգտայ, այն ինչ ես որոշել էի նոյն օրն ևեթ շարունակել ճանապարհս։ Լեհ աղախինը, որ բացի իր մայրենի լեզւից ոչ մի այլ լեզու չէր հասկանում, առաջնորդեց ինձ մի այլ տուն, ուր որոնածս անձի մասին տեղեկութիւն պիտի ստանայի։

Չորրորդ յարկում կանգ առնելով, աղախինը նշան արաւ, որ զանգահարեմ։ Հազիւ դուռը բացուել էր և այցետոմսս ներս էի ուղարկել, որ դռան շէմքում երևեցաւ բարակ, բարձրահասակ, լուրջ և խիստ դիմագծերով մի կաթոլիկ հոգևորական և քաղաքավարութեամբ ներս հրաւիրեց ինձ։—Յայտնեցի, որ ես հայ ճամբորդ եմ և ցանկանում եմ անպատճառ տեսնել տեղիս հայ ուսանողներին,

նա մի տոմսակ տւաւ, որով պիտի գտնէի Թէոդորովիչին համալսարանում։—Շնորհակալութեամբ հեռանալով այդ աստւածաբանի մօտից, դռանը այցետոմսի վրայ կարդացի, որ նրա անունն էլ Թէոդորովիչ է, ուրեմն հայ է, և նրա սև աչքերն ու թուխ մելամաղձոտ գծերը դրա մասին շատ կասկած չէին թողնում, ինքը, սակայն, ինչպէս երևաց և որպէս յետոյ տեղեկացայ, նոյնիսկ թշնամի է ազգային շարժման Լեհաստանում։

Դարբասն անցնելիս՝ աչքս կանգ առաւ շէմքի քարի վրայ, ուր մի տեսակ ծանօթ և տարօրինակ գծեր գրաւեցին ուշադրութիւնս... և ո՜վ զարմանք. մօտիկից նայելով՝ առաջս բացւում է մաքուր Մեսրոպեան գրերով մի կիսամաշ արձանագրութիւն, որ ընկած լինելով շարունակ ոտի տակ, մօտ ապագայում իսպառ կորչելու է։ Ես մի ներքին յանդիմանութիւն ուղարկեցի վերևն ապրող հայ հոգևորականի հասցէին, որ այնքան անհոգութեամբ անց ու դարձ է անում այդ յիշատակարանի վրայով...

Համալսարանում, սակայն, չգտայ որոնածս անձին. մի ուսանող հոգևորականի ջանքերի շնորհիւ տեղեկացայ, որ Թէոդորովիչը այդ օրը դասախօսութիւն չունի, ուրեմն որոնելն ի զուր է. ժամը արդէն 11-ի մօտերն էր, ես կամաց-կամաց վերադառնում էի նրա տունը, ուր այցետոմսի վրայ գրել էի՝ ինձ սպասել 12-ից մինչև 1-ը, և ահա նրա տան մօտերը մի փողոցի անկիւնում կարդում եմ լեհերէն՝ «Հայոց փողոց». մի քիչ վերև ներս եմ մտնում մի փոքրիկ եկեղեցու բակը, ուր դարբասի մի անկիւնում, մարմարեայ մի քարի վրայի հայերէն արձանագրութիւնը տարակոյս չի թողնում, որ հայոց եկեղեցու բակումն եմ։ Մի շարք գերեզմանաքարեր, հին Մեսրոպեան (երկաթագիր) գրերով, փարատում են ամեն մի կասկած. ես դիտում եմ եկեղեցին, անցողաբար կարդում եմ արձանագրութիւնները և կանգ եմ առնում մի նոր—գեղեցիկ յուշարձանի դիմաց... Հնութիւններ շատ ունիմ տեսած... բայց այն զգացումը, որ ես ստացել եմ անսպասելի կերպով Եւրոպայի մի անկիւնում մայրենի լեզւի հետքեր գտնելով,

այն միտքը, թէ մի անգամ այստեղ ապրել ու խօսել են հայեր, որոնց կենդանի ապացոյցը տեսնում եմ այս արձանների վրայ, ինձ մի տեսակ թովիչ, կախարդական և երկիւղալի տպաւորութեան մէջ էին դրել։ Մարդ չէ ուզում հաւատալ իր աչքերին և միանգամայն շփոթւում է. դրանք մեր կորստեան լաւագոյն ապացոյցներն են... Մարդ մտածում է անցեալի, ներկայի և ապագայի մասին, և մի զառանցալի ու տխուր անորոշութիւն ճմլում, կեղեքում է մարդու սիրտը...

«Համեցէք, վերև համեցէք», լսում եմ յետևից և հաւատալս խելքի չի գալիս. ո՞վ պիտի այստեղ հայերէն խօսի, ո՞վ գիտէ իմ հայ լինելս։ Ինձ այնպէս թւաց, թէ ականջներս խաբում են, թէ այս անձանագրութիւններն են, որ լեզու առած ինձ հետ հայերէն են խօսում, ճանապարհի բազմաթիւ տպաւորութիւններից և անքնութիւնից յոգնած երևակայութեան համար մի տարօրինակ բան չէ բաց աչքով զառանցելը... և սակայն ձայնը կրկնւում է։ Յետ եմ նայում պատուհանին, որտեղից ձայնն է գալիս և զարմանքով նկատում, որ տեսածս իրականութիւն է. «համեցէք, համեցէք, կրկնում է մի պարոն ժպիտն երեսին, վերև համեցէք»։

Մի քանի քայլով արդէն երկրորդ յարկումն էի, որտեղից ինձ կանչում էին, ուր հաւաքւած գտայ եօթ-ութ հոգի, բոլորեքեան հայ-կաթոլիկ հոգևորականներ. բոլորն էլ գիտեն մի քանի խօսք հայերէն, ոչ աւելի.—մինը միայն, Դաւիդովիչ. անսայթաք հայերէն է խօսում. Միացեալների հետ սկսեցի գերմաներէն բացատրւել։—Նրանցից տեղեկացայ, որ Թէոդորովիչը իմացել է իմ գալը և ինձ է որոնում։ Հայ հոգևորականները տեսնելով ինձ եկեղեցին դիտելիս, ճանաչել են, որ ես պիտի լինիմ նորեկը և ներս են կանչել։—Մի քանի րոպէ խօսակցելուց յետոյ նրանք մի ծառայ տւին, որ ինձ ցոյց տայ Թէոդորովիչի տունը. Հազիւ դռնից դուրս էի եկել, որ մի զոյգ առոյգ ու երիտասարդ ձեռներ սեղմեցին իմ բազուկը—դա Աւգուստ Թէոդորովիչն էր, իմ որոնած հայ ուսանողը, հայ-կաթո-

լիկ հոգևորականի տարազով, սև ու թարմ դիմագծերով մի տաք ու վառվռուն երիտասարդ... Նա առաջնորդեց ինձ իր բնակարանը, ուր Եւրոպայի հայ ուսանողների բարևները հաղորդելուց յետոյ, յայտնեցի, որ կ'ուզէի Միացեալ ուսանողներին էլ տեսնել, որ շուտով ճանապարհս շարունակեմ։

Թէոդորովիչը հայի պէս ինձ հիւրասիրելուց յետոյ առաջնորդեց պ. Մանուկևիչի մօտ, ուր երկու սենեակում չորս հայ ուսանող միասին են ապրում։ Մի ժամից յետոյ տասնից աւելի ուսանողներ արդէն շրջապատել էին ինձ.— Հայեր, այնպիսի վառւած ու տոգորւած հայե՛ր, որոնց նմանը ես երբէք չեմ տեսել։ Մի կողմից նրանք ուշ ու միտք դարձած ուզում են անթիւ հարցերով գաղափար ստանալ մեր կացութեան մասին, նրանք հրճւում են, լսելով, որ հայերի մեծամասնութիւնը դեռ հայերէն է խօսում, ժողովրդի մեծ մասը դեռ հողագործ է, ունինք մամուլ, դպրոցներ ու կրթւած մարդիկ, որ կաթոլիկութիւնը մեզ համար վտանգաւոր չէ... միւս կողմից ամեն ջանք ու ճիգ թափում են ցոյց տալու, որ իրանք էլ դեռ հայեր են, լաւ հայե՛ր, թէև կաթոլիկ ու լեզուն մոռացած։ Մարդ ուղարկեցին և բերել տւին «Հայոց դպրոցից» միակ հայ տղան, որ դեռ չէ մոռացել մի քանի հայերէն բառեր, իսկ երբ նա սկսեց հայերէն «մէկ, երկու» համարել, նրանց հիացմունքը հասաւ հրճւանքի։ Խեղճե՛ր, չգիտեն թէ քանի-քանի հայ ընտանիքներ դիտմամբ ջանք են թափում մոռանալու հայերէնը... Նրանք ուզեցին ինձ հայավարի հիւրասիրել և բերին բուժէն «այծու միս», որ միմիայն տեղացի հայերի կերակուրն է. դա պատրաստւում է այծի մսից և մի տեսակ երշիկ է... Ճաշից յետոյ, երեկոյեան, հայերի թիւը հասաւ մօտ 15-ի. կանչեցին միակ հայ զինւորին, որին է յանձնւած տեղական զօրքի պաշարը գնելու և մատակարարելու գործը՝ շնորհիւ իր աչալրջութեան։

Ինձ ստիպեցին, որ ազգային տաղեր երգեմ, և նոյն երեկոյեան գրի առան ու սովորեցան «Բամբ որոտանը», որ նրանց սաստիկ դուր եկաւ։ Նրանց ոգևորութիւնն այն

աստիճանի է հասել, որ որոշել են, միջոցները ներածին պէս, Հայաստան գալ, հայ աղջկայ հետ ամուսնանալ և հայերէն սովորել։ Ոմանք ձեռ. են քաշել իրանց ընտրած աղջիկներից՝ հայ աղջիկ ուզելու մտադրութեամբ։ Կարծելով թէ ինձ համար անդուրեկան է նրանց կրօնը—կաթոլիկութիւնը, օգտւելով կանոնիկոս Թէոդորովիչի բացակայութիւնից, բացատրում էին, որ առաջին յարմար րոպէին նրանք պատրաստ են մայրենի եկեղեցու գիրկը դառնալ։ —Ես նրանց հասկացրի, որ անցել են կրօնական մոլեռանդութեան շրջանները, թէև ցաւալի է այն, որ հայերից շատերը կաթոլիկ են դարձել, բայց և այնպէս նրանք մեզ համար նոյնպէսի հարազատ ու սիրելի եղբայրներ են, ինչպէս և լուսաւորչականները, միայն թէ իրանց հայ զգան և հայ ճանաչեն…

Այդ երեկոյ, թատրոն չլինելու պատճառով, ինձ տարան ցիրկ, այնտեղից էլ ընթրիքի և ապա իրանց մօտ նընջելու։ Առաւօտ կանուխ ես ինձ հրաւիրողներին թողնելով քնած, շտապեցի կանոնիկոս Թէոդորովիչի մօտ, որին գըտայ պարապելիս։ Երիտասարդ հոգևորականը մի լաւ գրադարան ունի, յատկապէս հայերին վերաբերեալ գրքերի՝ եւրոպական բոլոր լեզուներով. հին լեզուներից զատ նա խօսում և գրում է ֆրանսերէն և գերմաներէն, իսկ լեհերէնը նրա մայրենի լեզուն է։ Զնայելով որ մայրը լեհ է, նա է տեղական հայութեան հոգին ու եռանդը. գրում է լեհական և գերմանական թերթերում և առանձին բրօշիւրներ ունի նուիրած հայոց խնդրին… ազատ կարդում է հայերէն, միայն շատ քիչ բան է հասկանում։ Նրա ցանկութիւնն է կարելոյն չափ շուտով Հայաստան գալ հայերէն սովորելու, որի համար նա ուզում է մինչև անգամ ուսումը կիսատ թողնել։ Իմ բարի խորհուրդն էր համոզել, որ նա առաջ վերջացնի ուսումը, ապա վերջապէս նուիրւի հայերէնի ուսումնասիրութեան։

Գործն աւելի հիմնաւոր անելու համար, ես նրանց պահանջի համեմատ խոստացայ մի հայ ուսանող ուղարկել, որ ուսուցանէ նրանց, և ինքն էլ ուսանի համալսարանում…

Աւգուստ Թէոդորովիչն ինձ ուղեկցեց քաղաքից մի քիչ դուրս զբօսնելու… Ճանապարհին նա ցոյց էր տալիս այս կամ այն տունը, այս և այն եկեղեցին ու վանքը, որ ժամանակով հայերին են պատկանել, իսկ հիմա անցել են լեհերի ձեռը։ Նա ինձ ցոյց տուաւ քաղաքի կենդրոնում մի հիանալի արձան, նուիրած մի յայտնի լեհացի թագաւորի յիշատակին, որ հայի գործ է, արուեստագէտն էլ դեռ կենդանի։ Պատմեց յայտնի նկարիչների, ժամուլի ներկայացուցիչների, բանաստեղծների, ջութակահարների և այլ նշանաւոր արուեստագէտների ու դիպլոմատների մասին հայ-ծագումով, որոնցով պարծենում է լեհական ազգը։— Հայերն այնքան լաւ անուն են ունեցել այդտեղ և այնքան մեծ հայրենասիրութիւն, որ Սենկևիչը իր մի պատմական վէպի մէջ մեծ համակրանքով է խօսում նրանց մասին…

Այդ օրը ճաշից առաջ հարկ էր այցելել տեղական մի քանի հայերի, մինին (արձանագործին) տանը չգտանք, երկրորդը—վաճառականը շատ սիրալիր ու զարմացած ընդունեց «հայի» այցելութիւնը, երրորդին, որ պրոֆեսոր է, նոյնպէս տանը չգտանք, սակայն աւելորդ չհամարեցինք կրկին անգամ ճաշից յետոյ այցելելու։ Թէոդորովիչը ներկայացրեց ինձ այդ պարոնին, և որքան ես մակաբերել կարող էի լեհերէնից, ասաց որ մի հայաստանցի պարոն է, որ հետաքրքրւում է տեղական հայերով… Պրոֆեսորը Յովհաննէս Անտոնեւիչը—Բոլոցի ապեր, պատկանում է տեղական արիստոկրատիային, դասախօսում է գեղարուեստի պատմութիւն և յայտնի գիտնական է. Նա բարձրահասակ, մորթու թուխ գոյնով և բուն հայկական տիպարով մի պարոն է, որ հայի լրջութեանը միացնում է կիրթ եւրոպացու մեղմ ու դուրեկան շարժումները։

Նա մեզ ընդունեց վերին աստիճանի սիրալիր, իր գրասենեակում, ուր հաստ գրքերով ծանրաբեռնած սեղանի մօտ սուրճ հրամցուց։ Մի քանի վայրկեանից յետոյ սիրալիր խօսակցութիւնը դարձաւ ընկերական, կարող եմ ասել եղբայրական։ Հասկանալի է, խօսակցութեան նիւթն

ինչ կը լինէր... ինձ հետաքրքրողը Լեհաստանի հայերն էին, իսկ պրոֆեսորի ցանկութիւնն էր կարելոյն չափ շատ տեղեկութիւններ ստանալ մեր մասին։ Այդ ամենի հետ ինձ զարմացնողն ու հիացնողն այն էր, որ մի լեհական ազնուական, մի աւստրիական հպատակ և վերջապէս մի գիտնական, առանձնացած ու դարերով կտրուած հայրենիքից, ոչ միայն արտաքինով, այլ և հոգով մնացել է կատարեալ հայ։ Ես առանց քաշուելու ասացի նրան իմ կարծիքը, աւելացնելով, որ նա պարտական է Հայաստան գալու և իր աչքերով տեսնելու այն ամենը, ինչ որ նրան հետաքրքրում է... «Մենք մի Հայրիկ ունինք, որին ուխտ են գալիս ամեն տեղի հայերը, ես պիտի պատմեմ ձեր մասին նրան և նրա սիրտը պիտի ցաւի, եթէ դուք ձեր որդիական յարգանքները չմատուցանէք նրան Էջմիածնում։ Ես ձեզ ճիշտ եմ ասում, մինչև օրս մենք չգիտէինք, որ Եւրոպայում մենք ձեզ նման բանիմաց հայ եղբայրներ ունինք, այդ մասին ես պիտի յայտնեմ մեր մամուլի մէջ, և դուք հայերի յանդիմանութեանը պիտի արժանանաք, եթէ մեզ այցելութեան չգաք։ Իբրև արևելցի ես պարզ եմ ասում այն, ինչ որ մտածում եմ, մենք էլ արուեստ ունինք. ձեր վրայ պարտք կայ ճանաչել տալու մեր արուեստը Եւրոպային»...

Իմ խօսակցութիւնը, ինչպէս երևում է, լաւ տպաւորութիւն էր թողել պրոֆեսորի վրայ, որովհետև երբ ոտքի ելանք մեկնելու, նա համարեա զօրով ստիպեց, որ նոյն երեկոյեան անպատճառ իրան կրկին այցելութեան գնանք. տեսնելով որ այդ անկարելի է, քանի որ նոյն օրը ես մեկնելու էի, նա խնդրեց ներկայ գտնուել իր դասախօսութեանը՝ վերջում մի քիչ զրուցելու։

Ժամանակի սղութեան և ճանապարհի պատրաստութեան պատճառով ես ու իմ բարեկամ Թէոդորովիչը հազիւ դասախօսութեան վերջին մտնել կարողացանք լսարան, ուր խօսում էր պ. Անտոնևիչը։ Նա մի այնպիսի ընդունելութիւն ցոյց տուաւ, որ ես պէտք է մինչև ականջներս կարմրէի։ Մեր մտնելը նկատելուն պէս, նա վերկա-

ցաւ տեղից և խորը կերպով գլուխ տուաւ, որի պատճառով ամբողջ լսարանը՝ օրիորդներ ու երիտասարդներ, հայեացքները ուղղեցին դէպի մեզ։ Դասախօսութեան նիւթը Միքէլ-Անջէլօ-ի մի պատկերն էր։

Նա մեզ առաջնորդեց իր աշխատանոցը... և բաց արաւ մի խումբ ստուար կարտոններ, որոնց վրայ գիտնականի հոգածութեամբ ու խնամքով արտահանած էին բոլոր այն արձանագրութիւնները, ծաղկանկարներն ու քանդակները, որ երբ և իցէ ստեղծել են Լեհաստանի հայերը։ Այն գրերը, որ ես ցաւելով հանդիպել էի հայ հոգևորականի շէնքում կորստի մատնուած, հիացմունքով տեսայ, որ հայ-գիտնականը խնամքով ժողովել և պահում է... Պ. Անտոնևիչը տեղական հայ-եկեղեցու երեցփոխն է, ուզում է նոյն եկեղեցին նորոգել հայ-ճաշակով, ուստի ինձանից տեղեկութիւններ և նիւթեր խնդրեց 17 դարու հայ արուեստի մասին։ Վերջացնելով այդ հաւաքածուն դիտելը, մենք նստանք հարևան սենեակում խօսելու։ Նկատելով համալսարանի ուսանողների և պրոֆեսորների ցանկը, նա սկսեց հաշուել և ցոյց տուաւ, որ պրոֆեսորներից վեցը հայ ծագում ունին, բայց երկուսն են միայն, որ դեռ չեն մոռացել իրանց ազգութիւնը։ Ուսանողների մէջ հազիւ ութ հոգի հայ են գրել իրանց, որի վրայ վրդովուելով, նա պատուիրեց Թէոդորովիչին «իր անունով յանդիմանելու այն ուսանողներին, որոնք իրանց հայ անունը մոռացել են նշանակելու ցանկի մէջ. եթէ ռումինը, լեհը, գերմանացին այստեղ չեն մոռանում իրանց ազգը, մենք ինչու պիտի մոռանանք»։ Մինչ այդ, պրոֆեսոր Անտոնևիչը մանկական պարզութեամբ խնդրեց լսել իր երգածը և հաւաստիացնել՝ արդեօք ճիշտ է եղանակը... և յիմնասեայ դի-նակը սկսեց երգել «Մեր հայրենիք թշուառ անտէր»... մի այնպիսի տենչանքով, որ կարելի էր լաց լինել, եթէ մարդ չամաչէր։ Այդ երգը նա սովորած է եղել Վիեննայի հայրերից, առանց հայերէն գիտենալու։

Լսելով որ տեղական հայ ուսանողները ուզում են հայերէնի ուսուցիչ հրաւիրել, նա սաստիկ ուրախացաւ, ան-

լացնելով, որ աշակերտներից մինն էլ ինքն ու իր որդին պիտի լինեն։ Երբ ես կրկին խնդրեցի խոստանալ Հայաստան գալու, նա ասաց, որ առաջիկայ երեք տարւայ ընթացքում նա այդ չի կարող անել, որովհետև գիտական նպատակով նա պաշտօնապէս պարտական է ուղևորւել Իտալիա և Պորտուգալիա, իսկ այնուհետև «երբ ես հայերէն սովորած կը լինիմ, այն ժամանակ կուգամ Հայաստան իմ աչքով տեսնելու և հասկանալու, որովհետև ես ուսումնասիրած չեմ համարում այն բանը, որ թարգմանների միջոցով է կատարւում։» Նա հայերէն սովորելու դասագիրք խնդրեց ինձանից, որ անկարող էի տալ, քանի որ այդպիսին աշխարհաբարի համար գոյութիւն չունի։ Խոստանալով նիւթեր ուղարկել հայ արւեստի և հայ երաժշտութեան մասին, յայտնել ժամանակ՝ արդեօք Թուրքերի ու պարսիկի գործածից, հայի գործած կապերտը, գորգը և կամ որևէ արւեստի գործը որոշւում է, ես մնաս բարև ասացի պրօֆեսորին, որ մի անմոռանալի և դուրեկան տպաւորութիւն թողեց վրաս։ Իբրև յիշատակ նա ինձ տւաւ մի փոքրիկ բրօշիւր, Լեհաստանի հայերի մասին, որ իր գրածն է, և քաղւած է «Աւստրո-Ունգարեան պատկերով ու խօսքով»—յայտնի գործից, որ պետական հրատարակութիւն է։

Նոյն երեկոյեան ժամը 10-ին, 12-ի չափ երիտասարդ հայեր երկաթուղու կայարանն եկան ուրախ երգերով և յոյսերով ճանապարհ ձգելու «Հայաստանցի բարեկամին»՝ ուղարկելով իրանց լաւագոյն իղձերն ու ցանկութիւնները իրանց հեռաւոր եղբայրներին...

Երկաթուղին սլանում է, ես առանձնացած օթեակում շարունակ մտածում եմ. երազ էր այս ամենը թէ իրականութիւն... և ես յաւիտեան չեմ մոռանայ այդ բարի, ազնիւ ու հիւրասէր երիտասարդներին, որոնք երկու օրւայ ընթացքում այնքան դուրեկան և անջնջելի տպաւորութիւն թողին վրաս...

Գր. Վանցեան

ԿԱՐԻՆ ԿԱՄ ԷՐԶՐՈՒՄ

Կարին քաղաքը գտնւում է Եփրատ գետի ակունքների մօտ, Թիւրքաց Հայաստանի այն մասում, որ հին ժամանակ կոչւում էր Բարձր Հայք։

Հայաստանի ամեն մի թիզ հող հին ժամանակներից սկսած օտարները աշխատել են խլել, յոյն, պարսիկ, արաբ, թաթար, թուրք և այլ ցեղեր Հայաստանին տիրելու համար նրան աւերել են, նրա բնակիչներին կոտորել։ Այսպիսի բարբարոսութիւնների շատ է վկայ եղել և Կարինը։

Պատմութիւնից յայտնի է որ դեռ Ե դարում Ք. յ. Անատոլ անունով մի յոյն զօրավար Հայոց Կարին գիւղը ամրացնելով քաղաք դարձրեց և ի պատիւ յունաց Թէոդոս կայսեր այդ քաղաքը Թէոդուպօլիս անւանեց։ Այնուհետև քրիստոնեայ յոները և կռապաշտ պարսիկները երկար կռւում էին իրար դէմ Հայաստանը իրար ձեռքից խլելու համար։ Իսկ Է դարում Հայաստանի վրայ յարձակւեցին մահմեդական արաբները և տիրելով մեր երկրին գրաւեցին և Թէուդոպօլիս քաղաքը, որին տւին Էրզրում անունը, որ նշանակում է յոների (ուռում) երկիրը։ Արաբներից յետոյ Հայաստանը աւերեցին թաթարները, որոնց ցեղերից մէկը, այսինքն Թիւրքերը, վեցերորդ դարում տիրեցին նրան։ Այդ ժամանակից մինչև օրս Կարինը մնաց Թիւրքաց ձեռքում։ Զարմանալի չէ, որ այդքան փոփոխութիւններից յետոյ Կարինում այժմ դժուար է հին Հայաստանի յիշատակներ գտնել։

Կարինը այժմ Թիւրքաց Հայաստանի ամենամեծ վարչական կենդրոնն է։ Նա Էրզրումի նահանգի կամ վիլայէթի գլխաւոր քաղաքն է և առաջնակարգ ամրութիւնն է։ Կարինը գտնւում է այն մեծ ճանապարհի վրայ, որը Տրապիզոնից տանում է Պարսկաստան։ Կարինը Թիւրքաց Հայաստանի այն գլխաւոր առևտրական կեդրոնն է, ուր Հայաստանի զանազան կողմերից հաւաքւում են ամեն տեսակ բերքեր և ապրանքներ. այսպէս, օրինակ, Բաղէշից բերում են կարմիր կտաւ, Վանից շալեր, Արաբկիրից,

բամբակեայ մի գործուածք, որ կոչւում է մանխայ, Խարբերդից գինի և մետաքսի մի գործուածք, որ կոչւում է գեազի, իսկ Բարձր Հայքի զանազան կողմերից ստացւում են մեծ քանակութեամբ գայլի, աղւէսի, կուզի և այլ թանձրամորթ գազանների մորթիներ։

Կարինը կապւում է Անդրկովկասի հետ Կարս քաղաքի միջոցով։ Չնայած իր վարչական և առևտրական նշանակութեան՝ Կարինը շատ ողորմելի արտաքին տեսք ունի. Նրա փողոցները նեղ են, ծուռ ու մուռ ու կեղտոտ, տները փոքր են և անշուք. չեն երևում եկեղեցիների գմբէթներ, այլ քաղաքի զանազան կողմերում բարձրանում են մզկիթների մինարէներ։

Կարին քաղաքում ապրում են մօտաւորապէս 8 հազար տուն բնակիչներ, որոնցից հազիւ 3 հազար տունը հայ լինի, իսկ մնացածը՝ թիւրք։ Բացի հայերից և թիւրքերից կան նաև սակաւաթիւ պարսիկներ, եւրոպացիք և յոյներ։ Հայերի թիւը պակասեց՝ երբ 1820 թւականի ռուս-տաճկական պատերազմից յետոյ հայերի մի մասը թէ քաղաքից և թէ շրջակայ գիւղերից գաղթեց Ռուսաստան։ Այդ գաղթականները հաստատւեցին Ալէքսանդրապօլի, Ախալցխայի և Ախալքալաքի կողմերում։

Լ. Սարգսեան

Դ Է Պ Ի Ա Ն Ի

Ալէքսանդրապօլից մինչև Անի մօտ 50 վերստ է։ Անցնելով Ախուրեան գետը՝ դուք մտնում էք մի ընդարձակ դաշտ—Շիրակայ դաշտի շարունակութիւնը։ Այդ դաշտի միջից հեզիկ սահում է Ախուրեանը՝ բաժանելով ռուսաց և տաճկաց նախկին սահմանները։ Գետի երկու կողմում ձգւում են բազմաթիւ գիւղեր։ Այդ գիւղերի մէջ, որոնցից ոմանք տաճկաբնակ, ոմանք հայաբնակ և ոմանք խառն են, կան կանգուն և անկանգուն, հին և նոր, աւեր և կիսաւեր եկեղեցիներ և վանքեր... որոնք մի առանձին տպաւորութիւն են գործում առաջին անգամ այդ երկրում ոտք կոխող հայ ճամբորդի վրայ։

Կարծես մի ելեքտրական զօրութեամբ հեռադիտակս դէպի Ալաճայի սարերը խոնարհւեց և Անւոյ աւերակները յանկարծ իմ աչքին դիպան... Աստուած իմ... չեմ կարող խօսքով բացատրել այն՝ ինչ որ նոյն րոպէում ես զգացի... Սիրտս փղձկաց և արտասուքներն ինձ հեղձամղձուկ արին։ Սրտատրոփ և տագնապալից կառքիցս վայր իջայ և ջերմ արտասուքով իմ կաթոգին և մոռացւած հայրենիքի սուրբ հողն առաջին անգամ համբուրեցի։

Ոչ թէ հայ՝ այլ ամեն մարդ, ինչ ազգից կ՚ուզէ, թող լինի, տեսնելով առաջին անգամ այդ քաղաքը՝ չէ կարող անտարբեր նայել նրա աւերակներին, որոնք մի ծանր, մի արտաճմլիկ տպաւորութիւն են գործում մարդու վրայ։

Աւերակների շատութիւնը և միասին լինելը, նրանց վիթխարի տեսքը, վսեմութիւնը, փառաւորութիւնը՝ այդ ամենը կենդանութիւն են ներշնչում։ Միւս կողմից՝ փլատակների կոյտերը, հողաբլուրների և քարաբլուրների ահռելի տեսարանները իրանց մեռելութեան հոտ փչող լռութեամբ մի զարհուրելի գերեզմանոցի պատկեր են ներկայացնում։ Ձեր աչքն արագաբար այս և այն կողմն է ձգւում, իսկ ձեր ուշքն ու միտքը անդադար այս և այն կողմն է սոտոստում. ելեքտրական մի ցնցիւն, մի սարսուռ էք զգում ձեր ջղերում և կարծես ուզում էք թողնել-փախչել այդ ահաւոր և փառաւոր, այդ սիրալի ու տխրալի տարօրինակ քաղաքից, որի ամեն մի անկիւնից, ամեն մի կողմից տաղաչափի ասածի նման՝

Հետզհետէ քեզ ահա նոր-նոր ձայն
Սրտիդ մէջ, տի՛կին, արձագանք կուտան.
Ամեն մի քարէ մի նոր ձայն կ՚ելլէ,
Ամեն մի բեկոր նոր բան կը պատմէ.
Ո՛ր կողմը նայես՝ տխուր տեսարան.
Ո՛ր կողմը դիտես՝ աւերակ միայն.

Կամ հրաշալի սուրբ եկեղեցեաց
Կը տեսնես դու լոկ գմբէթը մնացած,
Կամ մեծակառոյց ի հիմանց ի վեր,
Կիսաւեր կանգնած են ապարանքներ.
Ահա կը շարժին, ահա կ'երերին.
Նոքա էլ հիմա գետին կը փուլին։
Իսկ դու զգացւած, տխուր ցօղագին
Աչքով կը տեսնես աւերակ Անին։

(Մկրտիչ Պալեան)

Անին տեսնող ամեն ճանապարհորդ իր անունն ու ազգանունը և մի քանի սրտառուչ տողեր մատիտով, ածուխով կամ կաւիճով գրել է այս և այն տեղում։

Այդ արձանագրութիւնները բոլորն էլ սրտացաւ բովանդակութիւն ունին. Նրանց մէջ կան այնպիսիները, որ աւելորդ չհամարեցի դուրս բերել յիշատակարանիս մէջ։

Ահա այդ տողերը.

1. Գեղածիծաղ զուտ գարունը տիրելու է այս երկրում.
Բայց և անվախ հայ անունը մնալու է միշտ աշխարհում։

2. Եկի, տեսի և ողբացի։

3. Աստուած իմ, ինչու թողիր, որ անօրէնները պղծեն քո սուրբ տաճարը. ինչու թողիր Քեզ սիրող և պաշտող ազգդ։

(Այս տողերը ռուսերէն է և նրա գրողը մի ռուս գնդապետ։)

4. Այսքան զօրութիւն ունեցող մի ազգ՝ եթէ մինչև հիմա չէ անհետացել, այսուհետև երբէք չի անհետանայ։

(Սորա գրողը մի Ֆրանսիացի է։)

5. Ամեն տղայ ունի իրան հէր ու մէր,
Մէջ աշխարհիս դու ես անտէր մնացեր.
Արարածոց լոյս է բացել անշնջեր,
Քեզի համար մթու, ամպոտ սև օրեր։

6. Հեռուից կ'երևին ժամ ու զանգատուն.
Բերդ ու պարիսպ նկուն, կիսով քայքայուն,
Քաղաքդ, շէնքերդ անբնակ,
Դէհ, ինչպէս հայու աչք չողբայ անքուն։
Ջերևիր թագաւոր, չերևիր զինուոր.
Հայաստան ազատ, վախ, էս ինչ սև օր.
Արարատ, քո տխուր ազգդ ցիր ու ցան,
Երկիրդ առաց կոխան, ափսոս քեզ հազար։

(Այս գողտրիկ տողերը մի պատւական հայ-կաթոլիկ վարդապետի են։)

«ՓՈՐՁ». Գեղամեան

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԳՉԻ ԱՆԷԾՔԸ

Դարեր առաջ կար բարձրաբերձ պարիսպներով մի դղեակ,—
Հոյակապ էր, փառքն հասել էր մինչ ովկիան կապուտակ.
Շուրջը փռւած ծաղկեպսակ անուշաբոյր պարտէզներ,
Թարմ, զովաշունչ շատրւաններ ցայտում էին վառ շիթեր։
Եւ բազմայաղթ այնտեղ նստած զոռոզ արքան հողաշատ
Բազմած էր իր գահի վրայ մռայլ դէմքով ու գունատ.
Ամեն խորհուրդն արհաւիրք էր, կատաղութիւն աչքերում,
Նրա ամեն խօսքը կորուստ, արիւն էր նա միշտ գրում։
Այս ամրոցը երկու ազնիւ երգիչ գնացին մի անգամ՝
Մէկն ալեզարդ, միւսը մանուկ ոսկեզանգուր ու փարթամ.
Տաւիղն ունին, մի գեղեցիկ նժոյգ հեծած ծերունին,
Նրա կողքին ընթանում էր ծաղկահասակ պատանին։
Ծերուկն ասաց իր ընկերին. «Պատրաստ եղիր, իմ որդեակ,
Մեր սրտառուչ տաղերն յիշիր, երգիր ազատ, համարձակ.
Երգիր և՛ վիշտ, և՛ խնդութիւն մատաղ ձայնով դու հզօր,
Գոռ արքայի քարէ սիրտը պիտի շարժենք մենք այսօր»։
Արդէն շքեղ սիւնազարդ նրանք սրահումն են կանգնած,
Գահի վրայ թագաւորը և թագուհին են բազմած։
Նա սիգապանծ՝ ինչպէս փայլը արիւնավառ հիւսիսի,
Իսկ թագուհին քնքուշ՝ նման արուսեակին յուսալի։
Զարկեց ծերուկն ոգևորւած նուրբ լարերն մատներով,
Ճոխ արձագանք տւին նրանք լիահնչիւն ձայներով
Եւ գեղեցիկ տաղ երկնարժան չքնաղատես պատանին,
Ինչպէս համերգ ոգիների, և խլաձայն ծերունին։
Նրանց երգն էր գարուն և սէր, երանաւէտ ոսկեդար,
Ազատութիւն, խօսք ճշմարիտ, արիութեան գործ արդար,
Եւ հեշտութեան ամեն վայելք, որ յուզում է սիրտ մարդկան,
Եւ այն ամենն, որ կարող է մարդուն տալ տիպ վեհութեան։
Պալատական ասպետներ ծաղրի խօսքեր մոռացան

Եւ անվեհեր զինուորները հզօր երգիցն յաղթեցան։
Իսկ Թագուհին, սիրտը շարժուած, աչքին արցունք բերկրալից,
Ահա հանեց, ձգեց երգչին չքնաղ մի վարդ իր կուրծքից։
«Գայթակղեցիք դուք իմ ազգը,—գոռաց արքան մոլեգին
Ձգեց սուսերն, օդում ցոլաց, մատաղ կուրծքը պատռատեց,
Ոսկեհնչիւն երգերի տեղ կուրծքից արիւն դուրս ցայտեց։
Ասես մրրիկն խոկոյն ցրւեց այն ունկնդիր ամբոխին։
Իր վարպետի գրկումն հոգին փչեց անբաղդ պատանին,
Ծածկեց մարմինն նա Թիկնոցով, նստեցրեց երիվար,
Ամուր կապեց և ամրոցից նա հեռացաւ վշտահար։
Եւ դուրս եկաւ, կանգնեց բարձր դարբասի դէմ ծերունին
Եւ ձեռքն առաւ տաւիղն, ամէն տաւիղներից մեծագին.
Զարկեց նրան կճեայ սեանը, փշուր-փշուր խորտակեց.
Դէպի ամրոց ու պալատներն սոսկալի ձայն արձակեց.
«Վա՜յ քեզ, խրո՛խտ դու ապարանք. Թո՛ղ ո՛չ մի ձայն քաղցրութեան,
Լարի հնչիւն, երգ չըլսուի քո յարկի տակ յաւիտեան,
Այլ ստրուկների երկչոտ քայլեր և հառաչանք, հեծութիւն,
Մինչ չար ոգին վրէժխնդրութեան քեզ դարձընէ սև աճիւն։
«Վա՜յ ձեզ և դուք անուշաբոյր, գարնանազեղ պարտէզներ,
Տեսէք այս մանուկ երգչի դէմքին փառւած տանջանքներ.
Թո՛ղ սըրա տեղ դուք Թառամիք, աղբիւրներդ ցամաքեն.
Գալ օրերին Թո՛ղ քար կտրած և ամայի ձեզ տեսնեն։
«Վա՜յ քեզ, նզովեալ երգիչների, վա՜յ քեզ, անարգ մարդասպան,
Արիւնալի փառքի համար մարտըդ լինի Թո՛ղ ունայն.
Թո՛ղ մոռացւի քո անունը մշտագիշեր խաւարում,
Ինչպէս մահւան վերջին հառաչք, սին ձայն ցնդի Թող օդում»։
Ծերուկն ասաց, և երկինքը լսեց նըրա պաղատանք.
Պարիսպները փոշի դարձած, կործանուած է ապարանք,
Բարձր մի սիւն դեռ վկայ է հին օրերի փառաւոր,
Այն էլ շուտով պիտի լինի մի փլատակ սըգաւոր։
Չը կայ բուրմունքն այգիների, շուրջը միայն անապատ,
Չը կայ վտակ, ստուարԹախիտ չըկայ մի ծառ ստւերաշատ
Եւ չի յիշում մի տարեգիր կամ երգ անունն արքայի.—
Այսպէս անձ կատարւեցաւ անէծքն անեղ ծեր երգչի։

ՇԻԼԼԵՐ. Թարգմ. Ց. Ցովհաննիսեան

ԱՆԳՐԱԳԷՏ

Երբէք մէկին չեմ նախանձում ես աշխարհի երեսին,
Միայն, գրագէտ դուք պարոններ, նախանձում եմ ձեր բաղդին.

Ա՜խ, գԹացէք գեղջուկ որբիս, մի լաւուԹիւն միայն արէք—
Տըւէք մի ԹերԹ ինձ ճերմակ Թուղթ, մի փետուրէ գրիչ ուէք.
Եւ ինձ գրել սովորցըրէք, սովորցըրէք լաւ, շուտով,
Որ գըրիչըս կայծակից էլ արագ Թռչէ գըրելով.
Որ պատմելով Թղթի վրայ ես ձեզ ցոյց տամ ամէն բան—
Մեր աշխատանքն, մեր չարչարանքն ու մեր խաչը վկայութեան...
Կը յայտնէի՝ ինչ ցնորքներ, ինչ մտքեր կան իմ գլխում,
Մի ողջ աշխարհ ցոյց կը տայի ես աննման պատկերում...
Բայց այժմ անհետ չըքանում են բոլոր իմ քաղցր երազներ.
Ես անգրագէտ, ես անուս եմ... Սովորցրէք, պարոններ։
Կը գրէի, ինչպէս ամառն արշալոյսն է փայլփայլում,
Եւ քարերին զարնըւելով կայտառ ջուրն է կարկաչում.
Ինչպէս արտում ցորենի հետ որոմ է անում ժեղմ քամին
Եւ աղօԹքի հրաւիրում փոքրիկ զանգը մեր ժամին.
Ես աղօԹել եմ կամենում, բայց չըգիտեմ աղօԹքներ—
Ես անգրագէտ, ես անուս եմ... սովորցրէք, պարոններ։

Ազնիւ գործ է, Թէ մարդ գրել իր խօսքերը կարենայ,
Բոլորն ինչ որ մտածում է, բոլորն ինչ որ գլուխը գայ,
Գրչով պատմէ այն ամէնը, ինչ դիզւել է իր սրտում,
Ճշմարտութիւն միշտ քարոզէ, բարի գործի մեծուԹիւն.
Ես շատ անգամ ծաղր եմ լսում, բայց իմ ուսեալ Թշնամուն՝
Սիրտս այրւում է, պատասխանի չունիմ ոչինչ զօրուԹիւն.—
Եւ զուր տեղը ես տանջւում եմ և յուզւում եմ և դողում,
Եւ միմիայն Թղթի վրայ անմիտ կերպով խազխզում։
Ինձ ծաղրում են և ամօԹով կարմըրում են իմ այտեր...
Ես անգրագէտ, ես անուս եմ... սովորցրէք, պարոններ։
Շատ լաւ բան է գիր իմանալ։ Գըրագէտ է վաշխառուն.
Գըրագէտ են զատարանի ծառայողներն անկշտում.
Եռանդով էլ նրանք գրում են, նրանցն է գրախտն աշխարհի,
Իսկ այդ գրելն ինչ փոյԹ, որ խեղճ մարդու հոգին պիտ՝ հանի։
Շուտո՜վ, շուտո՜վ, գըրիչ տըւէք, սովորցըրէք գործածել,
Կամիմ գրել ազգի համար, նըրա համար աշխատել.
Եւ ես նըրան կը պաշտպանեմ չարագործից, յիմարից,—
Կ'արտագրեմ Աւետարանն ես բոլորը ըսկզբից...
Ա՜յ, դու սա՛գ իմ, ճերմակԹեւիկ, քեզ տւել եմ կերակուր,
Քեզ սիրել եմ—փոխարէնը Թեւից ինձ մի գրիչ տուր,
Սիրուն դու սագ, տո՛ւր խնդրում եմ ինձ Թռչելու զոյգ Թևեր,
Ուր բոլորը գըրագէտ են.—սովորցրէք, պարոններ։

Թարգմ. Ց. Ցովհաննիսեան

ԳԱՐՈՒՆ

Քեզ ըսպասող չը մնաց.
Ո՞ւր ես գալի, ա՜յ գարուն,
Գովքըդ ասող չը մնաց,
Զո՞ւր ես գալի, ա՜յ գարուն։

Սև-մութ պատեց աշխարհին,
Սար ու ձոր դառան արին,
Մեզ վայ բերեց էս տարին,—
Ո՞ւր ես գալի, ա՜յ գարուն...

Բիւլբիւլն եկաւ՝ վարդ չունի,
Ծաղկոցը կայ՝ զարդ չունի.
Էլ ո՞վ ա որ դարդ չունի—
Ո՞ւր ես գալի, ա՜յ գարուն։

Յ. Յովհաննիսեան

ՀԱՏԻԿ

Լոյսը բացւում է, շուտ արտը գնամ,
Պատռեմ սուր խոփով ես կուրծքը հողի
Եւ, սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ
Մինչև օրերը ամրան արևի։

Թաղեմ քեզ, հա՛տիկ, և դարդս քեզ հետ,
Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,
Թո՛ղ դարդս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ մխիթար, կրկին տո՛ւն դարձիր։

Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջև
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,
Որ քեզ պարգևէ մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայէ խնդաղէմ։

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար
Արժանի չը լինեմ, ծով կը դարձնեմ

Ես տաք քրտինքը ճակտիս արևատ.
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չը թողնեմ։

Ծլի՛ր, կանաչի՛ր, ոսկէ սաւանով
Ծածկի՛ր իմ արտը ողջ ալէծածան,
Նոր այն ժամանակ անուշ շըշիւնով
Տո՛ւր ջարդւած սրտիս մի քուն հանգստեան։

Յ. Յովհաննիսեան

ՈՂՈՐՄԱ՜Ծ ԵՂԷՔ

Երբ ձեր հոյակապ, շքեղ տներում
Անթիւ զարդարանք ձեզ շրջապատած—
Գոհար, ադամանդ, դիպակ, աբրեշում,
Դուք ծիծաղում էք՝ կեանքից լիացած.
Եւ այդքան գանձերն առա՜տ ու անբա՜ւ
Չեն էլ շլացնում ձեր աչքը բնաւ.

Երբ դուք բաղդաւոր, «կենաց բաժակներ»
Ուրախ պարպում էք փարթամ խնջոյքում,
Ասացէք դուք ինձ, ո՜վ մեծատուններ,
Այդ զըւարթ ժամին դուրսը, փողոցում
Դուք նկատո՞ւմ էք անճար աղքատին՝
Լալով նայելիս ձեր լուսամուտին։

Խղճուկը քաշւած փողոցի անկիւն,
Քաղցած նայում է նա ձեր խնջոյքին
Եւ խուլ մրմնջում. «Ահա՛ լիութիւն,
Առատ բարիքներ, ահա՛ խնդագին
Ե՛ւ պայծառ օրեր, և՛ վիճակ խաղաղ,
Ահա՛ ամէն ինչ—կեանք, վայելք, ծիծաղ...

«Իսկ ե՞ս... ես թշւառ, ես մերկ, անօթի,
Իմ օթևանը խարխուլ ու մըթին,
Վա՜յ ինձ... ես մի այլ դառն վիճակի
Դատապարտւած եմ երկրիս երեսին.

Կինս թոքախտում, տանս հոգս ու ցաւ,
Խեղճ զաւակներս քաղցած ու ծարաւ...

«Եւ շատ քչերին տրւած է կեանքում
Վայելել օրեր լի երջանկութեան.
Անարդար բախտը կեանքի խնջոյքում
«Ապրի՛ր»—ասում է հարուստ մեծատան.
Իսկ ինձ—«դու հեռո՛ւ, դու բախտին օտա՛ր
Անվերջ երազիր բախտալից աշխարհ...»։

Օ՜հ, նա, միայն նա կարող է ըզգալ,
Թէ ի՞նչ ասել են այս դաժան խօսքեր,
Ով ինքն է եղել թշւառ, տառապեալ...
Բայց դուք, դուք, բաղդի հարուստ ընտեալներ,
Ձեզ ի՞նչ փոյթ... ձեր կեանքն առատ է, լեցուն.
Ողորմա՛ծ եղէք, Աստուծոյ սիրուն։

Ողորմածութիւնն մա՛յր է որբերին,
Մայր նոցա, որո՛նք իրանց սև բաղդին
Խորթ մայր են կոչում։ Եւ այնտեղ, ուր միշտ
Տիրում է տանջանք, ցաւ, կարիք ու վիշտ,
Այնտե՛ղ է նա միշտ թռչում, սլանում
Եւ մարդկանց աչքից արտասուք սրբում։

Աղերսում եմ ձեզ յանուն որբերի,
Հալածւած բաղդի անողոք վճռով.
Թո՛ղ մարդս բարի, ողորմած լինի,
Թո՛ղ նա գթառատ, սիրաբուխ սրտով
Իր ճոխ գանձերից և՛ հէք թշւառին
Ձերմ կարեկցութեամբ միշտ հանէ բաժին։

Ողորմա՛ծ եղէք։ Ահա՛ գործ փոքր...
Երբ անտէր մի որբ կամ ծեր մուրացկան
Ձեր դըռան առաջ ահով, տխրադէմ,
Լուռ սպասում է ձեր ողորմութեան,
Եւ դուք մընում էք անհոգ, անտարբեր—
Դուք Տիրոջ սիրտն էք խոցում, հա՛րուստներ։

Ողորմա՛ծ եղէք, որ հզօր Աստուած
Ձեզ և ձեր որդոց լինի պահապան,
Որ ձեր ամբարներ ցորենով լցւած՝
Նորա օրհնութեամբ անսպառ մընան.
Ողորմէ՛ք... և ձեզ ամենայն գիշեր
Կ՚այցելեն պայծառ, սիրուն երազներ...

Ողորմա՛ծ եղէք, որ մահւան ժամին
Որբին, անճարին ձեր տըւած տուրքից
Հանդերձեալ աշխարհ դուք տանէք բաժին,
Որ նա՛, ում այստեղ կեանքն էր ողբալից,
Նա՛ կարողանայ ձեր դըռան մօտով
Անցնել աննախանձ և խաղաղ հոգով։

Ողորմա՛ծ եղէք, որ ապրէք գըւարթ,
Որ Տիրոջ սիրոյն լինիք արժանի,
Ողորմէ՛ք անվերջ, ողորմէ՛ք առատ...
Ձերմ աղօթքները տառապեալների
Թռչում են այնտե՛ղ, ո՛ւր սուրբ օթևան,
Ուր աղքատութեամբ հզօր ենք միայն...

Աղ. Ծատուրեան

ԱՐԾԻՒՆ ՈՒ ՃԻՃՈՒՆ

Հսկայ թևերը լայն-լայն տարածած
Հզօր արծիւն ուզզեց իր թռիչք
Դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,
Դէպի անսահման կապուտակ երկինք։
Երկար սաւառնեց նա խիտ ամպերում,
Քանի ոյժ ունէր զօրեղ թևերում.
Եւ վերջիվերջոյ՝ յոգնած ու դադրած,
Նա նստեց հսկայ մի լեռան կրծքին,
Որի գագաթը մինչ երկինք հասած,
Սարսափ էր ազդում վերև նայողին։
Նստեց նա հանգիստ, անվախ, անվրդով,

Եւ շուրջը գոռոզ հայեացք ձգելով,
Իր արքայական ձայնովն անեղ
Որոտաց ուժգին.—«Մենակ եմ այստեղ,
Մենակ ու ազատ այս լեռան վրայ,
Որպէս քաջայաղթ լիազօր արքայ.
Իմ գահն է անհուն այս երկնակամար,
Որոտ ու ամպեր—ոտքիս պատուանդան.
Ո՞վ կայ աշխարհում փառքիս հաւասար,
Ո՞վ կարէ հասնել գահիս բարձրութեան»...
—Ե՜ս...

Լսեցաւ յանկարծ մի ձայն թոյլ, բարակ,
Մեծապանծ թռչնի հէնց ոտների տակ.
—Ես՝ անձրևային ճիճուս աննշան։
—«Ի՞նչպէս, դու, այստեղ, իմ դէմ յանդիման.
Ասա ինձ շուտով, ճիճու անպատկառ,
Ո՞րտեղից դու այս ամպերին հասար։
Ասա, պատմի՛ր ինձ, ի՞նչպէս, ի՞նչ կերպով»...
—Ինչպէ՞ս.—սողալով, արծիւ, սողալով...

Թարգմ. Աղ. Ծատուրեան

Լ Օ Ռ Ի

Այն Լօռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը խորունկ նօթերը կիտած՝
Դէմուդէմ կանգնած, յամառ ու անթարթ
Հայեացքով իրար նայում են հանդարտ։

Նրանց ոտքերում գազազած գալի
Գալարւում է գիժ Դև-Բեդը մոլի.
Խելագար թռչում քարերի գլխով,
Փրփուր է թքում անզուսպ երախով,
Թքում ու զարկում ժեռոտ ափերին,
Փընտրում է ծաղկած ափերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ.
—Վա՜շ-վի՜շշ, վա՜շ-վի՜շշ...

Մութ անձաւներից, հազար ձևերով,
Քաջքերն անհանգիստ հրապիտ ձայներով
Դևի հառաչանքին արձագանք տալի,
Ծաղրում են նրա գոռոցն անելի
Ու կրկնում գիժ-գիժ.
—Վա՜շ-վի՜շշ, վա՜շ-վի՜շշ...

Գիշերը լուսնի երկչոտ շողերը
Հէնց որ մտնում են այն խաւար ձորը՝
Ալիքների հետ խաղում գոռալով,
Անյայտ ու մռայլ մի կեանքի գալով՝
Ոգի է առնում ամեն բան այնտեղ,
Շընչում է, ապրում և մութն և անեղ։

Այս տախտի վըրայ աղօթում մի վանք.
Այն ժայռի գըլխին հսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպէս զարհուրհանք,
Բուի կռինչն է տարածւում մերթ-մերթ
Իսկ քարի գլխից՝ լուռ մարդու նման,
Նայում է ձորին մի հին խաչարձան։

Յովհ. Թումանեան

ԻԳԻԹԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ,
Երկընքի մըթնած ամպերից իջնէր.
Ինչպէս փոթորիկ սաստիկ սըրնթաց,
Գիւղից սըլացան մի խումբ կըտրիճներ։

Ցաւից տաքացած՝ էլ բան չեն հարցնում,
Թըռչում են, ասես ահից հալածւած,
Ու նրանց առջև անելի բացւում,
Թըշշում է ձորը արիւնով լըցւած։

Գիւղը դատարկւեց մի ակընթարթում.
Քարափի գըլխին կանգնած անհամբեր,

Լո՜ւռ, սրտատրոփ ականջ են դընում,
Նայում են ներքև... ձայն չի գալի դեռ.
Դեբեդն է միայն անդընդում յուզւած՝
Խըլաձայն ողբով սուրում դէպի ցած։

Ու մարդասպանը դուրս եկաւ ձորից,
Դէմքը այլայլած, քայլւածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եւ կերպարանքը փոխւած է բոլոր։

Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խօսելու, սևակնած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տւաւ սընին
Սև հրացանը, սև օձի նըման։

Պապանձւեց նոյնպէս ամբոխը մեխւած,
Ոչ ոք ծըպըտալ չի համարձակւում,
Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝
Հարա՜յ է կանչում, երեսը պոկում։

Մեռած չոբանի նանն է նա՝
Ցաւից խելագար բառաչում, լալիս.
Տարաբախտ ծընող, վազում է ահա,
Ձորիցն է տըխուր գոռոցը գալիս։

Յովհ. Թումանեան

ՀԱՄԵՐԳ

Վըտակը ժայռից ներքև է թըռչում,
Թափ առած ընկնում քարերի գըլխին,
Զարկւում ուռագին, շաչում է, ճըչում,
Ճըչում անհանգիստ, փըրփուրը բերնին,

Ինչպէս ծերունին, ձայնով պառաւած,
Ձայնակցում է ժիր թոռնիկի երգին,
Այնպէս է ծերուկ անտառը կամաց
Արձագանք տալի ջըրի աղմուկին։

Սակայն բնութեան գըւարթ համերգի
Ունկընդիրն անխօս, յաւիտենական,
Ժայռը մըտախոհ իր մըռայլ մըտքի
Ետևից ընկած լըսում է նըրան։

Յովհ. Թումանեան

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՋԵՒ

Ելած՝ ովկիանի անզուսպ ալիքներ
Ծանըր յորձանքով զարկելով դէպ վեր
Լեռնանում էին գոռալով ահեղ.
Եւ մըրրիկն ուժգին շընչում էր այնտեղ
Անեզր ու անվերջ
Տարածութեան մէջ.

«Կանգնեցէք», գոչեց վըրձինը ձեռքին
Կախարդ ծերունին յուզւած տարերքին
Եւ լուռ, հընազանդ հանճարի ձայնին,
Մութ ալիքները՝ փոթորկի ժամին
Կըտաւի վըրա
Կանգնած են ահա։

Յովհ. Թումանեան

ՄԱՅՐԻԿՍ

Հայրենիքէս հեռացել եմ,
Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ.
Ազիզ մօրէս բաժանել եմ,
Տխուր, արտում, քուն չունիմ։

Սարէն կուգաք նախշուն հաւքեր,
Ա՜խ, իմ մօրը տեսե՞լ էք.
Ծովէն կուգաք մարմանդ հովեր,
Արդեօք բարև բերե՞լ էք։

Հաւք ու հովեր եկան կշտիս,
Անձէն դիպան ու անցան.
Պապա՜կ սրտիս,—փափաք սրտիս՝
Անխօս դիպան ու անցան։

Ա՜խ, քու տեսքին, անուշ լեզւին
Կարօտցել եմ, մայրի՜կ ջան,
Երնէ՜կ, երնէ՜կ, երազ լինիմ,
Թռչիմ մօտդ, մայրի՜կ ջան։

Երբ քունդ գայ, լուռ գիշերով,
Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,
Սրտիդ կպնիմ՝ վառ կարօտով,
Լամ ու խնդամ, մայրի՜կ ջան։

Աւ. Իսահակեան

Գ Ի Շ Ե Ր

Շղարշ ամպերն երկինքն առան,
Լուսնակն աղօտ կը շողայ,
Լռիկ ճահճում հարհանդ-մարմանդ,
Նուրբ եղեգնը կը դողայ։

Մռայլ-ափին մենակ նստած
Սիրտս անուշ կը թախծի.
Եւ անուրջում միտքս թաղւած,
Քունն աչքերիս կը հանգչի...

Աւ. Իսահակեան

Ձ Մ Ե Ռ

Պարզկայ գիշե՜ր...
Աստղերն երկնքում լուռ պսպղում են.
Լուսնի շողերը դիպել են սարի
Ձիւնոտ կողերին,—կողերը ցոլում.
Պէծին են տալիս։

Ցրտաշունչ քամին
Թևերը փռած՝ փնչում է, թռչում,
Սառած երկիրը՝ ճաքում-ճաքճքում,
Ձեան հատիկներով քարափի կուրծքը.
Ծեծում ու ծեծկում...

Անծա՜յր ճանապարհ...
Առաջ եմ գնում,—ո՜ւր.—ես չը գիտեմ,
Սառո՜յց ու ձմե՜ռ,

Առաջ եմ գնում անյո՜յս, անընկե՜ր,
Քամի՜ ու գիշե՜ր.
—Ա՜խ, եթէ յանկարծ յոյսս շողշողա՜ր,
Նա ինձ ողջունէ՜ր...

Աւ. Իսահակեան

Մ Ա Ճ Կ Ա Լ

Մաճկալ ես, բեզարած ես,
Առը շո՜ւռ տուր, շո՜ւռ արի.
Ծովի պէս քրտընած ես,
Եզներն արձկի՜, տո՜ւն արի։

Կաթի սերը քաշել եմ,
Դրել եմ հովին՝ սառի.
Ալ գոգնոցս փռել եմ,
Արի՜ թառլա՜ն, թը՛ռ արի։

Դադրա՜ծ, բէզարած եա՜ր ջան,
Ամպերն ելան, զէհ, արի՜,
Բէզարած ջանիդ ղուրպա՜ն,
Ծոցիս թև ա՜ռ, թէզ արի։

Աւ. Իսահակեան

ԳԵՂԱՐԴԱՅ ԼԵՌՆԵՐԸ

I

Լեռներ, սէգ լեռներ, ես կը սիրեմ ձեզ,
Կը սիրեմ բուռն ու անզուսպ սիրով.
Հպարտ գագաթնիդ հսկաներ կարծես,
Ինձ կը ներշնչեն թարմ ուժ ու կորով։
Հոն ամեն մի բան սրտիս կը ժպտի,
Թախիծն ու երկիւղ կը վանէ մէկդի.
Հոն զովիկ հով մը դէմս կը փութայ
Եւ կուրծքըս ազատ շունչ կ՚առնու կուտայ.
Իսկ անդընդախոր ձորի յատակին՝
Երբ իր պատերը պատռել տքնելով՝
Ժայռերու դէմքին փրփուր թքնելով՝
Կ՚ուռի, կ՚ոլորի ջուրը գետակին,
Սիրտս ալ, գետին պէս կը կայտռէ վէտ-վէտ.
Եռալ, փրփրիլ կ՚ուզեմ իրեն հետ։

II

Լեռներ, վեհ լեռներ, ձեզ երգել կ՚ուզեմ
Ոգևորութեան այս տենդերուս մէջ.
Թող ձեր ճակատը միշտ թաց, միշտ վսեմ
Դառնայ գործերուս իդէալն անշէջ։
Եւ թող երգիս հետ դուրս թափի կրծքէս
Հոն երկար ատեն ծածկըւած անյուշ
Սրտիս թրթիռը, յոյզերըս անուշ։
Եւ, երնէկ, երգս ալ լինի պարզ, յստակ,
Ինչպէս աղբիւրը, որ դուրս կը ծորայ
Մամռոտ ժայռերու զով խոռոչին տակ,
Ինչպէս լեռնային երկինքը վճիտ,
Ինչպէս, լեռան կոյս, թնդիւնը լանջիդ։

III

Ո՜հ, որքան քաղցր է ձմրան բանտէն վերջ՝
Բնութեան գիրկը խենթի պէս նետուել.
Ու խորհրդաւոր, սիրուն ձորի մէջ,
Ե՛ւ սքանչանալ, և՛ ոգևորուել։

Տաք իրիկուն է, երբ կառքը վերջին
Ոլորն ալ իջաւ. ձորն էր մեր առաջին։
Գետն իր խուլ երգով դէմերնիս փութաց,
Պագաւ երեսնիս իր շնչովը թաց...
Նըրբամէջ ձորը դիւթել կ՚ուզէր մեզ՝
Վառ ծաղիկներով պըճնած դէմքն ու լանջ.
Փարթամ բնութեան իբրև նուրբ բեհեզ
Նետած էր ուսին կրկնոց մը կանանչ.
Սակայն վախնալով, որ հովն անպատկառ
Ծածկոյթը մարմնէն կատակով բանար՝
Անփոյթ դիրքով մը փաթթած էր մէջքին
Փըրփուրէ գետի արծաթէ գօտին...

IV

Եւ այդ թարմ, վայրի բնութեան նման
Նոր էր ու բուռըն վարած կեանքերնիս.
Անցեալի յուշեր, եկէք օգնութեան,
Երգենք միասին ինչ քաղցր էր սրտիս։
Երբ արշալոյսը գաղտուկ ժպտալէն՝
Լեռան ու երկնի համբոյրի վայրէն
Քունէն կարմրած այտերը սիրուն
Ցոյց տար դալկահար, քնատ աստղերուն.
Երբ Արագածի չորս ճիւղ գագաթին
Թուխ-թուխ ամպերը խորունկ յօրանջով
Ճերմակ մահիճնուն ելնէին նազով.
Եւ երբ արթըննար օդը հանդարտին
Թռչուններու սուր առաջին երգէն,
Մենք ալ երգելով կ՚ոստնուինք քունէն։

«ԼԵՌԱՆ ԱՂՋԻԿԸ». Շանթ

Թ Ա Ր Թ Ա Ր

Մռայլ, ահաւոր ձորի անդընդում
Թարթարը անվերջ գոչում է, թնդում.
Հսկայ վիշապի նման կատաղած՝

Առաջ է վազում յուզւած, փրփրած.
Առաջ է վազում նա գալարւելով
Գետնի ապառաժ կուրծքը ճեղքելով,
Բարձր մռնչում, գոչում է ուժգին,
Իր ահեղ ձայնով տատանում չորսդին.
Շարժում է տեղից լեռնոտ գետափը,
Ծեծում ու քերում ժեռ ու քարափը։

Նեղւած ափերից դաժան, անողոք՝
Գետը զայրացած բառնում է բողոք.
Բայց այնտեղ ահա ծառերը գալար
Երկու ափերից կազմել են կամար
Եւ խոնարհւելով կարդում են յորդոր,
Որ հանդստանայ գետը ահաւոր.
Արևն էլ շողքը կապոյտ երկնքից
Գցել է ներքև ճիւղի արանքից,
Ջուրը փայփայում, հետը խաղ անում...
Սակայն նա դարձեալ աղմուկ է հանում։

Եւ անդնդախոր ձորի եզերքին,
Ուր ամբառնում են ծառերը երկին,
Նեղ, օձապտոյտ շաւղի վըրայով,
Տե՛ս, կարաւան է ընթանում ահով։
Ձորը բաց արած ահեղ բերանը՝
Ուզում է կուլ տալ ողջ կարաւանը.
Մի թեթև շարժում, անզգո՛յշ մի քայլ—
Նա կը գլորւի անդունդը մռայլ.
Զայրագին, յուզւած Թարթարը այնտեղ
Խեղդամահ կ'անի իր զոհին անմեղ...

Ցալումին Թումանեան

ԱՌԱՒՕՏ

Այգը բացւեց։ Հորիզոնը
Բռընկւեցաւ ալ բոցով,

Եւ երկինքը շառագունեց,
Իբրև ներկած կարմիր ծով։
Արեգակը իր հրեղէն
Նարօտները տարածեց
Եւ երկնքի ամպիկները
Ոսկով օծեց ու նախշեց։
Եւ բնութեան թագաւորը
Լեռան ուսը վեր ելած՝
Արքայական կապոյտ վրանից
Իր շողերը թափեց ցած.
Խաւարի դէմ մաքառելով,
Նա վերացաւ կամարը
Ու ոսկեհուռ իր վահանով
Պատսպարեց աշխարհը։

Ցալումին Թումանեան

ԼԱԼՒԱՐ ՍԱՐԸ

Ծագում է մանուկ արևը գարնան
Կովկաս լեռների ձիւնի պատնէշից,
Զարթնում են մէկ-մէկ սարերն աննըման
Զմրան անվրդով քնի մշուշից.
Ահա՛ Լալւարի վիթխարի ուսին
Բազմում է արփին թարմացած ուժով,
Սարեր ու ձորեր իրար երեսին
Նայում են, ժըպտում ամպի մշուշով...
Վերջին ձիւներն էլ ահա՛ հալ ընկան,
Արտասւեց իսկոյն լեռների հսկան.
Ամեն մի ձորից աղբիւր է հոսում,
Ամեն մի թփից բիւլբիւլ է խօսում.
Ե՛ւ զալար հովիտ, և՛ ժայռի կըրծքեր
Արձագանք տալով գարուն են հընչում.
Զըմրան փարախից հովւական երգեր
Զեփիւռի թևով սարերն են թռչում.

Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
Բացւում է, ժըպտում կոկոնից ըլւարթ.
Փարթամ գեղութեան ոգին Գուգարքի
Շընչում է գարնան բոյրով անարատ.
Ամպերն էլ իրար համբոյրներ տալով,
Զըւում են կայտառ, Լալւարը գըրկում,
Առաջին անգամ Թունդ որոտալով,
Գուգարք աշխարհին ողջոյն են երգում.
Եւ հայրենիքում փայլակ-կայծակի
Գիշերւայ ըրոշմած գաղտնի համբոյրներ,
Երգում են երկրին սէրը երկնքի,
Դողում են սիրուց սարեր ու ձորեր.
Եւ խորհրդաւոր մի Թովիչ ձայնով
Խօսում են նըրանք, իրար հետ փարւում,
Երգում են, խընդում, հազար բերանով
Լալւարի վիթխար հասակը գովում։

Վ. Միրաքեան

ՍԱՐ ԳՆԱԼԸ

Անձ գարնան հետ և շարան-շարան
Դաշտավայրերից դէպի զով սարեր
Զգւեց սայլերի, ուղտերի քարւան—
Փախչում են շոգից Թէ Թուրք, Թէ հայեր.
Թընդում են ձորում զանգի հնչիւններ,
Ջիերի խըխինջ, պայտերի դոփիւն,
Մէկ-մէկի կըցած անվերջ քարւաններ
Քաշում է նառը, ահեղ մռնչում.
Ո՛րը տանում է ալաչխի քէչան,
Կուժն ու խնոցին, ճիպոտն ու չաթան.
Ո՛րն էլ զարդարւած գիր ու փնջերով
Օրօրւում, անցնում լեռան լանջերով.
Բայց նառն ինքնագոհ քայլում է հանդարտ,
Բոժոժ ու զանգեր վըզին ու կըրծքին,

Եւ օրօրելով կապերտներ ու զարդ,
Գեղեցիկ հարսն է նա տանում մէջքին.
Մերթ բարկանալով, կանգնում է հպարտ,
Մերթ փրփուր Թափում կատաղած բերնով,
Մերթ երկար շուրթը կախելով բարդ-բարդ,
Նա պարծենում է գեղեցիկ բեռով։
Բռնել է ճամբէն Թունդ իրարանցում,
Դոփում են ձիեր, սանձերը կըրծում—
Ազնիւ մետաքսից ոսկեթել գործած,—
Աղաջարիներ Թամքերին ըըցած,
Հուժկու կըրծքերից կապած Թալիսման,
Արեւելեան ճոխ արծաթն ու ոսկին,
Ճերմակ ղաթիրան, քօղն ամպի նման
Փըռփռում են սիրուն հարսների դէմքին։
Լեռների տօնն է. մարդ և անասուն
Ուրախ երգերով դիմում են սարեր,
Մոռնալով ձըմրան քաշած վայնասուն,
Ծաղիկ փնջելով անցնում են ձորեր.
Անցնում են արագ քոչ-քոչի միջով,
Գարնան արևից փայլում են դէնքեր,
Եւ Թարմ կենսաբոյր Թաւիշ կանաչով
Բացւում են, ժըպտում սարւորի դէմքեր.
Փոքրիկ երեխան պինդ մէջքին կապած՝
Խեղճ հովւի կինն էլ վազում է ոտքով,
Օգնում է մարդուն՝ գոհ և սըրտաբաց
Բաղդի որոշած ծանըր վիճակով.
Մայում են, բայում գառըն ու մաքին,
Թընդում կովերի, հորթերի բառաչ.
Իսկ տըրընգալով գոմէշը ձագին
Կանչում է՝ դանդաղ վազելով առաջ։
Վազում են յոգնած շները հօտի,
Եւ լեզուն հանած Թանչին են տալիս.
Լսւում է յանկարծ ձայնը լակոտի,
Որ քոչից ընկած՝ կալանչ է գալիս։

—

Քարւանի ծայրը սարերը հասաւ,
Հասաւ ու ձուլեց Թուխ ամպերի հետ,
Վըրան-վըրանի ետևից բըսաւ
Ծաղիկների մէջ գոյն-գոյն, սիրունէտ.
Ալաչուխ, դագա, անվերջ վըրաններ
Շըրջան կազմելով սառն աղբրի ափին,
Ինչպէս ծեր արծւի կարկատած բըներ,
Յենւեցին մէկ-մէկ բարձըր քարափին.
Դաշտեցի հայն էլ սառ ջըրի կարօտ՝
Եկել է, գըրել բինէն այս ամառ
Լօք, Լալւար, Հեջան աղբիւրների մօտ,
Տօքերից ազատ ապրելու համար։
Գուգարք սարերի սիրունէտ լանջին
Բազմել են հայի, Թուրքի բինաներ,
Բայց դարձեալ խառնւած քոչ-քոչի միջին՝
Դեռ երերում են ուղտի քարւաններ,
Թըրխնջում է ձին, կովը բառաչում,
Բոլորն էլ իրանց եւրտն են ճանաչում.
Մայում է անուշ ամլիկը գառան.
Սարեր ու ձորեր նորից կեանք առան։
Գիշերը հասաւ. մըթին է ճամփան.
Մարում է կամաց աղմուկը քոչի.
Առւակի ափին քարւաններն իջան.
Կանչում են՝ «տըղերք, ապրանք չըկորչի»։
Սայլերի ճըռռոց, ոչխար ու տաւար
Գըռնելով ձորում գիշերն իջևան,
Հանգիստ են առնում միւս օրւան համար։
Կըրակի վրայ առւակի ափին
Մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,
Մի տեղ էլ կորած գառանն ու հորթին
Սար ու ձոր ընկած հովիւն է կանչում.
Մի այլ տեղ ուրախ շըրջան բոլորած,
Ուտում են նըրանք կաթն ու խորոված.
Գիշերն էլ արդէն մնջում է, լռում,
Ցողնած քոչւորին հանգիստ քուն բերում...

Ամպի փէշերը կախած մի ծայրին,
Լալւարն էլ կարծես նոյն վիշան է զգում,
Ինչպէս վիրաւոր արծիւը ժայռին,
Թևերը փռած քոչւորին հսկում։
Բայց Լօք սարերի կանաչ լանջերում
Մի բինա էլ կայ, որ դեռ չի քընում.
Այնտեղ խարոյկի շուրջը բոլորած՝
Տեսած ու լըսած արկածն են պատմում,
Եւ մեծ ու փոքր ականջներ լարած՝
Աշուղ Գիքօյի երգերն են լսում.
Պատմում է, երգում աշուղն անցեալից,
Ջորերում տեսած հին իգիթներից.
Կըրակին գըցած կաղնի մեծ գերան՝
Սարւորն էլ արթուն լսում է նըրան։

Վ. Միրաքեան

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԳԻՇԵՐ

Սարերին բազմեց սևահեր գիշեր
Աստղերը ճակտին
Ու քանդեց-թողեց ծամերը սև-սև
Ծաղ տւեց չորսդին։
Հէքեաթի նման աղբիւրն է հոսում
Գիշերւայ դիւթիչ շուրթերի վրան,
Կարծես թէ խորքից Աստւած է խօսում,
Եւ աշխարք դիւթւած լսում է նրան։
Այն գիժ Ճորոխի ժայռերն են ահա,
Որ ինչպէս մթնած երկու մռայլ ամպ
Կարծես դիմարգել երկու աժդահայ
Իրար են նայում կանգնած պատահմամբ։
Այն գիժ Ճորոխն է, որ ահեղ ձորում
Քարւանի նման չըւում է իր չուն
Որ մէկ գոռում է, մէկ նւաղ մարում,
Պարելով ճամբայ խաւարի միջում։
Հանգչում են, հալչում ձայներն աշխարհի,
Հնչում է ժամը խորին պապանձման

Դիզւում են, կապւում ջրերը երկրի
Եւ ականջ դնում գիշերն Համբարձման։
Սիրուն հարսի պէս զուգւած են ծաղկունք,
Մնում է անտառն ուրախ հարսանքի,
Մինչև որ երկնից կ՚իջնի սուրբ մի սուրբ,
Կը խօսեն բոլոր փարւին մէկ մէկի։

Դերենիկ Դէմիրճեան

ՓՈԹՈՐԿԻ ՊԱՀԻՆ

Գոռում են ալիք, հողմը գիլ սուլում,
Երկինքը երգում.
Խօլական պարով շանթերն են շողում,
Շաչում ու թռչում.
Ճայթում են ամպեր, ճարճատում ժայռեր,
Լեռներ սասանում.
Ցուրտ սահանքները խուժում են երկիր,
Արտ, արօտ ծածկում։

Արամ Զարըզ

ՍՊԻՏԱԿ ԶԳԵՍՏ

Անարգ, խայտառակ մահուան մատնւած,
Հունգարացի կոմսը շղթայակապ էր։
Նա օգնել ուզեց իր խեղճ հայրենեաց.
Հպարտութիւնը խիստ վրդովւած էր։
Նա ստրուկներին, հոգով ստորացած՝
Վաղուց անողորմ թշնամի դարձաւ.
Եւ միշտ կուելով ընդդէմ այս չարեաց,
Կոմսը կախւելու դատապարտւեցաւ։
Հազիւ նա եղաւ քսան տարեկան,
Բայց պիտի մեռնէր։ Մահը չարիք չէ,
Այլ սփոփիչ է վշտերին հոգեկան։
Բայց մեռնել անարգ, խայտառակ մահով,

Կախաղան ելած, ծաղր ու ծանակով,
Դառնալ կերակուր սև ագռաւների—
Ահա նախատինք, չարիք սոսկալի։
Առաւօտը նա մօրը գրկելով,
Ասում էր տրտում «Մայր, մնաս բարով,
Անհաւասիկ ես միակ որդիդ,
Մատաղ հասակիս դատապարտւած եմ
Կարճ օրեայ կեանքից ես անջատւելուն.
Անհետ պիտ կորչին ինձ հետ իմ անուն
Եւ իմ պատիւը։ Խնդրում է որդիդ,
Մա՛յր, որ դու փրկես քո խեղճ զաւակիդ։
Ո՛չ պատերազմի փոթորիկներում
Ահ չեմ զգացել, ոչ ծըխում, հրում.
Բայց վաղւան օրը ելած կախաղան,
Ես պիտի դողամ տերևի նըման»։
Մայրը ասում էր, մխիթարելով՝
«Դէհ չվախենաս, սիրա՛ծ զաւակս,
Ես պալատ կ՚երթամ, և աղերսելով,
Արցունք կըթափեմ. ես իմ լացովը
Արքայի սիրտը, գութը կը շարժեմ,
Եւ առաւօտը, երբ կը տանեն քեզ
Դէպի կախաղան, պատշգամբի վըրան
Թէ սև զգեստով կանգնած լինիմ ես,
Գիտցի՛ր, զա՛ւակս, անխուսափելի
Քեզ մահ կը լինի։
Ո՛չ ապաքէն, դու հըսկայի նըման
Յառաջ պիտ գընաս մահիդ յանդիման։
Հօ քո արիւնը հունգարական է։
Իսկ թէ սպիտակ շոր իմ վրաս տեսնես,
Գիտցի՛ր, որ մայրդ իր արցունքներով
Զաւակի կեանքը դարձրեց ապահով։
Թո՛ղ դահիճներից դու բռնւած լինիս,
Բայց երբէք, ո՛րդեակ, չըդողաս-սարսիս»։
Կոմսը գիշեր հանգիստ է լինում,
Եւ ամբողջ գիշեր մնում է քնած.

Իր երազներում նա մօրն է տեսնում,
Պատշգամի վրայ՝ սպիտակ շոր հագած։
Գուժկան զանգակի ձայնն է ղօղանջում,
Վազում են մարդիկ։ Հանդարտ քայլերով
Եւ շրջապատուած պահպաններով
Շղթայած կոմսը առաջ է գնում։
Քանի՜-քանի աչք պատուհաններով
Արցունք են թափում կոմսի յետևից,
Ի՜նչքան ձգում են կանացի ձեռքեր
Վերջին բարևի նորան ծաղիկներ.
Բայց կոմսը ոչինչ բան չի նըկատում,
Դէպի հրապարակ է միայն նայում.
Այնտեղ պատշգամում մայրըն է կանգնած.
Հանգիստ, անվրդով, սպիտակ շոր հագած։
Ո՜հ, կոմսի սիրտը թընդաց խիստ ուժգին.
Դէպի հրապարակ համարձակ քայլով
Ընթացաւ կոմսը, ժպիտն երեսին,
Անտրտում վերև բարձրացաւ փութով,
Զւարթ և ուրախ դահճի մօտ գընաց
Եւ մինչև անգամ կախւելիս ժըպտաց։
Բայց ինչո՞ւ մայրը սպիտակ էր հագել.
Ո՜հ, խաբէութիւն։ Այսպէս կարող էր
Սուտ խօսել մի մայր, սուտ բեկւած ահից,
Որ իր զաւակը չսարսէ մահից։

Թարգմ. ռուսերէնից

Մ Ո Ւ Ր Ա Ց Կ Ա Ն

Ես անցնում էի փողոցով... Ինձ կանգնեցրեց մի ծեր, հալից ընկած մուրացկան։ Աչքերն արտասուալից, ուռած ու կարմրած, շրթունքները կապտած, հագին լաթեր, մարմնի վրայ անմաքուր վէրքեր...

Օ՛, ինչ այլանդակ կերպով մաշել-կերել էր այդ անբաղդ արարածին աղքատութիւնը։

Նա ինձ պարզել էր իր կարմրած, ուռած ու կեղտերով ծածկւած ձեռքը... Նա հառաչում էր, նա խեղդւած ողորմութիւն էր աղերսում։

Գրպաններս սկսեցի տակն ու վրայ անել... Բան չըգտայ — ո՛չ փող, ո՛չ ժամացոյց, ո՛չ էլ նոյն-իսկ թաշկինակ.. հետս ոչինչ չէի առել... Իսկ մուրացկանը շարունակ սպասում էր... և նրա կարկառած ձեռքը թոյլ կերպով երերւում ու ցնցւում էր։

Ինքս ինձ կորցրած, շփոթւած՝ ես ամուր սեղմեցի այդ դողդոջուն, այդ կեղտերով ծածկւած ձեռքը... «Թողութիւն արա, եղբա՛յր, ես ոչինչ չունեմ»։

Մուրացկանն իր կարմրատակած աչքերը յառեց վրաս։ Նրա կապտած շրթունքները քմծիծաղ աւին, և նա էլ իր կողմից պինդ սեղմեց իմ սառած մատները։

«Է՛հ, ինչ արած, եղբա՛յր, — ծամծմեց նա. — դրա համար էլ շնորհակալ եմ. այդ էլ մի ողորմութիւն է, եղբա՛յր»։

Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն ստացայ իմ եղբօրից։

Տուրգենեվ

Ա Ղ Ա Ւ Ն Ի Ն Ե Ր

Ես կանգնած էի սեպացած բլրի գագաթին։ Իմ առաջ մերթ ոսկեփայլ, մերթ արծաթափայլ շողշողում էր ծովի պէս սփռւած հաճարի հասուն արտը։ Բայց այդ ծովը չէր ծփում. Նրա երեսին չէին խաղում անհանգիստ ալիքներ։ Օդը խեղդուկ ու անշարժ էր և գուշակում էր մի մեծ փոթորիկ։

Իմ շուրջը դեռ ջերմ ու աղօտ լոյս էր սփռում արեգակը. բայց այնտեղ, արտի այն կողմը, ո՛չ այնքան հեռու, մուգ-կապոյտ ամպակոյտը բռնել էր երկնակամարի ամբողջ կէսը։

Ամեն ինչ շունչը կտրել... ամեն ինչ թալկացել, նը-

ւաղում էր արևի վերջին չարագուշակ ճառագայթների տակ։ Չէր երևում ոչ մի թռչուն, ոչ էլ գէթ ձայն էր լսւում։ Ծնճղուկներն անգամ թաք էին կացել։ Միայն մի տեղ, մոտերքում, ջրածաղկի մենաւոր, խոշոր տերևը յամառ կերպով շրշիւն ու շշուկ էր բարձրացնում։

Ափսխնդի սաստիկ բուրմունքը բռնել էր հանդերը։ Ես նայում էի կապտագոյն ամպակոյտին... և սիրտս խռովւում, նեղանում էր։ Դէ, շուտ արա, մտածում էի ես. փայլիր, փայլատակիր, ո՛վ ոսկի օձ, ճայթիր, դղրդա, ո՛վ որոտ. շարժուիր, գլորուիր, երկիր թափուիր, ո՛վ չարագէտ ամպակոյտ, վերջ տուր այս թախծալի հեծութեանը։

Բայց ամպակոյտն անշարժ էր։ Նա առաջուայ պէս ճնշում էր լուռ ու մունջ երկիրը... և միայն կարծես աւելի ուռչում, սևանում էր։

Ահա նրա միագոյն, կապուտակ երեսին մի բան սպիտակին տալով՝ սահուն ու հաւասար սլացաւ առաջ. սըլացողը կարծես մի սպիտակ թաշկինակ կամ ձիւնի քուլայ լինէր։ Բայց դա մի սպիտակ աղաւնի էր, որ թռչում էր գիւղի կողմից։

Նա թռաւ, թռաւ միևնոյն ուղղութեամբ... և սուզւեց անտառի յետևը։

Անցաւ մի քանի վայրկեան։ Նոյն անողոք լռութիւնը շարունակւում էր։ Բայց ահա արդէն երևում են երկու թաշկինակ, ձիւնի երկու քուլայ, որոնք յետ են դառնում։ Դրանք երկու սպիտակ աղաւնիներ են, որոնք հաւասար թռիչքով դէպի տուն են թռչում։

Վերջապէս, փոթորիկն էլ ճայթեց—և սկսւեց տարերքի աղմկալից խաղը։

Ես վազէվազ հազիւ տուն հասայ։

Քամին աղմկում. կատաղի պտոյտներ է անում։ Ցած իջած, շէկ-շէկ ամպերը, կարծես գզգզուած լաթերի պէս թռչում սլանում են գլխավայր։ Շփոթ, աղմուկ—ամէն ինչ իրար խառնում, իրարով է անցնում։ Անձրևի սաստիկ տարափը, օրօրւող սիւների ձև առած՝ շրշալով թափւում է գետին։ Կայծակները հրակայծ փայլատակումներով աչք

են կուրացնում. ընդհատւող որոտը տրաքում ու դղրդում է, կարծես թնդանօթներ լինի արձակելիս։ Օդում ծծմբային հոտ է փչում...

Իսկ կտուրի ծածկի տակ, երդիկի հէնց ծայրին, իրար կողքի նստած են երկու աղաւնի. նստած է համ նա, որ թռել էր իր վարուժանի յետևից, համ նա, որին հետը բերել էր և, շատ կարելի է, ազատել նորան կորուստից։

Երկուսն էլ մէջքերն ուռցրել են, և ամէն մէկն իր փոքրիկ թևով զգում է դրացու թևի մեղմ շփումը...

Բաղդաւո՛ր են նրանք։ Նրանց նայելով՝ ես էլ ինձ բաղդաւոր եմ զգում... թէև ես մենակ եմ... մէն-մենա՛կ, ինչպէս և միշտ։

Տուրգենեվ

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԴԱՇՏԱՎԱՅՐԸ

Ո՜վ դուք, Կարպաթեան բիրտ սարեր, ինչ էք ուզում ինձանից. ինչ է ուզում ինձանից ձեր վայրենի երկիրը՝ եղևնի անտառներով ծածկւած։

Ես հիանում եմ նրանց վրայ, բայց չեմ կարող սիրել. սարեր ու ձորեր չեն կարող իմ հոգին բարձրացնել։

Բայց ձեր ստորոտում, ծովի պէս միապաղաղ այդ դաշտում, ես արդէն իմ տանն եմ զգում ինձ. հոգիս, իբրև արծիւ, որ դուրս է թռչում իր բնից, ընդգրկում է անհունութիւնը։

Ես թռիչք եմ առնում և բարձրանում այս աշխարհից վերև, շատ բարձր, այնտեղ, ուր ամպերն են թռչում, և ամպերի տակ տեսնում եմ այն ծիծաղկոտ երկիրը, որ տարածւում է Թէյսից մինչև Դանուբ։

Կումանիկում, երկնքի տակ, ուր խաղում է Դելիբաբը, հարիւրաւոր պարարտ հօտեր՝ իրանց բօժօժները հընչեցնելով՝ գնում են կէսօրին, լայնատարած ջրհորների ն աւազանում իրանց ծարաւը յագեցնելու։

Կայտառ երիվարների խրխնջիւնը հնչում է քամու

մէջ. լսւում է հեռւից սմբակների տոփիւնը՝ չիքօշների (ձիարած) զւարթ աղաղակները և իրանց երկար մտրակների խլացնող շաչիւնը։

Խրճիթների մօտ, զեփիւռի քնքուշ շունչի տակ, ցորենների ովկիանն է օրօրւում։ Ցողունները հրնկտում են *). և ամեն կողմ հացաբոյսերը պատում են հորիզոնը զըմրուխտի կենդանի գոյներով։

Երբ երեկոն աւելի մօտ է տարածւում երկրի վրայ, վայրի բադերը դուրս են թռչում մօտակայ շամբերից. և երբ եղեգները քամուց յուզւած սարսռում են հանդարտիկ, նրանք սոսկահար փախչում են իրանց օդային շաւիղներով։

Խրճիթներից հեռու, պուստայի խորութեան մէջ, կանգնում է չարդան՝ առանձնացած իր փլփլած ծխնանով։ Ծարաւի բէտյարները, որոնք այլ և այլ ճանապարհներով դէպի շուկայ են գնում, կանգնում են այնտեղ։

Թմբիների ցած անտառների մէջ տեղ, չարդայի մօտիկ, դեղին աւազի մէջ, թաւուտի խորքում, բոյն է դրել սրատոյլ Շահէնը՝ խոյս տալով աւերիչ երեխաների ձեռքից։

Կնիւնններն այնտեղ աճում են տխուր. ուղտափուշի ծաղիկները ճրճւում են և իրանց սուր փշերի ներքև խատուտիկ մողէսները թմրած պառկել են արևի տակ։ Հեռուն, ուր երկինքը բոցավառ երկրի հետ միախառնւել է, պտղատու ծառերի շարքերը նայում են մշուշի միջից, որ իրանց մի ինչ-որ կապտաւուն գոյն է տալիս։ Նրանցից վերև ինչպէս մի սիւն, բարձրանում է գիւղի զանգակատունը՝ կանաչ արօտների միջից։

Հիանալի ես դու ինձ համար, ով դաշտավայրերի երկիր։ Այնտեղ է, որ իմ օրօրոցն օրօրեցին, այնտեղ է, որ ես կեանքի մէջ մտայ։ Այդտեղ է, որ մի պատանք ինձ պիտի փաթաթէ և այդտեղ պիտի բարձրանայ իմ մահուհողակոյտը։

Թարգմ. Հ. Աճառեան

ՎԵՐՋ

*) Վանեցիների լեզւով «հրնկտալ» նշանակում է կանանչների քամու առաջ տատանւելով փայլելը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0373335

65041